

ՀԱՍՏՆ

ԵՐԿԵՐ
ԶՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ I

ՍՈՒՐԵՆ ԲԵՐՍԵ • ՓԻՒՐՔԵՆ

1915.info

‘ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ’ ԳՐԱԴԱՐԱՆ

փիլիսոփայություն



Փրինսիպիո

ΠΛΑΤΩΝ

ΑΠΟΛΟΓΙΑ ΚΡΙΤΩΝ ΦΑΙΔΩΝ ΣΥΜΠΟΣΙΟΝ

Αρμενική μετάφρασις από τα Ελληνικά,
πρόλογος και σημειώματα
ΣΕΡΓΕΙ ΣΤΕΦΑΝΙΑΝ

ΕΡΕΒΑΝ 2021
ΣΑΡΚΙΣ ΧΑΤΣΕΝΤΣ • ΠΡΙΝΤΙΝΦΟ

ՊԼԱՏՈՆ

ԵՐԿԵՐ ՉՈՐՄ ՀԱՏՈՐՈՎ

Հատոր 1

Երկրորդ, վերանայված հրատարակություն

Հին հունարենից թարգմանեց,
առաջաբանը և ծանոթագրությունները գրեց՝
ՍԵՐԳԵՅ ՍՏԵՓԱՆՅԱՆ


ԵՐԵՎԱՆ 2021
ՍԱՐԳԻՍ ԽԱՉԵՆՑ • ՓՐԻՆԹԻՆՑՈՒ

Խմբագիր՝ Սարգիս Լևոնյան

ISBN 978-9939-872-52-0

© Սերգեյ Ստեփանյան, 2021

© Սարգիս Խաչենց & Փրինթինֆո, 2021, *Իմացություն՝ գրադարան*



Պլատոն

ՊԼԱՏՈՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾԸ

Փիլիսոփայական մտքի պատմությունը բոլոր ժամանակներում իրեն ուղի է հարթել մարդու անհատական ճիգի և հայտնության անհանգիստ ծիրում: Մեզ հասել են մարդկանց անուններ, որոնց կյանքն ու գործունեությունը տարբեր ժամանակներում տարբեր լիցքեր են հաղորդել ճշմարտության որոնումներին՝ կանխորոշելով այդ որոնումների ընթացքը: Սակայն ինքը ճշմարտությունը և ինքը փիլիսոփայությունը պատմական և ոչ մի անվան հետ այնքան զուգորդելի չէ, ոչ մի անվան մեջ չի արձագանքում այնքան ուժեղ, որքան Պլատոնի: «Պլատոնը ինքը փիլիսոփայությունն է»,— իրավացիորեն ասել է Ռալֆ Ուոլդո Էմերսոնը:

Յոգևոր մշակույթի վրա այս մարդու մտքի այդքան վիթխարի ազդեցությունը պայմանավորված է դրա միտվածությամբ առ ինտելլեկտուալ աշխարհը, գաղափարների արքայությունը, ուր երևութական իրականության վերջավորությունը փոխարինվում է իսկական կեցության բանական լույսով և գաղափարների, որպես այդ կեցությունը կազմավորող սկզբունքների, բացարձակ նախատիպությամբ, որն իբրև մտավոր վերելքի հրավեր հանձնարարված է մարդկային էությանը իր բուն կոչմանն ու դրսևորմանը հասնելու համար:

* * *

Պլատոնը ծնվել է Աթենքում Ք.ա. 428/7 թվականին: Հայրը՝ Արիստոնը, և մայրը՝ Պերիկտիոնեն, սերում են Աթենքի արիստոկրատական ընտանիքներից. մոր գծով (որը հասնում է մինչև Սոլոն Իմաստուն) նրա երկու ազգականները՝ Քարմիդեսը և Կրիտիասը, եղել են Օլիգարխիայի (404/3) ազդեցիկ դեմքերից: Պապի պատվին

նրան կոչել են Արիստոկլես. Պլատոն անունը, որ նշանակում է «լայն», նա ստացել է իր թիկնեղ, ամուր կազմվածքի համար արգոսցի ըմբիշ Արիստոնի գիմնասփոնում մարզվելու ժամանակ: Թեպետ Դիոգենես Լաերտցին, որին պարտական ենք այդ տեղեկությունը, առաջարկում է տվյալ անվանակոչության շարժառիթների երկու տարբերակ ևս՝ Պլատոնի լայն ծակատը և լայնաշունչ գրելանձը*:

Հայտնի է, որ պերիկլյան ռեժիմի մթնոլորտում դաստիարակություն ստացած երիտասարդ Պլատոնը նախապես իր ուժերը փորձել է արվեստի և բանաստեղծության մեջ: Համաձայն Լաերտցու՝ այդ զբաղմունքին վերջ դնելու պատճառ է դարձել Սոկրատեսի մի գրույց, որը նա պատահաբար լսել է Դիոնիսյան թատրոնի մտակայքում: Այդ դեպքից հետո Պլատոնը այրել է իր բանաստեղծությունները և համալրել Սոկրատեսի ամենահավատարիմ ունկնդիրների շարքը**։ Սակայն Արիստոտելը հաղորդում է, որ դեռ նախքան Սոկրատեսի հետ իր ծանոթությունը Պլատոնը փիլիսոփայություն է սովորել հերակլիտյան փիլիսոփա Կրատիլոսի մոտ***:

Ազնվագարմ երիտասարդ աթենացին ուներ քաղաքական կարիերա անելու բոլոր նախադրյալները, մանավանդ որ Օլիգարխիայի անդամ իր ազգականները պատրաստ էին իրենց հովանավորության տակ առնել նրան: Սակայն Պլատոնին հիասթափեցնում է նրանց վարած քաղաքականությունը, հատկապես երբ վերջիններս փորձում են իրենց հանցավոր գործերի մեջ ներքաշել Սոկրատեսին: Դեմոկրատների իշխանությունը առավել աղետաբեր ու հիասթափեցնող է լինում. նրանց օրոք մահապատժի է դատապարտվում Սոկրատեսը, այնպես որ Պլատոնը մեկընդմիջտ հրաժարվում է քաղաքական գործիչ դառնալու մտքից: Իր մեծ ուսուցչի ու բարեկամի մահից հետո նա հեռանում է Մեգարա՝ փիլիսոփա Էվկլիդեսի մոտ, խուսափելու համար հետապնդումներից (նա ներկա է եղել Սոկրատեսի դատավարությանը և մեկն է նրանցից, ովքեր պատրաստ էին երեսուն մինա փրկագին վճարել Սոկրատեսի համար):

Վաղ կենսագիրները պատմում են, որ Մեգարայում Պլատոնը երկար չի մնում և ուղևորվում է նախ Կիրենես, ապա Իտալիա

* Diogenes Laertius, III. 5.

** Op. cit., III. 6.

*** Aristoteles, *Metaph.*, A VI, 987a 32–34.

և Եգիպտոս: Այդ տեղեկությունների հավաստիությունը կասկածելի համարող հետազոտողները նշում են, որ իր գրվածքներում ինքը Պլատոնը երբեք չի հիշատակել Եգիպտոսի այցելությունը և որ նման հետևության համար հիմք է դարձել Եգիպտացիների մաթեմատիկական ուսմունքներին նրա ծանոթ լինելու հանգամանքը: Կասկածից դուրս է ուղևորությունը դեպի Իտալիա, որի նպատակն էր այլուֆագորյաններին և նրանց ուսմունքին ծանոթանալը:

Մտավորապես 395/6 թ. նա վերադառնում է Աթենք, որտեղ զբաղվում է ուսուցչությամբ և գրական գործունեությամբ, և միայն տասնյոթ տարի անց (հավանաբար 388 թ.) մեկնում է Սիկիլիա: Այստեղ նա հրավիրվում է Սիրակուզի տիրան Դիոնիսիոս Ա-ի արքունիք, հավանաբար վերջինիս ազգականի՝ Դիոնի բարեխոսությամբ: Դիոնիսիոսը իշխանության գալով մի քանի արյունալի պատերազմների գնով՝ Սիրակուզը դարձրել էր հելլենական արևմուտքի ամենագրեղ քաղաքը: Աթենացի արիստոկրատի և տաքարյուն բռնակալի (որը նաև բանաստեղծական մեծ հավակնություններ ուներ) հարաբերությունները շուտով վատթարանում են, և Դիոնիսիոսը վաճառում է Պլատոնին, ինչպես ստրուկի, ոմն լակեդեմոնացի Պոլլիսին. սա վաճառքի է հանում Պլատոնին Էգի-նայի շուկայում: Բարեբախտաբար նրա համար փրկագին է վճարում կիրենեցի Աննիկերիսը և վերադարձնում Աթենք:

Այստեղ Պլատոնը հիմնում է իր դպրոցը (388/7), որը տեղավորված լինելով Ակադեմոս հերոսի սրբազան պուրակում գտնվող գիմնասիոնում՝ ստանում է Ակադեմիա անունը: Այն կարելի է համարել Եվրոպայի առաջին համալսարանը, որովհետև փիլիսոփայությունից բացի պատանիները հնարավորություն ունեին ուսումնասիրելու մաթեմատիկա, աստղագիտություն, բնական գիտություններ: Պլատոնը ոչ միայն ղեկավարում էր Ակադեմիան, այլև ինքն էր կարդում դասախոսություններ, կազմակերպում և վարում տրամախոսական զրոպյներ: Վարկած կա, որ Պլատոնի դասախոսություններն իրենց բնույթով և թեմատիկ որոշ կողմերով զգալիորեն տարբերվել են գրավոր այն ժառանգությունից, որի միջոցով մենք պատկերացում ենք կազմում նրա փիլիսոփայության մասին, քանի որ գրավոր եորկերը ստեղծվել են սոսկ «հանրային» ընթերցման համար: Այս ենթադրությունն ընդունելու դեպքում Պլատոնի և իր աշակերտի՝ Արիստոտելի (մուտք գործեց Ակադեմիա 367 թ.) ոճերի միջև եղած

շեշտակի տարբերությունները մասամբ կարող են հասկանալի դառնալ*:

367 թ. Պլատոնը դարձյալ Դիոնի հրավերով ուղևորվում է Սիրակուզ: Դիոնիսիոս Ա-ն վախճանվել էր, և գահ էր բարձրացել նրա որդի Դիոնիսիոս Բ-ն, որի կրթությամբ պիտի զբաղվեր փիլիսոփան: Կարճ ժամանակ անց Դիոնը, որն ամենայն հավանականությամբ նույնպես գահակալության հույսեր էր փայփայում, հետապնդումներից խուսափելու համար փախչում է Աթենք: Պլատոնը հետևում է նրան, սակայն նամակագրական կապ է պահպանում Դիոնիսիոսի հետ: Տեղի տալով վերջինիս բազմաթիվ խնդրանքներին՝ 366 թ. նա դարձյալ մեկնում է Սիրակուզ՝ փիլիսոփայական պարապմունքները շարունակելու, ինչպես նաև կարթագենացիների դեմ հունական միասնական ճակատի իր կազմած նախագիծը կյանքի կոչելու հույսով: Սակայն Պլատոնին չի հաջողվում իրագործել իր մտադրությունը, նա նաև չի կարողանում համոզել Դիոնիսիոսին հետ կանչել Դիոնին: 360թ. նա վերադառնում է Աթենք, որտեղ շարունակում է ղեկավարել Ակադեմիան: 357թ. Դիոնին այնուամենայնիվ հաջողվում է Սիրակուզի թագավոր դառնալ, սակայն 353թ. նա սպանվում է, և Պլատոնը վերջնականապես հրաժարվում է գահին փիլիսոփա տիրակալ տեսնելու իր վաղեմի երազանքից:

Ինքը Պլատոնը վախճանվում է 348/7 թ.:

* * *

Բոլոր այն երկերը, որոնք Պլատոնը նախատեսել է հրապարակել, պահպանվել են: Դրանք կանոնակարգել է Տրասսիլոս քերականը (Ք.հ. I դար) ըստ հետևյալ ինը տետրալոգիաների:

1. Եվթիփրոն, Սոկրատեսի պաշտպանականը, Կրիտոն, Ֆեդոն:
2. Կրատիլոս, Թեետետոս, Սոփեստ, Պոլիտիկոս:
3. Պարմենիդես, Փիլեբոս, Խնջույք, Ֆեդրոս:
4. Ալկիբիադես I, Ալկիբիադես II, Հիպպարքոս, Միցակիցներ:
5. Թեագես, Քարմիդես, Լաքես, Լիսիս:

* Այդ մասին ավելի մանրամասն տես F. Copleston, A History of Philosophy: Volume I, Greece and Rome, Part I, New York, 1962, p. 154–155:

Պլատոն. կյանքը և գործը

6. Եվթիդեմոս, Պրոտագորաս, Գորգիաս, Մենոն:
7. Հիպպիաս Կրտսեր, Հիպպիաս Ավագ, Իոն, Մենեքսենոս:
8. Կլիտոփոն, Պետություն, Տիմոս, Կրիտիաս
9. Մինոս, Օրենքներ, Օրենքների հավելված (Էպինոմիս),
Նամակներ:

Բոլոր ժամանակներում դժվարություն է հարուցել հետևյալ հարցը. արդյո՞ք նշված 36 երկերն էլ պատկանել են Պլատոնի գրչին: Դյուրին չի եղել նաև դրանց ստեղծման ժամանակագրական հաջորդականությունը որոշելը: Վերջին հարյուրամյակների քննական ուսումնասիրությունների արդյունքները կարելի է ամփոփել այսպես:

1. Մասնագետների ճնշող մեծամասնությունը մերժում է հետևյալ տրամախոսությունների իսկությունը. «Ալկիբիադես II», «Մրցակիցներ», «Թեագես», «Կլիտոփոն», «Մինոս»: Բացառությամբ «Ալկիբիադեսի» այս տրամախոսությունները ամենայն հավանականությամբ ստեղծվել են Զ.ա. IV դարում: Դրանք գրված են պլատոնյան ոգով, սակայն զուրկ են փիլիսոփայական համարժեք խորությունից:

2. Վիճելի է «Ալկիբիադես I»-ի, «Իոնի», «Մենեքսենոսի», «Հիպպիաս Ավագի», «Էպինոմիսի» և Նամակների իսկությունը:

3. Մնացյալ տրամախոսությունների իսկությունը կասկածի տակ չի դրվում:

Պլատոնյան երկերի մոտավոր ժամանակագրությունն ու հաջորդականությունը կազմելու չափանիշներ են եղել՝ a) լեզվաոճական առանձնահատկությունները, b) ժամանակակիցների վկայությունները (այսպես, Արիստոտելից տեղեկանում ենք, որ «Օրենքները» գրվել են «Պետությունից» ավելի ուշ), c) տրամախոսություններում եղած հղումները պատմական որոշ դեպքերի և անձանց (ինչպես, ասենք, «Ֆեդոնում», որն ակներևաբար գրվել է Սոկրատեսի մահից հետո) և d) տրամախոսությունների փոխադարձ հղումները: Այդ ամենի հաշվառումով հետազոտողները առաջարկում են պլատոնյան երկերի ժամանակագրության հետևյալ պատկերը:

1. *Սոկրատյան շրջան*: Այս շրջանի գործերը գրվել են անմիջապես Սոկրատեսի մահից հետո: Պլատոնը դեռևս իր ուսուցչի

ուժեղ ազդեցության տակ է, ընդ որում առաջին պլանում են ոչ թե Սոկրատեսի գաղափարները, այլ անձը: Տրամախոսությունները հաճախ ավարտվում են առանց դրված խնդրի հանգուցալուծման: Այս շրջանին են դասվում «Սոկրատեսի պաշտպանականը», «Կրիտոնը», «Եվթիփրոնը», «Լաքեսը», «Իոնը», «Պրոտագորասը», «Քարմիդեսը», «Լիսիսը» և «Պետության» առաջին գիրքը:

2. *Անցման շրջան:* Այստեղ նկատելի է ինքնուրույն կոնցեպցիայի որոնումը: Ենթադրվում է, որ տվյալ տրամախոսությունները գրվել են Սիկիլիա կատարած առաջին ուղևորությունից առաջ: Դրանք են՝ «Գորգիասը», «Մենոնը», «Եվթիդեմոսը», «Յիպպիաս Կրտսերը», «Յիպպիաս Ավագը», «Կրատիլոսը» և «Մենեքսենոսը»:

3. *Հասուն շրջան:* Պլատոնը մշակում և համակարգում է սեփական գաղափարները: Այս շրջանին են վերագրվում՝ «Ֆեդոնը», «Պետությունը», «Ֆեդրոսը»: Տրամախոսությունների գրության ժամանակը Սիկիլիա կատարած առաջին և երկրորդ ուղևորությունների միջև ընկած ժամանակահատվածն է:

4. *Ուշ շրջան:* Այս շրջանին են վերագրվում մետաֆիզիկական ամենանշանակալի տրամախոսությունները, քանի որ դրանցում է իր ամբողջ թափով դրսևորվում պլատոնյան միտքը: Դրանք գրվել են Սիկիլիա կատարած երկրորդ և երրորդ ուղևորությունների միջև և հետո: Այս շրջանին վերագրվող երկերի ցանկն իսկապես պատկառելի է՝ «Թետետոս», «Պարմենիդես», «Սոփեստ», «Պոլիտիկոս», «Փիլեբոս», «Տիմեոս», «Կրիտիաս», «Օրենքներ» և «Էպինոմիս»:

Պլատոնի ուսմունքը, որը մի վիթխարի մտաստեղծ կառույց է, դյուրին չէ յուրացնել ելնելով առանձին տրամախոսություններից ու թեմաներից: Այն անվերջ մասնավորվել է, ներգրավել նոր խնդիրներ ու հարցեր, եղել նոր հասկացությունների մշակման ու հղկման պրոցեսում: Վերջին տասնամյակներում մասնագետները շրջանառության մեջ դրեցին «գրի չառնված տեսությունների» վարկածը: Հին աղբյուրները վկայում են, որ Ակադեմիայում Պլատոնը խոսել է հարցերի մասին, որոնց երբեք չի անդրադարձել իր գրվածքներում: Դրանք վերաբերել են «վերջին՝ բարձրագույն իրականության» խնդրին:

Ենթադրությունը հաստատում է նաև Պլատոնի VII նամակը: Փիլիսոփան պնդում է, որ բարձրագույն իրականության իմացությունը կարող է կայանալ ընդգծումը մերն է – Ս.Ս.] միայն համատեղ բանավոր քննարկումների և վեճերի մեջ: Նա բացառում է նման վեճերի ու քննարկումների առարկան գրավոր հաղորդելու հնարավորությունը. «Այդ մասին ես ոչինչ չեմ գրել: Եվ երբեք չեմ գրի»*:

* * *

Չայտնի է, որ Պլատոնը եղել է Սոկրատեսի աշակերտը: Ինքը Սոկրատեսը իրենից հետո գրավոր ոչինչ չի թողել և նրա ուսմունքի մասին կարելի է պատկերացում կազմել աշակերտների՝ Քսենոփոնի և Պլատոնի գործերից: «Սոկրատյան տրամախոսության» գրական ժանրը, որը Սոկրատեսի մահից հետո նրանց թեթև ձեռքով տիրապետող դարձավ, սոկրատյան փիլիսոփայության ոգին՝ նրա թեմատիկան և արտիկուլյացիան պահպանելու յուրահատուկ փորձ էր: Սոկրատեսի աշակերտներից հավանաբար ոչ ոք չի վերապրել նրա զրույցներն ու ճակատագիրը նույն խորությամբ, ինչ Պլատոնը: Եվ եթե Քսենոփոնի դեպքում սոկրատյան տրամախոսությունը հնարավորություն է տալիս ուսուցչի խոսքը ձմարիտ ու ձգարիտ հաղորդելու, նրա զրույցներն ու դրանց մթնոլորտը փաստագրելու համար, ապա Պլատոնի պարագայում տրամախոսության խնդիրը սոկրատիզմը ներսից վերարտադրելն ու վերստեղծելն է, և նա իրագործում է դա այնպես, որ նրա գրչի տակ ուսուցչի փիլիսոփայությունը ստանում է իր երկրորդ կյանքն ու շնչառությունը՝ զգալիորեն լայնացնելով ու առաջ մղելով այդ փիլիսոփայության թեմատիկ սահմանները:

«Պատմում են, թե մի անգամ երազում Սոկրատեսը իր ծնկներին կարապի ձագ է դնում: Եվ հանկարծ միանգամից այդ կարապը ծածկվում է փետուրներով և ուժգին կռիչքով երկինք բարձրանում: Չաջորդ օրը, երբ Սոկրատեսի մոտ առաջին անգամ բերում են Պլատոնին, նա ասում է. սա է իմ տեսած թռչունը»**: Այս առասպելական դրվագը խորհրդանշականորեն քնորոշում է Պլատոնի և իր ուսուցչի կապը:

* Plato, Epistula VII, 341c.

** Diogen. Laert., op. cit. III, 5–6.

Տրամախոսությունը որպես փիլիսոփայական գրական ժանր հնարավորություն է ընձեռում Պլատոնին վերստեղծելու այն եղանակը, որով չիմացության անունից տրվող հարցերը գրուցակցի պատասխաններում աստիճանաբար նշմարելի են դարձնում ճշմարտության ուրվագծերը. ընդ որում ունկնդիրը գիտակցում է, որ ակտիվորեն մասնակցել է որոնումին և պատասխանների բովանդակությունը թելադրված կամ պարտադրված չէ դրսից. այն հասանելի է դառնում իրեն իր իսկ հոգու խորքերը տնտղելիս:

Սոկրատեսը հակադրում էր տրամախոսությունը սոփեստների մե- նախոսությանը: Ի տարբերություն վերջիններիս՝ նա համոզված էր, որ ճշմարտությունը հնարավոր չէ փոխանցել որպես պատրաստի արգասիք. այն հարկավոր է ձեռք բերել ինքնուրույնաբար: Պլատոնը գրավոր ձև է հաղորդում տրամախոսությանը՝ փորձելով պահպանել ուսուցչի առաջադրած մայևտիկայի սկզբունքը (*μαισυταική τέχνη*), իսկ իրեն՝ Սոկրատեսին, դարձնում է տրամախոսության կենտրո- նական դեմքը: Տրամախոսության կոմպոզիցիան բավական ազատ է (չէ՞ որ այն նպատակ ունի վերարտադրելու կենդանի զրույցը). տրամաբանական կուռ գծով կառուցված հարց ու պատասխանների շղթան կարող է ընդմիջվել զավեշտական ինտերմեդիայով, իսկ ձևակերպումները համեմված են դիցաբանական պատմություններով: Որոշ հետազոտողների պնդմամբ՝ մյուսոսի տարրը պլատոնյան սիս- տեմում վկայում է այդ սիստեմի բացերը. փիլիսոփան դիմում է մյու- թոսին այնտեղ, որտեղ առարկան այլևս չի տրվում գիտական սահ- մանման**։ Սակայն մյուսոսի նման մեկնաբանությունը կնեղացնե՞ր Պլատոնի մտքի ըմբռնման պարագիծը: Մյուսոսը ոչ թե արհեստա- կանորեն սոսնձում է տրամախոսության առանձին հատվածները, այլ օրգանապես միահյուսվում է դրա գաղափարական առանցքին: Մյուսոսը ոչ թե վկայակոչվում է (որպես տարրլորտ ու գերակա հեղինակություն), այլ հանդես է գալիս տրամախոսության անունից և հանուն նրա:

* Տե՛ս E. Zeller, Grundriss der Geschichte der Griechischen Philosophie, Leipzig, 1893, S. 117:

Փիլիսոփայությունը հուզում էր Սոկրատեսին առաջին հերթին որպես բարոյականության համընդհանուր նշանակալի հասկացությունները գտնելու հնարավորություն: Այլ կերպ ասած՝ նրան հուզում էր ոչ թե մարդկային հարափոխ վարքի իմացությունը, այլ իսկական մնայուն էթիկան, որի շրջանակներում կսահմանվեր իսկական (ինքնին) առաքինության, խիզախության, արդարության և բարոյագիտական մյուս ֆունդամենտալ կատեգորիաների բովանդակությունը: Պլատոնը ժառանգում է ուսուցչի այս ծրագրային դիրքորոշումը: Սակայն շուտով նա նկատում է, որ մնայունության և համընդհանրության որակի, որպես իրերի հարափոխ աշխարհից ոչ արտածելի իրողության, խնդիրը հատուկ է ոչ միայն բարոյականությանը, այլև մաթեմատիկային, — մի իմացության, որի աներկբա արդյունքների դեմ անգոր է վիճել ցանկացած սոփեստ: Մաթեմատիկայի բոլոր հասկացությունների՝ գծերի, կետերի, ֆիգուրների, թվերի և նրանց հարաբերությունների կատարելության համարժեքները դժվար է գտնել զգայահասու աշխարհում: Ակներև է, որ անկատարն ինքնին չի կարող հանգեցնել կատարյալի իմացությանը: Պլատոնն ընդունում է, որ աշխարհի նկատմամբ միանգամայն կիրառելի են Յերակլիտոսի բնորոշումները: Իսկապես, որ զգայահասու աշխարհում ամեն բան հարահոսության և հարափոխության մեջ է՝ դժվար է չընդունել: Այլ բան է, որ դա անհրաժեշտաբար բերում է իր հետ նաև աշխարհի անձանաչելիությունն ընդունելու վտանգ, քանի որ Պլատոնը Սոկրատեսի հետևողությամբ ընդունում էր Պարմենիդեսի այն դրույթը, ըստ որի ճանաչելի է միայն անշարժ ու անփոփոխ կեցությունը: Անհրաժեշտ էր հարցի լուծման նոր՝ միջին ուղի, որի դեպքում գոյի որպիսության մասին հերակլիտյան ու պարմենիդյան դրույթները համերաշխության կգային, իսկ ֆյուսիսի և գնոսիսի հարցերը հնարավոր կլիներ էթոսի հարցերի հետ միասին դիտարկել մեկ համատեքստում:

Պարմենիդեսի և Յերակլիտոսի իրարամերժ պնդումներում բովանդակային հակադրությունից բացի առկա է մի հակադրություն ևս: Պլատոնը հավանաբար առաջինը հստակորեն գիտակցեց, որ Պարմենիդեսի սկզբունքը, — ճանաչելի է միայն անշարժն ու անփոփոխը, — ունի ոչ այնքան գոյաբանական, որքան իմացաբանական

արժեք և առաջ է քաշում ճանաչողության պայմանների որակի սպեկուլյատիվ պահանջ: Փիլիսոփայության մեջ իմացաբանական տարրերի այս ներմուծմամբ Պարմենիդեսն անշուշտ մեկ քայլ առաջ էր անցել ֆյուսիսի փիլիսոփաներից:

Գոյի ճանաչելիությունը դրա հաստատունությունից կախման մեջ դնելով, իսկ իրերի աշխարհին հարափոխ բնություն վերագրելով՝ Պլատոնը հաստատում է իր սպեկուլյացիայի ելակետային դրույթը. ժճմարիտ գոյը հարափոխ իրերի աշխարհը չէ: Հաստատունության պարմենիդյան թեզը հասկանալով որպես ճանաչողության մեջ մտահասու տարրի գերակայության պահանջ՝ նա փորձում է ժճմարիտ գոյի էությունը նույնպես սահմանել որպես մտահասու: Այդ էությունն, ըստ Պլատոնի, գաղափարն է (ιδέα, εἶδος):

Արդեն «Ֆեդոնում» նա ցույց է տալիս, որ միևնույն երկարության զույգ գերանները հավասար են շնորհիվ այն բանի, որ հաղորդակից են ինքնին կամ ինքն ըստ ինքյան հավասարին, այսինքն՝ հավասարության գաղափարին, որը գոյության ընդհանուր ձևի մեջ է դնում այդ գերանները: Գերանների երկարության տարբերությունը նույնպես պայմանավորվում է որոշակի հաղորդակցությամբ, բայց այդ դեպքում գերաններից մեկը ավելի շատ հաղորդակից է երկարության, իսկ մյուսը՝ կարճության գաղափարին: Հունարեն իդեա (ιδέα - տեսք) բառը ստուգաբանվում է որպես այն, ինչը երևալ է տալիս զգայահասու աշխարհը, բայց ինքը զգայական եղանակով տեսանելի չէ: Ծիզը, որ ենթադրվում է զգայականից տարբեր հայեցողությանը հասնելու համար, Պլատոնը համեմատում է «երկրորդ նավարկության» հետ, — գործողություն, երբ քամու բացակայությամբ նավաստիները հավաքում են առագաստը և գործի դնում թիակները: Ի՞նչ է նշանակում «երկրորդ նավարկությունը» փիլիսոփայի դեպքում:

Ֆյուսիսի հայեցողությունը, որով զբաղվում էին նախասոկրատյան փիլիսոփաները, ըստ Պլատոնի համեմատելի է «առաջին նավարկության» հետ, որը սպառեց իրեն. այսպես, զգայահասու աշխարհը հնարավոր չեղավ բացատրել զգայահասու պատճառներով: «Երկրորդ նավարկությունը» առաջնորդվում է մտահասուով, լոգոսով, որն առկալում է ոչ թե առանձին, վերջավոր և փոփոխական իրերը, այլ դրանց իսկական պատճառները, որոնք անփոփոխ և անսասան լինելու համար չպիտի լինեն զգայահասու:

Պլատոն. կյանքը և գործը

Պլատոնը իրավամբ համարվում է մետաֆիզիկայի հիմնադիրը։ Նա առաջինն է, որ գոյի ֆիզիկական ուսումնասիրությանը հակադրում է մետաֆիզիկական պատճառների ուսումնասիրությունը՝ բաժանելով կեցությունը զգայահասու և մտահասու ոլորտների։

* * *

Պարմենիդեսի անկյունաքարային դրույթին հարազատ մնալու իր անդրդվելի որոշումը Պլատոնը դրսևորում է՝ գաղափարը կոչելով իսկական գոյ կամ իսկական կեցություն (το ὄντως ὄν)։ Չերակլիտոսի գլխավոր դրույթի նշանակալիությունը նա տարածում է զգայահասու աշխարհի վրա։

Չնայած էլեացու դիրքորոշման հանդեպ իր ակնհայտ համակրանքին՝ Պլատոնը հրաժարվում է իսկական այդ կեցության մեջ կատարյալ ինդիֆերենտություն և համասեռություն տեսնել։ Չերակլիտյան մեթոդը՝ դիալեկտիկան, այստեղ բերում է իր անփոխարինելի նպաստը պլատոնիզմին։ Գաղափարները որպես իրերի ճանաչելիության սկզբունքներ նշվում են նախ իրենց կիրառականության առումով։ Սակայն պահանջվում է նաև դրանց դիտարկում ինքնին և միմյանց նկատմամբ ունեցած հարաբերությունների լոյսի տակ։ «Սոփեստ» և «Պարմենիդես» տրամախոսություններում հանգամանորեն քննվում է գաղափարների դիալեկտիկական փոխապայմանավորվածությունը։ Պարմենիդյան մեկի կամ կեցության հասկացությունները ըստ Պլատոնի այնքան էլ ինքնաբավ չեն և հազեւում են իրենց բովանդակությամբ՝ հրվելով իրենց այլագոյությունից, այսպես, մեկը՝ բազումից (և հակառակը), կեցությունը՝ չգոյությունից (և հակառակը)։ Սեփական ինքնանույնականությունը պահպանելու համար գաղափարը պարտավոր է լինել մյուս բոլորի չգոյությունը։ Քանի որ միմյանց մեջ գաղափարների մասնակցության չափը տարբեր է, իդեալական (իդեանների) աշխարհը կազմում է հիերարխիկ սիստեմ, որի մեջ ստորին գաղափարները ենթարկված են վերիններին։ գագաթին բարիքի գաղափարն է։ «Պետության» մեջ Պլատոնը բնորոշում է բարիքը որպես այն, ինչի շնորհիվ կեցությունը լավագույնս դառնում է ճանաչելի, իսկ բանականությունը՝ որպես այն, ինչի շնորհիվ այն դառնում է լավագույնս ճանաչող։ Բարիքը սուբստանց կամ էություն չէ, հետևաբար ավելի բարձր է դրանցից՝

հանդիսանալով գաղափարների հիերարխիայի արժանիքն ու պոտենցիան: Որպես համայն կեցության հիմք բարիքը շատ գծերով համընկնում է աստվածության հասկացությանը, և «Տիմեոսում» աստված բնութագրվում է նույն հատկանիշներով, ինչ բարիքը:

Բարիքի մյուս համարժեքը մեկի գաղափարն է: Բազումի հետ վերջինիս հակադրությունից է ծնվում բոլոր գաղափարների համատեքստը, որում մեկը իբրև սահմանող ու որոշակիացնող սկզբունք կարգաբերում է բազումի անսահմանությունն ու անորոշությունը:

Ճիշտ այնպես, ինչպես մեկից, որպես ձևի սկզբունքից, և բազումից, որպես անորոշ բովանդակության սկզբունքից, գոյանում է գաղափարների (իդեալական) աշխարհը, այնպես էլ ֆորմալ և մատերիական սկզբունքներից գոյանում է զգայահասու աշխարհը: Ինչպես բազումը մեկի հարաբերությամբ, այնպես էլ մատերիականության սկզբունքը իդեալականի հարաբերությամբ անսահմանություն և անորոշություն է, բայց նաև անձանաչելիություն և, ընդհուպ, չգոյություն: Նույն այս սկզբունքը փոփոխականության մեջ է պահում ֆիզիկական աշխարհի իրերը, և եթե իրերի ճանաչելիությունն ու կեցությունը պայմանավորված է գաղափարների (իդեալական) աշխարհի հետ հաղորդակցությամբ, ապա նրանց փոփոխականության և հարահոսության պատճառը չգոյության սկզբունքն է: Զգայահասուի օրրանը՝ $\chi\acute{o}\rho\alpha$ -ն (տարածականություն), գոյություն է ստանում բացառապես իր մեջ մտահասու տարրի հազիվ նկատելի ($\lambda\omicron\gamma\iota\sigma\mu\acute{o}\varsigma$ νόθος) ներկայության շնորհիվ: Քառասային այդ խռոչի վերածումը Կոսմոսի ենթադրում է արարում և հետևաբար արարչի մասնակցություն, սակայն արարչի, որն արարել է զգայահասու աշխարհը համաձայն իդեալական աշխարհի նախատիպի. դա Դեմիուրգոսն է:

Զուրկ լինելով ամեն տեսակ արատներից՝ նա ցանկացել է, որ բոլոր իրերը բարի լինեն և ըստ կարելիոյն՝ իրեն նման: Արարածի կատարելությունը պահանջում է կատարում և մրցակցություն, և որպեսզի իրերի մեջ մեկը մյուսից ավելի կատարյալ դառնալու կարողություն ունենա, Դեմիուրգոսը հոգի ներդրեց մարմնի մեջ, իսկ հոգու մեջ՝ բանականություն: Այսպես հստակորեն ուրվագծվում է դասական իդեալիզմի հանդիսավոր լանդշաֆտը, որում մտահասուն, ռացիոնալը, իդեալականը, բարին և կարգաբերվածը իրենց են ենթարկում զգայահասուն, իռացիոնալը, մատերիականը, չարը և քառասայինը: Ընդ որում՝ հարկ է նկատել, որ գաղափարների աշխարհի

գերակայությունն ու առաջնությունը առկա է ամեն ինչում, և անգամ Դեմիուրգոսը հարաբերվում է դրան որպես նախատիպի, որպես բուրգի, որի գագաթն ու պսակն է ինքը, բայց ոչ ստեղծողը:

* * *

Մեծ փիլիսոփայության համար իմացաբանությունը առաջնային խնդիր է: Ճշմարիտ գոյի ծանրության կենտրոնը փոխադրելով գաղափարների ոլորտ՝ Պլատոնը պարտավոր եղավ ցույց տալ նաև այդ ոլորտի ճանաչողության եղանակը: Զգայականության պրիմատի մասին խոսք լինել չի կարող, չէ՞ որ գաղափարները «տեսնվում են հոգևոր աչքով»: Սակայն ինչպե՞ս է բացվում հոգևոր աչքը իդեալական ձևերի աղոտ ստվերների ու խավարի այս աշխարհում: «Մենոն» տրամախոսության մեջ Սոկրատեսը մայևտիկական եղանակով երկրաչափությանն անտեղյակ ստրուկին հանգեցնում է Պյութագորասի թեորեմներից մեկի լուծմանը: Հանգեցնել չի նշանակում հուշել լուծումը, քանի որ պատասխանները ծնվում են հենց ստրուկի հոգում: Ըստ Պլատոնի՝ հոգին կրել է այդ գաղափարները դեռ նախքան մարմնավորվելը, քանի որ հնարավորություն է ունեցել տեսնելու ողջ կեցությունը և հասու է դարձել դրան՝ ինչպես այսր, այնպես էլ անդրաշխարհում: Հատկապես մաթեմատիկական նյութի հարաբերությամբ օբյեկտիվ իդեալականության պլատոնյան թեզը բավական կենսունակ գտնվեց և անտարբեր չթողեց անգամ էմպիրիզմի բազում ջատագովների, այդ թվում նաև Բերտրան Ռասսելին: «Երբ մենք լսում ենք, որ մաթեմատիկոսը խոսում է մաթեմատիկական իդեալական արքայության մասին, ապա դա ամբողջությամբ Պլատոնի տեսակետն է»^{**}:

Խորհրդանշական է, որ հոգու անմահության ուսմունքը Պլատոնը ժառանգել է փիլիսոփայության պյութագորյան ավանդույթից, որում մաթեմատիկական և հոգու անմահությունը գլխավոր մոտիվներն էին:

«Ֆեդոնում» Պլատոնը խորացնում է «Մենոնի» մեջ արտահայտած մտքերը: Զգայահասու աշխարհում և ոչ մի անհավասարություն չի խլում մեզնից հավասարության հասկացությունը, ոչ մի անկատարություն չի ոչնչացնում կատարելության զգացումը: Բայց եթե

* Walter Kranz, Die Griechische Philosophie, Darmstadt, 1962, S. 160.

ճանաչողը չի արարել զաղափարները (մի բան, որ անհավանական է) կամ ձեռք չի բերել դրանք զգայական եղանակով, մնում է մեկ տարբերակ. դրանք ներդրված են հոգու խորքերում*, որտեղից պիտի դուրս բերվեն ճանաչողությամբ, որի մեթոդը հայեցողական վերհուշն է (ἀνάμνησις):

Ճանաչողության որակային աստիճանակարգման հարցը նույնպես հուզել է Պլատոնին: Իմացաբանության բաժանումները նա համաձայնության է բերում գոյաբանականների հետ: Այսպես, եթե կեցության և չգոյության մեղիատորը զգայական աշխարհն է, ապա իմացության և տգիտության միջանկյալ օղակ է կարծիքը (δόξα): Զգայական աշխարհի համաբանությամբ սա հաստատուն չէ և հակադրվում է իմացությանը (ἐπιστήμη), ինչպես զգայահասու աշխարհը հակադրվում է մտահասուին: Թե՛ կարծիքը, թե՛ իմացությունը ունեն իրենց ստորադաս սեռային տարբերակները: Կարծիքը տարբերակվում է երևակայությունը (εἰκασίσις) և հավատը (πίστις), իսկ իմացությունը՝ խորհրդածությունը (διάνοια) և մտավոր ինտուիցիան (νόσις): Երևակայությունը համապատասխանում է զգայահասու աշխարհի երկու աստիճաններին՝ իրերի ստվերներին և պատկերներին, հավատը՝ հենց իրերին, իսկ խորհրդածությունը և մտավոր ինտուիցիան համապատասխանաբար մտահասու աշխարհի երկու աստիճաններին՝ մաթեմատիկական ճանաչողությանը և զաղափարների դիալեկտիկային:

«Պետության» մեջ պատմվում է քարանձավի մյուսոսը, որը Պլատոնի մետաֆիզիկայի և իմացաբանության համադրական սիմվոլն է: Մարդու կեցությունը զգայական աշխարհում համեմատվում է խոր քարանձավում բանտարկվածի կյանքին, որը չի տեսնում ո՛չ քարանձավից դուրս վառվող հուրը, ո՛չ դրանից վեր Արեգակը, ո՛չ էլ ուսերին փայտե ու քարե քանդակներ տանող մարդկանց, քանի որ քարանձավի մուտքը փակված է քարակույտով: Նա միայն լսում է դրսում եռացող կյանքի արձագանքը և տեսնում քանդակների ստվերները, որ ընկնում են անձավի պատերին: Սա ստիպում է նրան հավատալ, թե այդ ստվերներն ու ձայների աղղտ արձա-

* Իմացության բնածինության և վիրտուալության բոլոր տեսությունները և անգամ կանտյան իդեալիզմի ֆունդամենտալ պատկերացումները (իդեալիզմ, որն ինքը Կանտը անվանում էր ֆորմալ) գոյանում են պլատոնականության այս պարարտ հողից:

գանքն է միակ իրականությունը: Մինչդեռ եթե նրան հաջողվեր ազատվել իրեն կաշկանդող շղթաներից և մի փոքր առաջ շարժվել դեպի մուտքը, նա քարակույտի վրայով կկարողանար տեսնել դրսում շարժվող քանդակները և կհասկանար, որ ո՛չ դրանք են իրական և ո՛չ էլ դրանց ստվերները: Քարանձավից վերջնականապես դուրս գալու դեպքում կտեսներ Արեգակի ճառագայթներով լուսավորված իրերը, իսկ այնուհետև հենց հուրը և հենց Արեգակը:

Մյուսոսը սպառիչ կերպով ներկայացնում է ռեալության Պլատոնի գոյաբանական աստիճանակարգումը: Քանդակների ստվերները և դրսից եկող ձայների արձագանքը իրերի պատրանքներն են, քանդակները՝ զգայահասու իրերը, քարակույտը կեցության երկու կարգերի գծաբաժանն է, քարանձավից դուրս գտնվող մարդիկ և իրերը իսկական կեցությունն են, որն առաջնորդում է դեպի գաղափարները, իսկ Արեգակը բարիքի գաղափարն է: Զուգահեռաբար ներկայացվում է նաև ճանաչողության աստիճանավորումը: Ստվերների հայեցումը խորհրդանշում է երևակայությունը (εἰκασίᾱ), քանդակներիինը՝ հավատը (πίστεις): Սրանց հաջորդում է հենց իրերի ըմբռնումը և այնուհետև Արեգակի նախ միջնորդավորված, այնուհետև անմիջական ըմբռնումը, որ նշում է դիալեկտիկայի փուլերը, որոնցից վերջինը ինտելեկտուալ հայեցողությունն է*:

* * *

Ճշմարտությունը ճանաչելու պրոցեսում Պլատոնը ոչ միայն ժխտում է ստեղծագործության և արվեստի դերը, այլև համարում դրանք վնասակար: Արվեստն, ըստ նրա, քողարկում է ճշմարտությունը և

* Քարանձավի մյուսոսի և պլատոնյան ճշմարտության հասկացության չափազանց հետաքրքիր վերլուծություն է կատարում Մարտին Յայդեգգերը իր *Platons Lehre von der Wahrheit* (Frankfurt a. M., 1997) գրքում, որի վերջին պարբերություններից մեկը բերում ենք ամբողջությամբ. «Քարանձավի պարբերում ներկայացված պատմությունը ցույց է տալիս, թե ինչն է շարժող ուժ եղել և դեռ կլինի արևմտյան մարդկության պատմության համար: Մարդը մտածում է ճշմարտության էությունը համայն կեցությունն ըստ գաղափարների ճիշտ պատկերացնելու, իսկ ամեն իրականը որպես արժեք գնահատելու իմաստով: Որոշիչը միայն այն չէ, թե ինչ գաղափարներ և ինչ արժեքներ են ընդունված, այլ՝ որ ընդհանրապես իրականը մեկնաբանվում է գաղափարներով և աշխարհը չափվում է արժեքներով» (էջ 39):

Սերգեյ Ստեփանյան

գործի դնում մարդու ոչ թե բանական, այլ իռացիոնալ ունակությունները, քանի որ աստծո ներշնչանքով (ένθουσιαστος) ստեղծագործող արվեստագետը չի գիտակցում, թե ինչ է անում և գտնվում է մի տեսակ մոլեգնության վիճակում: «Պետության» մեջ արվեստի երկը հռչակվում է զգայականի միմեսիս, և հետևաբար այն նույնքան հեռու է ճշմարտությունից, որքան պատճենը բնօրինակից: Կեղծիքից խուսափելու համար արվեստն, ըստ Պլատոնի, պիտի ստուգվի փիլիսոփայությամբ, քանի որ փիլիսոփայությունն է, որ միտված է ճշմարտությանը:

Հռետորական արվեստը նույնպես ճշմարտության հետ ընդհանուր քիչ բան ունի, և հռետորն ավելի շուտ ոչ թե ուսյալ մեկն է, այլ նա, ով խոսքային ճարպիկ համոզումների միջոցով այդպիսին է երևում տգետ ամբոխի աչքերում: «Գորգիասում» արտահայտված այս ծայրահեղ տեսակետը մի փոքր մեղմվում է «Ֆեդրոսում», որտեղ Պլատոնը այնուամենայնիվ ընդունում է հռետորական արվեստի՝ որպես քննախոսական կուլտուրայի անհրաժեշտությունը:

* * *

Մարդկային հասարակության զարգացումը per se Պլատոնը համարում է հարաբերական և ոչ հուսալի: Կերելյի ու ծաղկման ժամանակահատված հորջորջված պերիկլյան դարաշրջանը նվաճումների կողքին ուներ նաև իր անկումներն ու կորուստները: Դա վերաբերում է առաջին հերթին բարքերին, որոնց հարցում պերիկլյան շրջանի աթենացին ակներևաբար զիջում էր հներին, «որոնք ավելի առաքինի էին և բնակվում էին աստվածների հետ» («Պետություն»):

Ճշմարիտ առաքինությանը հասու է լոկ այն հասարակությունը, որը հիմնված է աստվածային սկզբունքների վրա և որի առաջնորդը փիլիսոփան է: Այն, ինչը Պլատոնին մղեց արմատապես վերանայելու հասարակական կյանքն ու դրա դրվածքը, բուն փիլիսոփայական մոտիվացիայից զատ ունի նաև այլ կարգի պատճառներ, որոնց թվում «...պելոպոննեսյան պատերազմից հետո աթենացու և հատկապես արիստոկրատի մեջ գոյացած պեսսիմիզմն է»*:

Դեմոկրատիայի բերած ծաղկումն ու բարեկեցությունը անցողիկ էր, հետևաբար հիմնված չէր ճշմարիտ հիմքերի վրա: Այսպես,

* Wilhelm Windelband, Platon, Stuttgart, 1901, SS. 149 u. f.

Պլատոն. կյանքը և գործը

զանգվածների վճռին ապավինող իշխանությունը շատ շուտ ընկնում է հռետորների և սոփեստների շողոմ ճառերի ու խոստումների ազդեցության տակ:

Պլատոնը դեմ է ուռճացած պետության գաղափարին: Նրա համոզմամբ հենց փոքր քաղաք-պետությունն է հնարավորություն տալիս կազմելու ուժեղ հասարակություն, որն ի վիճակի է պաշտպանելու իրեն արտաքին թշնամիներից: Շարունակելով Սոկրատեսի այն միտքը, թե առանձին մարդը պիտի աշխատի առաջին հերթին ինքն իր վրա և հետո միայն պետության, Պլատոնը գտնում է, որ իր հայրենիքին փիլիսոփա առաջնորդի մատուցած ծառայությունը անհրաժեշտ զոհաբերություն է: Պետության կառուցումը միտված է առաքինության պահպանմանը, որովհետև քաղաքացիների միայն բնական պահանջների բավարարման դեպքում այն պետություն կոչվելու արժանի չէր լինի: Քանի որ առաքինությունը ճանաչողության խնդիր է և կազմում է փիլիսոփայության զբաղմունքը, հասկանալի է դառնում, թե ինչու պետության կառավարումը չի կարող հանձնվել զանգվածներին: Իշխանության գլուխ պետք է կանգնած լինի արիստոկրատը, որը պիտի ծնվի ամենաբարվոք պայմաններում, դաստիարակվի մուսանների արվեստով, մարմնամարզությամբ, մաթեմատիկայով և դիալեկտիկայով: Իշխանությանը հպատակների լիակատար ենթարկվածությունը պիտի ուղեկցվի հրաժարումով մասնավոր սեփականությունից և ընտանիքից, ինչն ըստ Պլատոնի արմատախիլ կանի անձնական շահը, որ պետության առաջին թշնամին է: Հասարակական բարօրություն առաջարկող պետության այլ ձևերը Պլատոնը հայտարարում է արատավոր:

Հարկ է նկատել, որ սպարտացիների և պյոթագորյանների ասկետիկ մոտեցումների հետ իր որոշակի նմանություններով հանդերձ՝ Պլատոնի այս տեսությունն իր արմատներով հասնում է նրա փիլիսոփայական համակարգի հիմնադրույթներին. մարդկային գոյության մասնավոր կողմը ստորադասվում է իդեալական պետության շահերին ժիշտ այնպես, ինչպես զգայահասու աշխարհը ստորադասվում է մտահասու աշխարհի ճանաչողությանը:

* * *

Պլատոնի ազդեցությունը փիլիսոփայական մտքի հետագա էվոլյուցիայի վրա վիթխարի է: Ուայթհեդի բնորոշմամբ՝ ողջ արևմտյան

փիլիսոփայությունը կարելի է դիտել որպես «Տիմոսի» ընդարձակ մեկնություն*։ Դժվար է չհամաձայնել։

Պլատոնի շարունակողն ու առաջին քննադատը նրա աշակերտ Արիստոտելն է։ Վերջինիս համար քննադատության թիրախ դարձավ գլխավորապես գաղափարների և իրերի պլատոնյան դուալիզմը, ինչպես նաև պյութագորյանների ոգով աշխարհի մաթեմատիզացիան։ Ուսուցչի ուսմունքը Արիստոտելը ներկայացնում է որպես ավարտուն դոգմատիկ համակարգ, որը չենք գտնում Պլատոնի տեքստերում։ Հանգամանքը, որ հենց այդ համակարգն է հետագայում դրվել նորպլատոնականության մետաֆիզիկայի հիմքում, որոշ հետազոտողների առիթ է տվել առաջ քաշելու վարկած «գրի չառնված ուսմունքի» մասին, որը ենթադրաբար տարածվել է միայն հաղորդյալների էզոտերիկ նեղ շրջանում**։

Պլատոնյան փիլիսոփայության հենց միստիկ տարրերից են ոգեշնչվում նորպլատոնականության հիմնադիր, անտիկ շրջանի սպեկուլյատիվ վերջին հանձար Պլոտինոսը և նրա հետևորդ Պրոկլոսը։

Մտահասու և զգայահասու աշխարհների բաժանումը և ծանաչողության առանձնացումը որպես մարդկային գոյության ու փրկության իմաստ, նպատակ և պայման, եղել է պլատոնիզմի գաղափարական կենսունակ առանցքը, որն իր հիմնական գծերով նույնն է մնացել թե՛ նորպլատոնականության հիշյալ ներկայացուցիչների, թե՛ միջնադարյան ռեալիստների, թե՛ Վերածնության նորպլատոնականների ըմբռնումներում։ Եվ եթե անտիկ շրջանից մինչև Վերածնություն Փիլիսոփա պատվաշնորհ անունով կոչում էին Արիստոտելին (ինչպես Յոմերոսին կոչում էին Պոետ), ապա Պլատոնին անվանում էին «աստվածային» կամ պարզապես՝ «աստված»։

Ավգուստինոսը գտնում է, որ անտիկ փիլիսոփաներից քրիստոնեությանը ամենից հոգեհարազատ է Պլատոնը։ Արդեն II դարում քրիստոնյա հեղինակների գրվածքներում հանդիպում է լեգենդ, համաձայն որի Պլատոնը Եգիպտոս կատարած ճանապարհորդության ժամանակ ծանոթացել է «Գիրք Ծննդոցի» բովանդակությանը և դրանից արտագրել իր «Տիմոսը»։ Լեգենդին փորձում էին իրականություն վերագրել՝ որպես փաստարկ բերելով պնդումը, թե ամենազոր,

* Տե՛ս A. N. Whitehead, *Process and Reality*, N.Y., 1929, p. 142 sqq:

** Տե՛ս K. Gaiser, *Plato's Ungeschriebene Lehre*, Stuttgart, 1968:

ամենագետ և բացառապես սեփական բարության ուժով արարող աստծո պատկերացումը չէր կարող ծնվել հեթանոսական գլխում ինքնաբերաբար: Չնայած պլատոնականության նկատմամբ իր անթաքույց հիացմունքին՝ վաղ քրիստոնեական ավանդույթը, այդ թվում նաև Ավգուստինուսը, միշտ փորձել է մեկնաբանել Պլատոնին, խլացնելով նրա տեսության դուալիզմը: Այդ դուալիզմի ազդեցությունն է կրում նաև Դեկարտը, որը սխուլաստիկ փիլիսոփայության լծացմանն ու սնանկ մեթոդին որպես այլընտրանք առաջադրեց աշխարհըմբռնման մի կոնցեպցիա, որը ելնում է միմյանց չհանգեցվող երկու սուբստանցների (մտածող և տարածիչ) սկզբունքից: Հայտնի է, որ հենց ծայրահեղ «պլատոնիզմի» համար է Լայբնիցը քննադատել Դեկարտին:

Նոր ժամանակի փիլիսոփայության կոնցեպտուալ զինանոցը, ընդ որում թե՛ էմպիրիկների, թե՛ ռացիոնալիստների դեպքում, կազմել են գլխավորապես պլատոնականությունից սերած հասկացություններն ու տերմինները:

Իդեալիզմն իր մեծ վերելքն ապրեց Գերմանիայում, ուր Կանտն առաջադրեց սկզբունքորեն նոր իմացաբանական պրոբլեմատիկա: Սակայն նրա ծրագրային քննադատության առարկան՝ զուտ բանականությունը, շրջանառության մեջ է շատ ավելի վաղ ժամանակներից. այդ հասկացությանն առաջին անգամ անդրադարձել է Պլատոնը: Ինչ վերաբերում է պլատոնյան գաղափարների արքայությանը, այս առումով ինքը Կանտը գրում է. «Եթե մի կողմ դնենք Պլատոնի շարադրման մեջ եղած չափազանցումները, ապա այդ փիլիսոփայի ոգու թռիչքը, որ աշխարհակարգի մեջ առկա ֆիզիկականից վեր է խոյանում դեպի այդ աշխարհի արխիտեկտոնիկ կապն ըստ նպատակների, այսինքն՝ ըստ գաղափարների, մի ճիգ է, որն արժանի է ակնածանքի և ընդօրինակման, իսկ ինչ վերաբերում է բարոյականության, սահմանադրության և կրոնի սկզբունքներին, որտեղ միայն գաղափարներն են նախ և առաջ հնարավոր դարձնում փորձը... ապա այստեղ Պլատոնն ունի միանգամայն յուրահատուկ մի ծառայություն, որը չի ընդունվում լրկ այն պատճառով, որ դա գնահատում են համաձայն հենց այն կանոնների, որոնց նշանակալիությունը, իբրև սկզբունքների, պիտի և մերժեր փորձը»*:

* Immanuel Kant, Kritik der reinen Vernunft, Hamburg, 1990, S. 353.

Սերգեյ Ստեփանյան

Պլատոնի վճռորոշ ազդեցությունը գերմանական իդեալիզմի մյուս հսկայի՝ Յեգելի վրա անուրանալի է: Վերջինիս «Տրամաբանության գիտության» վիթխարի կառույցը անհնար կլիներ առանց այն հիմնարար գաղափարների, որ արժարժվում են Պլատոնի երեք բարդագույն տրամախոսություններում՝ «Սոփեստում», «Ֆիլեբոսում» և հատկապես «Պարմենիդեսում»: Յեգելի պնդմամբ՝ այստեղ է առաջին անգամ գիտակցվել «պոզիտիվ» դիալեկտիկայի էությունը:

Պլատոնի գաղափարների ուսմունքը այն աստիճան ոգեշնչել է Շոպենհաուերին, որ իռացիոնալ կամքի աշխարհի իր պեսսիմիստական կոնցեպցիայում վերջինս տեղ է հատկացրել նաև բանական գաղափարների աշխարհին:

Փիլիսոփայության նորագույն զարգացումները՝ նեոկանտականությունը, ֆենոմենոլոգիան և էքզիստենցիալիզմը, մշտապես իրենց քննության և վեճերի կիզակետում են պահել Պլատոնին: Սակայն միայն փիլիսոփայությունը չէ, որ առ այսօր ողողված է մնում նրա հիմնարար գաղափարներով: Գրականությունը և գրաքննադատությունը, արվեստը, պատմագիտությունը, մշակութաբանությունը, աստվածաբանությունը, մաթեմատիկան և անգամ ֆիզիկան (բավական է հիշել Չայզենբերգին և Շրյոդինգերին) մշտապես գործ են ունեցել նրա գաղափարների և հեղինակության մերժման կամ ռեաբիլիտացիայի հետ:

Պլատոնի պրոբլեմը փիլիսոփայության մեծագույն պրոբլեմներից է, եթե ոչ ամենամեծը (չէ՞ որ նա «ինքը փիլիսոփայությունն է»): Եվ եթե ճշմարիտ է կարծիքը, համաձայն որի փիլիսոփայության պատմությունը իդեալիզմի պատմությունն է, ուրեմն այն հավասարապես կարելի է կոչել նաև Պլատոնի պատմություն:

Սերգեյ Ստեփանյան



ՍՈԿՐԱՏԵՍԻ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆԸ

Թե որքանով համոզեցին ձեզ, ո՛վ աթենացի այրեր¹, իմ մեղադրողները², չգիտեմ: Այնքան համոզիչ էին խոսում, որ ես էլ քիչ մնաց մոռանամ ինքս ինձ: Բայց ըստ էության ճշմարիտ ոչինչ չասացին, իսկ իրենց բազում ստերից ամենից շատ զարմացրեց մեկը՝ այն, որ դուք պետք է զգուշանաք խաբվելուց, քանզի ես լավ եմ խոսում:

Սակայն ամենաամոթալին ըստ իս չամաչելն է, որ իսկույն կհերքեմ գործով, երբ պարզվի, որ լավ չեմ խոսում, եթե, իհարկե, լավի տակ նկատի չունեն ճշմարտությունն ասողին: Եթե այդ նկատի ունեն, ապա ես կհամաձայնեմ, որ հռետոր եմ, սակայն ոչ իրենց պես: Նրանք, կրկնում եմ, ճշմարիտ ոչինչ չասացին: Ինձնից լսեք ողջ ճշմարտությունը: Միայն թե, Ջևաղ վկա, դուք, աթենացի՛ այրեր, չեք լսի համեմատություններով ու մակդիրներով հարուստ պերճաշուք ճառ, ինչպես իրենց դեպքում, այլ կլսեք մի խոսք, որ կասվի մի կերպ, առաջին իսկ պատահած բառերով: Քանզի ես հավատում եմ, որ այն, ինչ կասեմ, արդար է, և ձեզնից ոչ ոք թող ուրիշ ոչինչ չակնկալի: Չէ՞ որ, այրեր, վայել չէ ինձ այս տարիքում պատանու պես հանդես գալ ձեր առջև նախօրոք պատրաստած ճառով³: Միայն թե շատ եմ խնդրում ձեզ և աղաչում, աթենացի՛ այրեր, եթե լսեք, որ պաշտպանվում եմ այն նույն բառերով, որոնցով սովոր եմ խոսել ազորայում՝ դրամափոխների սեղանների⁴ մոտ, ուր ձեզնից շատերը լսել են [ինձ], և այլուր, չզարմանաք ու չաղմկեք:

Այդ է իրողությունը: Այժմ յոթանասուն տարեկան հասակում⁵ առաջին անգամ բերվել են դատարան, և մի անվարժ օտարական են ինձ զգում այստեղի լեզվով խոսելու համար:

18 Իրականում, եթե օտարական լինեի, դուք կներեիք այն լեզուն ու խոսելու ձևը, որով դաստիարակվել են, այնպես որ հիմա, կարծում եմ, իրավունք ունեմ խնդրելու, որ ներողամիտ լինեք իմ խոսելաճի հանդեպ՝ լավը լինի, թե վատը: Նաև խնդրում եմ ուշադրություն դարձնել՝ արդյոք արդար են խոսում, թե ոչ: Քանզի ուշադիր լինելն է դատավորի առաքինությունը, իսկ հռետորի առաքինությունը՝ ճշմարտություն ասելը:

Նախ, աթենացի՝ այրեր, ճիշտ կլինի, եթե ես պաշտպանվեմ նախկին կեղծ մեղադրանքներից և առաջին մեղադրողներից, իսկ այնուհետև հետագա մեղադրանքներից ու մեղադրողներից: Ձեզանից առաջ շատերն են մեղադրել ինձ բազում տարիներ և ճշմարիտ ոչինչ չեն ասել. դրանցից ես ավելի շատ եմ երկյուղում, քան Անիտոսի շուրջ համախմբվածներից, թեև սրանք նույնպես վտանգավոր են: Սակայն առաջիններն ավելի վտանգավոր են, ո՛վ այրեր. նրանք ձեզնից շատերի վրա ազդեցին, երբ դեռ երեխա էիք, և մեղադրեցին ինձ, անհիմն հայտարարելով, իբր կա ոմն Սոկրատես, իմաստուն այր, որը խորհում է երկնքում եղածի մասին և հետազոտում է երկրի տակ եղած ամեն բան⁶՝ վատ խոսքը ներկայացնելով որպես լավ:

c Այդ համբավը տարածած մարդիկ, աթենացի՝ այրեր, իմ ամենավտանգավոր մեղադրողներն են, քանզի նրանց լսողները կարծում են, թե այդպիսի բաներ հետազոտողները չեն ընդունում աստվածներին: Բացի այդ, հիշյալ մեղադրողները բազմաթիվ են և արդեն վաղուց է, ինչ մեղադրում են, ընդ որում խոսում էին այն ժամանակ, երբ դուք երեխա էիք կամ պատանի և ամենից շատ էիք հակված հավատալու, իսկ հեռակա մեղադրողներից պաշտպանվող չկար: Բայց ամենից անհեթեթն այն է, որ նրանցից և ոչ ոքի անունը

հնարավոր չէ իմանալ և տալ, եթե իհարկե նրանցից մեկը չլինի ինչ-որ կատակերգու⁷: Իսկ նրանք, ովքեր լարել են ձեզ իմ դեմ նախանձից ու ատելությունից, և նրանք, ովքեր հավատալով նրանց՝ համոզում էին նաև ուրիշներին, բոլորն էլ անհասանելի են: Դրանցից ոչ մեկին հնարավոր չէ հրավիրել այստեղ կամ քննել, և ես ստիպված եմ անիմաստ ճակատամարտ տալ սովերներին՝ պաշտպանվելով ու հերքելով, երբ ոչ ոք չի պատասխանում: Ուստի դուք էլ հաշվի առեք, որ, ինչպես ասացի, իմ մեղադրողները երկու տեսակ են՝ մի մասը մեղադրում է այժմ, իսկ մյուս մասը մեղադրել է վաղուց,– սրանց մասին ասացի,– և իմացեք, որ նախ պիտի պաշտպանվեմ առաջիններից: Չէ՞ որ դուք էլ նախ լսել եք իրենց մեղադրանքները, ընդ որում ավելի հաճախ, քան երկրորդների:

Ուրեմն պետք է պաշտպանվեմ, աթենացի՛ այրեր, և կարճ ժամանակում փորձեմ հերքել երկար ժամանակ ձեր մեջ տիրող զրպարտանքը: Կուզեի, որ դա լիներ և՛ ինձ, և՛ ձեզ համար լավագույն ձևով,– պաշտպանվելով էլ ի՞նչ կարող եմ անել ավելի: Կարծում եմ, դժվար կլինի, և դա ինձ հայտնի է: Ամեն դեպքում թո՛ղ որ սա հաճելի լինի աստծուն. իսկ օրենքին պետք է հնազանդվել և պաշտպանվել:

Սկսենք ամենասկզբից: Ո՞րն է մեղադրանքը, որից ծագեց իմ դեմ ուղղված այս զրպարտանքը և որին հավատալով՝ Մելետոսը գրեց այդ մատնագիրը: Ի՞նչ էին ասում զրպարտողները: Նրանց մեղադրանքը արժե կարդալ որպես մեղադրողների երդում. «Սոկրատեսն անօրենություն է գործում և զուր բաներով զբաղվում, հետազոտելով այն, ինչ երկրի տակ է և ինչը՝ երկնքում, իսկ վատ խոսքը ներկայացնում է որպես լավ և սովորեցնում այդ ամենը ուրիշներին»: Այսպիսին է այդ մեղադրանքը: Դուք ինքներդ էլ տեսել եք դա Արիստոփանեսի կատակերգության մեջ. բերվում է ոմն Սոկրատես, և ասում, թե քայլում է օդով, և բազում այլ ցնդաբանություններ դուրս տալիս, որոնցից ես անձամբ ոչինչ չեմ հասկանում:

Այս բոլորն ասում են ոչ թե այդպիսի գիտությունն անպատվելու համար, մանավանդ եթե ինչ-որ մեկը իմաստուն է նման հարցերում (չլինի թե Մելետոսը հիմա էլ սրա համար ինձ մեղադրի), քանզի այդ բոլոր գրպարտանքները, աթենացի՝ այրեր, ինձ չեն առնչվում: Վկայակոչում եմ հենց ձեզնից շատերին և խնդրում միմյանց հետ քննել ու ասել՝ արդյոք նրանք, ովքեր լսել են ինձ գրուցելիս, — իսկ ձեր մեջ շատ են այդպիսիք, — երբևէ տեսել են, որ ես խոսեմ նման բաների մասին: Այդժամ կհասկանաք, որ նույնքան անարդար են իմ մասին նաև մյուս ասվածները:

- e Իրականում ո՛չ դա է ձձմարիտ, ո՛չ էլ այն, որ ես դրամ եմ վաստակում մարդկանց դաստիարակելով: Թեև ինձ թվում է, որ շատ լավ է, երբ ինչ-որ մեկը կարող է դաստիարակել մարդկանց, ինչպես, օրինակ, լեոնտացի Գորգիասը, կեոսացի Պրոդիկոսը և էլիսացի Յիպպիասը⁸: Չէ՞ որ սրանցից յուրաքանչյուրը, ո՛վ այրեր, գալով որևէ քաղաք, համոզում է երիտասարդներին, որոնք կարող էին
- 20 անհատույց շփվել համաքաղաքացիների հետ, թողնել սրանց և շփվել իրենց հետ՝ բերելով դրամ ու երախտագիտություն: Այստեղ ներկա է նաև մեկ այլ իմաստուն այր, որը, ինչպես իմացա, Պարիոսից⁹ է: Այնպես պատահեց, որ ինձ դիմեց մի մարդ, որն ավելի շատ էր վճարել սովեստներին, քան բոլոր մյուսները միասին վերցրած՝ Կալլիասը, Յիպպոնիկոսի որդին¹⁰: Ես հարցրի նրան (իսկ սա երկու որդի ուներ).

– Ո՛վ Կալլիաս, եթե քո որդիները մտրուկներ կամ հորթեր լինեին, մենք ստիպված կլինեինք նրանց համար վերակացու վարձել, որը կկատարելագործեր նրանց առանձին առաքինությունները: Եվ դա կլիներ կամ ինչ-որ հեծյալ, կամ հողագործ: Բայց քանի որ որդիներդ մարդ են, ու՛մ ես մտադիր նրանց համար վերակացու վարձել: Ո՛վ է մարդկային և պետական նման առաքինության գիտակը: Կարծում եմ, քանի որ որդիներ ունես, դու մտածել ես այդ մասին: Կա՞ այդպիսի մեկը, թե՞ ոչ:

– Իհարկե կա:

– Ո՞վ է,– հարցրի,– որտեղի՞ց է և որքա՞ն դրամ է վերցնում ուսուցման դիմաց:

– Էվենոսն է,– ասաց,– Սոկրատես, պարիոսցի Էվենոսը c
վերցնում է հինգ մինա¹¹:

Եվ ես երանի տվեցի Էվենոսին, եթե նա իսկապես ունի այդ շնորհքը և այդքան հոգատար է ուսուցման գործում: Ես ինքս էլ կպարծենայի և հպարտ կլինեի, եթե ունենայի այդ շնորհքը: Բայց չէ՞ որ չունեմ, աթենացի՛ այրեր:

Գուցե ձեզնից ինչ-որ մեկն առարկի և ասի. «Ո՞վ Սոկրատես, իսկ ո՞րն է եղել քո զբաղմունքը: Որտեղի՞ց ծագեցին քո դեմ [ուղղված] այս դավերը: Չէ՞ որ եթե մյուսների արածից տարբեր ոչինչ չանեիր, չէր լինի այսքան բամբասանք ու ասեկոսե: Արդ, ասա մեզ, թե այդ ինչ զբաղմունք է, որպեսզի մենք անհիմն չհորիներք քո մասին»: Ըստ իս՝ սա ճիշտ հարց է, և ես կփորձեմ ձեզ ցույց տալ, թե d
ինչը դարձավ իմ համբավի և զրպարտանքների պատճառը: Գուցե ձեզնից ոմանց թվա, թե ես կատակում եմ, բայց լավ իմացեք, որ ճշմարտություն եմ ասում:

Աթենացի՛ այրեր, այդ համբավը ես վաստակել եմ ոչ այլ բանի, քան ինչ-որ իմաստության շնորհիվ: Ի՞նչ իմաստություն է դա: Գուցե մարդկային: Այդպիսի իմաստություն ես e
կարծես թե իսկապես ունեմ, իսկ նրանք, որոնց քիչ առաջ հիշատակեցի, կարծես թե աչքի են ընկնում ավելի մեծ, մարդկայինից ավելի բարձր իմաստությամբ, որի մասին չգիտեմ էլ ինչ ասեմ: Ես չեմ հասկանում այդ իմաստությունը, իսկ նա, ով ասում է, թե հասկանում եմ, ստում է և ինձ զրպարտելու համար է ասում: Մի՛ աղմկեք, աթենացի՛ այրեր, անգամ եթե ձեզ թվա, թե մեծամիտ եմ խոսում: Ես ոչ թե իմ խոսքն եմ ասում, այլ վկայակոչում եմ ձեր իսկ վստահած մեկին: Որպես վկա իմ իմաստության,– եթե ունեմ իմաստություն,– վկայակոչում եմ Դելփիքի աստծուն¹²: Դուք գիտեք Քերեփոնին¹³: Նա պատանի տարիքից եղել

- 21 է իմ և շատերիդ ընկերը, ձեզ հետ եղել է աքսորում, ձեզ հետ վերադարձել: Եվ դուք գիտեք, թե ինչպիսին էր Քերեփոնը, որքան աննկուն էր իր նախածեռնություններում: Մի անգամ, գալով Դելփիք, նա տվեց պատգամախոսին հետևյալ հարցը:— Ասում եմ ձեզ, մի՛ աղմկեք, այրե՛ր:— Նա հարցրեց՝ արդյոք գոյություն ունի՞ ինձնից իմաստուն որևէ մեկը: Եվ Պյութիան պատասխանեց, որ ավելի իմաստուն ոչ ոք չկա: Այդ մասին ձեզ կվկայի այստեղ ներկա Քերեփոնի եղբայրը¹⁴, քանզի ինքը Քերեփոնը վախճանվել է:
- b Տեսեք, թե ինչու եմ դա ասում. չէ՞ որ ես ուզում եմ բացատրել ձեզ, թե որտեղից է գոյացել իմ դեմ այս զրպարտանքը: Երբ իմացա այդ գուշակության մասին, սկսեցի ինքս ինձ մտածել. «Արդյոք ի՞նչ նկատի ունի աստված և ի՞նչ է ակնարկում: Չէ՞ որ ես ինձ բոլորովին էլ իմաստուն չեմ համարում: Ի՞նչ նկատի ունե՞ր ուրեմն, ասելով, թե ես եմ ամենաիմաստունը: Չէ՞ որ չէր ստում, վայել չէ»: Երկար ժամանակ չէի հասկանում, թե ինչ էր ուզում ասել, իսկ հետո մեծ դժկամությամբ այսպես շարունակեցի փնտրտուքս:
- c Գնացի մեկի մոտ նրանցից, որոնք իմաստուն են համարվում, մտածելով, թե հենց այստեղ, և ոչ այլուր, կհերքեմ գուշակությունը և կհայտնեմ պատգամախոսին. «Սա ինձնից իմաստուն է, իսկ դու ինձ ես իմաստուն կոչում»: Բայց մի լավ տնտղեցի նրան,— անունը հիշատակելու կարիք չկա, քաղաքական գործիչներից էր,— և տեսնելով, թե ինչ է անում, աթենացի՛ այրեր, ու զրուցելով նրա հետ, որոշեցի, որ այդ մարդը միայն թվում է իմաստուն թե՛ ուրիշներին և թե՛ հատկապես ինքն իրեն, սակայն բնավ այդպիսին չէ: Յետո
- d տո փորձեցի ցույց տալ, որ իրեն միայն թվում է, թե ինքը իմաստուն է, և որ դա այդպես չէ: Ահա ինչու թե՛ նրան, թե՛ ներկաներից շատերին ատելի դարձա, իսկ երբ հեռանում էի նրանից, ինքս ինձ մտածում էի, որ ես ավելի իմաստուն եմ, քանզի մեր երկուսից ոչ ոք կարգին ոչինչ չգիտի, մինչդեռ նա չիմանալով կարծում է, թե գիտի, իսկ ես թեև չգիտեմ,

բայց չեմ էլ կարծում: Ինձ թվաց, որ այդ փոքր հարցում նրանից ավելի իմաստուն եմ, քանզի չիմանալով՝ չեմ կարծում, թե գիտեմ: Այդտեղից գնացի մեկ ուրիշի մոտ՝ նրանցից, ովքեր առաջինից ավելի իմաստուն էին թվում, և տեսա նույնը: Այդժամ ատելի դարձա և՛ նրանց, և՛ ուրիշ շատերին:

Այնուհետև արդեն այցելում էի բոլորին իրար ետևից. տեսնում էի, որ ատելի եմ դառնում, վշտանում էի ու երկյուղում, բայց անհրաժեշտ էի համարում աստծո խոսքը դասել ամենից բարձր: Պատգամի իմաստը հասկանալու համար պետք է այցելեի բոլոր ինչ-որ բան իմացող համարվողներին: Եվ, շունը վկա¹⁵, աթենացի՛ այրեր, պարտավոր եմ ասել այն ծճմարտությունը, որին բախվեցի. նրանք, ովքեր վայելում էին ամենամեծ փառքը, երբ ես քննեցի նրանց աստծո հրամանով, [իմաստության հարցում] ամենապակասավորները թվացին ինձ, իսկ մյուսները, որոնք պակաս իմաստուն էին համարվում, ավելի խոհեմ էին: Սակայն ես պետք է ձեզ պատմեմ իմ դեգերումների մասին: Ասես չարչարանք կրեի, իսկ պատճառը ցանկությունն էր, որ գուշակությունն այլևս անհերքելի դառնա ինձ համար: Քաղաքական այրերից հետո այցելեցի պոետներին՝ թե՛ ողբերգակներին, թե՛ ներբողագիրներին և թե՛ այլոց՝ տեղում հավաստիանալու, որ ես նրանցից տգետ եմ: Ձեռքս առնելով նրանց գրվածքները, որ ինձ թվում էին առավել մշակված իրենց կողմից, հարցնում էի, թե ինչ են ցանկացել ասել, որպեսզի ես էլ ինչ-որ բան սովորեմ նրանցից: Ամաչում եմ, ո՛վ այրեր, ասել ձեզ ծճմարտությունը, բայց պետք է ասեմ: Ըստ էության քիչ էր մնում, որ կողմնակի մարդիկ ավելի լավ խոսեն նրանց ստեղծագործության մասին, քան իրենք: Այսպես, կարճ ժամանակում պոետների մասին իմացա, որ ստեղծագործում են ոչ թե իմաստությամբ, այլ բնությամբ ու ներշնչանքով, ինչպես գուշակներն ու պատգամախոսները: Չէ՞ որ վերջիններս էլ բազում լավ բաներ են ասում, բայց իրենց ասածներից ոչինչ չեն հասկանում: Նման ինչ-որ

բան հատուկ է նաև պոետներին: Միաժամանակ հասկացա, որ իրենց ստեղծագործության պատճառով իրենք իրենց մարդկանցից ամենախմաստունն են համարում նաև այլ հարցերում, բայց նրանք այդպիսին չեն: Հեռացա նաև պոետներից՝ մտածելով, որ գերազանցում եմ իրենց այն նույն բանով, ինչ քաղաքական այրերին:

- Եվ ահա եկա արհեստավորների մոտ: Ես գիտակցում
- d էի, որ ինքս ըստ էության ոչինչ չգիտեմ, բայց հույս ունեի վերջապես գտնել բազում լավ բաներ իմացողների: Եվ չսխալվեցի. նրանք գիտեին այն, ինչ ես չգիտեի, և դրանով ավելի իմաստուն էին ինձնից: Սակայն, աթենացի՝ այրեր, այդ լավ արհեստավորներն ունեին նույն թերությունը, ինչ պոետները: Իր վարպետության պատճառով յուրաքանչյուրն իրեն ամենախմաստունն էր համարում նաև այլ ոլորտներում, և այդ մոլորությունը ստվեր էր գցում եղած իմաստության վրա: Ուստի ինքս ինձ հարցնում էի պատգամի մասին. ինչպե՞ս վարվել՝ մնալ այնպիսին, ինչպիսին կամ, և չլինել իմաստուն նրանց իմաստությամբ և ոչ էլ տգետ նրանց տգիտությամբ, թե՞ նրանց պես համատեղել այդ երկուսն էլ: Եվ ինձ ու պատգամախոսին պատասխանեցի, որ ավելի լավ է մնամ այնպիսին, ինչպիսին կամ:

- Հենց այդ քննության պատճառով, աթենացի՝ այրեր,
- 23 շատերին ատելի դարձա և այն էլ շատ ատելի, այնպես որ բազմաթիվ դավեր նյութեցին՝ ինձ տալով իմաստունի անուն, քանզի ներկաներն ամեն անգամ ինձ իմաստուն էին համարում այն հարցերում, որոնցում բացահայտում էի մեկ ուրիշի տգիտությունը: Մինչդեռ, ո՛վ այրեր, իմաստունն աստվածն է. նա իր պատգամի մեջ նկատի ուներ, որ մարդկային իմաստությունը չնչին արժեք ունի և ոչինչ է: Եվ
- b թվում է, նկատի ունի ոչ թե Սոկրատեսին, այլ օգտվում է իմ անունից օրինակի համար, ինչպես եթե ասեր. «Մարդիկ, ձեզնից ամենախմաստունը նա է, ով Սոկրատեսի նման գիտի, որ իր իմաստությունն իրականում ոչինչ չարժե»:

Ես դեռ հիմա էլ շարունակում եմ շրջել և ըստ աստ-
ծո խոսքի փնտրել այն քաղաքացուն կամ օտարականին,
որին իմաստուն կհամարեմ: Եվ ամեն անգամ, երբ դա ինձ
չի հաջողվում, աստծուն հավատարիմ մնալով՝ ես ցույց
եմ տալիս, որ այդ մարդն իմաստուն չէ: Այս զբաղմունքը
պատճառ եղավ, որ հնարավորություն չունեցա զբաղվելու
հիշատակման արժանի ո՛չ քաղաքական, ո՛չ էլ ընտանեկան
գործով, և դրա փոխարեն այսպես ծառայելով աստծուն, c
հայտնվեցի ծայրահեղ աղքատության մեջ:

Բացի այդ, երիտասարդները, որոնք լինելով հարուստնե-
րի որդիներ՝ կատարյալ պարապության են մատնված, լսե-
լով, թե ինչպես եմ փորձում մարդկանց, իրենք էլ հաճախ
ընդօրինակել են ինձ և փորձել ուրիշներին: Եվ, կարծում եմ,
շատերին են գտել, ովքեր համարում են, թե ինչ-որ բան գի-
տեն, մինչդեռ կա՛մ շատ քիչ բան գիտեն, կա՛մ էլ՝ ոչինչ: Եվ
բացահայտվողները բարկանում են ոչ թե իրենք իրենց, այլ
ինձ վրա, ասելով, որ կա ոմն Սոկրատես՝ մի սրիկա, որ այ- d
լասերում է երիտասարդներին: Եվ երբ նրանց հարցնում են,
թե այդ ինչ է անում և ինչ է սովորեցնում, ասելու ոչինչ չեն
գտնում, և որպեսզի անձարակ չերևան, նշում են այն ամենը,
ինչ ընդունված է ասել բոլոր փիլիսոփայողների մասին.
«երկնային մարմիններ», «գետնի տակ եղածը», «չեն ընդու-
նում աստվածներին» և «թույլ խոսքը ուժեղ են դարձնում»:
Կարծում եմ, նրանք չէին ցանկանա ասել ճշմարտությունը,
քանի որ այդ դեպքում պարզ կդառնար, որ նրանք ձևացնում
են, թե ինչ-որ բան գիտեն, բայց [իրականում] ոչինչ չգիտեն:
Սակայն լինելով փառասեր, ազդեցիկ ու մեծաթիվ և իմ մա- e
սին խոսելով համաձայնեցված ու համոզիչ՝ վաղուց արդեն
լցրել են ձեր ականջները սուտ զրպարտանքով:

Ահա ինչու հարձակվեցին ինձ վրա Մելետոսը, Անիտոսն
ու Լիկոնը. Մելետոսը գայրանալով պոետների համար, Անի-
տոսը՝ արիեստավորների և քաղաքական գործիչների, իսկ
Լիկոնը՝ հռետորների: Ուստի, ինչպես սկզբում ասացի, 24

կգարմանամ, եթե կարճ ժամանակում ինձ հաջողվի ձեր առջև հերքել այնքան ուռճացած մեղադրանքը:

- Ահա ճշմարտությունը, աթենացի՛ այրեր, ասում եմ այն՝ առանց թաքցնելու ո՛չ կարևորը, ո՛չ էլ մանրուքը և լավ իմանալով, որ դրանով եմ ատելի դառնում: Բայց մի՞թե դա չէ ապացույցն այն բանի, որ ճշմարտություն եմ ասում և որ սա զրպարտություն է և այդպիսին են նրա պատճառները: Եվ անկախ նրանից, թե երբ կքննեք իմ գործը՝ հիմա թե հետո, կտեսնեք, որ այդպես է:

- Ինչ վերաբերում է իմ առաջին մեղադրողներին, այս պաշտպանականը ձեզ համար պիտի որ բավական լինի: Այժմ կփորձեմ պաշտպանվել Մելետոսից (որն, ինչպես ասում է, առաքինի և հայրենասեր այր է¹⁶) և ուրիշներից: Այս անգամ էլ սկսենք ամբաստանագրից, հաշվի առնելով, որ սրանք այլ կարգի մեղադրողներ են: Ամբաստանագիրը հետևյալն է. «Սոկրատեսը մեղսագործ է, քանի որ այլասերում է երիտասարդներին և չի ընդունում այն աստվածներին, որոնց ընդունում է քաղաքը, այլ դավանում է ինչ-որ նոր դեմոնների»: Սա է մեղադրանքը¹⁷: Մանրամասն քննենք այն: Ասվում է, որ այլասերում եմ երիտասարդներին: Իսկ ես, աթենացի՛ այրեր, կասեմ, որ մեղք է գործում Մելետոսը, քանզի լուրջ բաների հետ է խաղում՝ հեշտությամբ դատարան բերելով մարդկանց, և ձևացնում է, թե մտահոգվում ու վշտանում է այնպիսի հարցերով, որոնցով երբեք չի զբաղվել: Իսկ որ դա այդպես է, ես կփորձեմ ձեզ ցույց տալ:

- Մոտեցիր ինձ, ո՛վ Մելետոս, և ասա. արդյո՞ք երիտասարդների ավելի լավը դառնալը չես համարում ամենից կարևորը:

– Այո:

– Այժմ ասա ներկաներին, թե ինչն է ավելի լավը դարձնում երիտասարդներին, քանզի ակներև է, որ եթե հոգ ես տանում դրա մասին, ապա գիտես: Այլասերողին, ինչպես ասում ես, գտել ես, բերել ես այս մարդկանց մոտ

ու մեղադրում ես: Իսկ հիմա ցույց տուր ավելի լավը դարձնողին և հիշեցրու նրանց, թե ով է: Տեսնում ես, Մելետոս, դու լռում ես և ասելու ոչինչ չունես: Մի՞թե չես ամաչում, և մի՞թե սա բավարար ապացույց չէ իմ այն խոսքերի, որ նման հարցերը քեզ չեն հուզում: Բայց ասա, ո՞վ բարի մարդ, ո՞վ է նրանց ավելի լավը դարձնողը:

– Օրենքները:

– Բայց ես չեմ հարցնում, թե ինչն է, այլ՝ ով է այդ մարդը, երանելի՛ս. ո՞վ է նա, որ նախ գիտի այդ օրենքները:

– Այս մարդիկ, Սոկրատես, դատավորները:

– Այդ ի՞նչ ես ասում, Մելետոս, այս մարդիկ կարող են դաստիարակել երիտասարդներին և ավելի լավը դարձնել:

– Իհարկե:

– Բոլորը, թե՞ նրանցից ոմանք կարող են, իսկ մյուսները՝ ոչ:

– Բոլորը:

– Լավ ես ասում, Չերան վկա¹⁸,– օգտակար մարդկանց ինչպիսի բազմություն: Իսկ քո կարծիքով ունկնդիրները ավելի լավն են դարձնում երիտասարդներին, թե՞ ոչ:

– Նրանք ևս:

– Իսկ խորհրդի անդամները¹⁹:

– Նաև խորհրդի անդամները:

– Իսկ ժողովում եղածները, Մելետոս, արդյո՞ք չեն այլասերում երիտասարդներին: Թե՞ նրանք բոլորը նույնպես ավելի լավն են դարձնում:

– Նրանք նույնպես:

– Ինչպես պարզվեց, ո՞վ աթենացիներ, բոլորը առաքինի են դարձնում նրանց, բացի ինձնից. միայն ես եմ այլասերում: Ա՛յդ ես ասում:

– Չենց այդ:

– Մեծ դժբախտության ես ինձ դատապարտում: Բայց ասա՛, ինչ ես կարծում՝ ձիերի դեպքում՝ էլ բանն այդպես

Պատոն

- է. ավելի լավը դարձնողները բոլոր մարդիկ են, իսկ այլատերողը՝ մեկը, թե՞ հակառակը, ինչ-որ մեկը կամ քչերն են ի վիճակի դրանց ավելի լավը դարձնելու՝ հեծյալները, իսկ շատերը, եթե գործ ունենան ձիերի հետ և օգտվեն նրանցից, կայլասերեն: Մի՞թե այդպես չէ, ո՛վ Մելետոս, թե՞ ձիերի, թե՞ մյուս բոլոր կենդանիների դեպքում: Իհարկե այդպես է, անկախ այն բանից՝ դու և Անիտոսը կմերժեք դա, թե կհաստատեք: Քանզի մեծ բարեբախտություն կլիներ երիտասարդներին համար, եթե միայն մեկը այլասերեր նրանց,
- c իսկ մյուսները՝ օգուտ տային: Բայց, Մելետո՛ս, դու բավականաչափ ցույց տվեցիր, որ երբևէ չես մտածել երիտասարդների մասին, և ի հայտ բերեցիր անհոգությունդ. դու բնավ հոգ չես տարել այն հարցերի մասին, որոնց համար ինձ բերել ես այստեղ:

Նաև ասա մեզ հանուն Ջևսի, ո՛վ Մելետոս, լավ է ապրել առաքինի՞ քաղաքացիների մեջ, թե՞ վատ: Պատասխանի՛ր, բարեկամս, չէ՞ որ դժվար բան չեմ հարցնում: Արդյո՞ք վատ քաղաքացիները միշտ չարիք չեն գործում իրենց մերձավորներին, իսկ առաքինիները՝ բարիք:

– Իհարկե:

- d – Կա՞ ինչ-որ մեկը, ով ավելի շատ կցանկանար վնաս կրել իր մերձավորներից, քան օգուտ ստանալ: Պատասխանի՛ր, բարի՛ մարդ,– օրենքը պատվիրում է պատասխանել: Կա՞ մեկը, ով ցանկանում է վնաս կրել:

– Իհարկե ոչ:

– Իսկ ինձ բերել ես այստեղ որպես մեկին, որը երիտասարդներին այլասերում է կամովի՞ն, թե՞ ակամա:

– Իհարկե կամովին:

- Այդ ինչպե՞ս, Մելետո՛ս: Դու, ուրեմն, քո տարիքում ավելի իմաստուն ես, քան ես իմ տարիքում, և գիտես, որ
- e չար մարդիկ իրենց առավել մերձավորներին մշտապես ինչ-որ չարիք են գործում, իսկ առաքինիները՝ բարի՞ք: Իսկ ես այնպիսի տգիտության եմ հասել, որ չեմ հասկանում

նույնիսկ այն, որ եթե մերձավորներից ինչ-որ մեկին սրիկա դարձնեմ, վտանգ կա, որ նրանից ինչ-որ չարիք կստանամ. և, ահա, այդ մեծ չարիքն անում եմ կամովին, ինչպես դու ես ասում: Սրանով ինձ չես համոզի, ո՛վ Մելետոս, և կարծում եմ՝ ուրիշներից ևս ոչ մեկին: Բայց կա՛մ չեմ այլաստերում, կա՛մ, եթե այլաստերում եմ, ապա ակամա, այնպես որ երկու դեպքում էլ սխալվում ես: Իսկ եթե ակամա եմ այլաստերում, ապա նման ակամա զանցանքների համար օրենքը պատվիրում է ոչ թե այստեղ դատարան բերել, այլ առանձին սովորեցնել ու խրատել: Չէ՞ որ ակնհայտ է, որ երբ սովորեմ, կդադարեմ անել այն, ինչ ակամա անում եմ: Բայց դու խուսափել ես ինձնից և չես ցանկացել սովորեցնել, փոխարենը բերել ես այստեղ, մինչդեռ օրենքը պատվիրում է բերել նրանց, ովքեր պատժի կարիք ունեն, և ոչ՝ ուսուցման:

26

Սակայն, աթենացի՛ այրեր, սրանից արդեն պարզ է, որ, ինչպես ասում էի, Մելետոսը երբեք դույզն իսկ չի մտահոգվել հիշյալ հարցերով: Ամեն դեպքում ասա մեզ, ո՛վ Մելետոս, ինչպե՞ս եմ այլաստերում երիտասարդներին: Ամբաստանագրից, որը գրել ես, պարզ է, որ անում եմ դա՛ սովորեցնելով չընդունել աստվածներին, որոնց ընդունում է քաղաքը, այլ ընդունել ուրիշ, նոր դեմոններ: Մի՞թե դա չես նկատի ունեցել, ասելով, թե այլաստերում եմ իմ ուսուցմամբ:

b

– Չենց այդ եմ ասել:

– Այժմ հանուն նրանց, Մելետո՛ս,– հանուն այդ աստվածների, որոնց մասին է խոսքը, ավելի պարզ ասա և՛ ինձ, և՛ այս մարդկանց, քանզի ես չեմ կարողանում հասկանալ, թե ինչ ես ասում. կա՛մ ես սովորեցնում եմ ընդունել ինչ-որ աստվածների և ուրեմն ինքս ընդունում եմ նրանց և ամբողջովին անաստված չեմ, հետևաբար դա չէ իմ հանցանքը, կա՛մ էլ սովորեցնում եմ ընդունել ոչ այն աստվածներին, որոնց ընդունում է քաղաքը, և դրա համար ես կանչել ինձ: Կամ էլ ասում ես, որ ընդհանրապես չեմ ընդունում աստվածներին և ուրիշներին էլ այդ եմ սովորեցնում:

c

– Դա եմ ասում, որ ընդհանրապես չես ընդունում աստվածներին:

d ո՛վ զարմանալի Մելետոս, ինչո՞ւ ես դա ասում: Ուրեմն ո՛չ Արեգակը, ո՛չ Լուսինը աստվածներ չե՞մ համարում, ինչպես մյուս մարդիկ:

– Ջուրը վկա, դատավոր՝ այրեր, այդպես է, քանզի ասում է, թե Արևը քար է, իսկ Լուսինը՝ հող:

e – Մելետոս՝ բարեկամ, ուզում ես մեղադրել Անաքսագորասին և այնպես ես արհամարհում այս մարդկանց, որ կարծում ես, թե անգրագետ են ու չգիտե՞ն, որ կլազումենցի Անաքսագորասի²⁰ գրքերը լեցուն են նման դրույթներով, իսկ երիտասարդները ինձնից են իմանում դա, այն դեպքում, երբ կարող էին օրքեստրայում²¹ ամենաշատը մեկ դրաքմե վճարելով՝ ծիծաղել Սոկրատեսի վրա, եթե նա իրեն վերագրեր այդ կարծիքը, այն էլ այսքան անմիտ: Սակայն ասա, հանուն Ջուսի, ըստ քեզ ոչ մի աստված չե՞մ ընդունում:

– Ջուրը վկա, ոչ մի:

27 – Անկարելի է, ո՛վ Մելետոս, և թվում է, նույնիսկ քեզ համար: Ըստ իս, աթենացի՝ այրեր, նա լկտի է ու խեղկատակ և այս ամբաստանագիրը գրել է պարզապես լկտիությունից, խեղկատակությունից ու տհասությունից: Կարծես հանելուկ ասի. «Արդյոք կհասկանա՞ Սոկրատես իմաստունը, որ ես կատակում եմ և հակասում ինքս ինձ, թե՞ կխաբեմ նրան և մյուս ունկնդիրներին»: Որովհետև ինձ թվում է, թե իր ամբաստանագրի մեջ հակասում է իրեն, ինչպես եթե ասեր. «Սոկրատեսը անարդարություն է գործում՝ չընդունելով աստվածներին, բայց ընդունելով աստվածներին»: Չե՞ որ սա կատակ է:

b Դուք էլ մտածեք, ո՛վ այրեր, արդյո՞ք այնպես է ասում, ինչպես ինձ է թվում: Դու, Մելետոս, շարունակիր պատասխանել ինձ, իսկ դուք հիշեք, թե ինչ խնդրեցի սկզբում՝ չաղմկել, եթե խոսքս կառուցեմ ինձ հարմար ձևով:

Կա՞ արդյոք, ո՛վ Մելետոս, այնպիսի մարդ, որ մարդկա-

յին գործերն ընդունել, իսկ մարդկանց՝ ոչ: Թող պատասխանի, ո՞վ այրեր, և չաղմկի ամեն առիթով: Կա՞ ինչ-որ մեկը, որ ընդունում է ձիարշավը, իսկ ձիերին՝ ոչ: Կամ չի ընդունում սրինգը, իսկ սրնգահարությունն ընդունում է: Չկա, ո՞վ առաքինի այր: Եթե ինքդ չես ցանկանում պատասխանել, ես կասեմ քեզ և այս մարդկանց:

Միայն թե պատասխանիր այս հարցին. կա՞ մեկը, որ դեմոնային գործերն ընդունում է, իսկ դեմոններին՝ ոչ: c

– Չկա:

– Ինչ լավ է, որ վերջապես այս մարդիկ պարտադրեցին քեզ պատասխանել: Ուրեմն ասում ես, որ ես ընդունում եմ դեմոնային գործերը և ներմուծում նրանց՝ լինեն հին թե նոր: Քո խոսքերից հետևում է, որ դեմոնային գործերն ընդունում եմ, և այդ մասին երդում ես տվել քո ամբաստանագրի մեջ: Իսկ եթե դեմոնային գործերն ընդունում եմ, ապա առավել ևս պարտավոր եմ ընդունել նաև դեմոններին: Այդպես չէ՞: Այդպես է: Ենթադրում եմ, որ համաձայն ես, եթե չես պատասխանում: Իսկ դեմոններին մի՞թե չենք համարում աստվածներ կամ աստվածների զավակներ: Ասա, եթե այդպես չէ: d

– Իհարկե այդպես է:

– Ուրեմն, եթե դեմոններին ընդունում եմ, ինչպես ասում ես, իսկ դեմոնները ինչ-որ աստվածներ են, ապա դուրս է գալիս իմ ասածը. դու հանելուկ ես ասում և կատակում ես՝ պնդելով, թե ես չեմ ընդունում աստվածներին և միաժամանակ ընդունում եմ, քանի որ դեմոններին ընդունում եմ: Իսկ եթե դեմոնները աստվածների խորթ զավակներն են նիմփներից կամ ուրիշներից, ինչպես պնդում ես, ապա մարդկանցից ո՞ր մեկը աստվածների զավակներին կընդուներ, իսկ աստվածներին՝ ոչ: Չէ՞ որ դա նույնքան անհեթեթ կլիներ, որքան այն, որ մեկը ջորիներին համարեր ձիերի և ավանակների զավակներ, իսկ ձիերին և ավանակներին չընդուներ: Սակայն, ո՞վ Մելետոս, գուցե դու կազմել ես այդ e

ամբաստանագիրը մեզ փորձելու նպատակով կամ էլ չես իմացել, թե ինչ իրական մեղք կարելի է բարդել ինձ վրա: Բայց համոզել գեթ մի քիչ խելք ունեցող մարդկանց, թե կարելի է ընդունել դեմոնային և աստվածային գործերը, և միաժամանակ չընդունել ո՛չ դեմոններին, ո՛չ աստվածներին և ո՛չ էլ հերոսներին, բոլորովին անհնար է:

Սակայն, աթենացի՝ այրեր, կարծում եմ, այն, որ ես չեմ գործել Մելետոսի ամբաստանագրում նշված մեղքերը, հետագա արդարացման կարիք չունի. բավական է և այսքանը: Իսկ որ նախապես ասացի, թե իմ դեմ մեծ ատելություն է գոյացել, այն էլ շատերի մեջ, իմացեք, որ ճշմարիտ է: Եվ դա է ինձ կործանելու, եթե կործանի, ո՛չ Մելետոսը, ո՛չ էլ Անիտոսը, այլ շատերի զրպարտանքն ու նախանձը,— այն, ինչ կործանել է նաև բազում ուրիշ առաքինի մարդկանց և, կարծում եմ, դեռ կկործանի: Դժվար թե բանն ինձնով վերջանա:

Գուցե ինչ-որ մեկն ասի. «Չե՞ս ամաչում, ո՛վ Սոկրատես, զբաղվել մի բանով, որի համար քեզ այժմ մահ է սպառնում»: Դրան կպատասխանեմ արդար խոսքով. «Լավ չես ասում, ո՛վ այր, կարծելով, թե մարդը, որը թեկուզ և փոքր, բայց ինչ-որ օգուտ է բերում, պետք է հաշվի առնի կյանքը կամ մահվան վտանգը, փոխանակ մտածի՝ արդա՞ր է արդյոք իր արածը, թե՞ անարդար, և առաքինի՞ մարդու գործ է, թե՞ չար: Քանզի քո ասելով՝ ստոր կլինեն կիսաստվածներից նրանք, ովքեր ընկան Տրոյայում, և նրանց թվում նաև Թետիսի որդին, որը ամոթալի բան գործելու վտանգից երկյուղած, երբ մայրը՝ դիցուհին, նրան՝ Յեկտորին սպանել ձգտողին, ասաց կարծես հետկյալը. «Որոյակ իմ, եթե առնես քո ընկերոջ՝ Պատրոկլոսի վրեժը ու սպանես Յեկտորին, ինքդ էլ կմեռնես. քանզի մոտ է քո օրհասն էլ քաջ Յեկտորի մահից հետո»;— Աքիլլեսը լսելով դա՝ անտեսեց մահն ու վտանգը, քանզի ավելի շատ երկյուղ ուներ վախկոտ լինել և չառնել ընկերների վրեժը: «Թող որ մեռնեմ,— ասաց

նա,– թեկուզ հիմա՝ պատժելով մեղավորին, և չնստեմ այստեղ նավերի մոտ իբրև անօգուտ բեռ իմ երկրին”²²: Մի՞թե կարծում ես, թե նա երկյուղում էր մահից ու վտանգից»:

Յիրավի բանն այսպես է, աթենացի՛ այրեր: Եթե որևէ մեկը մարտական շարք է կանգնում, համարելով, որ դա իր համար լավագույնն է, կամ եթե շարք է կանգնեցվում արքունտի կողմից, ապա ըստ իս պիտի տեղում մնա և կրի վտանգը՝ արհամարհելով թե՛ մահը, թե՛ ուրիշ ինչ-որ բան, բայց ոչ ամոթը:

Սարսափելի բան արած կլինեի, աթենացի՛ այրեր, եթե ձեր ընտրած արքունտների կողմից Պոտիդեայում, Ամփիպոլիսում և Դելիոնում²³ շարք կանգնեցվելուց հետո, մնալով շարքում և ինչպես ուրիշ մեկը մահվան վտանգի ենթարկվելով, այժմ վախենայի մահից կամ ուրիշ ինչ-որ բանից և լքեի այն շարքը, որում ինձ կարգել է աստված, որպեսզի, կարծում եմ, ապրեմ փիլիսոփայելով ու փորձելով ինքս ինձ և ուրիշներին: Այդպիսի դասալքությունը սարսափելի կլիներ, և այնժամ իսկապես որևէ մեկը արդարացիորեն կբերեր ինձ դատարան՝ մեղադրելով, որ չեմ ընդունում աստվածներին, չեմ հնազանդվում գուշակությանը և վախենում եմ մահից՝ կարծելով, թե իմաստուն եմ, բայց այդպիսինը չլինելով: Չէ՞ որ մահից վախենալը, ո՛վ այրեր, ոչ այլ ինչ է, քան կարծել, իբր իմաստուն ես, բայց չլինել այդպիսին, քանզի դա նշանակում է կարծել, թե գիտես այն, ինչը չգիտես: Իրականում ոչ ոք չի ճանաչում մահը, և ոչ էլ այն՝ արդյո՞ք դա մարդուն հասած բարիքներից ամենամեծը չէ, մինչդեռ երկյուղում է նա, ով համոզված է, թե դա ամենամեծն է չարիքներից: Եվ մի՞թե ամենամոթալի տգիտություն չէ կարծել, թե գիտես այն, ինչը չգիտես: Ես, ո՛վ այրեր, գուցե հենց դրանով եմ տարբերվում շատ մարդկանցից, և եթե առավել իմաստուն եմ թվում, ապա նրանով, որ բավականաչափ չիմանալով Յադեսի²⁴ մասին՝ այդպես էլ համարում եմ, որ չգիտեմ: Իսկ որ անօրենություն գործելը և ավելի լավին՝ աստծուն

e

29

b

թե մարդուն չհնազանդվելը վատ է և ամոթալի, ես գիտեմ: Ուրեմն նրանից, ինչի մասին ես չգիտեմ՝ բարիք է արդյոք, թե ոչ, ես երբեք չեմ վախենա և չեմ խուսափի ավելի շատ, քան նրանից, ինչի մասին գիտեմ, որ չարիք է:

- c Ուստի, եթե այժմ ազատ արձակեիք ինձ, չլսելով Անիտոսին, որն ասում էր, թե սկզբից ևեթ իմ այստեղ գալը հարկավոր չէր, բայց երբ արդեն եկել եմ, չի կարելի ինձ մահապատժի չենթարկել, քանզի եթե խուսափեմ պատժից, բոլոր ձեր որդիները, անելով այն, ինչ սովորեցնում է Սոկրատեսը, վերջնականապես կայլասերվեն, և եթե դուք ինձ ասեիք. «Սոկրատես, այս անգամ չենք լսում Անիտոսին և ազատ ենք արձակում քեզ, բայց այն պայմանով, որ երբեք այլևս չես զբաղվի այդ հետազոտություններով և չես փիլիսոփայի, իսկ եթե դարձյալ անես դա, կմեռնես»,— ուրեմն, կրկնում եմ, եթե ինձ ազատ արձակեիք հիշյալ պայմանով, ապա այսպես կպատասխանեի ձեզ. «Ես, աթենացի՛ այրեր, հավատարիմ եմ և սիրում եմ ձեզ, բայց ավելի շուտ կլսեմ աստծուն, քան ձեզ, և քանի դեռ շնչում եմ և ի վիճակի եմ, չեմ դադարի փիլիսոփայել, համոզել և հորդորել ձեզնից յուրաքանչյուրին, ում էլ որ հանդիպեմ, սովորականի պես ասելով. «Ո՛վ բարի մարդ, դու, որ աթենացի ես, մի մեծ քաղաքից, որի իմաստությունն ու հզորությունը ամենափառավորն է, մի՞թե չես ամաչում հոգ տանել հարստության մասին, ձգտելով մեծացնել փառքն ու պատիվը, իսկ բանականության, ճշմարտության, հոգու և այդ հոգին ավելի կատարելագործելու մասին ո՛չ հոգ ես տանում, ո՛չ էլ մտածում»: Եվ եթե ձեզնից որևէ մեկը սկսի վիճել և ասել, թե հոգ է տանում, իսկույն չեմ թողնի ու հեռանա, այլ հարցեր կտամ նրան ու կքննեմ և, եթե բացահայտեմ, որ զուրկ է առաքինությունից, բայց ասում է, թե ունի, կնախատեմ նրան այն բանի համար, որ ամենաթանկը ամենաչնչինն է համարում, իսկ ամենաստոր բաները գնահատում է ամենից բարձր: Այդպես կվարվեմ բոլոր նրանց հետ, որոնց կհանդի-

պեմ՝ լինի երիտասարդ թե տարեց, օտարական, թե յուրային, ընդ որում յուրայինների հետ հատկապես, քանզի ավելի մոտ եք ինձ: Դա է պատվիրում աստված, և լավ իմացեք, որ քաղաքում չունեք ավելի մեծ բարիք, քան իմ այս ծառայությունն աստծուն: Չէ՞ որ ուրիշ ոչինչ չեմ անում, բացի [քաղաքով] շրջելուց և ձեզ համոզելուց,– երիտասարդներիդ և տարեցներիդ,– որ հոգ տանեք ոչ թե մարմնի կամ հարստության, այլ նախ և առաջ հոգու մասին, որպեսզի լինի հնարավորինս լավը, և ասում ձեզ, որ հարստությունից չի ծնվում առաքինությունը, այլ հենց առաքինությունից են գոյանում մարդկանց դրամը և մյուս բոլոր բարիքները՝ թե՛ մասնավոր, թե՛ հանրային կյանքում: Եթե նման բաներ ասելով եմ այլասերում երիտասարդներին, ապա դրանք, իհարկե, վնասակար են: Իսկ եթե ինչ-որ մեկը պնդում է, թե ես ուրիշ բաներ եմ ասում, ստում է: Ահա ինչու կպատասխանեի այսպես. «Աթենացի՛ այրեր, կհավատաք Անիտոսին թե ոչ, կարծակեք ինձ թե ոչ, ես, միևնույն է, այլ կերպ չեմ վարվի, նույնիսկ եթե հարկ լիներ մեռնել շատ անգամ»:

Մի՛ աղմկեք, աթենացի՛ այրեր, այլ շարունակեք անել այն, ինչ խնդրեցի ձեզ, և ինչ էլ ասեմ՝ չաղմկեք և լսեք: Քանզի, կարծում եմ, ինձ լսելով՝ կշահեք: Ես կուզեի մի քանի բան էլ ասել, ինչից գուցե աղմուկ բարձրացնեք: Սակայն ոչ մի դեպքում մի՛ արեք դա:

Լավ իմացեք, որ եթե ինձ մահվան դատապարտեք այնպիսին, ինչպիսին որ կամ, ավելի շատ կվնասեք ոչ թե ինձ, այլ ինքներդ ձեզ: Չէ՞ որ ինձ չեն վնասի ո՛չ Մելետոսը, ո՛չ էլ Անիտոսը, որովհետև չեն կարող: Չի լինում այնպես, որ առաքինի այրը վնաս կրի ստոր մեկից: Սա կարող է սպանել, աքսորել կամ պատվազուրկ անել, և ինքը կամ մեկ ուրիշը գուցե մեծ չարիք համարի դա, բայց ոչ ես. ըստ իս՝ շատ ավելի մեծ չարիք է այն, ինչ նա անում է հիմա՝ փորձելով սպանել արդար մարդուն: Արդ, աթենացի՛ այրեր, ես պետք է պաշտպանվեմ ոչ թե հանուն ինձ,

- ինչպես կարող է թվալ, այլ հանուն ձեզ, որպեսզի դուք,
- e դատապարտելով ինձ, սխալ չգործեք այն շնորհի հարցում, որ ստացել եք աստծուց: Քանզի ինձ սպանելու դեպքում դյուրին չի լինի գտնել մեկ այլ այսպիսի մարդու, որին, զավեշտական է ասել, [աստված] կցել է քաղաքին, ինչպես մի մեծ ու ազնվացեղ ձիու, որը, սակայն, իր պարարտությունից ծուլացած՝ կարիք ունի, որ նրան ուշքի բերի մի ինչ-որ բռն:
- 31 Ես կարծում եմ, աստված ինձ կցել է քաղաքին իբրև մեկի, որն ամբողջ օրը առանց դադարի կշրջի ամենուր և ձեզնից յուրաքանչյուրին կսթափեցնի, կհամոզի ու կնախատի: Ուրիշ այդպիսի մարդ հեշտ չեք գտնի, ո՛վ այրեր, այնպես որ, եթե լսեք, կխնայեք ինձ: Գուցե բարկանալով, ասես խոր քնից արթնացած, դուք կհարձակվեք վրաս և, անսալով Անիտոսին, հեշտությամբ կսպանեք, իսկ կյանքի մնացած մասը կանցկացնեք քնի մեջ, եթե իհարկե աստված, հոգալով ձեր մասին, չուղարկի այստեղ մեկ ուրիշին: Իսկ որ ես այնպիսին եմ, ինչպիսին աստված ինձ շնորհել է քաղաքին, կհաս-
- b կանաք՝ լսելով հետևյալը: Չէ՞ որ մարդկային բնությանը հատուկ չէ, որ մարդ թողնի իր բոլոր գործերը, այսքան տարի հանդուրժի տնեցիների դժգոհությունը և փոխարենը միշտ զբաղվի ձեր գործերով, յուրաքանչյուրին մոտենա առանձին՝ իբրև հայր կամ ավագ եղբայր և համոզի հոգ տանել առաքինության մասին: Եթե ես ինչ-որ բան շահեի այդ ամենից կամ վճար վերցնեի խրատներիս դիմաց, ապա դա իմաստ կունենար: Բայց ահա ինքներդ եք տեսնում, որ այս և մյուս բոլոր բաներում ինձ անամոթաբար մեղադրողները տվյալ
- c հարցում չկարողացան խիղճները կորցնել և բերել մեկին, որը վկայեր, թե ես ինչ-որ վճար եմ ստացել կամ պահանջել: Քանզի, կարծում եմ, բավականաչափ զորեղ վկա ունեմ ասածիս ճշմարտությունը հաստատելու համար՝ իմ աղքատությունը:

Կարող է տարօրինակ թվալ, որ ես խորհուրդներ եմ տալիս՝ միջամտելով մասնավոր գրույցներին, և չեմ համարձակ-

վում հրապարակավ կանգնել բազմության առաջ և խոր- **d**
 հուրդներ տալ քաղաքին: Դրա պատճառի մասին հաճախ
 եմ ասել՝ որ ինձ աստվածային և դեմոնային ինչ-որ բան է
 պատահում,– այդ մասին Մելետոսը ծաղրով հիշատակել է իր
 ամբաստանագրում: Դա ինձ մոտ նկատվել է դեռ մանկուց.
 առաջանում է մի ձայն, որն ամեն անգամ ինձ շեղում է
 որևէ մտադրություն կատարելուց, բայց երբեք չի ուղղորդում
 դեպի մեկ ուրիշը: Դեռ այս ձայնն է հակառակվում, որ ես
 զբաղվեմ քաղաքական գործերով: Եվ ըստ իս շատ լավ է
 անում, որ հակառակվում է²⁵: Քանզի լավ իմացեք, աթենա-
 ցի՛ այրեր, եթե սկսեի զբաղվել քաղաքական գործերով, վա-
 ղուց արդեն մեռած կլինեի և դրանից ո՛չ դուք կշահեիք, ո՛չ
 էլ ես: Եվ մի՛ բարկացեք, եթե ասեմ ճշմարտությունը: Չկա **e**
 մի մարդ, որ կարողանա փրկվել, եթե բացահայտ հակա-
 ռակվի ձեզ կամ ուրիշ որևէ բազմության և ցանկանա վե-
 րացնել մեծաթիվ անարդարություններն ու անօրենություննե- **32**
 րը, որ տեղի են ունենում քաղաքում: Դանուն արդարության
 պայքարողը պետք է (անգամ եթե պիտի կարճ ապրի) գործի
 մասնավոր կերպով, և ոչ հանրորեն:

Ձեզ կներկայացնեմ դրա ամենամեծ ապացույցները՝ ոչ
 թե խոսքեր, այլ այն, ինչ դուք գնահատում եք՝ գործեր:
 Ուրեմն լսեք, թե ինչ պատահեց ինձ, որպեսզի իմանաք, որ
 նույնիսկ մահվան վտանգի պարագայում ոչ ոքի չեմ զիջի
 արդարությանը հակառակ, անգամ եթե չզիջելով՝ կործանվեմ:
 Ձեզ կպատմեմ տիաճ և ծանծրալի, բայց ճշմարիտ պատ- **b**
 մություն: Աթենացի՛ այրեր, ես քաղաքի ուրիշ ոչ մի պաշ-
 տոն չեմ ունեցել, բացի խորհրդականի պաշտոնից²⁶: Այնպես
 պատահեց, որ մեր ֆիլեն գումարվեց այն ժամանակ, երբ
 դուք ցանկանում էիք դատել բոլոր տասը զորավարներին,
 որոնք ափ չհանեցին ծովամարտում²⁷ զոհվածներին. և, ինչ-
 պես հետագայում պարզվեց, ցանկանում էիք դատել միան-
 գամայն անօրինաբար: Այդ ժամանակ պրիտաններից միայն
 ես հակառակվեցի ձեզ՝ [առաջարկելով] անօրինություն չգոր-

- ծել: Եվ հռետորները պատրաստ էին մեղադրել և ձերբակալել ինձ, դուք նույնպես աղաղակում էիք և պահանջում դա, մինչդեռ ես կարծում էի, որ ավելի լավ է գործեմ համաձայն օրենքի ու արդարության և վտանգի ենթարկվեմ, քան լինեմ ձեզ հետ՝ մերժելով արդարությունը կալանքի կամ մահվան երկյուղից: Դա պատահեց, երբ քաղաքում դեռ դեմոկրատիա էր, իսկ երբ սկսվեց օլիգարխիան, Երեսուն տիրանները կանչեցին ինձ և ուրիշ չորս հոգու թուլոս²⁸ և հրամայեցին Սալամիսից բերել Լեոնին՝ մահապատժի ենթարկելու համար: Ուրիշ շատերին էլ բազում նման բաներ հրամայեցին՝ ցանկանալով, որ մեղավորների թիվն աճի: Այդուհանդերձ ես ոչ թե խոսքով, այլ գործով ապացուցեցի, որ մահը, գռեհիկ չլինի ասել, ոչինչ է ինձ համար, իսկ անարդար և անպատիվ բան չանելը՝ ամեն ինչ: Այդ գործը իշխանությունը չվախեցրեց ինձ այնպես, որ ես անարդարություն գործեմ, և երբ դուրս եկանք թուլոսից, ինձ հետ եղած չորսը ուղևորվեցին Սալամիս և բերեցին Լեոնին, իսկ ես վերադարձա տուն: Եվ մեծ էր հավանականությունը, որ ես մահվան դատապարտվեի, եթե իշխանությունը շուտով չլուծարվեր: Այս փաստի բազում վկաներ ձեր տրամադրության տակ են:

- Միթե ձեզ թվում է, թե կհասնեի այս տարիքիս, եթե առաքինի մարդուն վայել կերպով զբաղվեի հանրային գործերով և օգնեի արդարներին՝ դա համարելով, ինչպես և հարկ է, ամենակարևորը: Բնավ ոչ, աթենացի՛ այրեր: Նաև 33 ուրիշ մեկը չէր կարողանա: Սակայն ես ողջ կյանքում հանրային և մասնավոր գործերում ինչ-որ բան անելիս այդպիսին եմ եղել. երբեք ոչ ոքի հետ չեմ համաձայնել ընդդեմ արդարության՝ ո՛չ նրանց հետ, որոնց զրպարտիչները իմ աշակերտն²⁹ են կոչում, ո՛չ էլ այլոց: Եվ ոչ էլ եղել եմ որևէ մեկի ուսուցիչը: Իսկ եթե մեկը ցանկանում էր լսել իմ խոսքը կամ տեսնել իմ գործը, լիներ երիտասարդ թե տարեց, երբեք չեմ խոչընդոտել, ոչ էլ վճար եմ վերցրել զրույցի

դիմաց և թույլ եմ տվել, ինչպես հարուստին, այնպես էլ աղքատին, ցանկության դեպքում հարցեր տալ և լսել իմ պատասխաններն անվճար: Եվ եթե նրանցից մեկը պիտանի էր դառնում կամ ոչ, դրա պատճառը ես չեմ, քանզի երբեք չեմ խոստացել սովորեցնել և չեմ սովորեցրել: Այնպես որ, եթե որևէ մեկն ասի, թե ինձնից ինչ-որ բան է սովորել, կամ սովորել է մասնավոր կերպով, և այդ բանը չեն լսել նաև մյուս բոլորը, ապա լավ իմացեք, որ ստում է:

Բայց ինչու՞ է ոմանց հաճույք պատճառում ինձ հետ երկար ժամանակ անցկացնելը: Դուք, աթենացի՛ այրեր, արդեն լսեցիք ողջ ճշմարտությունը, քանզի ես ասացի, որ իմ ունկնդիրներին դուր է գալիս այն, թե ինչպես եմ փորձում իրենց իմաստուն կարծողներին, որոնք սակայն այդպիսին չեն: Չէ՞ որ դա զվարճալի է: Իսկ անել դա, ինչպես արդեն ասացի, ինձ պատվիրել է աստված թե՛ գուշակությունների, թե՛ երազների ձևով և թե՛ բոլոր [ինարավոր] եղանակներով, որոնց միջոցով աստվածային նախախնամությունը երբևէ պատվիրել է մարդուն գործել: Դա ոչ միայն ճշմարիտ է, աթենացիներ, այլև հեշտ ապացույցի:

Եթե ես այլասերում եմ երիտասարդներից ոմանց, իսկ մյուսներին արդեն այլասերել եմ, ապա նրանք, ովքեր ծերացել են և հասկանում են, որ իրենց երիտասարդ տարիքում ես նրանց որևէ հոռի խորհուրդ եմ տվել, հիմա պետք է որ այստեղ ներկայանալով՝ մեղադրեին և պատժի ենթարկեին ինձ: Իսկ եթե չեն ցանկացել, իրենց տնեցիները՝ հայրերը, եղբայրները և մյուս մերձավորները, կհիշեին այժմ, որ իրենց հարազատները ինչ-որ չարիք են կրել ինձնից: Յամենայն դեպս նրանցից շատերը ներկա են այստեղ, ինչպես տեսնում եմ. նախ Կրիտոնը՝ իմ հասակակիցն ու համայնքակիցը և այս Կրիտոբուլոսի հայրը, այնուհետև սփետիացի Լիսանիասը՝ այս Էսքիների հայրը, և կեփիսիեցի Անտիփոնը՝ Էպիգենեսի հայրը: Կան նաև ուրիշներ, որոնց եղբայրները ժամանակ են անցկացրել ինձ

- հետ՝ Նիկոստրատեսը՝ Թեոձոսիդեսի որդին և Թեոդոտոսի եղբայրը (ինքը Թեոդոտոսը մահացել է և չէր կարող խնդրել նրան), և Պարալոսը՝ Դեմոդոկոսի որդին, որի եղբայրն էր Թեագեսը: Ահա և Ադիմանտոսը՝ Արիստոնի որդին, որի եղբայրն է այս Պլատոնը, և Էանտոդորոսը, որի եղբայրն է Ապոլլոդորոսը³⁰: Ես կարող եմ նշել նաև ուրիշ շատերին, որոնցից գոնե մեկին Մելետոսը պետք է վկայակոչեր իր խոսքում: Եթե այն ժամանակ մոռացել էր, ապա թող հիմա վկայակոչի, ես թույլ եմ տալիս,– թո՛ղ ասի, եթե ասելիք ունի: Բայց, ո՛վ այրեր, դուք կհամոզվեք, որ հակառակը՝ նրանք բոլորն էլ պատրաստ կլինեն օգնել իրենց մերձավորներին այլասերողին, այդ չարագործին, ինչպես ասում են Մելետոսն ու Անիտոսը:

Իրենք այլասերվածները նույնպես գուցե օգնության խոսք ունենան: Իսկ չայլասերվածները՝ նրանց հարազատները, որոնք արդեն տարեց մարդիկ են, ուրիշ ինչի՞ համար պիտի ինձ օգնեն, եթե ոչ ճշմարտության և արդարության, եթե գիտակցում են, որ Մելետոսը ստում է, իսկ ես ճշմարտություն եմ ասում:

- Այսպես ուրեմն, ո՛վ այրեր: Կարծես թե սա էր այն ամենը, ինչ կարող էի ասել ի պաշտպանություն ինձ: Գուցե ձեզնից որևէ մեկը բարկանա, երբ հիշի, որ շատ ավելի աննշան հարցով դատվելիս ինքը արտասուքն աչքերին աղաչում և պաղատում էր դատավորներին և նրանց գուրջ շարժելու համար բերում էր այստեղ իր զավակներին, այլ ազգականների և ընկերների, իսկ ես նման բան չեմ անում, թեև կարծում եմ, որ ինձ սպառնում է ծայրագույն վտանգ: Թերևս այսպես մտածելով՝ ինչ-որ մեկն ավելի անգութ գտնվի իմ նկատմամբ և իր քվեն նետի բարկությամբ: Եթե կա այդպիսինը,– քանզի ես այդպես չեմ կարծում,– բայց եթե կա, այսպես կասեմ նրան. «Ո՛վ ազնիվ մարդ, ես նույնպես տնեցիներ ունեմ, քանզի ինչպես ասված է Յոմե-րոսի մոտ՝ «կաղնուց կամ ժայռից չեմ սերել, այլ մարդկան-

ցից³¹, հետևաբար և՛ ընտանիք ունեմ, աթենացի՛ այրեր, և՛ որդիներ³²: Ունեմ երեք որդի՝ մեկը դեռահաս, երկուսը մանուկ: Սակայն նրանցից ոչ ոքի չեմ բերի այստեղ՝ խնդրելով, որ քվեարկեք իմ օգտին»: Իսկ ինչու՞ չեմ անում դա: Ո՛չ ինքնահավանության, ո՛չ էլ ձեզ անպատվելու ցանկության պատճառով, աթենացիներ. վախենում եմ մահից թե ոչ՝ սա ուրիշ հարց է, բայց հանուն իմ, ձեր և ողջ քաղաքի համբավի գեղեցիկ չէր լինի, ըստ իս, եթե այդպերպ վարվեի, այն էլ այս տարիքում, վայելելով այս համբավը անկախ այն բանից՝ արժանիորեն, թե ոչ: Չէ՞ որ կարծիք կա, թե Սուկրատեսը ինչ-որ բանով տարբերվում է շատ մարդկանցից, իսկ եթե այդպես վարվեին ձեզնից նրանք, ովքեր համարվում է, թե աչքի են ընկնում իմաստությամբ, արիությանբ կամ մեկ այլ առաքինությամբ, ապա դա ամոթալի կլիներ: Ես հաճախ եմ տեսել հարգված մարդկանց, որոնք, սակայն, դատվելիս զարմանալի բաներ էին անում՝ կարծելով, թե մեռնելու դեպքում ինչ-որ չարիքի կենթարկվեն և իբր անմահ կմնային, եթե մահապատժի չենթարկեիք: Իմ կարծիքով նրանք ամոթ են բերում քաղաքին, այնպես որ օտարականը կարող է ենթադրել, թե աթենացիներից առաքինությամբ աչքի ընկնողները, որոնց իրենք իսկ աթենացիները իշխանություն և այլ պատիվներ են շնորհում, ոչնչով չեն տարբերվում կանանցից: Քանզի, աթենացի՛ այրեր, ո՛չ դուք՝ հարգանք վայելողներդ, պետք է այդպես վարվեք, ո՛չ էլ մեզ թույլ տաք, այլ պետք է ապացուցեք, որ ավելի շուտ կդատապարտեք նրան, ով լալագին ներկայացումներ է սարքում և զավեշտի առարկա դարձնում քաղաքը, քան նրան, ով հանգստություն է պահպանում:

Յամբավը մի կողմ, ո՛վ այրեր, ինձ թվում է, ճիշտ չէ խնդրել դատավորին և աղաչանքներով խուսափել պատժից, այլ պետք է բացատրել և համոզել: Չէ՞ որ դատավորը նշանակված է ոչ թե կողմնապահության, այլ ճշմարիտ դատավարության համար, և երդվել է ոչ թե իր կամեցածին

- ներում շնորհելու, այլ օրենքով դատելու համար: Ուրեմն ո՛չ մենք պետք է սովորեցնենք ձեզ երդմնագանց լինել, ո՛չ էլ ինքներս պետք է սովորույթ դարձնենք դա: Չէ՞ որ այդկերպ մեզնից ոչ ոք բարեպաշտ չի լինի: Մի կարծեք,
- d աթենացի՛ այրեր, թե ես ձեր առջև պիտի անեմ այն, ինչը չեմ համարում լավ, արդար կամ բարեպաշտ, այն էլ Ձև՛նը վկա, այս Մելետոսի կողմից մեղադրվելով անբարեպաշտության մեջ: Պարզ է, որ եթե ես համոզելի ձեզ ու ստիպելի երդմնագանց լինել, ձեզ կսովորեցնեի մտածել, թե աստվածներ չկան, իսկ պաշտպանվելու փոխարեն ինքս կմեղադրեի ինձ, որ չեմ ընդունում աստվածներին: Բայց դա բնավ այդպես չէ: Ես, աթենացի՛ այրեր, ընդունում եմ նրանց, ինչպես ոչ ոք իմ մեղադրողներից, և թողնում եմ, որ դուք և աստված դատեք ինձ այնպես, ինչպես լավ կլինի թե՛ ինձ, թե՛ ձեզ համար:

* * *

- e Աթենացի՛ այրեր, չեմ զայրանում կատարվածից, այն
36 բանից, որ քվեարկեցիք իմ դեմ, քանզի դրա պատճառները շատ են, և վճիռը անսպասելի չէր ինձ համար: Ինձ ավելի շատ զարմացրեց կողմ և դեմ նետված քվեների քանակը: Քանզի չէի կարծում, որ տարբերությունն այսքան փոքր կլինի: Իսկ այժմ պարզվում է, որ եթե ընդամենը երեսուն քվե այս կողմ ընկներ, ես կխուսափեի պատժից³³: Մելետոսից ըստ իս այժմ էլ փրկվել եմ, և ոչ միայն փրկվել, չէ՞ որ յուրաքանչյուրի համար պարզ է, որ եթե Անիտոսը և Լիկոնը
- b չգային ինձ մեղադրելու, ապա նա ստիպված կլիներ հազար դրաքմե [տոյժ] վճարել քվեների հինգերորդ մասը չհավաքելու պատճառով³⁴:

Այդ մարդը պահանջում է իմ մահը: Թո՛ղ այդպես լինի: Իսկ ի՞նչ կսահմանելի ձեր փոխարեն ես, ո՛վ աթենացի այրեր: Ակներևաբար այն, ինչին արժանի եմ: Ուրեմն ի՞նչ

եմ արժանի կրելու կամ ինչո՞վ հատուցելու, հաշվի առնելով այն, որ կյանքիս ընթացքում հանգիստ չեմ ունեցել, անտեսել եմ այն ամենը, ինչի մասին հոգ է տանում մեծամասնությունը, — հարստությունը, տնտեսությունը, զորավարությունը, հանրային ճառերը, իշխանական այլ գործերը, դավադրություններն ու ապստամբությունները, որ լինում են քաղաքում, համարելով ինձ ավելի քան պարկեշտ նման **c** հարցերի մեջ մտնելով փրկվելու համար: Եվ չէի գնում այնտեղ, ուր ո՛չ ձեզ, ո՛չ էլ ինձ օգուտ տալ չէի կարող, այլ մոտենալով յուրաքանչյուրիդ առանձին, անում էի, ինչպես ասացի, մեծագույն բարեգործությունը՝ փորձելով համոզել ձեզնից յուրաքանչյուրին առաջին հերթին հոգ տանել ոչ թե սեփական ունեցվածքի, այլ ավելի առաքինի և խելամիտ դառնալու մասին, ոչ թե քաղաքային գործերի, այլ հենց քաղաքի մասին, և նույն եղանակով շատ այլ բաների մասին նույնպես: Ուրեմն, այդպիսին լինելով, ինչի՞ եմ արժանի: Ինչ-որ բարիքի, աթենացի՛ այրեր, իհարկե, եթե պետք է **d** հատուցել ըստ արժանվույն: Ընդ որում, այդ բարիքը պետք է լինի այնպիսին, որ պատշաճ լինի ինձ: Իսկ ի՞նչն է պատշաճում աղքատ մարդուն, որը բարեգործ է և ձեզ խրատելու համար պարապ ժամանակի կարիք ունի: Աթենացի՛ այրեր, չկա այդ մարդուն առավել արժանի բան, քան ընթրիքը պրիտանեյնում³⁵: Սա արժանի է դրան ավելի, քան ձեզնից նա, ով օլիմպիական խաղերում հաղթում է երկծի կամ քառաձի կառքերի մրցումներում: Չէ՞ որ նա միայն թվացյալ երջանկություն է տալիս ձեզ, իսկ ես իսկապես երջանիկ եմ **e** դարձնում: Եվ նա չունի սննդի կարիք, իսկ ես ունեմ: Արդ, եթե ես պետք է արդար գնահատեմ իմ արժանիքները, ապա այդ եմ սահմանում ինձ՝ ընթրիք պրիտանեյնում: **37**

Գուցե նաև այս խոսքերս ձեզ ինքնավստահ թվան, ինչպես գթությանն ու աղաչանքներին վերաբերողները, բայց դա այդպես չէ, աթենացիներ: Ավելի շուտ բանն այս է. ես համոզված եմ, որ ոչ մեկի հանդեպ անարդարություն չեմ

- արել միտումնավոր, բայց ձեզ արդեն չեմ համոզի, քանզի գրուցելու համար բավական ժամանակ չենք ունեցել: Կարծում եմ, եթե ձեզ մոտ, ինչպես ուրիշ մարդկանց, օրենք լիներ մահվան դատապարտել ոչ թե մեկ, այլ մի քանի օրվա ընթացքում, ես կհամոզեի ձեզ: Իսկ այժմ կարճ ժամանակահատվածում դյուրին չէ հերքել ուռճացած գրպարտանքը: Համոզված լինելով, որ ոչ ոքի անարդարություն չեմ արել, անարդարություն չեմ գործի նաև ինքս ինձ և չեմ խոսի ինքս իմ դեմ, իբր արժանի եմ վատին, և այդպիսի պատիժ չեմ սահմանի ինձ: Ինչու՞ անեմ դա: Մի՞թե վախենալով նրանից, ինչ պահանջում է ինձ համար Մելետոսը և ինչի մասին, կրկնում եմ, չգիտեմ՝ լավ է, թե վատ: Մի՞թե
- c** դրա փոխարեն կընտրեմ մի բան, որի մասին հաստատ գիտեմ, որ վատ է: Արդյո՞ք կալանքը: Եվ ինչու՞ պետք է ապրեմ բանտում՝ դառնալով շարունակ փոխվող իշխանության ստրուկը: Թե՞ դրամ վճարեմ այնքան, մինչև որ հատուցեմ: Բայց դա ինձ համար նույնն է, ինչ արդեն ասվածը, քանզի վճարելու դրամ չունեմ: Իսկ չդատապարտեմ՝ ինձ արդյոք աքսորի: Գուցե դուք դատապարտեք ինձ աքսորի: Այդ ինչքան պիտի կառչեի կյանքից և որքան անմիտ լինեի ու
- d** չհասկանայի, որ դուք, լինելով իմ համաքաղաքացիները, չկարողացաք հանդուրժել իմ ճառերն ու գրույցները, որոնք այնքան ծանր ու անտանելի եղան ձեզ համար, որ այժմ փորձում եք ազատվել դրանցից. մի՞թե ուրիշներին դրանք թեթև կթվան: Բնավ ոչ, աթենացիներ: Եվ մի՞թե լավը կլիներ այդժամ իմ կյանքը, եթե վտարվեի այս տարիքում և քաղաքից քաղաք անցնելով՝ ապրեի թափառականի պես: Քանզի լավ գիտեմ, որ ուր էլ գնամ, երիտասարդները լսելու են իմ գրույցները, ինչպես այստեղ: Իսկ եթե հեռացնեմ նրանց, իրենք կվտարեն ինձ՝ գրգռելով ավագներին: Իսկ եթե չհեռացնեմ, հայրերն ու մերձավորները կվտարեն ինձ հենց իրենց պատճառով:
- e**

Գուցե ինչ-որ մեկն ասի. «Ո՛վ Սոկրատես, իսկ չե՞ս

կարող մեզնից հեռանալով ապրել լուռ և հանգիստ»: Չենց այս հարցում է ամենից դժվար համոզել ձեզնից ոմանց: Քանզի երբ ասում եմ, որ դա նշանակում է չհնազանդվել աստծուն և որ դրա պատճառով չեմ կարող հանգիստ ապրել, դուք չեք հավատում ինձ և մտածում եք, թե ձև եմ անում: Իսկ եթե ասեմ, որ մարդու համար մեծագույն բարիքը ամեն օր առաքինության և այլ բաների մասին խոսելն է, ինչը և լսել եք ինձնից, երբ փորձում էի ինքս ինձ և ուրիշներին, իսկ կյանքն առանց փորձության մարդու համար կյանք չէ, դուք ավելի քիչ կհավատաք ինձ: Մինչդեռ դա այդպես է, աթենացիներ, բայց, ինչպես ասացի, համոզելն է դժվար:

38

Ընդ որում ես սովոր չեմ [մտածել], թե արժանի եմ վատին: Քանզի եթե դրամ ունենայի, կպարտադրեի ինձ վճարել, որքան հարկն է, և դա վնաս չէր լինի: Բայց ես չունեմ դրամ, եթե, իհարկե, չցանկանաք սահմանել այնքան, որքան կարող եմ վճարել: Չավանաբար մեկ արծաթե մինա կարողանայի վճարել, այդքան էլ սահմանում եմ: Սակայն այս Պլատոնը, աթենացի՛ այրեր, Կրիտոնը, Կրիտոբուլոսը և Ապոլլոդորոսը պահանջում են փրկագին սահմանել երեսուն մինա և իրենք էլ երաշխավոր են կանգնում³⁶: Արդ, ես այսքան եմ սահմանում, իսկ դրամի վճարման երաշխավորները վստահելի մարդիկ են:

b

c

* * *

Չեռու չէ ժամանակը, աթենացի՛ այրեր³⁷, երբ քաղաքը պարսավել ցանկացողներից կստանաք Սոկրատեսին՝ իմաստուն մարդուն, մահվան դատապարտողների համբավն ու մեղավորությունը: Քանզի ձեզ պարսավել ցանկացողները կասեն, որ ես իմաստուն եմ, թեպետ դա այդպես չէ: Մինչդեռ եթե մի փոքր էլ սպասեիք, իմ մահը տեղի կունենար ինքնաբերաբար: Տեսնում եք տարիքս, տեսնում եք, որ իմ

- d կյանքն արդեն անցյալում է, իսկ մահը՝ մոտ: Ասում եմ դա ոչ թե բուրբիդ, այլ նրանց, ովքեր ինձ մահվան դատապարտեցին: Այդ վերջիններին ես ուզում եմ ասել նաև հետևյալը: Ո՛վ այրեր, գուցե կարծում եք, թե դատապարտվեցի, որովհետև չգտա այն խոսքերը, որոնցով պետք է համոզեի ձեզ, եթե մտածեի, որ հարկավոր է անել և ասել ամեն բան պատժից խուսափելու համար: Բնավ ոչ: Ես դատապարտվել եմ պակասի պատճառով, բայց ոչ թե փաստարկների, այլ
- e հանդգնության, անամոթության և ցանկության՝ ասելու բաներ, որոնք ձեզ հաճելի է լսել, դատապարտվել եմ, որովհետև չեմ աղաչել ու պաղատել, չեմ արել և ասել բաներ, որոնք անհարիր են ինձ, ինչպես ասացի, բայց որոնք դուք սովոր եք լսել ուրիշներից: Ո՛չ այն ժամանակ եմ գործել ստորացուցիչ մի բան, երբ ինձ վտանգ էր սպառնում, ո՛չ էլ հիմա եմ զղջում, որ այսպես եմ պաշտպանվել: Ավելի շուտ գերադասում եմ այսպես պաշտպանվելով մեռնել, քան այլ կերպ պաշտպանվելով ապրել: Քանզի ո՛չ դատարանում, ո՛չ էլ պատերազմում ո՛չ ինձ, ո՛չ ուրիշին չի կարելի այդպես վարվել և խուսափել մահից ամեն գնով: Չէ որ մարտերի ժամանակ էլ հաճախ պարզ է դառնում, որ կարելի է խուսափել մահից՝ նետելով գեներն ու պաղատելով հետապնդողներին: Ցանկացած վտանգի ժամանակ մահից խուսափելու հնարքներ կան, եթե մարդը պատրաստ է ամեն ինչ անել և ասել: Սակայն, ո՛վ այրեր, մահից խուսափելը դժվար չէ. շատ ավելի դժվար է խուսափել ստորությունից, քանզի այն ավելի արագ է վրա հասնում, քան մահը:
- Եվ այժմ ինձ՝ դանդաղաշարժ և ծեր մարդուս, վրա է
- b հասել առաջինը՝ դանդաղաշարժը, իսկ իմ մեղադրողներին, որոնք ուժեղ և ճարպիկ են, բռնել է ավելի արագաշարժը՝ չարիքը: Ես հեռանում եմ՝ ձեր կողմից մահվան դատապարտված, իսկ իմ մեղադրողները հեռանում են՝ ճշմարտության կողմից արատավորության և անարդարության մեջ մերկացված: Ես մնում եմ իմ պատժի հետ, իսկ իրենք՝

իրենց: Գուցե հենց այդպես էլ պետք է լիներ, և կարծում եմ՝ դա ճիշտ է:

Իսկ այժմ կուզեի ձեզ՝ իմ դեմ քվեարկածներիդ, գուշակություն անել: Քանզի ինձ համար եկել է պահը, երբ մարդիկ ավելի լավ են գուշակում մահվան ժամը: Ասում եմ ձեզ, ո՛վ այրեր, որ սպանում եք ինձ, պատիժ եք կրելու իմ մահից անմիջապես հետո և, Ջևը վկա, շատ ավելի ծանր պատիժ, քան մահը, որին դատապարտել եք ինձ: Այժմ դուք արեցիք դա՝ կարծելով, թե կազատվեք կյանքում հաշվետու լինելուց, բայց ձեզ հետ, ասում եմ, կլինի հակառակը: Կշատանան ձեզ մերկացնողները, որոնց ես մինչև հիմա զսպում էի, իսկ դուք դա չէիք զգում: Եվ որքան երիտասարդ, այնքան ավելի դաժան կլինեն, և ավելի մեծ կլինի ձեր վրդովմունքը: Եթե կարծում եք, որ սպանելով մարդկանց՝ դուք կստիպեք որևէ մեկին չնախատել ձեզ սխալ ապրելու համար, ապա մոլորվում եք: Նման պաշտպանությունը ո՛չ ապահով է, ո՛չ էլ ճիշտ, իսկ լավագույնն ու ամենահեշտը ուրիշներին չխանգարելն է, այլ՝ փորձել հնարավորին չափ ավելի լավը դառնալը: Գուշակելով սա ձեզ՝ ինձ մեղադրողներիդ, ես հեռանում եմ:

Իսկ նրանց հետ, ովքեր քվեարկեցին իմ օգտին, հաճույքով կգրուցեի կատարվածի մասին, քանի դեռ արքունները³⁸ զբաղված են և ես չեմ գնացել այնտեղ, ուր պետք է մեռնեմ: Մնացեք ինձ հետ այդ ընթացքում, ո՛վ այրեր: Ոչինչ չի խանգարում մեզ գրուցել միմյանց հետ, քանի դեռ կարելի է:

Որպես ընկերների՝ ուզում եմ ձեզ ցույց տալ ինձ հետ կատարվածի իմաստը: Քանզի ինձ հետ, դատավոր այրեր, չե՞ որ ձեզ հիրավի կարելի է դատավորներ կոչել, — զարմանալի բան պատահեց: Իրոք, ինձ սովորական դարձած դեմոնի ձայնը, այդ աստծո նշանը, որը միշտ արգելում էր ինձ և հաճախ հակառակվում անգամ աննշան հարցերում, եթե ցանկանում էի որևէ սխալ բան անել, այժմ երբ

պատահեց, ինչպես ինքներդ եք տեսնում, այն, ինչ յուրաքանչյուր ոք կհամարի և համարում է վատագույն չարիք, չկանգնեցրեց ինձ ո՛չ առավոտյան տանից դուրս գալիս, ո՛չ դատարան մտնելիս, ո՛չ էլ ճաշիս ընթացքում, ինչ էլ ասեի: Ու թեպետ նախկինում բազմիցս կեսից ընդհատել է խոսքս, այս դատավարության ընթացքում ոչ մի անգամ չհակառակվեց ո՛չ մտքերիս, ո՛չ էլ խոսքիս: Ո՞րն է դրա պատճառը: Ես կասեմ ձեզ: Թերևս այս ամենը բարիք էր ինձ համար, և ճիշտ չեն մտածում նրանք, ովքեր կարծում են, թե մեռնելը

- c չարիք է: Ես ունեմ ասածիս վառ ապացույցը: Իսկապես, հնարավոր չէ, որ իմ սովորական նշանը չկանգնեցնեի ինձ, եթե ես մտադիր լինեի որևէ չարիք գործել:

Նկատենք նաև. որքան մեծ հույսեր կան, որ մահը բարիք է: Չէ՞ որ մահը երկուսից մեկն է. կամ [մեռնել] նշանակում է լինել ոչինչ և ոչինչ չզգալ, կամ էլ, ինչպես ասում են, դա հոգու տեղափոխություն և վերաբնակեցում է այստեղից մեկ այլ տեղ: Իսկ եթե ոչ մի զգացում չկա և

- d մահը նման է քնի, երբ քնում են առանց երազ տեսնելու, ուրեմն մահը զարմանալի ձեռքբերում է: Քանզի ես կարծում եմ, որ եթե մեկը ստիպված լիներ ընտրել այն գիշերը, որի ընթացքում նա քնել է առանց երազ տեսնելու և, համեմատելով այդ գիշերը իր կյանքի ուրիշ գիշերների ու ցերեկների հետ, մտածեր և ասեր, թե այդ գիշերվանից որքան ավելի լավ և հաճելի օրեր ու գիշերներ է ապրել իր կյանքում, ապա ըստ իս ոչ միայն սովորական մարդը, այլև մեծ
- e արքան³⁹ կհայտնաբերեր, որ այդպիսի գիշերներ ավելի քիչ է ունեցել, քան այլ օրեր ու գիշերներ: Ուրեմն, եթե մահն այդպիսին է, ես այն համարում եմ ձեռքբերում, քանզի ամբողջ ժամանակն այդ դեպքում կլինի ոչ ավելի երկար, քան մեկ գիշերը: Իսկ եթե մահը տեղափոխություն է այստեղից մեկ այլ տեղ և ճիշտ են ասում, որ բոլոր մեռածները գտնվում են այնտեղ, ապա կարո՞ղ է արդյոք առավել մեծ բարիք լինել, դատավորի այրեր: Չէ՞ որ եթե մեկը

հասնի Յադես, ազատվելով այս ինքնակոչ դատավորներից, կգտնի ծշմարիտ դատավորների, որոնք, ինչպես ասում են, դատում են Յադեսում՝ Մինոսին, Յադամանթիսին, Էակոսին, Տրիպտոլեմոսին⁴⁰ և կիսաստվածներից բոլոր նրանց, ովքեր արդար են եղել իրենց կյանքում: Մի՞թե վատ կլինի այդպիսի վերաբնակեցումը: Եվ ձեզնից յուրաքանչյուրը ինչնր ասես չէր տա Օրփեոսի, Մուսեոսի⁴¹, Յեսիոդոսի և Յոմերոսի հետ լինելու համար: Եթե դա ծշմարիտ է, ես կցանկանայի մահանալ բազում անգամ: Ինձ համար հրաշալի կլինեն, հանդիպելու դեպքում, զրուցել այնտեղ Պալամեդեսի⁴² և Տելամոնի որդի Այասի⁴³ հետ կամ հներից ուրիշ մեկի, որը մահացել է անարդար դատի պատճառով, և ինձ թվում է, որ հաճելի կլինեն իմ բախտը համեմատել նրանց բախտի հետ: Եվ ամենակարևորը. ես կփորձեի և կքննեի այնտեղ բնակվողներին, ինչպես արել եմ այստեղ, [պարզելով], թե ով է նրանցից ամենախմաստունը և ով է, որ կարծում է, թե իմաստուն է, բայց չէ: Ինչնր ասես որ չէր տա, դատավոր այրեր, ցանկացած ոք քննելու համար նրան, ով Տրոյա բերեց մեծ զորքը⁴⁴, կամ Ոդիսևսին⁴⁵, Սիսիփոսին⁴⁶, և շատ ուրիշների՝ թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց: Նրանց հետ զրուցելը, շփվելը և նրանց փորձելը անասելի երջանկություն կլիներ: Յամենայն դեպս այնտեղ բնակվողները չեն սպանում դրա համար: Քանզի ամեն բանից զատ նրանք ավելի երջանիկ են այստեղիներից և այսուհետ անմահ են, եթե ձիշտ է պատումը:

b

c

Սակայն, դատավոր այրեր, ձեզ նույնպես հարկավոր է մահվան հարցում լավատես լինել: Նկատի առեք մեկ ծշմարիտ բան. լավ մարդուն վատ բան չի պատահում ո՛չ կյանքի օրոք, ո՛չ էլ մահից հետո, և աստվածները չեն մոռանում նրա գործերը: Ինձ հետ կատարվածը ինքն իրեն չպատահեց, և ինձ պարզ է դարձել, որ ավելի լավ է մեռնեն և ազատվեն հոգսերից: Ահա ինչու նշանը ոչ մի անգամ ինձ չխանգարեց, և ես բոլորովին չեմ բարկանում իմ դեմ

d

- քվեարկածների և ինձ մեղադրողների վրա, թեև նրանք
- e դատապարտել և մեղադրել են ինձ ոչ թե բարի նկատառումներից ելնելով, այլ ցանկանալով վնասել: Այդ բանի համար նրանք արժանի են հանդիմանության: Ամեն դեպքում կխնդրեմ նրանցից հետևյալը. եթե իմ որդիները, երբ հասակ առնեն, ձեր կարծիքով դրամը կամ ուրիշ ինչ-որ բան գերադասեն առաքինությունից, պատժեք նրանց, ո՛վ այրեր, հանգիստ չտալով այնպես, ինչպես ես ձեզ հանգիստ չեմ տվել, և եթե նրանք իրենցից ոչինչ չներկայացնելով կարծեն, թե ինչ-որ բան են, կշտամբեք նրանց, ինչպես ես եմ ձեզ կշտամբել, նախատեք նրանց, որ հոգ չեն տանում պետք եղածի մասին՝ կարծելով, թե ինչ-որ բան արժեն, բայց [իրականում] ոչինչ չ արժեն: Եվ եթե անեք դա, արդարությամբ կհատուցեք ն՛ ինձ, ն՛ որդիներին:
- 42

Սակայն արդեն հեռանալու ժամն է, ինձ՝ մեռնելու, իսկ ձեզ՝ ապրելու: Իսկ թե մեզնից ում է բաժին ընկնում ավելի լավը, չգիտի ոչ ոք, բացի աստծուց:



ԿՐԻՏՈՆ

ՍՈԿՐԱՏԵՍ, ԿՐԻՏՈՆ

Սոկրատես. Ինչու՞ ես եկել այս ժամին, Կրիտոն: Թե՞ 43
արդեն վաղ չէ:

Կրիտոն. Շատ վաղ է:

Սոկրատես. Եվ ի՞նչ ժամ է:

Կրիտոն. Որ որ է կլուսանա:

Սոկրատես. Չարմանում եմ, որ բանտապահը քեզ
թույլ է տվել ներս մտնել:

Կրիտոն. Նա արդեն սովոր է ինձ, Սոկրատես, քանզի
հաճախ եմ այստեղ գալիս և, բացի այդ, նրան լավություն
եմ արել:

Սոկրատես. Յենց նո՞ր ես եկել, թե՞ վաղուց:

Կրիտոն. Բավական վաղուց:

Սոկրատես. Այդ դեպքում ինչու՞ իսկույն չես արթնացրել b
ինձ և լուռ նստել ես:

Կրիտոն. Ձևաը վկա, Սոկրատես, ինքս չէի ցանկանա
այդպիսի դժբախտության մեջ մեկ էլ արթուն մնալ: Սա-
կայն զարմանում եմ՝ տեսնելով, թե ինչ լավ ես քնում:
Դիտմամբ չարթնացրի քեզ, որպեսզի որքան կարելի է հա-
ճելի անցկացնես ժամանակդ: Նախկինում էլ, ողջ կյանքիդ
ընթացքում, հաճախ եմ զարմացել քո երանելի բնավորու-
թյան վրա, իսկ այժմ հատկապես զարմանում եմ, թե ինչ
թեթև ու հանգիստ ես տանում դժբախտությունը:

Սոկրատես. Որովհետև, Կրիտոն, անիմաստ կլիներ իմ c
տարիքում տրտնջալ մահվան առիթով:

Կրիտոն. Սոկրատես, ուրիշներն էլ այդ տարիքում ընկնում են նման փորձանքի մեջ, սակայն տարիքը նրանց չի խանգարում, որ դժգոհեն իրենց բախտից:

Սոկրատես. Այդպես է: Բայց ինչու՞ ես այսքան շուտ եկել:

Կրիտոն. Վատ լուր եմ բերել, Սոկրատես, բայց ոչ քեզ, ինչպես տեսնում եմ, այլ ինձ և բոլոր մերձավորներիդ համար: Եվ ինձ համար, կարծում եմ, ավելի ծանր ոչինչ լինել չի կարող:

d Սոկրատես. Ի՞նչ լուր է: Մի՞թե Դելոսից եկել է նավը, որի ժամանման հետ ես պետք է մեռնեմ¹:

Կրիտոն. Նավը չի ժամանել, բայց ինձ թվում է՝ դա կլինի այսօր. այդ մասին հայտնեցին Սունիոնից² եկածները, որոնք նավն այնտեղ են թողել: Նրանց խոսքերից պարզ է, որ այսօր կժամանի, իսկ վաղը, ո՛վ Սոկրատես, դու պարտավոր կլինես ավարտել կյանքդ:

44 Սոկրատես. Բարին ընդ մեզ, ո՛վ Կրիտոն: Եթե այդ է աստվածների կամքը, թո՛ղ այդպես լինի: Թեպետ ինձ չի թվում, թե նավը տեղ կհասնի այսօր:

Կրիտոն. Ինչու՞ ես այդպես կարծում:

Սոկրատես. Ասեմ քեզ: Չէ՞ որ ես պետք է մեռնեմ նավի գալու հաջորդ օրը:

Կրիտոն. Այդպես ասացին իրավասունները³:

Սոկրատես. Բայց ես կարծում եմ՝ նավը կգա ոչ թե այսօր, այլ հաջորդ օրը: Ապացույցը իմ երազն է, որ տեսա քիչ առաջ գիշերը: Թերևս ճիշտ էիր, որ չարթնացրիր:

Կրիտոն. Ի՞նչ երազ էր դա:

b Սոկրատես. Ինձ երևաց, թե մոտեցել է մի գեղեցիկ ու բարեստ կին ձերմակ զգեստով, կանչում է ինձ և ասում. «Ո՛վ Սոկրատես,

Երրորդ օրը կհասնես բերրի Փթիե»⁴:

Կրիտոն. Տարօրինակ երազ է, Սոկրատես:

Սոկրատես. Իսկ ինձ թվում է, որ պարզ է, Կրիտոն:

Կրիտոն. Եվ գուցե շատ պարզ: Բայց թանկագին Սոկրատես, գոնե հիմա ինձ լսիր և փրկվիր: Եթե մեռնես, դժբախտություն կլինի ոչ միայն ինձ համար, որ այլևս այդպիսի մեկին չեմ գտնի, այլև շատերի, որոնք լավ չեն ճանաչում ինձ և քեզ, քանզի նրանց կթվա, թե ի վիճակի էի քեզ փրկել, եթե ցանկանայի դրամ տրամադրել, բայց չարեցի դա: Իսկ ավելի ամոթալի ի՞նչ կա, քան դրամն ընկերօջից ավելի թանկ գնահատելը: Բազմությունը չի հավատա, որ դու, հակառակվելով մեզ, ինքդ չցանկացար հեռանալ այստեղից:

Սոկրատես. Սակայն, երանելի՛ Կրիտոն, ինչու՞ պետք է այդքան հոգ տանենք բազմության կարծիքի մասին⁵: Չէ՞ որ ամենաբարեմիտ մարդիկ, որոնց հետ արժե հաշվի նստել առաջին հերթին, կմտածեն, որ այդ բաներն արվեցին այնպես, ինչպես պետք է արվեին:

Կրիտոն. Բայց դու գիտես, Սոկրատես, որ բազմության կարծիքն անհրաժեշտ է հաշվի առնել: Այժմ կատարվածից պարզ է, որ բազմությունն ի վիճակի է գործել ոչ միայն փոքր, այլև ամենամեծ չարիքը, եթե նրա առջև զրպարտել են որևէ մեկին:

Սոկրատես. Ես կուզեի, ո՛վ Կրիտոն, որ բազմությունն ի վիճակի լիներ գործելու մեծագույն չարիք, որպեսզի կարողանար գործել նաև մեծագույն բարիք, և դա հրաշալի կլիներ: Բայց երկուսն էլ ի վիճակի չէ անելու. քանզի չի կարող ո՛չ խոհեմ դարձնել [մարդուն], ո՛չ էլ անխոհեմ, այլ անում է, ինչ պատահի:

Կրիտոն. Թո՛ղ այդպես լինի: Բայց ասա ինձ, Սոկրատես, գուցե մտահոգվում ես, որ մատնիչները, եթե հեռանաս այստեղից, բարդություննե՞ր ստեղծեն ինձ և մյուս մերձավորներիդ, որովհետև փախցրել ենք քեզ այստեղից, և մենք ստիպված կլինենք կորցնել ողջ ունեցվածքը կամ

- 45 չափից շատ դրամ, և կամ մեկ այլ զրկանք կրել: Եթե նման բաներից ես վախենում, ապա թո՛ղ դա: Չէ՞ որ մենք արդար կլինենք՝ փրկելով քեզ և ենթարկվելով այդ վտանգին, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ավելի մեծին: Համաձայնի՞ր ինձ և արա՛ ինչ ասում եմ:

Սոկրատես. Եվ դա է մտահոգում ինձ, Կրիտոն, և՛ շատ ուրիշ բաներ էլ:

- Կրիտոն.** Դրանից մի՛ վախեցիր: Քանզի այդքան էլ շատ դրամ չեն պահանջում նրանք, ովքեր պիտի փրկեն քեզ և տանեն այստեղից: Մի՞թե չես տեսնում, թե որքան էժան մարդիկ են մատնիչները. նրանց շատ դրամ պետք չէ: Իմ ունեցվածքը քո տրամադրության տակ է. կարծում եմ, այն բավական է: Իսկ եթե անհանգստանալով իմ մասին, կարծում ես, թե պետք չէ ծախսել իմ դրամը, ապա այստեղ կան օտարականներ, որոնք պատրաստ են վճարել: Մեկը նույնիսկ արդեն բերել է բավականաչափ դրամ՝ թեբեացի Սիմմիասը: Պատրաստ է նաև Կեբեսը⁶, և շատ ուրիշներ: Ուստի կրկնում եմ, դրանից վախենալով մի՛ հրաժարվիր փրկվելուց, ոչ էլ թող քեզ մտահոգի այն, ինչ ասացիր դատարանում, իբր փախչելով չես իմանա ինչով զբաղվել: Քանզի ամեն տեղ, ուր էլ գնաս, քեզ կսիրեն: Իսկ եթե ցանկանայիր գնալ Թեսսալիա, ապա ես այնտեղ ընկերներ ունեմ, որոնք բարձր կգնահատեն քեզ և կերաշխավորեն քո ապահովությունը, այնպես որ քեզ ոչ ոք չի անհանգստացնի Թեսսալիայում:

- Բացի այդ, Սոկրատես, ըստ իս՝** արդար գործ չես բռնել, դավաճանել ինքդ քեզ, փրկվելու փոխարեն: Դու ինքդ ես շտապում, որ քեզ պատահի այն, ինչին ձգտում էին քո թշնամիները և ինչին հասան՝ ցանկանալով վնասել քեզ: Ինձ թվում է, դու դավաճանում ես նաև քո զավակներին⁷, որոնց լքում ես, մեծացնելու և դաստիարակելու փոխարեն: Եվ քո մեղքը կլինի, եթե [ապագայում] նրանք գործեն ինչպես պատահի: Իսկ նրանց հետ ակնհայտորեն տեղի կունենա այն, ինչ սովորաբար պատահում է որբերին իրենց որբության մեջ:

Կամ պետք է ընդհանրապես զավակներ չունենալ, կամ էլ նրանց հետ կիսել դժվարությունները, ապահովել սնունդով ու դաստիարակել: Դու, իմ կարծիքով, ընտրում ես ամենահեշտը: Իսկ պետք է ընտրել այն, ինչ կընտրեր առաքինի և արի մարդը, մանավանդ եթե ասում ես, որ ամբողջ կյանքում հոգ ես տարել առաքինության մասին:

Այնպես որ ես ամոթ եմ զգում և՛ քո, և՛ մեր, և՛ մերձավորներիդ համար, քանզի կմտածեն, թե այս ամբողջ պատմությունը տեղի ունեցավ մեր երկչոտության պատճառով, որ գործը մտավ դատարան, երբ կարող էր չմտնել, և անգամ գործի ընթացքն ու դրա վախճանը, ինչպես նաև դատավարության զավեշտականությունը,— այդ ամենը, կարող է թվալ, թույլ ենք տվել մեր անգործության ու երկչոտության պատճառով, և ո՛չ մենք փրկեցինք քեզ, ո՛չ էլ դու ինքդ, թեպետ դա կարելի էր և հնարավոր էր, եթե մեզնից նվազագույն իսկ օգուտ լիներ: Արդ, Սոկրատես, տես, որ չարիքի հետ մեկտեղ նաև ամոթ կլինի քեզ և մեզ համար: Ամեն դեպքում խորհիր, թեպետ խորհելու ժամանակ այլևս չկա, ժամանակն է վճռելու: Իսկ վճիռը մեկն է: Չէ՞ որ եկող գիշեր այդ ամենը պետք է իրագործվի, իսկ եթե սպասենք, որևէ բան անել արդեն անհնար կլինի: Բայց ամեն դեպքում, Սոկրատես, լսիր ինձ և ուրիշ ոչինչ մի՛ արա:

Սոկրատես. Սիրելի՛ Կրիտոն, քո ջանքերը շատ արժեքավոր կլինեին, եթե լինեին ձշմարիտ: Յակառակ դեպքում որքան մեծ, այնքան ավելի ծանր են դրանք: Մենք պիտի քննենք՝ արժե՞ արդյոք այդպես վարվել, թե՞ ոչ: Ես նախկինում էլ միշտ այսպիսին եմ եղել, ոչնչի չեմ կարողացել հնազանդվել, բացի համոզմունքից, որը քննելուց հետո լավագույնն է թվացել ինձ: Իսկ համոզմունքները, որոնք արտահայտել եմ նախկինում, չեմ կարող դեն նետել այժմ, երբ ինձ այսպիսի բախտ է վիճակվել. դրանք շարունակում են ինձ նույնը թվալ, և ես հարգում ու գնահատում եմ դրանք, ինչպես նախկինում: Եթե այժմ մենք չգտնենք դրանցից ավելի

- լավերը, համոզված եղիր, որ ես չեմ համաձայնի քեզ, անգամ եթե ներկայիս մեծամասնության իշխանությունը վախեցնի մեզ, ինչպես երեխաների, կալանքներով, մահապատիժներով և ունեցվածքի առգրավմամբ: Ուրեմն ինչպե՞ս քննենք դա ամենաձիշտ ձևով: Արդյոք նախ չվերցնե՞նք այն փաստարկը, որ դու բերեցիր կարծիքների մասին, ստուգելով՝ արդյոք մենք ճիշտ ենք ասել ամեն անգամ, թե որոշ կարծիքների վրա պետք է ուշադրություն դարձնել, իսկ մյուսների վրա՝ ոչ, թե՞ սխալվել ենք: Կամ գուցե դա լավ էր ասված նախքան մահվան դատապարտվելս, իսկ այժմ պարզ դարձավ, որ ասվում էր հանուն ասվելու, իրականում սակայն կատակ էր և ցնդաբանություն: Ես շատ կուզեի, Կրիտոն, որ մենք քեզ հետ քննարկեինք հետևյալը՝ արդյո՞ք այս վիճակում ինձ այլ կերպ կերևա փաստարկը, թե՞ նույնկերպ, կփորձե՞նք հրաժարվել նրանից, թե՞ կհամաձայնենք դրան: Ինչպես ասել են [ինում], իսկ ինձ թվում է, թե գիտեին, ինչ
- e** են ասում, մարդկանց կարծիքների մի մասը պետք է շատ կարևորել, իսկ մյուսը՝ ոչ: Յանուն աստվածների, Կրիտոն, մի՞թե դա քեզ ձիշտ չի թվում: Չէ՞ որ ըստ էության դու
- 47** չպետք է վաղը մեռնես և ներկայիս փորձանքը չի շեղի քեզ: Ուրեմն տես. մի՞թե հիմնավոր չէ այն միտքը, որ պետք է գնահատել ոչ թե մարդկանց բոլոր կարծիքները, այլ մի մասը, իսկ մյուս մասը՝ ոչ: Եվ ոչ թե բոլոր մարդկանց, այլ մի մասի, իսկ մյուս մասի կարծիքները՝ ոչ: Ի՞նչ կասես: Մի՞թե ձիշտ չեն ասում:

Կրիտոն. ձիշտ են ասում:

Սոկրատես. Ուրեմն պիտանի կարծիքները պետք է գնահատել, իսկ անպիտանները՝ ո՛չ:

Կրիտոն. Այո:

Սոկրատես. Իսկ մի՞թե պիտանիները խելամիտ մարդկանց կարծիքներ չեն, իսկ ոչ պիտանիները՝ անխելք:

b Կրիտոն. Ինչպե՞ս թե ոչ:

Սոկրատես. Եվ ի՞նչ կասենք սրա մասին. մարզվող

Կրիտոն

այրը պարապելիս ուշադրություն է դարձնում ամե՞ն մարդու հավանությանը, նախատինքին և կարծիքին, թե՞ միայն նրա, ով բժիշկ է կամ մարզիչ:

Կրիտոն. Միայն նրա:

Սոկրատես. Ուրեմն նա պետք է վախենա լոկ բժշկի կամ մարզչի նախատինքից և հրձվի միայն նրա գովեստից, այլ ո՞չ մեծամասնության:

Կրիտոն. Ակնհայտորեն:

Սոկրատես. Եվ նա անում է դա՛ մարզվում է, ուտում և խմում, ինչպես դա ծիշտ է թվում վերակացուին և գիտակին, այլ ոչ մնացած բոլորին:

Կրիտոն. Այդպես է:

Սոկրատես. Լավ: Իսկ եթե չհնազանդվի այդ մեկին և չհարգի նրա կարծիքն ու գովեստները՝ փոխարենը հարգելով մեծամասնության կարծիքը, այլ ոչ գիտակաների, չի՞ կրի արդյոք որևէ վնաս:

Կրիտոն. Ինչպե՞ս չէ:

Սոկրատես. Ի՞նչ վնաս է դա: Անհնազանդի ո՞ր տեղին կդիպչի այն:

Կրիտոն. Ակնհայտ է, որ մարմնին: Քանզի մարմինն է կործանում:

Սոկրատես. Ճիշտ ես ասում: Ուրեմն նաև մյուս բաները, Կրիտոն, այդպես են, և հարկ չկա հիշելու բոլորը. այդպես է և՛ արդարի, և՛ անարդարի, և՛ մոթալիի, և՛ լավի, և՛ առաքինու, և՛ չարի հարցում, որոնց մասին էլ հենց գրուցում ենք այժմ: Ինչու՞ պետք է հնազանդվենք մեծամասնության կամ մեկի կարծիքին ու երկյուղենք դրանից, եթե կա այնպիսի մեկը, որը դրանց գիտակն է և որից հարկ է ամաչել ու երկյուղել ավելի, քան բոլոր մյուսներից: Եթե չլսենք նրան, կկործանվենք և կվնասենք այն, ինչն ավելի լավն է դառնում արդարությունից, իսկ անարդարությունից ոչնչանում է: Արդյո՞ք այդպես չէ:

Կրիտոն. Կարծում եմ, այդպես է, Սոկրատես:

e **Սուկրատես.** Իսկ եթե հավատալով տգետների կարծիքին՝ կործանենք այն, ինչն ավելի լավն է դառնում առողջից, իսկ հիվանդություններից վերանում է, կլինի՞ արդյոք ապրել դրա վերացումից հետո: Չէ՞ որ դա մարմինն է, թե՞ ոչ:

Կրիտոն. Այո:

Սուկրատես. Մի՞թե մենք կարող ենք ապրել անպիտան և կործանված մարմնով:

Կրիտոն. Բնավ:

48 **Սուկրատես.** Բայց կարո՞ղ ենք ապրել, եթե կործանված է այն, ինչին անարդարությունը վնասում է, իսկ արդարությունն օգուտ է բերում: Թե՞ մեր այն մասը, ինչ էլ այն լինի, որի հարաբերությամբ գոյություն ունեն անարդարությունն ու արդարությունը, ավելի անպիտան ենք համարում մարմնից:

Կրիտոն. Ոչ մի դեպքում:

Սուկրատես. Ուստի ավելի թա՞նկ:

Կրիտոն. Իհարկե:

Սուկրատես. Ուրեմն, բարեկամս, մենք պետք է ավելի շատ մտածենք ոչ թե այն մասին, թե ինչ է մեզ ասում բազմությունը, այլ՝ ինչ կասի արդարության և անարդարության գիտակը, միայն նա և ինքը ճշմարտությունը: Հետևաբար, դու նախ ծիշտ չես ասում, որ մենք պետք է հաշվի առնենք բազմության կարծիքը արդարի, լավի, առաքինու և դրանց հակառակ բաների մասին: «Սակայն, — կասի ինչ-որ մեկը, — բազմությունն ի վիճակի է սպանել մեզ»:

b **Կրիտոն.** Պարզ է նաև այդ: Կասի, Սուկրատես:

Սուկրատես. Ճիշտ ես ասում: Բայց, ո՞վ զարմանալի մարդ, փաստարկը, որ այժմ բերում եմ, նման է նախորդին: Մտածիր հետևյալի մասին. արդյո՞ք մենք շարունակում ենք ամենից բարձր դասել ոչ թե կյանքը, այլ լավ կյանքը:

Կրիտոն. Իհարկե, շարունակում ենք:

Սուկրատես. Իսկ լավը, գեղեցիկն ու արդարը շարունակում ենք նույնը համարել, թե՞ ոչ:

Կրիտոն. Շարունակում ենք:

Սոկրատես. Ուրեմն, ելնելով նրանից, ինչի վերաբերյալ c
 համաձայնության եկանք, պետք է դիտարկել հետևյալը.
 արդյո՞ք արդար կլինի, եթե ես փորձեմ հեռանալ այստեղից
 առանց աթենացիների թույլտվության, թե՞ անարդար: Եվ եթե
 մեզ արդար թվա, կփորձենք դա անել, իսկ եթե ոչ՝ կթող-
 նենք: Իսկ այն, ինչ ասում ես դրամ վատնելու, համբավի
 և երեխաների դաստիարակության մասին, Կրիտոն, ապա,
 ճիշտն ասած, դա այն մարդկանց մտահոգությունն է, որոնք
 առանց պատճառի հեշտությամբ կսպանենին, [իսկ հետո] կվե-
 րակենդանացնենին, եթե կարողանային. նկատի ունեմ բազ-
 մությունը: Իսկ մեզ, քանի որ այսպես ուղղորդեցինք փաս-
 տարկը, հարկավոր է քննել լոկ այն, ինչի մասին հենց նոր
 խոսում էինք. արդյո՞ք արդար կվարվենք՝ դրամ վճարելով և
 շնորհակալ լինելով նրանց, ովքեր դուրս կբերեն ինձ այս- d
 տեղից, և արդյո՞ք ինքներս դուրս գալով և ուրիշներին դուրս
 բերելով, այդ ամենով չենք դավաճանի ճշմարտությանը: Եթե
 պարզվի, որ անարդար գործած կլինենք, պետք չէ ուրեմն
 հաշվի նստել, որ մնալու դեպքում կմեռնենք կամ որևէ
 զրկանք կկրենք, այլ՝ չլինի թե անարդարություն գործենք:

Կրիտոն. Լավ ես ասում, ո՛վ Սոկրատես: Բայց նաև
 հուշիր, թե ինչպես վարվենք:

Սոկրատես. Մտածենք միասին, բարեկամս, և եթե e
 հակաճառելու բան ունենաս, հակաճառիր, ես կլսեմ քեզ:
 Իսկ եթե ոչ, ապա, սիրելիս, վերջ տուր ամեն անգամ նույն
 բանը կրկնել, թե աթենացիների կամքին հակառակ պետք է
 փախչեմ այստեղից: Քանզի շատ կարևոր եմ համարում քայլ
 անել քեզ համոզելուց հետո միայն, և ոչ կամքիդ հակառակ:
 Տե՛ս, բավարար է արդյոք քեզ համար մեր դիտարկման
 սկիզբը, և փորձիր հարցերին պատասխանել այնպես, ինչպես 49
 մտածում ես:

Կրիտոն. Կփորձեմ:

Սոկրատես. Արդյո՞ք ասել ենք, որ ոչ մի դեպքում չի
 կարելի կամովին անարդարություն գործել, թե՞ մի դեպքում

- կարելի է, իսկ մյուսում՝ ոչ: Թե՛ անարդարությունը ոչ մի կերպ չի կարող լինել ո՛չ բարի, ո՛չ էլ գեղեցիկ, ինչպես հաճախ համաձայնել ենք նախկինում: Մի՞թե այդ ամբողջ համաձայնությունը հողս է ցնդել այս մի քանի օրում, և մենք, Կրիստոն, տարեց մարդիկ, միմյանց հետ զրուցելիս մեզ թույլ ենք տվել ոչնչով չտարբերվել մանուկներից: Թե՛ ավելի շուտ, ինչպես նախկինում էլ ասել ենք,– անկախ այն բանից՝ կհաստատի դա բազմությունը, թե ոչ, և անկախ այն բանից՝ շատ կտուժենք, թե քիչ,– անարդարությունը բոլոր դեպքերում չարիք և ամոթ է այն գործողների համար: Ասե՛լ ենք, թե՛ ոչ:
- Կրիստոն.** Ասել ենք:
- Սոկրատես.** Ուրեմն ոչ մի դեպքում պետք չէ անարդարություն գործել:
- Կրիստոն.** Իհարկե ոչ:
- Սոկրատես.** Ոչ էլ անարդարությանը անարդարություն հակադրել (հակառակ շատերի կարծիքի), քանզի պետք չէ անարդարություն գործել ոչ մի դեպքում:
- c** **Կրիստոն.** Կարծես թե ոչ:
- Սոկրատես.** Ուրեմն ի՞նչ, պե՛տք է չարիք գործել, թե՛ ոչ:
- Կրիստոն.** Պետք չէ, Սոկրատես:
- Սոկրատես.** Իսկ չարիքով չարիքին պատասխանելը, ինչպես ասում են շատերը, անարդա՞ր է, թե՛ արդար:
- Կրիստոն.** Ոչ մի դեպքում:
- Սոկրատես.** Քանզի մարդկանց չարիք գործելը ոչնչով չի տարբերվում անարդարությունից:
- Կրիստոն.** Ճշմարիտ ես ասում:
- Սոկրատես.** Ուրեմն պետք չէ ո՛չ մարդկանցից որևէ
- d** մեկին անարդարությամբ պատասխանել, ո՛չ էլ չարիք գործել, անգամ նրանցից չարիք կրելու դեպքում: Եվ տես, Կրիստոն, որ համաձայնելով սրան՝ դու համաձայնում ես հակառակ բազմության կարծիքի: Քանզի ես գիտեմ, որ միայն քչերն են այսպես կարծում ու մտածում: Եթե մի մասն այսպես է

մտածում, իսկ մյուսը՝ ոչ, չկա ընդհանուր կարծիք, և սրանք միմյանց կարծածը տեսնելով, անպատճառ արհամարհում են իրար: Դու նույնպես լավ մտածիր, միանում՝ ես արդյոք այս կարծիքին և արդյո՞ք այդպես ես մտածում, որպեսզի կարողանանք սկսել մեր քննարկումը նրանից, որ երբեք ճիշտ չէ ո՛չ անարդարություն գործելը, ո՛չ անարդարությանը անարդարությամբ պատասխանելը և ո՛չ էլ կրած չարիքին չարիքով հատուցելը: Թե՞ նահանջում ես և չես միանում սկզբում ասվածին: Ես ինքս և՛ նախկինում, և՛ հիմա այդպես եմ մտածում, այնպես որ եթե այլ կերպ ես կարծում, խոսիր և խրատիր ինձ: Բայց եթե մնում ես նույն կարծիքին, լսիր շարունակությունը:

Կրիտոն. Մնում եմ նույն կարծիքին և այդպես եմ մտածում: Շարունակիր:

Սոկրատես. Կասեմ հետևյալը, իսկ ավելի լավ է հարցնեմ. եթե ինչ-որ բան արդար ես համարում, դա հարկ է կատարե՞լ, թե՞ խուսափել դրանից:

Կրիտոն. Կատարել:

Սոկրատես. Ուրեմն դատիր: Զեռանալով այստեղից և չհնազանդվելով քաղաքին՝ արդյո՞ք չարիք չենք գործում ոմանց հանդեպ, ընդ որում ավելի շատ նրանց, որոնց ամենից քիչ արժեր գործել, թե՞ ոչ: Եվ արդյո՞ք կատարում ենք այն, ինչ համաձայնեցինք, որ արդար է:

Կրիտոն. Չեմ կարող պատասխանել քո հարցին, Սոկրատես, քանզի չեմ հասկանում:

Սոկրատես. Այսպես մտածիր. եթե մենք ցանկանալինք ճողոպրել այստեղից,– անվանիր ինչպես կուզես,– և գային օրենքներն ու ողջ պետությունը, կանգնեին ու հարցնեին՞. «Ասա, ո՛վ Սոկրատես, ի՞նչ ես մտադիր անել: Արդյո՞ք մտադիր չես գործով, որ նախաձեռնել ես, կարեցածիդ չափ կործանել մեզ՝ օրենքները և ողջ պետությունը: Թե՞ քո կարծիքով դեռ կարող է գոյություն ունենալ և անվնաս մնալ մի պետություն, որում տեղի ունեցող դատն անվավեր է,

և առանձին մարդկանց պատճառով անզոր է դառնում ու վերացվում»: Ի՞նչ պատասխանենք այս և նման այլ հարցերին, ո՛վ Կրիստոն: Քանզի ոմն հռետոր կամ ուրիշ մեկը, շատ բան կարող է ասել այս վերացված օրենքի օգտին, որը պահանջում է, որ դատական որոշումները պահպանեն իրենց ուժը: Թե՞ պատասխանենք նրանց այսպես. պետությունն անարդար է եղել մեր նկատմամբ և ճշմարիտ վճիռ չի կայացրել: Այդպե՞ս ասենք:

Կրիստոն. Այդպես, Սուկրատես, Ձևսը վկա:

Սուկրատես. Իսկ ի՞նչ կասեին օրենքները: «Ո՛վ Սուկրատես, մի՞թե այդ մասին էլ ենք համաձայնության եկել քեզ հետ, թե՞ [միայն] պետության ընդունած որոշումները կատարելու մասին»: Նրանց խոսքերի վրա զարմանալու դեպքում գուցե ասեին. «Սուկրատես, մեր ասածը թող չզարմացնի քեզ, պատասխանի՛ր, քանզի ինքդ էլ սովոր ես հարց ու պատասխանի: Ասա՛, ի՞նչ մեղք ենք գործել մենք և քաղաքը, և ինչո՞ւ ես դու փորձում կործանել մեզ: Նախ մե՞նք չենք արդյոք ծնունդ տվել քեզ և մի՞թե մեր շնորհիվ չէ քո հայրը կնության վերցրել մորդ և ծնել քեզ: Ասա՛, կշտամբու՞մ ես արդյոք մեզ՝ որոշ օրենքներիս, որոնք վերաբերում են ամուսնություններին»:

– Չեմ կշտամբում,– կասեի:

«Իսկ նրա՞նք, որոնք վերաբերում են դաստիարակությանն ու կրթությանը, որոնցով դաստիարակվել ես նաև ինքդ: Մի՞թե լավ չեն սահմանված համապատասխան հարցերին վերաբերող այն օրենքները, որոնք պատվիրել են քո հորը կրթել քեզ մուսաների արվեստով և մարմնամարզությամբ»:

– Լավ,– կասեի:

«Այդպես: Իսկ քանի որ ծնվել ես, դաստիարակվել և կրթվել, կարո՞ղ ես արդյոք ասել, որ մեր ծնունդը և ստրուկը չես՝ թե՛ ինքդ, թե՛ քո նախնիները: Իսկ եթե դա այդպես է, արդյո՞ք հավասար ես համարում մեր և քո իրավունքները և արդյո՞ք կարծում ես, թե իրավունք ունես հակառակվելու

այն ամենին, ինչ փորձում ենք անել քեզ: Քո և քո հոր իրավունքը հավասար չի եղել, նույնը նաև տիրոջ, եթե տեր ունենայիր, հետևաբար ինչ-որ բան նրանցից կրելով չէիր կարողանա նույնը հակադրել՝ լսել վատը ու հակաճառել, ծեծվել ու ծեծել և նման այլ բաներ: Արդյո՞ք հայրենիքի և օրենքների նկատմամբ դա թույլատրելի է քեզ. այնպես որ, եթե արդար համարելով՝ փորձենք կործանել քեզ, դու կարեցածիդ չափ կփորձես կործանել մեզ՝ օրենքներիս և հայրենիքը, և կասես, որ արդար ես վարվում, դու՛ մի մարդ, որ իրականում հոգ է տանում առաքինության մասին: Թե՞ այնքան իմաստուն ես, որ չես նկատում, որ հայրենիքը մորից, հորից և բոլոր նախնիներից ավելի թանկ, նշանակալի ու սրբազան է և ավելի մեծ հարգանք է վայելում աստվածների մոտ և այն մարդկանց, որոնք խելք ունեն: Հայրենիքի նկատմամբ պետք է ակնածել և ավելի շատ ենթարկվել ու հաճոյանալ, եթե բարկանում է, քան հորը, և պետք է նրան կա՛մ հակառակը համոզել, կա՛մ էլ կատարել այն, ինչ պատվիրում է, և եթե ինչ-որ բան է սահմանում, լռությամբ կրել դա, լինի ծեծ թե կալանք, իսկ եթե պետությունը պատերազմ վարի՝ վիրավորվել կամ մեռնել. այդ ամենը հարկ է կատարել, քանզի դա արդար է: Եվ չի կարելի չենթարկվել, խուսափել կամ լքել տեղը շարքում, այլ թե՛ պատերազմի ժամանակ, թե՛ դատարանում և թե՛ այլուր պետք է անել այն, ինչ թելադրում է պետությունն ու հայրենիքը, կամ էլ բացատրել նրան, թե որն է արդարը: Իսկ մոր կամ հոր և մանավանդ հայրենիքի նկատմամբ բռնություն գործադրելը սրբապղծություն է»:

b

c

Ինչ պատասխանենք սրան, Կրիտոն: Ճի՞շտ են ասում օրենքները, թե՞ ոչ:

Կրիտոն. Կարծում եմ, ճիշտ են:

Սոկրատես. «Ուրեմն, Սոկրատես, մտածիր,– գուցե շարունակեն օրենքները,– ճշմարիտ չե՞նք ասում արդյոք, որ այժմ այդպիսի գործ նախաձեռնելով՝ արդար չես վարվում մեզ հետ: Չէ՞ որ մենք ենք ծնել քեզ, սնել, դաստիարակել,

- d տվել ամեն տեսակ բարիք՝ քեզ և մյուս քաղաքացիներին: Սակայն մենք հայտարարում ենք, որ աթենացիներից յուրաքանչյուր ցանկացողի հնարավորություն է տրվում քաղաքի իրավիճակին և մեզ՝ օրենքներիս, ծանոթանալուց հետո, եթե նրան դուր չենք գալիս, վերցնել ունեցվածքն
- e ու հեռանալ ուր կամենա: Մեզնից՝ օրենքներից ոչ մեկը չի խոչընդոտում և չի արգելում ձեզնից ոչ ոքի ցանկության դեպքում հեռանալ գաղութ, եթե չի հավանում մեզ և պետությունը, անգամ եթե օտար երկիր հեռանա՝ տանելով իր ունեցվածքը: Իսկ ձեզնից նրան, ով մնում է, տեսնելով, թե ինչպես ենք մենք վարում դատը և պետության մյուս գործերը, արդեն ասում ենք, որ փաստացի համաձայնել է կատարել այն, ինչ պատվիրում ենք, իսկ եթե չի հնազանդվում, ասում ենք, որ նա երիցս անարդար է վարվում, չհնազանդվելով մեզ՝ իր ծնողներին, իր դաստիարակներին, և որ հնազանդվել համաձայնելուց հետո ընդվզում է և չի տարիամոզում մեզ, երբ մենք որևէ բան լավ չենք անում, մինչդեռ մենք առաջարկում ենք, այլ ոչ կոպտորեն հրամայում կատարել մեր պատվիրածը, և թույլ ենք տալիս ընտրել երկուսից մեկը՝ կամ համոզել մեզ, կամ կատարել, բայց նա չի անում դրանցից և ոչ մեկը:

Այդպիսի մեղադրանքների, ասում ենք մենք, կենթարկվես նաև դու, ո՛վ Սոկրատես, եթե անես մտքինդ, ընդ որում կլինես ոչ թե քիչ մեղադրվող աթենացիների թվում, այլ առավելագույն:»

- Իսկ եթե ես ասեի. «Բայց ինչու՞»,– նրանք արդարացիորեն կպատասխանեին, որ բոլոր աթենացիներից ամենաշատը ես էի համաձայնում իրենց այդ հարցում: Քանզի կասեին.
- b «Սոկրատես, մենք զորեղ ապացույց ունենք, որ քեզ դուր ենք եկել՝ մենք և պետությունը: Քանզի մյուս բոլոր աթենացիներից ավելի ամուր չէիր հաստատվի քաղաքում, եթե առանձնահատուկ կերպով չհավանեիր այն: Դու երբեք չես հեռացել քաղաքից որևէ տեսչության կամ այլ նպատակներ

րով, միայն մեկ անգամ արշավանքի⁹, և երբեք չես ճանապարհորդել, ինչպես ուրիշ մարդիկ, և ցանկություն չես ունեցել տեսնել այլ քաղաքներ կամ այլ օրենքներ, և մենք բավարարել ենք քեզ: Այդքան ուժեղ ես սիրել մեզ և համաձայնել ես ղեկավարվել մեր կողմից. բացի այդ, որդիներ ես ունեցել այս պետության մեջ, քանզի այն դուր է եկել քեզ: Նույնիսկ դատավարության ընթացքում, եթե ցանկանայիր, քեզ աքսոր կնշանակվեր, և այն, ինչ այժմ անում ես առանց քաղաքի համաձայնության, այնժամ կանեիր համաձայնությամբ: Բայց դու սեթևեթում էիր, իբր չես վշտանում մահից, երբ ասում էիր, թե մահը նախընտրում ես աքսորից: Իսկ հիմա չես ամաչում այդ խոսքերից, ոչ էլ հարգում ես մեզ՝ օրենքներս, փորձելով ոչնչացնել, և գործում ես ինչպես ամենավատ ստրուկը՝ փորձելով փախչել հակառակ այն պարտավորություններին և համաձայնություններին, որոնցով պարտավոր ես ղեկավարվել մեր կողմից: Նախ, պատասխանիր մեզ, ծշմարիտ ենք ասում, որ դու համաձայնել ես մեր կողմից ղեկավարվել գործով, և ոչ խոսքով»: Ի՞նչ պատասխանենք սրան, ո՛վ Կրիտոն: Ուրիշ ի՞նչ է մնում, եթե ոչ համաձայնել:

Կրիտոն. Իհարկե, Սոկրատես:

Սոկրատես. «Ուրեմն ի՞նչ,— կասեն,— խախտու՞մ ես մեր առաջ ունեցածդ պարտավորություններն ու համաձայնությունները, որ կնքել ես ո՛չ պարտադրաբար կամ խաբվելով, ոչ էլ ստիպված լինելով որոշում կայացնելու կարճ ժամանակահատվածում, այլ ունենալով յոթանասուն տարի ժամանակ, որի ընթացքում, եթե դուր չէինք եկել քեզ կամ համաձայնությունները քեզ արդար չէին թվացել, կարող էիր հեռանալ: Բայց դու չգերադասեցիր ո՛չ Լակեդեմոնը, ո՛չ Կրետեն, որոնք, ինչպես հաճախ ասում ես, բարեկարգ են¹⁰, ոչ էլ հելլենական կամ բարբարոսական քաղաքներից մեկ ուրիշը, և մեր քաղաքը լքում էիր ավելի հազվադեպ, քան կաղերը, կույրերը և մյուս տկարները: Ակնհայտ է, որ մենք՝ պետու-

թյունն ու օրենքներս, քեզ ավելի էինք դուր գալիս, քան մյուս աթենացիներին: Իսկապես, ում է դուր գալիս պետությունն առանց օրենքների: Իսկ այժմ չես կատարում մեր համաձայնությունները: Լսի՛ր մեզ, ո՛վ Սոկրատես, և զավեշտի մի՛ վերածվիր փախչելով քաղաքից:

- Իսկապես, մտածի՛ր, ի՞նչ բարիք կքաղեիր ինքդ քեզ և
- b հարազատներիդ համար, եթե խախտեիր մեր համաձայնությունները և գործեիր այդ սխալը: Որ քո հարազատները կենթարկվեն արքայապետի և քաղաքը լքելու կամ ունեցվածքը կորցնելու վտանգին՝ առնվազն ակներև է: Ու եթե ինքդ գնաս մոտակա քաղաքներից մեկը՝ Թեբե կամ Մեգարա¹¹, – իսկ երկուսն էլ լավ օրենքներ ունեն, – ապա մուտք կգործես իբրև թշնամի նրանց հասարակարգին, ու բոլոր նրանք, ովքեր գնահատում են իրենց քաղաքը, կնայեն քեզ որպես օրենքներ տապալողի, և դու կբազմապատկես դատավորներիդ
- c համբավը, իբրև թե ճիշտ են վճռել դատը: Քանզի օրենքներ տապալողը իրավամբ կարող է համարվել նաև երիտասարդ և անմիտ մարդկանց կործանող:

Բայց ինչու՞ խուսափել բարեկարգ պետություններից ու պատվարժան մարդկանցից: Եվ այդպես վարվելով արժե՞ քեզ ապրել: Թե՞ կմոտենաս այդպիսի մարդկանց և չես ամաչի զրուցել նրանց հետ, ո՛վ Սոկրատես: Բայց ինչի՞ մասին: Մի՞թե, ինչպես և այստեղ, կզրուցես այն մասին, որ առաքինությունն ու արդարությունը, սովորոյթներն ու օրենքները ամենաթանկն են մարդկանց համար: Չե՞ս կարծում, թե դա ամոթալի կլիներ Սոկրատեսի համար: Արժե մտածել:

- Սակայն ենթադրենք՝ հեռացար այս կողմերից ու եկար Թեսսալիա Կրիտոնի բարեկամների մոտ: Իսկ այնտեղ մեծագույն անկատարություն է ու անբարոյականություն¹², և գուցե այնտեղ սիրով լսեն, թե որքան զավեշտական էր բանտից փախչելը փաթաթվելով այծի մորթու մեջ կամ մեկ այլ բանի, որ հարմար են համարում փախչողները, երբ փոխում են արտաքինը¹³: Եվ մի՞թե ոչ ոք չի ասի. դու, ո՛վ ծեր մարդ,
- e

որին կարճ ժամանակ է մնացել ապրելու, հանդգնում ես այդպես ամոթալիորեն կառչել կյանքից՝ խախտելով մեծ օրենքները: Գուցե և չասեն, եթե չդիպչես ոչ ոքի: Հակառակ դեպքում, Սոկրատես, շատ բաներ կլսես, որոնց արժանի չես: Եվ կապրես՝ ենթարկվելով ու ստրկանալով բազում մարդկանց: Եվ քեզ ոչինչ չի մնա սնվելուց բացի, ինչպես եթե Թեսսալիա եկած լինեիր ճաշի: Իսկ ի՞նչ կլինի արդարության և այլ առաքինությունների մասին մեր գրույցների հետ:

54

Ցանկանում ես ապրել հանուն երեխաների՞, որպեսզի սնես և դաստիարակես նրանց: Ինչպե՞ս: Տանելով Թեսսալիա, կսնես ու կդաստիարակես, և դրա համար նրանց կդարձնես օտարականներ՞, որպեսզի դա՞ էլ ծաշակեն: Թե՞ կենդանի մնալուդ դեպքում, բայց առանց քեզ, ավելի լավ կդաստիարակվեն, քանզի հարազատները հոգ կտանեն նրանց մասին: Այդ ինչպե՞ս է, որ Թեսսալիա մեկնելուդ դեպքում հոգ կտանեն, իսկ Հադես հեռանալու դեպքում՝ ոչ: Պետք է կարծել, որ Հադեսի դեպքում էլ հոգ կտանեն, եթե, իհարկե, մի բանի պետք են քո հարազատ կոչվածները:

b

Բայց, ո՞վ Սոկրատես, հավատա մեզ՝ քո դաստիարակներին. ո՞չ որդիներին, ո՞չ կյանքը և ո՞չ էլ որևէ այլ բան ավելի կարևոր մի՞ համարիր արդարությունից, որպեսզի գալով Հադես՝ օգտագործես դա այնտեղ իշխողներից¹⁴ պաշտպանվելու համար: Իսկ եթե [մտադրությունդ] իրագործելով ժամանես Թեսսալիա, չես լինի ո՞չ ավելի արդար, ո՞չ էլ ավելի մաքրակենցաղ, և նույնը՝ քո մերձավորները: Ավելի լավ չի լինի նաև այն ժամանակ, երբ հասնես Հադես: Այժմ, եթե հեռանաս վիրավորված, վիրավորված կլինես ոչ թե մեզնից՝ օրենքներից, այլ մարդկանցից: Եթե դուրս գաս բանտից, ամոթալիորեն անարդարությամբ պատասխանելով անարդարությանը և չարիքով չարիքին, խախտելով մեզ հետ ունեցած համաձայնություններն ու պարտավորությունները, չարիք գործելով նրանց, որոնց ամենաքիչն արժեր գործել՝ ինքդ քեզ, բարեկամներիդ, հայրենիքիդ և մեզ, մենք կբարկանանք քեզ վրա

c

կյանքիդ օրոք և այնտեղ՝ Չադեսում, մեր եղբայր օրենքները բարեհաճ չեն ընդունի քեզ՝ իմանալով, որ կարեցածիդ չափ
d փորձել ես կործանել մեզ: Մի՛ համաձայնիր Կրիտոնին և մի՛ արա այն, ինչ ասում է, ավելի լավ է՝ հավատա մեզ:»

Սիրելի՛ բարեկամ Կրիտոն, լավ իմացիր, ինձ թվում է, որ այդ եմ լսում, ծիշտ ինչպես կորիբանտներին¹⁵ թվում է, թե սրինգ են լսում: Եվ այդ խոսքերի արձագանքն այնպես է հնչում իմ ներսում, որ ուրիշ ոչինչ չեմ կարողանում լսել: Իմացիր, որ սա է իմ կարծիքը: Եթե սրա դեմ խոսես, զուր ես խոսելու: Այդուհանդերձ, եթե հույս ունես ավելին ասելու, խոսի՛ր:

Կրիտոն. Սակայն, ո՛վ Սոկրատես, ասելու ոչինչ չունեմ:
e Սոկրատես. Թո՛ղ այդպես լինի, ո՛վ Կրիտոն, անենք այն, ինչ թելադրում է աստված:



ՖԵՂՈՆ

**ԷՔԵԿՐԱՏԵՍ, ՖԵՂՈՆ, ԱՊՈԼԼՈՂՈՐՈՍ,
ՍՈԿՐԱՏԵՍ, ԿԵՔԵՍ, ՍԻՄՄԻԱՍ, ԿՐԻՏՈՆ,
Տասնմեկի սպասավորը**

Էքեկրատես. Ո՛վ Ֆեղոն, անձա՞մբ ես եղել Սոկրատեսի կողքին այն օրը, երբ նա թոյն խմեց¹ բանտում, թե՛ մեկ ուրիշից ես լսել այդ մասին: 57

Ֆեղոն. Անձամբ, էքեկրատես:

Էքեկրատես. Ինչի՞ մասին էր խոսում նա մահից առաջ, ինչպե՞ս մահացավ: Ես սիրով կլսեի, քանի որ փլուսցիներից² ոչ ոք վերջերս չի այցելել Աթենք, և երկար ժամանակ է, ինչ ոչ մի օտարական ոտք չի դրել մեզ մոտ, որպեսզի հավաստի որևէ բան հաղորդի կատարվածի մասին, բացի նրանից, որ Սոկրատեսը թոյն է խմել և վախճանվել: Պատմելու ուրիշ ոչինչ չունեն: b

Ֆեղոն. Ուրեմն դատի մասի՞ն էլ ոչինչ չգիտեք, թե ինչպես անցավ: 58

Էքեկրատես. Ոչ, այդ մասին մեկը պատմեց մեզ, և մենք զարմանում էինք, որ դատը վաղուց է եղել, իսկ նա մահացավ շատ ավելի ուշ³: Ինչպե՞ս դա տեղի ունեցավ, Ֆեղոն:

Ֆեղոն. Պատահականություն էր, էքեկրատես: Այնպես եղավ, որ դատավարության նախօրյակին պսակ դրեցին այն նավի խելին, որ աթենացիք ուղարկում են Դելոս⁴:

Էքեկրատես. Ի՞նչ նավ է դա:

Ֆեղոն. Նավ, որով, ինչպես պատմում են աթենացիները, Թեսևր⁵ մի ժամանակ Կրետե էր տարել յոթ զույգերին.

- նա փրկեց նրանց և ինքն էլ փրկվեց: Ինչպես պատմում են,
- b** աթենացիները երդվել էին Ապոլլոնին, որ փրկվելու դեպքում ամեն տարի դեսպաններ կուղարկեն Դելոս: Այդ ժամանակվանից մինչև օրս ամեն տարի, համաձայն երդման, դեսպանություն են ուղարկում աստծո մոտ: Ուղարկելուց հետո, մինչև Դելոս ժամանելն ու ետ դառնալը, օրենք ունեն՝ անարատ պահել քաղաքը և հանրային մահապատիժ չիրագործել: Իսկ նավարկությունը, եթե հակառակ քամիներ են
- c** փչում, երբեմն երկար է տևում:

Առաքելությունը սկսվում է, երբ Ապոլլոնի քուրմը պսակ է դնում նավախելին: Իսկ դա, ինչպես ասացի, դատավարության նախօրեին էր: Ահա ինչու դատավճռից մինչև մահը Սոկրատեսը այսքան երկար մնաց բանտում:

Էքեկրատես. Իսկ ինչպիսի՞ն էր հենց վախճանը, Ֆեդոն: Ի՞նչ խոսեց ու արեց, և մտերիմներից ովքե՞ր էին նրա կողքին: Թե՞ իշխանությունները թույլ չտվեցին նրանց ներկա գտնվել, և նա մահացավ առանց ընկերների:

- d** **Ֆեդոն.** Ոչ, ոմանք ներկա էին, նույնիսկ շատերը:

Էքեկրատես. Պատմիր մեզ բոլորը, որքան կարելի է ճշմարիտ, եթե, իհարկե, զբաղված չես:

Ֆեդոն. Ոչ, զբաղված չեմ ու կփորձեմ ներկայացնել ձեզ ամենը: Քանզի Սոկրատեսին հիշելը, սեփական խոսքով կամ ուրիշներին լսելով, միշտ էլ ամենահաճելի բանն է:

Էքեկրատես. Ունկնդիրներիդ համար էլ, Ֆեդոն, այդպես է: Սակայն փորձիր հնարավորինս ճշգրիտ պատմել ամեն բան:

- e** **Ֆեդոն.** [Այդ օրը], նրա կողքին, ես զարմանալի զգացում ունեի: Քանզի ներկա էի մարդու վախճանին, բայց խղճահարություն չունեի: Նա ինձ երջանիկ էր թվում, Էքեկրատես, և՛ վարքով, և՛ խոսքով: Այնքան աներկյուղ և առաքինաբար կնքեց իր մահկանացուն, որ ինձ թվաց, թե նա Հադես է հեռանում ոչ առանց աստվածային նախախնամության և հասնելով այնտեղ՝ կզգա իրեն ավելի լավ, քան
- 59**

Ֆեդոն

ուրիշ մեկը: Ահա ինչու չէի զգում այն խղճահարությունը, որ կարծես պիտի համակեր ինձ: Եվ ոչ էլ փիլիսոփայությունը,— իսկ մենք սովորականի պես այդպիսի զրույցներ էինք վարում,— հաճույք պատճառեց ինձ: Շատ տարօրինակ զգացում ունեի՝ խնդության ու վշտի մի խառնուրդ, երբ մտածում էի, թե նա ուր որ է կհեռանա մեզնից: Բոլոր ներկաները գրեթե նույն վիճակում էին, մերթ ծիծաղում էին, մերթ արտասվում, և հատկապես մեզնից մեկը՝ Ապոլլոդորոսը: Դու գիտես այդ մարդուն և նրա բնավորությունը:

Էքեկրատես. Ինչպես չիմանամ:

Ֆեդոն. Նա համակ վիշտ էր, նույնը նաև ես և մնացածները:

Էքեկրատես. Ովքե՞ր էին այնտեղ, Ֆեդոն:

Ֆեդոն. Տեղացիներից՝ այդ Ապոլլոդորոսը, Կրիտոբուլոսը հոր հետ, այնուհետև Յերմոգեսեսը, Էպիգեսեսը, Էսքինեսը և Անտիսթեսեսը: Կային նաև պեանիացի Կտեսիպպոսը, Մենեքսենոսը⁶ և համաքաղաքացիներից էլի մի քանիսը. Պլատոնը, կարծեմ, վատառողջ էր:

Էքեկրատես. Իսկ օտարերկրացիներից կայի՞ն:

Ֆեդոն. Այո, թեբեացի Սիմմիասը, Կեբեսը, Ֆեդոնիդեսը, իսկ Մեգարայից՝ Էվկլիդեսը և Տերփսիոնը⁷:

Էքեկրատես. Իսկ Արիստիպպոսն ու Կլեոմբրոտոսը⁸ ներկա՞ էին:

Ֆեդոն. Ոչ: Ասում են՝ նրանք Էգինայում էին:

Էքեկրատես. Ուրիշ ո՞վ կար:

Ֆեդոն. Կարծում եմ, այսքանն էին:

Էքեկրատես. Եվ ի՞նչ, ինչի՞ մասին էիք զրուցում:

Ֆեդոն. Ես կփորձեմ քեզ ամեն բան պատմել սկզբից: Մենք մինչ այդ էլ ամեն օր այցելում էինք Սոկրատեսին՝ ես և ուրիշները, հավաքվելով առավոտ կանուխ դատարանի մոտ, ուր տեղի էր ունեցել դատը: Դատարանը մոտ էր բանտին: Ամեն անգամ սպասում էինք մինչև բացեն բանտը և ժամանակը զրույցով կարճում: Արագ չէին բացում, իսկ երբ

բացում էին, ներս էինք մտնում Սոկրատեսի մոտ և հաճախ նրա հետ անցկացնում ամբողջ օրը: Հիշյալ օրը մենք նույն-
e պես շատ վաղ հանդիպեցինք, քանզի նախօրեին բանտից հեռանալիս իմացանք, որ նավը ժամանել է Դելոսից: Պայմանավորվեցինք հնարավորինս շուտ գալ սովորական վայրը: Եկանք, և մեզ մոտեցավ դռնապանը, որ սովորաբար բացում էր դարպասը: Նա ասաց, որ սպասենք և չմտնենք, մինչև չկանչի:

– Որովհետև,– ասաց,– տասնմեկը⁹ արձակում են Սոկրատեսին և կարգադրություններ անում այսօր կայանալիք մահապատժի վերաբերյալ:

60 Քիչ անց վերադարձավ և ասաց, որ ներս անցնենք: Մենք ներս մտանք ու տեսանք Սոկրատեսին՝ հենց նոր ազատ արձակված, և Քսանտիպպեին,– դու գիտես նրան,– մանկան հետ կողքին նստած¹⁰: Երբ Քսանտիպպեն տեսավ մեզ, սկսեց աղաղակել կանանց սովորության համաձայն և բղավել.

– Սոկրատես, վերջին անգամ են զրուցում քեզ հետ ընկերներդ, և դու՛ նրանց հետ:

Սոկրատեսը նայելով Կրիտոնին՝ ասաց.

– Կրիտոն, թո՛ղ որևէ մեկը նրան տուն տանի:

Կրիտոնի մարդիկ տարան Քսանտիպպեին, իսկ նա աղաղակում էր և կուրծք ծեծում:

b Սոկրատեսը նստեց մահճակալին, ծալեց ոտքը, տրորեց ձեռքով և, շարունակելով տրորել, ասաց.

– Ո՛վ այրեր,– ասաց նա,– որքան տարօրինակ է թվում այն, ինչ մարդիկ անվանում են հաճույք: Եվ ինչ զարմանալի ձևով է սա հարաբերվում նրան, ինչը համարվում է իր հակադիրը՝ ցավը: Մինևնույն մարդու մեջ դրանք չեն ցանկանա գտնվել միաժամանակ, բայց եթե որևէ մեկը հետամուտ է դրանցից մեկին և ստանում է, գրեթե անհրաժեշտաբար ստանում է նաև մյուսը, ինչպես եթե այդ երկուսը միա-

c նային մեկ գազաթի վրա: Եվ ես կարծում եմ, եթե Եզով-

պոսը¹¹ խորհեր այս մասին, առակ կհորիներ, թե ինչպես աստված, ցանկանալով հաշտեցնել նրանց, այդ բանը չհաջողելուց հետո միացրեց նրանց գլուխները: Ահա ինչու, երբ մեկը պատահում է մարդուն, վրա է հասնում նաև մյուսը: Այդպես էլ իմ դեպքում, նախ ոտքս ցավում էր շղթայից, իսկ այժմ դրան հաջորդել է հաճույքը:

Այդժամ Կեբեսն ընդհատեց նրան.

– Ձևսը վկա, Սոկրատես, լավ արեցիր, որ հիշեցրիր ինձ, քանզի բանաստեղծությունների մասին, որոնք հորինել են, – Եզովպոսի առակների փոխադրությունները և Ապոլլոնի ծոնը, – արդեն ուրիշներն էլ են հարցրել ինձ, իսկ Էվենոսը¹² զարմանում էր, թե ինչու ես որոշել հորինել դրանք այստեղ, չէ՞ որ նախկինում չես արել դա: Այնպես որ, եթե քեզ համար կարևոր է, թե ինչ կպատասխանեմ Էվենոսին, երբ կրկին հարցնի, – իսկ ես լավ գիտեմ, որ կհարցնի, – ասա, ինչ փոխանցեմ:

– Ասա նրան ճշմարտությունը, Կեբես, – պատասխանեց, – ասա, որ դա անելով՝ չեմ ցանկացել ցույց տալ, թե նրա բանաստեղծությունները անհաջող են: Ես գիտեմ, որ դա հեշտ չէր լինի: Ընդամենը փորձել եմ պարզել, թե ինչ են իմ որոշ երազները, երբ պատվիրում էին ինձ մաքրվել մուսաների արվեստով: Իսկ երազներս այսպիսին էին: Կյանքիս ընթացքում ինձ հաճախ այցելել է նույն երազը, տարբեր տեսքով, բայց ասելով նույնը. «Ո՛վ Սոկրատես, ստեղծագործիր և աշխատիր»: Եվ ես նախկինում համարել եմ, թե ինձ թելադրվում և խորհուրդ է տրվում անել այն, ինչ արել եմ, և ինչպես վազորդներին են սիրտ տալիս, այնպես էլ երազն է ինձ սիրտ տալիս անել այն, ինչ արել եմ՝ զբաղվել արվեստով, քանզի ամենամեծ արվեստը փիլիսոփայությունն է, իսկ ես դրանով եմ զբաղվել: Բայց այժմ, երբ դատն ավարտվեց և աստծո տոնախմբությունը հետաձգեց վախճանս, որոշեցի, որ գուցե երազն ինձ պատվիրում էր զբաղվել սովորական արվեստով, և պետք չէ չինազանդվել

նրան, այլ՝ կատարել, քանզի ճիշտ չէր լինի հեռանալ, քանի
b դեռ չեմ մաքրվել բանաստեղծելով: Այդպես, նախ գրեցի
 այն աստօծ պատվին¹³, որի տոնն էր: Այնուհետև հասկա-
 ցա, որ պոետը, եթե ուզում է պոետ լինել, պետք է ստեղծի
 առասպելներ, բայց ոչ դատողություններ, իսկ քանի որ ես
 առասպելաբան չեմ, սկսեցի բանաստեղծորեն շարադրել ձեռ-
 քիս տակ եղած ինձ հայտնի Եզովպոսի առակները¹⁴:

Այսքանը փոխանցիր Էվենոսին, Կեբես, ինչպես նաև իմ
 ողջունը, և եթե նա խելամիտ է, թո՛ղ հնարավորինս արագ
c հետևի իմ օրինակին: Իսկ ես այսօր կհեռանամ, որովհետև
 այդպես են պատվիրել աթենացիները:

Սիմմիասն ասաց.

– Այդ ի՞նչ ես հաղորդում Էվենոսին, ո՛վ Սոկրատես: Ես
 բազմիցս հանդիպել եմ այդ մարդուն, և որքան ճանաչում
 եմ նրան, հազիվ թե կամովին համաձայնի:

– Ինչու՞, մի՞թե Էվենոսը փիլիսոփա չէ:

– Կարծում եմ, այո,– պատասխանեց Սիմմիասը:

– Այդ դեպքում կհամաձայնի թե՛ Էվենոսը և թե՛ ցանկա-
 ցած մեկը, ով արժանի կերպով է վերաբերվում փիլիսոփա-
d յությանը: Թեև ինքն իրեն չի բռնանա, քանի որ դա արգել-
 ված է համարվում:

Այդ ասելով Սոկրատեսը ոտքերը հատակին դրեց և
 հետագա զրույցի ընթացքում այդպես նստեց: Կեբեսը
 հարցրեց նրան.

– Այդ ինչպե՞ս է, ո՛վ Սոկրատես, որ ինքն իրեն բռնա-
 նալն արգելված է, իսկ փիլիսոփան ցանկանում է գնալ
 մահացողի ետևից:

– Ի՞նչ է, Կեբես, մի՞թե դու և Սիմմիասը չեք լսել այդ
 մասին Փիլոլաոսից¹⁵ նրա հետ եղած ժամանակ:

– Ոչ մի հստակ բան, Սոկրատես:

– Ես ինքս խոսում եմ այդ մասին լսածիս հիման վրա,
 բայց սիրով կպատմեմ: Գուցե նրա համար, ով պատրաստ-
 վում է տեղափոխվել այնտեղ, շատ էլ տեղին է առասպել-

ներ հիշել այդ աշխարհի մասին և նկատի առնել, թե ինչ ենք մտածում այդ տեղափոխության մասին: Քանզի էլ e
 ինչո՞վ զբաղվենք մինչև մայրամուտ:

– Բայց ինչու՞ են ասում, թե ինքնասպանությունն անթույլատրելի է, Սոկրատես: Ես էլ եմ լսել Փիլոլաոսից, երբ մեզ մոտ էր, և ուրիշներից, որ չի կարելի անել դա: Բայց հստակ ոչինչ երբևէ չեմ լսել նրանցից: 62

– Գոտեպնդվիր,– ասաց Սոկրատեսը,– շուտով կլսես: Բայց գուցե քեզ զարմանալի թվա, որ միայն սա է մյուս բոլոր բաների մեջ պարզ և չունի բացառություն: Կան մարդիկ, որոնց համար ավելի լավ է մեռնել, քան ապրել: Եվ քեզ գուցե տարօրինակ թվա, որ այդ մարդկանց կողմից ամբարշտություն կլինի իրենց իսկ բարիք գործելը և որ նրանք պետք է սպասեն ուրիշի բարեգործությանը:

Կեբեսը ժպտալով պատասխանեց.

– Չևսը վկա, ճիշտ է:

Նա ասաց դա իր բարբառով:

– Սա կարող է անմիտ թվալ,– շարունակեց Սոկրատեսը,– բայց գուցե և զուրկ չէ որոշ իմաստից: Գաղտնի ուսմունքն¹⁶ այս մասին ասում է, որ մենք՝ մարդիկ, գտնվում ենք մի բանտում, որից պետք չէ ինքնուրույնաբար ազատվել կամ փախչել: Ինձ թվում է, սա մեծ ուսմունք է և ըմբռնման համար ոչ դյուրին: Բացի այդ, Կեբես, իմ կարծիքով ճիշտ են ասում, թե աստվածներն են հոգ տանում մեր մասին և մենք՝ մարդիկ, աստվածների տրամադրության տակ ենք: Թե՞ այդպես չես կարծում: b

– Իհարկե այդպես,– պատասխանեց Կեբեսը:

– Ուրեմն, եթե քեզ պատկանողներից որևէ մեկը սպաներ իրեն առանց տեղեկանալու քեզնից՝ ուզում ես արդյոք նրա մահը, մի՞թե չէիր բարկանա նրա վրա և չէ՞իր պատժի, եթե կարողանայիր: c

– Անշուշտ:

– Այդ դեպքում գուցե անմիտ չէ, որ մարդ չսպանի ինքն

իրեն մինչև որ աստված ինքը չառաքի դրա անհրաժեշտությունը, ինչպես այժմ մեր դեպքում:

- Կարծես թե այդպես է,- ասաց Կեբեսը,- թեև այն, ինչ
- d** հիմա ասացիր, իբր փիլիսոփաները հեշտությամբ կցանկանային մահանալ, անմտություն է, Սոկրատես, եթե մենք հենց նոր ձիշտ դատեցինք, որ աստված է մեր մասին հոգացողը և մենք նրա ունեցվածքն ենք: Քանզի անմտություն է, որ ամենախոհեմները, զրկվելով լավագույն վերակացուների հոգածությունից, չվրդովվեն: Չէ՞ որ նրանք չեն կարծում, թե ազատվելով՝ ավելի լավ կհոգան իրենց մասին: Անմիտ
- e** մարդն իսկույն այդպես կմտածեր, թե հարկավոր է փախչել տիրոջից, և հաշվի չէր առնի, որ լավ տիրոջից փախչել պետք չէ, այլ հարկ է մնալ նրա մոտ հնարավորինս երկար ժամանակ: Նա, ով խելք ունի, միշտ էլ կցանկանա մնալ ավելի լավի մոտ: Իսկ դա հակառակ է մինչ այժմ ասածիդ, քանի որ խելամիտները մահանալիս պետք է դժգոհ լինեն, իսկ անմիտները՝ ուրախ:
- 63** Սոկրատեսը լսելով սա, կարծում եմ, ուրախացավ Կեբեսի քննասիրությանը և նայեց մեզ:
 - Կեբեսը,- ասաց նա,- միշտ առարկություններ է փնտրում և իսկույն չի համաձայնում ասվածին:
 - Իսկ Սիմմիասն ասաց.
 - Բայց, ո՛վ Սոկրատես, ինձ թվում է, Կեբեսը ձիշտ է ասում: Ինչու՞ պիտի հիրավի իմաստուն մարդիկ փախչեն իրենց տերերից և հեշտությամբ բաժանվեն նրանցից: Ինձ թվում է, որ Կեբեսը քեզ նկատի ունի, որովհետև այսքան հեշտ ես տանում բաժանումը մեզնից և բարի տիրակալներից, որոնք, ինչպես ինքդ ես ասում, աստվածներն են:
 - Արդարացի եք,- ասաց Սոկրատեսը,- կարծում եմ, նկատի ունեք, որ պետք է պաշտպանվեմ այս մեղադրանքից, ձիշտ ինչպես դատարանում:
 - Ճիշտ այդպես,- պատասխանեց Սիմմիասը:
 - Լավ, այդ դեպքում ձեր առջև կփորձեմ ավելի համո-

գիչ ձևով պաշտպանվել, քան դատավորների: Սիմմիաս և Կեբես, եթե ես չմտածեի, որ հեռանում եմ իմաստուն և բարի աստվածների մոտ, ինչպես նաև մահացած մարդկանց մոտ, որոնք ավելի լավն են, քան այստեղիները, ապա սխալ կլինեի՝ չընդվզելով մահվան դեմ: Արդ, լավ իմացեք, որ ես հույս ունեմ գնալ առաքինի մարդկանց մոտ: Սա վստահորեն չեմ պնդում: Բայց որ գնում եմ աստվածների՝ ամենաառաքինի տիրակալների մոտ, ի տարբերություն այս տեսակ այլ հարցերի՝ պնդում եմ վստահորեն: Ուստի ընդվզելու պատճառ չունեմ, այլ հուսով եմ, որ մահացածներին ինչ-որ բան է սպասում, և ինչպես հներն են ասում՝ դա շատ ավելի լավ է առաքինիների, քան հոռիների համար:

– Եվ ի՞նչ, Սոկրատես, այդ բանը մտքումդ պահելով՝ ես հեռանալու, թե՛ մեզ էլ կհաղորդես: Չէ՞ որ այդ բարիքը, կարծում եմ, ընդհանուր է նաև մեզ համար, իսկ քեզ համար, եթե մեզ համոզես քո խոսքերով, այն նաև պաշտպանական կլինի:

– Կփորձեմ,– ասաց Սոկրատեսը,– բայց նախ պարզենք, թե ի՞նչ է մտածում Կրիտոնը: Ինձ թվում է, նա վաղուց արդեն ինչ-որ բան է ուզում ասել:

– Սոսկ այն, Սոկրատես,– պատասխանեց Կրիտոնը,– որ թույն բերողը մի քանի անգամ խնդրեց հաղորդել քեզ, որ հնարավորինս քիչ խոսես, քանզի ասում են՝ շատ խոսելուց մարդ տաքանում է, իսկ դա չի նպաստում թույնի ազդեցությանը: Այդպես վարվողները ստիպված են լինում երբեմն երկու և նույնիսկ երեք անգամ խմել թույնը:

Եվ Սոկրատեսն ասաց.

– Մռացի՛ր նրան: Թո՛ղ միայն պատրաստի իր թույնը և, եթե պետք է, տա երկու անգամ էլ, երեք էլ:

– Այդպես էլ գիտեի,– ասաց Կրիտոնը,– բայց նա արդեն վաղուց է կրկնում դա:

– Թո՛ղ նրան: Իսկ ձեզ՝ իմ դատավորներին, ես ուզում եմ այժմ ասել, թե ինչու իմ կարծիքով մարդը, որն իրոք ողջ

64 կյանքը փիլիսոփայել է, մահվան դատապարտվելով՝ արի է և հույս ունի վախճանից հետո մեծ բարիքներ գտնել այնտեղ: Թե ինչպես է դա հնարավոր, Սիմֆիաս և Կեբես, կփորձեն բացատրել: Նրանք, ովքեր իսկապես կապված են փիլիսոփայությանը, տարբերվում են մյուսներից, քանի որ ուսումնասիրում են ոչ այլ ինչ, քան մահացումն ու վախճանը: Եթե դա այդպես է, անհեթեթ կլիներ ողջ կյանքում ձգտել դրան, իսկ հասնելուն պես տրտնջալ, այսինքն տրտնջալ մի բանից, որ վաղուց ի վեր ցանկացել և ուսումնասիրել ես:

Սիմֆիասը ժպտաց.

b – Ձևսը վկա, Սոկրատես, ծիծաղս թեև չի գալիս, բայց ծիծաղեցրի՞ր ինձ: Կարծում եմ, շատերը լսելով քեզ՝ կմտածեին, որ ճիշտ են վարվում հարձակվելով փիլիսոփաների վրա, և մեր մերձավորները կմիանային նրանց, քանզի կորոշեն, որ փիլիսոփաներն իսկապես ցանկանում են մեռնել և արժանի են դրան:

– Եվ ճիշտ կորոշեն, Սիմֆիաս, բայց չեն հասկանա՝ ինչու, քանզի նրանց հասկանալի չէ, թե ինչպես են ցանկանում մեռնել, ինչով են արժանի մահվան և ինչպիսի մահ-

c վան են արժանի ճշմարիտ փիլիսոփաները: Խոսենք միմյանց հետ և թողնենք այդպես ասողներին: Ընդունում ենք արդյոք, որ մահն ինչ-որ բան է:

– Իհարկե,– պատասխանեց Սիմֆիասը:

– Ոչ այլ բան, քան հոգու բաժանումը մարմնից, այդպես չէ՞: Իսկ մահացած լինելը հոգուց բաժանված մարմնի ըստ ինքյան առանձին գոյություն է և մարմնից բաժանված հոգու՝ ըստ ինքյան առանձին գոյություն: Թե՞ մահն ուրիշ ինչ-որ բան է:

– Ոչ, այդ է,– պատասխանեց Սիմֆիասը:

d – Ուրեմն տես, բարեկամս, կհամաձայնե՞ս ինձ, եթե համաձայնես, սրանից պետք է ելնենք մեր քննության մեջ: Կարծում ես, փիլիսոփա մարդը շտապում է ընկնել հաճույքների կոչվածի ետևից, ինչպիսին են կերակուրն ու խմիչքը:

– Բնավ, Սոկրատես, – ասաց Սիմմիասը:

– Իսկ սիրային վայելքների՞:

– Բոլորովին:

– Իսկ մարմնի խնամքին վերաբերող այլ բաների, քո կարծիքով, ձգտում է այդպիսի մարդը: Գեղեցիկ թիկնոցի, սանդալների և մարմնի համար այլ գեղաշուք իրերի ձեռք բերումը, քո կարծիքով, գնահատում է, թե՞ արհամարհում, իհարկե բացի նրանցից, որոնք շատ անհրաժեշտ են:

e

– Նա, ով ծշմարիտ փիլիսոփա է, – ասաց, – կարծում եմ, արհամարհում է:

– Ուրեմն, ընդհանուր առմամբ, կարծում ես, որ նա հոգ է տանում ոչ թե մարմնի, այլ նրանից հնարավորինս հեռանալու և հոգուն մոտենալու մասին:

– Այո:

– Ուրեմն, նման հարցերում փիլիսոփան նախ բացահայտվում է նրանով, որ հնարավորինս ազատում է հոգին մարմնի հետ հաղորդակցվելուց՝ ի տարբերություն այլ մարդկանց:

65

– Թվում է՝ այդպես է:

– Եվ, Սիմմիաս, բազում մարդկանց կարծիքով՝ նա, ով հաճույք չի ստանում նման բաներից, ոչ էլ հաղորդակից է դրանց, չարժե, որ ապրի, և բոլորովին մտածած չլինելով մարմնական հաճույքների մասին՝ նա արդեն մոտ է մահվան:

– Միանգամայն ճիշտ ես ասում:

– Իսկ այժմ մտածողության ունակություն ձեռք բերելու մասին: Խոչընդոտում է արդյոք դրան մարմինը, թե՞ ոչ, եթե հաղորդակից դարձնենք նրան իմաստության որոնմանը: Նկատի ունեմ հետևյալը: Արդյո՞ք ծշմարիտ ինչ-որ բան կա մարդկանց տեսողության և լսողության մեջ: Չէ՞ որ պոետները միշտ ասում են, որ ոչինչ ստույգ չենք լսում և չենք տեսնում: Բայց, եթե մարմնի այդ զգացումները ո՛չ ստույգ են, ո՛չ էլ հստակ, ապա դժվար թե մյուսներն են այդպիսին,

b

Պատոն

քանզի սրանցից ավելի թույլ են¹⁷: Թե՛ քեզ այդպես չի թվում:

– Միանգամայն այդպես:

– Ե՛րբ է ուրեմն հոգին առնչվում ծճմարտությանը: Պարզ է, որ երբ մարմնի հետ է փորձում ինչ-որ բան հետազոտել, խաբվում է նրանից:

– Ճճմարիտ ես ասում:

c – Ուրեմն ոչ այլուր, քան մտորման մեջ է նրա առաջ բացվում ծճմարիտ ինչ-որ բան իրերի գոյությունից:

– Այո:

– Եվ հոգին այնժամ է լավ մտածում, երբ նրան չեն անհանգստացնում ո՛չ լսողությունը, ո՛չ տեսողությունը, ո՛չ ցավը, ո՛չ էլ որևէ հաճույք, այլ երբ ինքն իրենով լքում է մարմինը և հնարավորինս թոթափելով հաղորդակցությունը

d դրա հետ, միտվում է դեպի գոյը:

– Այդպես է:

– Ուրեմն այս հարցում էլ փիլիսոփայի հոգին արհամարհում է մարմինը և փախչում նրանից՝ փորձելով մնալ ինքն իր հետ:

– Կարծես թե:

– Իսկ այժմ, Սիմմիաս, ասու՞մ ենք արդյոք, որ արդարն ինչ-որ բան է, թե՛ ոչ:

– Իհարկե ասում ենք, Ջևսը վկա:

– Իսկ գեղեցիկն ու բարի՞ն:

– Ինչպես չէ:

– Դու երբևէ տեսե՞լ ես դրանցից որևէ մեկը աչքերով:

– Երբեք:

– Իսկ հասե՞լ ես դրանց մարմնական այլ զգացումների միջոցով: Ես խոսում եմ բոլոր այդպիսի բաների մասին՝ մեծության, առողջության, ուժի և այլն, մի խոսքով՝

e դրանցից յուրաքանչյուրի էության մասին: Մի՞թե մարմնի միջոցով ենք տեսնում դրանց մեջ ամենաճճմարիտը: Թե՛ այդ բանի իմացությանը մեզնից առավելագույնս կմոտենա

նա, ով ամենից շատ և ամենից հիմնավոր կվարժեցնի իրեն մտածել յուրաքանչյուր իրի մասին, որը դիտարկում է:

– Իհարկե:

– Ուրեմն ամենամաքուր ձևով դա կանի նա, ով ավելի շատ մտովի կմոտենա յուրաքանչյուր իրին, մտածելիս չդիմելով ո՛չ տեսողությանը, ո՛չ այլ որևէ զգացման, և ուղեկից չվերցնելով դրանցից ոչ մեկը խորհրդածության համար, այլ ըստ ինքյան զուտ միտքն օգտագործելով՝ կփորձի բռնել յուրաքանչյուր ինքնըստինքյան գոյը՝ հնարավորինս հրաժարվելով աչքերից ու ականջներից և ըստ էության ամբողջ մարմնից, քանզի այդ համագործակցության մեջ այն կաշկանդում է և թույլ չի տալիս հոգուն տիրանալ ճշմարտությանն ու մտածողությանը: Մի՞թե, Սիմմիաս, այդպիսին չէ նա, ով հաջողության է հասնում գոյի ճանաչողության մեջ:

66

– Ավելի քան ճշմարիտ ես ասում, Սոկրատես, պատասխանեց Սիմմիասը:

– Ուրեմն պետք է, որ այս ամենի մասին իսկական փիլիսոփաների մոտ ձևավորվի այնպիսի կարծիք, որ միմյանց կարողանան ասել հետևյալը. «Կարծես մի կածանով գալիս ենք այն մտքին, որ քանի դեռ մարմին ունենք և մեր հոգին անբաժանելի է այդ չարիքից, երբևէ բավականաչափ չենք տիրի մեր տենչանքի առարկային: Իսկ դա ճշմարտությունն է: Չէ՞ որ մարմինը բյուրավոր դժվարություններ է պատճառում մեզ, քանի որ սննդի կարիք ունի, բացի այդ՝ վրա են հասնում հիվանդությունները, որոնք խոչընդոտում են մեզ որսալ գոյը: Մարմինը լցնում է մեզ բազում այնպիսի ցանկություններով, երկյուղներով և այլևայլ տեսիլներով ու ցնորքներով, որ իսկապես նրա պատճառով ոչինչ հնարավոր չէ մտածել: Թե՛ պատերազմների, թե՛ խռովությունների և թե՛ կռիվների մեղավորը մարմինն է և իր ցանկությունները: Չէ՞ որ հարստությանը տիրելու պատճառով են ծագում բոլոր պատերազմները, իսկ տիրանալ հարստությանը ստիպում է մարմինը, որին մենք ստրկորեն ծառայում

b

c

d

- ենք: Ահա այս ամենի հետևանքով է, որ փիլիսոփայությամբ զբաղվելու պատեհություն չունենք: Իսկ վատթարագույնն այն է, որ նույնիսկ եթե ազատ ժամանակ ենք ունենում դիմելու հետազոտությանը, քննությունների մեջ նույնպես մարմինն անհանգստացնում է մեզ աղմուկով, շփոթեցնում է ու կաշկանդում, այնպես որ չենք կարողանում տեսնել ճշմարտությունը: Մինչդեռ մեզ համար իսկապես ապացուցված է, որ եթե ուզում ենք ինչ-որ բան իմանալ զուտ ձևով, պետք է հրաժարվենք նրանից և հենց հոգով հայենք իրենք իրերը: Այդժամ, իհարկե, կունենանք այն, ինչ տեսչում ենք սիրահարվածի պես՝ բանականություն, բայց դա, ինչպես երևում է մեր դատողությունից, կլինի միայն, երբ մահանանք, իսկ կյանքի օրոք՝ ոչ: Քանզի եթե ոչ մի զուտ իմացություն մարմնով հանդերձ հնարավոր չէ, ուրեմն երկուսից մեկը՝ կամ ոչ մի իմացություն որևէ կերպ հասանելի չէ, կամ էլ հնարավոր է միայն մահից հետո: Չէ՞ որ այդժամ է հոգին
- 67 լինում ինքն ըստ ինքյան, առանց մարմնի, ոչ ավելի վաղ: Իսկ կյանքի օրոք կարծես թե ավելի մոտ կլինենք իմացությանը, եթե հնարավորինս քիչ կառչենք մարմնից և հաղորդակցվենք նրան բացառապես անհրաժեշտ դեպքերի, և չվարակվենք նրա բնությամբ, այլ մաքրվենք նրանից, մինչև որ աստված չազատի մեզ մարմնից: Եվ այդկերպ մաքրված, ազատված մարմնի անմտությունից, մենք, թվում է, կլինենք ուրիշ այդպիսիների հետ և ինքներս կիմանանք ամենայն մաքուրը, որն էլ հավանաբար հենց ճշմարիտն է: Քանզի
- b պատշաճ չէ, որ անմաքուրը դիպչի մաքուրին»: Կարծում եմ, Սիմմիաս, այսպես պետք է անհրաժեշտաբար ասեն իրար և մտածեն բոլոր ճշմարիտ իմացասերները: Թե՛ այդպես չես կարծում:

– Միանգամայն այդպես, ո՛վ Սոկրատես:

– Ուրեմն, բարեկամս,– շարունակեց Սոկրատեսը,– եթե դա ճշմարիտ է, կարող եմ հույս ունենալ, որ ժամանելով այնտեղ, ուր ուղևորվում եմ, հենց այնտեղ, և ոչ այլուր,

ամբողջությամբ ձեռք կբերենք այն, ինչի համար բազում գործեր ենք նախաձեռնել անցած կյանքում, ուստի այժմ c ինձ վիճակված ճանապարհորդությունը սկսում եմ բարի հույսով, ցանկացած մեկի նման, ով համարում է, որ պատրաստել է իր միտքը մաքրվելով:

– Այդպես է,– ասաց Սիմմիասը:

– Արդյո՞ք մաքրվելը, ինչպես ասել են հնում, հոգին հնարավորին չափ մարմնից անջատելը չէ և սովորեցնելը, որ նա ժողովի իրեն մարմնի բոլոր տեղերից, ի մի գա d և թե՛ ներկայում, թե՛ ապագայում ապրի միայնակ և ինքնուրույն՝ ազատվելով մարմնից, ինչպես շղթաներից:

– Միանգամայն այդպես է,– ասաց Սիմմիասը:

– Ուրեմն դա՞ է մահ համարվում՝ հոգու ազատումն ու բաժանումը մարմնից:

– Իհարկե:

– Իսկ ազատել հոգին, ինչպես ասում ենք, ամենից շատ միշտ ցանկանում են միայն իսկական փիլիսոփաները: Նրանց մտածմունքը դա է՝ հոգու ազատագրումն ու բաժանումը մարմնից, այդպես չէ՞:

– Թվում է՝ այդպես է:

– Ուրեմն, ինչպես սկզբում ասացի, զավեշտական կլիներ, եթե մարդը կյանքի ընթացքում պատրաստվեր ապրել այնպես, որ մոտ լիներ մահվանը, իսկ մահը մոտենալուն պես՝ e վրդովվեր: Զավեշտական չէ՞:

– Անշուշտ:

– Արդ,– ասաց Սոկրատեսը,– ո՛վ Սիմմիաս, իսկական փիլիսոփաները գերադասում են մեռնել և մարդկանցից ամենաքիչն են վախենում մահից: Այսպես մտածիր. եթե նրանք միշտ թշնամաբար են տրամադրված իրենց մարմնի նկատմամբ և ուզում են ունենալ հոգին ինքն ըստ ինքյան, իսկ երբ դա տեղի է ունենում, վախենում ու վրդովվում են, մի՞թե մեծ անմտություն չէ, որ չեն ուրախանում հեռանալով այնտեղ, ուր հույս կա, թե կգտնեն այն, ինչ սիրել

- 68 են կյանքի ընթացքում (իսկ սիրել են բանականությունը), և կազատվեն իրենց թշնամուց: Այրերի, կանանց և զավակների մահից հետո շատերն են ցանկացել կամավոր գնալ Յադես այն հույսով, որ կտեսնեն այնտեղ իրենց մերձավորներին և կլինեն նրանց հետ¹⁸: Բանականություն սիրող մեկը, որն ամբողջությամբ համակվել է հույսով, թե այլևս ոչ մի տեղ
- b չի գտնի այն, բացի Յադեսից, մի՞թե կվրդովվի մահանալիս և ուրախ չի հեռանա այնտեղ: Նա այսպես պետք է մտածի, բարեկամս, եթե իսկապես փիլիսոփա է, քանզի նա միանգամայն համոզված է, որ ոչ մի ուրիշ տեղում չի գտնի զուտ բանականություն, այլ՝ միայն այստեղ¹⁹: Եվ եթե այնպես է, ինչպես ասացի, մի՞թե մեծագույն անհեթեթություն չէ, որ այդպիսի մեկը վախենա մահից:
- Միանգամայն ճիշտ է, Ջևը վկա:
 - Եվ մի՞թե, - ասաց Սոկրատեսը, - դա բավարար ապացույց չէ, որ նա փիլիսոփա չէ, որ եթե մեկը վրդովվում է
- c մոտալուտ մահից, նա ոչ թե իմաստասեր է, այլ մարմնասեր: Նա կարող է լինել նաև ընչասեր կամ փառասեր, կամ այդ երկուսը միասին:
- Ճիշտ այդպես է, - պատասխանեց Սիմմիասը:
 - Իսկ այն, ինչը կոչվում է արիություն, մի՞թե ամենից շատ հատուկ չէ նրանց, որոնց մասին զրուցում ենք:
 - Իհարկե, - ասաց:
 - Իսկ ժուժկալությունը, այսինքն այն, ինչը բոլորը կոչում են ողջամտություն՝ տենչանքներին չտրվելը, չափավոր ու համեստ լինելը, մի՞թե նրանց չէ հատուկ, ովքեր չափավորում են մարմինը և ապրում փիլիսոփայությամբ:
 - Անհրաժեշտաբար այդպես է, - ասաց:
 - Իսկ եթե մտածես մնացածների արիության և խելա-
- d մտության մասին, ի՞նչը կթվա քեզ անհեթեթ:
- Ինչպե՞ս, Սոկրատես:
 - Չէ՞ որ գիտես, որ մնացած բոլորը մահը մեծ չարիք են համարում:

– Այն էլ որքան մեծ,– ասաց Սիմմիասը:

– Ուրեմն ավելի մեծ չարիքի վախի՞ց չեն արդյոք նրանցից արիները քաջաբար դիմավորում մահը, եթե դիմավորում են:

– Այդպես է:

– Ուրեմն բացի փիլիսոփաներից բոլորը արի են վախից ու սարսափից: Բայց չէ՞ որ անհեթեթ է արի լինել վախից e

– Իհարկե:

– Իսկ ինչպե՞ս վարվենք զուսպ մարդկանց հետ: Մի՞թե նրանց դեպքում էլ նույնը չէ: Նրանք խոհեմ են ինչ-որ անզսպությունից: Թեպետ մենք կարող ենք ասել, որ դա անհնար է, սակայն մակերեսային խոհեմությունը նման ձևով է լինում: Չէ՞ որ որոշ հաճույքներից զրկվել վախեցողները, ցանկալով դրանք, խուսափում են մյուսներից և մնում են առաջինների իշխանության տակ: Թեև անզսպություն կոչում են հաճույքներին տրվելը, սակայն տրվելով այդպես որոշ 69 հաճույքների՝ նրանք իշխում են այլ հաճույքների վրա: Սա նման է քիչ առաջ մեր ասածին, այսինքն՝ ինչ-որ ձևով նրանց խոհեմացնում է անզսպությունը:

– Կարծես թե:

– Երանելի՛ Սիմմիաս, մի՞թե ձիշտ է առաքինության հարցում հաճույքը փոխել հաճույքի հետ, ցավը ցավի, վախը վախի, և մեծը փոքրի, ինչպես դրամները: Միայն մեկ ձիշտ դրամ կա, որի հետ հարկ է փոխել այդ ամենը՝ բանականությունը, քանզի նրանով կարելի է գնել ու վաճառել ամեն բան՝ և՛ արիությունը, և՛ խոհեմությունը, և՛ արդարությունը: Մի խոսքով, ճշմարիտ առաքինությունը կապված է բանականության հետ և՛ երբ դրան ուղեկցում են հաճույքները, ցավերը ու նման այլ բաներ, և՛ երբ չեն ուղեկցում: Իսկ բանականությունից դրանք անջատելը և միմյանց հետ փոխելը կտա ոչ թե առաքինություն, այլ պատրանք՝ պիտանի միայն ստրուկներին, անառողջ ու կեղծ: Իրականում b

- c ճշմարիտը նման արատներից մաքրվելն է, իսկ խոհեմությունը, արդարությունը, արիությունն ու ինքը բանականությունը մաքրագործող միջոցներ են: Եվ գուցե անմիտ չեն նրանք, ովքեր մեզ խորհուրդներ են սահմանել, այլ իրականում վա-
- d ղուց ակնարկել են, որ նա, ով Չադես կժամանի անհաղորդ և անխորհուրդ, ընկած կմնա ցեխի մեջ, իսկ նա, ով մաքրագործված կլինի և խորհուրդներին հաղորդ, հասնելով Չադես՝ կբնակվի աստվածների հետ: Քանզի, ինչպես ասում են խորհրդագետները,– «նարթեքս կրողները շատ են, իսկ բաքոսները՝ սակավ»²⁰: Իմ կարծիքով, բաքոսները ոչ այլ ոք են, քան ճշմարիտ փիլիսոփաները: Ես ըստ կարելվույն ոչինչ բաց չեմ թողել կյանքում, այլ ամեն կերպ ձգտել եմ
- e դառնալ նրանցից մեկը: Իսկ թե ճիշտ եմ ձգտել և հասել եմ արդյոք ինչ-որ բանի՝ հաստատ կիմանամ այնտեղ հասնելով, եթե աստված կամենա: Կարծում եմ, դա կլինի քիչ անց: Ահա ձեզ, Սիմմիաս և Կեբես, իմ պաշտպանականը, որը կբացատրի, թե ինչու ծանր չեմ տանում ձեզ և այստեղի տիրակալներին լքելը, և չեմ վրդովվում, քանզի իրավացիորեն հավատում եմ, որ այնտեղ ևս այստեղից ոչ պակաս առաքինի տիրակալներ ու բարեկամներ կգտնեմ: Եվ լավ կլիներ, եթե իմ պաշտպանականը ձեզ ավելի համոզիչ թվար, քան աթենացի դատավորներին:

70

Երբ Սոկրատեսն ավարտեց, Կեբեսն ասաց.

– Ո՛վ Սոկրատես, ըստ իս՝ լավ էր ասված, բայց հոգուն առնչվող խոսքերդ մեծ կասկածներ են առաջ բերում մարդկանց մեջ. նրանք կարծում են, որ երբ հոգին լքում է մարմինը, ոչ մի տեղ այլևս գոյություն չի ունենում, այլ՝ կործանվում է և վերանում նույն այն օրը, երբ մահանում է մարդը: Անմիջապես լքելով մարմինը և դուրս գալով, ինչպես շունչը կամ ծուխը, սփռվում է և այլևս ոչ մի տեղ գոյություն չի ունենում: Եթե հոգին ինքն ըստ ինքյան հավաքվեր որևէ տեղ, ազատվելով քո թվարկած չարիքներից, ապա, Սոկրատես, դա մեծ և հրաշալի հույս կլիներ, որ ասածդ

ծջմարիտ է: Բայց որ մահացած մարդու հոգին նույնպես գո- **b**
յում է և օծոված է ինչ-որ ուժով և բանականությամբ, լուրջ
ապացույցների և բացատրությունների կարիք ունի:

– Ճիշտ ես ասում,— պատասխանեց Սոկրատեսը,— ո՛վ
Կեբես: Բայց ի՞նչ անենք, ցանկանու՞մ ես այդ մասին զրու-
ցենք՝ պարզելու համար՝ այդպես է, թե ոչ:

– Իհարկե,— ասաց Կեբեսը,— ես հաճույքով կլսեմ քո
կարծիքը:

– Ուրեմն, կարծում եմ,— սկսեց Սոկրատեսը,— ոչ ոք,
նույնիսկ կատակերգուն²¹, լսելով ինձ, այժմ չի ասի, թե **c**
ես ճամարտակում եմ ու խոսում ոչ հասու բաների մասին:
Այժմ, եթե համաձայն ես, քննենք մեր խնդիրը:

Սկսենք սրանից. կամ Յադեսում մահացած մարդկանց
հոգիներ, թե ոչ: Մենք չենք մոռացել հին զրույցը, համա-
ձայն որի հոգիներն այստեղից հեռանում են այնտեղ և
դարձյալ այստեղ վերադառնում՝ գոյանալով մահացածներից:
Եվ եթե այդպես է, եթե մահացածներից վերստին ծնվում **d**
են ողջերը, մեր հոգիները պետք է որ եղած լինեն այնտեղ:
Քանզի նրանք չէին ծնվի, եթե արդեն չլինեին: Եվ եթե
ակնհայտ դառնար, որ ողջերը ծնվում են ոչ այլ կերպ,
քան մահացածներից, դա բավարար ապացույց կլիներ իմ
պնդման համար: Իսկ եթե այդպես չէ, ուրիշ փաստարկի
կարիք ունենք:

– Միանգամայն այդպես է,— պատասխանեց Կեբեսը:

– Այդ դեպքում, եթե ուզում ես ավելի հեշտ հասկանալ,
մի՞ դիտարկիր դա միայն մարդու այլ նաև բոլոր կենդա-
նիների ու բույսերի, մի խոսքով, ամեն ծնվողի օրինակով:
Փորձենք տեսնել, արդյո՞ք ամեն բան չէ, որ այդպես է ծնվում,
այսինքն՝ իր հակառակից, իհարկե, եթե հակառակը կա:
Օրինակ, գեղեցիկը տգեղի հակադիրն է, արդարը՝ անար- **e**
դարի, և բյուր նման բաներ: Մտածենք՝ արդյո՞ք եթե կան
հակադիր բաներ, դրանցից մեկը անհրաժեշտաբար պիտի
գոյանա իր հակադիրից: Դիցուք, երբ ինչ-որ բան դառնում

- 71 է ավելի մեծ, արդյոք անհրաժեշտաբար նախ եղել է փոքր և հետո դարձել ավելի մեծ:
- Այո:
 - Ուրեմն, նաև երբ ինչ-որ բան ավելի փոքր է դառնում, նախ եղել է ավելի մեծ, ապա ավելի ուշ դարձել է ավելի փոքր:
 - Այդպես է,- ասաց:
 - Եվ ավելի ուժեղից գոյանում է ավելի թույլը, իսկ ավելի դանդաղից՝ արագը:
 - Իհարկե:
 - Ուրեմն ի՞նչ, եթե մի բան դառնում է ավելի վատը, ապա ավելի լավի՞ց, իսկ ավելի արդարը՝ անարդարի՞ց:
 - Ինչպես չէ:
 - Ուրեմն բավարար չափով համոզվեցինք, որ ամեն բան ծնվում է այդպես՝ հակադիրը հակադիրից:
 - Իհարկե:
 - Իսկ չկա՞ արդյոք հակադիր բոլոր այդ զույգերի միջև
- b միջանկյալ ինչ-որ բան, այն է՝ երկու գոյացում, երբ առաջին հակադիրից գոյանում է երկրորդը, իսկ երկրորդից՝ առաջինը: Ավելի մեծ իրի և ավելի փոքր իրի միջև դա աճն է և նվազումը, և մեկի մասին ասում ենք, որ աճում է, իսկ մյուսի մասին, որ նվազում է:
- Այդպես է:
 - Ուրեմն նաև տարանջատման ու միավորման, սառեցման ու ջերմացման և մյուս բոլոր բաների դեպքում նույնն է: Անգամ այն երևույթների դեպքում, որոնց համար եթե չունենք համարժեք բառը, գործնականում անհրաժեշտաբար այդպես է. դրանք գոյանում են միմյանցից:
- c - Շատ ճիշտ է:
- Իսկ կյանքի հակառակը գոյություն ունի՞, այնպես, ինչպես արթնությանը հակառակ է քունը:
 - Իհարկե,- ասաց Կեբեսը:
 - Ի՞նչն է:

Ֆեդոն

- Մահը:
- Ուրեմն դրանք միմյանցից են ծնվում, եթե, իհարկե, հակադիր են, և նրանց միջև երկու գոյացում կա:
- Այլ կերպ ինչպե՞ս:
- Այդ դեպքում ես քեզ կասեմ իմ նշած զույգերից մեկը և նրա գոյացումները, իսկ դու կասես ինձ մյուս զույգը: Ես ասում եմ՝ քունը և արթնությունը, քնից ծնվում է արթնությունը, իսկ արթնությունից՝ քունը, իսկ նրանց ծնունդներն են քուն մտնելն ու զարթնելը: Քեզ բավական է, թե՞ ոչ:
- Բավական է:
- Հիմա դու ասա կյանքի և մահվան մասին: Մի՞թե չես ասի, որ կյանքի հակադիրը մահն է:
- Անշուշտ կասեմ:
- Իսկ դրանք գոյանում են միմյանցի՞ց:
- Այո:
- Ուրեմն ողջից ի՞նչն է ծնվում:
- Մեռյալը:
- Իսկ մեռյալից՝ ի՞նչ:
- Պետք է համաձայնել, որ ողջը:
- Ուրեմն մեռյալներից, ո՞վ Կեբես, ծնվում են կենդանի բաներն ու էակները:
- Թվում է՝ այդպես է:
- Ուրեմն մեր հոգիները լինու՞մ են Հադեսում:
- Թերևս:
- Այս զույգին վերաբերող ծնունդներից մեկը կարծես թե պարզ է, քանզի մահացումը պարզ բան է, այդպես չէ՞:
- Իհարկե:
- Արդ, ինչպե՞ս վարվենք: Եթե չհավելենք հակադիր գոյացումը, բնությունը կաղ կմնա: Պե՞տք է արդյոք մահացումը լրացնել ինչ-որ հակադիր ծնունդով:
- Իհարկե, - ասաց Կեբեսը:
- Եվ ինչո՞վ:
- Վերակենդանացմամբ:

72 – Բայց եթե կա վերակենդանացում, այն կլինի մեռյալներից ողջերի ծնվելու՝ շնորհիվ:

– Իհարկե:

– Ուրեմն մենք համաձայն ենք, որ ողջերը ծնվում են մեռյալներից ոչ պակաս, քան մեռյալները ողջերից: Եթե այդպես է, ապա դա բավարար ապացույց է, որ մեռյալների հոգիները պիտի լինեն ինչ-որ տեղ, որտեղից դարձյալ կծնվեն:

– Իմ կարծիքով, Սոկրատես, մեր համաձայնածից անհրաժեշտաբար դա է բխում:

– Եվ ինձ թվում է, Կեբես, սխալ չենք եղել, որ համաձայնել ենք: Եթե ծնվածներից յուրաքանչյուրը միշտ չհակակշռեր մյուսին, ասես շրջան կազմելով, այլ գնար ուղիղ, գոյացումը կլիներ միայն մեկից, չէր շրջվի դեպի ետ, և ինքդ ես հասկանում, որ ի վերջո ամեն բան կունենար նույն ձևը, կկրեր նույն վիճակը և գոյացումը կդադարեր:

– Այդ ինչպե՞ս,– հարցրեց Կեբեսը:

– Դժվար ոչինչ չկա, մտածիր այսպես: Դիցուք, քուն մտնելը կա, իսկ գարթնելը չի հակակշռում նրան: Դու գիտես, որ ի վերջո էնդիմիոնի²² պատմությունն անխմաստ կդառնար, քանզի մնացյալ ամեն բան նույնպես քուն կմտներ: Եվ եթե ամեն ինչ միանար, բայց չբաժանվեր, շատ արագ կիրականանար Անաքսագորասի ասածը. «Բոլոր իրերը [եղել են] միասին»²³: Ճիշտ այդպես էլ, Կեբես բարեկամ, եթե կյանքին հաղորդակից ամեն բան մահանար և մահանալուց հետո մնար մահացածի տեսքով և դարձյալ չվերակենդանանար, ամեն ինչ ի վերջո անհրաժեշտաբար կմեռներ, և ոչ մի կյանք չէր մնա: Չէ՞ որ եթե ուրիշ ինչ-որ բանից ծնվեր ողջը, իսկ այնուհետև մեռներ, այդ դեպքում ինչպե՞ս ամենայն ինչ կխուսափեր մահից:

– Ըստ իս՝ ոչ մի կերպ, ո՛վ Սոկրատես,– ասաց Կեբեսը,– ինձ թվում է, ամեն բան ժճարիտ ես ասում:

– Ինձ էլ, Կեբես, թվում է, որ ամեն ինչ ավելի շուտ այդպես է, և մենք չենք խաբվում՝ ընդունելով դա: Իրա-

կանում կա և՛ վերակենդանացում, և՛ մեռյալներից ողջերի ծնունդ, և՛ մահացածների հոգիների գոյություն: e

– Բայց ըստ քո մի փաստարկի, Սոկրատես,– ընդմիջեց Կեբեսը,– եթե ձիշտ է այն, ինչը սովորություն ունեիր հաճախ կրկնելու, որ մեր իմացածը ոչ այլ ինչ է, քան վերհուշ, և ըստ այդմ անհրաժեշտ է, որ մենք նախկինում սովորած լինեինք այն, ինչն այժմ վերհիշում ենք (իսկ դա անհնար է, եթե մեր հոգին չլիներ մեկ այլ տեղում նախքան այստեղ մարդկային կերպարանքի մեջ ծնվելը), ուրեմն հոգին կարծես թե անմահ է: 73

– Սակայն, ո՛վ Կեբես,– ընդմիջեց Սիմմիասը,– ի՞նչ ապացույցներ կան դրա համար: Յիշեցրու ինձ, քանզի մոռացել եմ:

– Կարճ ասած,– պատասխանեց Կեբեսը,– ամենալավ ապացույցն այն է, որի դեպքում ձիշտ դրված հարցին մարդիկ իրենք են պատասխանում ճշմարիտը: Մինչդեռ եթե նրանք չունենային իմացություն և ձիշտ ըմբռնողություն, չէին կարողանա դա անել: Դրանում կարելի է համոզվել դեմ տալով մարդկանց երկրաչափական գծագիր կամ նման մի բան: b

– Իսկ եթե դա քեզ չի համոզում, Սիմմիաս,– ասաց Սոկրատեսը,– տես, գուցե համաձայնես հետևյալ խորհրդածությանը: Չէ՞ որ դու կասկածում ես, որ իմացություն կոչվածը վերհուշ է:

– Կասկածո՞ւմ, իհարկե ոչ,– ասաց Սիմմիասը,– ես ուզում եմ հենց այն, ինչի մասին խոսում ենք՝ վերհիշել: Եվ հազիվ սկսեց Կեբեսն իր դատողությունը, ես ամեն բան հիշեցի և համոզվեցի: Սակայն ինձ պակաս հետաքրքիր չէ այն, ինչ դու էիր պատրաստվում ասել:

– Այսպես,– ասաց Սոկրատեսը,– մենք համաձայն ենք, որ եթե ինչ-որ մեկը որևէ բան է վերհիշում, պետք է նախկինում իմացած լինի դա: c

– Իհարկե,– ասաց Սիմմիասը:

– Ուրեմն եկեք համաձայնենք, որ վերհուշ է այն իմացությունը, որը ձեռք է բերվում հետևյալ ճանապարհով: Երբ մարդն ինչ-որ բան է տեսնում կամ լսում, կամ ունի մեկ այլ զգայություն և ճանաչում է ոչ միայն դա, այլ նաև մտաբերում է մեկ ուրիշ բան ևս, որը վերաբերում է ոչ թե այդ, այլ մեկ ուրիշ իմացության,– չե՞նք կարող արդյոք ասել, որ մտաբերածը նա վերհիշեց:

– Այդ ինչպե՞ս:

d – Յետևյալ կերպ: Մարդու մասին իմացությունը տարբեր է քնարի մասին իմացությունից:

– Ինչպես չէ:

– Ուրեմն դու գիտես, որ սիրահարները, երբ տեսնում են քնարը կամ թիկնոցը կամ մեկ ուրիշ բան, որ սովորություն ուներ օգտագործել իրենց սիրելին, ճանաչում են քնարը, և մտքում ունենում պատանու պատկերը, որին այն պատկանում է: Դա է վերհիշումը: Նմանապես՝ տեսնելով Սիմմիասին՝ որևէ մեկը հաճախ վերհիշում է Կեբեսին: Եվ այդպիսի բյուրավոր օրինակներ կան:

– Բյուրավոր, Ձևսը վկա,– ասաց Սիմմիասը:

c – Ուրեմն նման ճանաչողությունը վերհուշ է, և հատկապես այնպիսի բաների առնչությամբ, որոնք ժամանակի ընթացքում տեսնված չլինելով՝ արդեն մոռացվել են, այո՞:

– Իհարկե:

– Ուրեմն ի՞նչ, պատկերված ձի կամ քնար տեսնելով կարելի՞ է վերհիշել մարդուն, կամ տեսնելով պատկերված Սիմմիասին՝ վերհիշել Կեբեսին:

74 – Միանգամայն:

– Ուրեմն նաև պատկերված Սիմմիասին տեսնելով կարելի է հիշել հենց իրեն՝ Սիմմիասին՞:

– Կարելի է:

– Արդյո՞ք այդ ամենից չի բխում, որ վերհուշը լինում է մերթ նման բաների հիմքի վրա, մերթ էլ՝ ոչ նման:

– Բխում է:

– Սակայն երբ որևէ մեկը ինչ-որ բան է վերհիշում նմանի հիմքի վրա, չի՞ լինում անհրաժեշտաբար, որ նա մտածի, թե որքան կատարյալ կամ անկատար է դրա նմանությունը վերհիշածի հետ:

– Անհրաժեշտաբար:

– Ուրեմն տես, ձիշտ է արդյոք հետևյալը: Մենք ասում ենք, որ կա հավասարը,– նկատի չունեմ, որ գերանը հավասար է գերանին, քարը քարին և այլն, այլ այդ ամենից տարբեր կա մի բան՝ ինքը հավասարը: Համաձայն ենք, որ այդպիսինը կա, թե՞ ոչ:

– Համաձայն ենք, Ձևսը վկա,– պատասխանեց Սիմմի-ասը,– ինչպե՞ս ոչ: b

– Եվ մենք գիտե՞նք, թե ինչ է դա:

– Իհարկե:

– Որտեղի՞ց ենք ստանում այդ իմացությունը: Մի՞թե հենց նոր հիշատակված գերանները, քարերը կամ հավասար մյուս իրերը տեսնելով չենք ճանաչում դրանցից տարբեր այդ բանը: Թե՞ քեզ այն չի թվում տարբեր: Այդ դեպքում մտածիր այսպես: Արդյո՞ք քարերն ու գերանները, որ միշտ նույնն են, մեկին հավասար են թվում, իսկ մյուսին՝ ոչ:

– Իհարկե:

– Իսկ պատահե՞լ է, որ ինքը հավասարը քեզ անհավասար թվա, իսկ հավասարությունը՝ անհավասարություն: c

– Երբեք, Սոկրատես:

– Ուրեմն հավասար իրերը և ինքը հավասարը նույնը չեն:

– Իմ կարծիքով, ոչ մի դեպքում, Սոկրատես:

– Բայց դու հավասար իրերից ես քաղում նրանցից տարբեր այդ հավասարի իմացությունը:

– Շատ ձիշտ ես ասում:

– Ուրեմն այդ հավասարը և իրերը կա՛մ նման են, կա՛մ ո՛չ:

– Իհարկե:

– Համենայն դեպս դա չէ կարևորը: Երբ տեսնելով մի
d իր, մտաբերում ես ուրիշը, որը կամ նման է նրան, կամ
ոչ, դա անհրաժեշտաբար վերհուշ է:

– Անկասկած:

– Այդպես է նաև գերանների և քիչ առաջ հիշված այլ
հավասար իրերի դեպքում: Արդյո՞ք դրանք երևում են մեզ
հավասար, ինչպես ինքը հավասարը, թե՞ այդպիսին լինելու
համար դրանց ինչ-որ բան է պակասում:

– Շատ բան է պակասում:

– Ինչ-որ մեկը տեսնելով որևէ իր՝ կարող է մտածել.
«Այն, ինչ այժմ տեսնում եմ, ուզում է նման լինել գոյություն
e ունեցող մեկ այլ իրի, բայց չի կարող այդպիսին դառնալ,
քանի որ նրան ինչ-որ բան պակասում է»: Կհամաձայնե՞նք
արդյոք, որ նա անհրաժեշտաբար պետք է նախապես իմա-
նա երկրորդ իրը, որը նման է համարում առաջինին, թեև
ոչ ամբողջությամբ:

– Անհրաժեշտաբար:

– Ուրեմն, այդպիսին չէ՞ արդյոք նաև մեր համոզմունքը,
երբ խոսքը հավասար իրերի և ինքնին հավասարի մասին
է:

– Միանգամայն:

– Ուրեմն անհրաժեշտ է, որ մենք նախապես իմանանք
հավասարը նախքան այն պահը, երբ առաջին անգամ տես-
նում ենք հավասար իրերը և մտածում, որ դրանք բոլորը
75 ձգտում են լինել այնպիսին, ինչպիսին հավասարն է, բայց
չեն հասնում նրան:

– Այդպես է:

– Սակայն մենք կհամաձայնե՞նք նաև, որ այդ բանը
իմանում ենք և կարող ենք իմանալ ոչ այլ կերպ, քան տե-
սողության, շոշափելիքի կամ մեկ այլ զգայության շնորհիվ:
Նույնը կասեմ նաև բոլոր զգայությունների մասին:

– Այո, նույնը, Սոկրատես, հանուն քո ապացույցի:

– Հետևաբար զգայություններից ենք մենք իմանում, որ

դրանցում եղած բոլոր իրերը ձգտում են հավասարին, բայց **b**
չեն հասնում: Այդպե՛ս է, թե՛ ոչ:

– Այդպես է:

– Բայց նախքան տեսնելը, լսելը կամ մեկ այլ զգա-
յություն ունենալը, մենք պետք է ինչ-որ բան իմանայինք
հենց հավասարի մասին, որպեսզի նրա հետ համեմատեինք
զգայությունների մեջ եղած հավասարությունները, քանզի
բոլորը ձգտում են նման լինել նրան, բայց զիջում են:

– Դա անհրաժեշտաբար հետևում է ասածիցդ, ո՛վ Սոկ-
րատես:

– Իսկ տեսնել, լսել և այլ զգայություններ ունենալ մենք
սկսում ենք անմիջապես ծնվելուց հետո՞:

– Իհարկե:

– Բայց մենք ասացինք, որ հավասարի մասին իմացու- **c**
թյունը պետք է ունենայինք դրանից առաջ:

– Այո:

– Ուրեմն, ըստ երևույթին, պետք է իմանայինք դա
նախքան ծնվելը:

– Ըստ երևույթին:

– Իսկ եթե այդ իմացությունը ձեռք ենք բերել նախքան
ծնվելը և ծնվել ենք այն ունենալով, ապա և՛ նախքան
ծնվելը, և՛ ծնվելու պահին գիտեինք ոչ միայն հավասարի,
այլև ավելի մեծի, փոքրի և բոլոր նման բաների մասին:
Քանզի այժմ խոսքը ոչ միայն հավասարի, այլ նաև ինքնին
գեղեցիկի, ինքնին բարու, ինքնին արդարի ու սրբազանի և, **d**
ինչպես ասվեց, այն ամենի մասին է, ինչը մենք մեր հարց
ու պատասխանի ժամանակ նշում ենք ինքնին կեցության
կնիքով: Ուստի անհրաժեշտ է, որ մենք իմացած լինեինք
դրանք բոլորը նախքան ծնվելը:

– Այդպես է:

– Եվ եթե ձեռք բերելով այդ իմացությունը այլևս չենք
մոռանում, ապա ամեն անգամ պետք է ծնվենք այդ իմացու-
թյամբ և պահպանենք այն ողջ կյանքի ընթացքում: Քանզի

ի՞նչ է իմանալը, եթե ոչ իմացությունը ձեռք բերելուց հետո այն պահպանելն ու չկորցնելը: Մի՞թե մոռացություն չենք
e կոչում, ո՛վ Սիմմիաս, իմացության կորուստը:

– Իհարկե, Սոկրատես:

– Բայց կարծում եմ, եթե նախքան ծնվելը ձեռք բերածը ծնվելով կորցնում ենք, իսկ այնուհետև զգայություններով վերականգնում իմացությունները, որ ունեինք նախկինում, ապա «սովորել» նշանակում է վերականգնել սեփական իմացությունը: Եվ մենք ճիշտ կվարվեինք, եթե այն վերհուշ կոչեինք:

76 – Իհարկե:

– Պարզվեց, որ ինչ-որ բան տեսնելով, լսելով կամ մեկ այլ կերպ զգայելով, հնարավոր է, որ մարդն այնուհետև մտածի ուրիշ բանի մասին, որը մոռացվել է, բայց որին առաջինը հարաբերվում է նմանությամբ կամ ոչ նմանությամբ: Յետևաբար, երկուսից մեկն է՝ կա՛մ մենք ծնվում ենք դրանց իմացությամբ և գիտենք ողջ կյանքի ընթացքում, կա՛մ էլ նրանք, որոնց մասին ասում ենք, որ սովորում են, իրականում վերհիշում են, ուստի ուսումը վերհուշ է:

– Այդպես էլ կա, Սոկրատես:

– Ո՞րն ես ուրեմն ընտրում, Սիմմիաս՝ որ մենք ծնվում

b ենք այդ իմացությամբ, թե՞ ավելի ուշ վերհիշում ենք նախկինում իմացածը:

– Այժմ չեմ կարող ընտրել, ո՛վ Սոկրատես:

– Իսկ ի՞նչ կասես այս մասին: Իմացող մարդը կարո՞ղ է ինչ-որ բան ասել իր իմացածի մասին:

– Անկասկած, կարող է, Սոկրատես:

– Եվ դու կարծում ես, որ ամեն ոք կարող է քեզ ինչ-որ բան ասել այն մասին, ինչից այժմ խոսում էինք:

– Կցանկանայի,– ասաց Սիմմիասը,– բայց վախենամ, վաղն այս ժամին չի լինի մեկը, որ արժանի ձևով կարողանա անել դա:

c – Ուրեմն, Սիմմիաս, դու չե՞ս կարծում, որ բոլորը գիտեն այդ բաները:

- Ոչ մի դեպքում:
- Ուրեմն հիշում են երբեմնի սովորա՞ծը:
- Անհրաժեշտաբար:
- Ե՞րբ են մեր հոգիները ստանում այդ բաների իմացությունը: Չէ՞ որ ոչ մեր ծնվելուց հետո:

- Իհարկե ոչ:
- Ուրեմն ավելի վա՞ղ:
- Այո:

- Ուրեմն, Սիմմիաս, հոգիները գոյություն ունեին նաև նախկինում, մինչև մարդկային կերպարանք առնելը, այսինքն՝ գոյություն ունեին առանց մարմնի և օժտված էին բանականությամբ:

- Այո, եթե իհարկե հենց ծնվելու պահին չենք ձեռք բերում այդ իմացությունները, Սոկրատես: Այդ ժամանակահատվածը մենք բաց թողեցինք:

- Լավ, բարեկամս, իսկ ե՞րբ ենք կորցնում դրանք: Չէ՞ որ համաձայնեցինք, որ ծնվելիս չունենք դրանք: Թե՞ կորցնում ենք հենց այն պահին, երբ ձեռք ենք բերում, կամ գուցե դու ա՞յլ ժամանակ կնշես:

- Բնավ, Սոկրատես, ես խելքին մոտ բան չասացի:

- Այդ դեպքում ի՞նչ ունեցանք, Սիմմիաս: Եթե կա այն, ինչի մասին անվերջ կրկնում ենք՝ գեղեցիկը, բարին ու նման բոլոր էությունները, և եթե մենք զգայություններում եղած ամեն բան վերաբերում ենք դրանք՝ գտնելով, որ դրանք ի սկզբանե մերն են եղել, և համեմատում մեր զգայություններում եղածը այդ էությունների հետ, ապա ինչպես որ գոյություն ունեն այդ էությունները, այդպես էլ անհրաժեշտաբար գոյություն ունի նաև մեր հոգին նախքան մեր ծնվելը: Եթե այդպես չլիներ, մի՞թե մեր զրույցը այլ չէր լինի: Իսկ եթե այդպես է, հավասարապես անհրաժեշտ է, որ լինեն այդ էությունները և մեր հոգին՝ նախքան մեր ծնվելը, իսկ եթե չկան այդ էությունները, չկա նաև հոգին:

- Ինձ թվում է, Սոկրատես, - ասաց Սիմմիասը, - դա

77 միանգամայն անհրաժեշտ է: Եվ ինչ գեղեցիկ է եզրափակվում զրույցն այն մասին, որ նմանապես գոյություն ունեն և՛ հոգին նախքան մեր ծնվելը, և՛ էությունները, որոնց մասին խոսում ես: Ինձ համար ուրիշ ոչ մի բան այսքան ակնհայտ չէ: Դրանք բոլորը, իհարկե, գոյություն ունեն՝ և՛ գեղեցիկը, և՛ բարին, և՛ մնացյալը, որի մասին ասացիր: Ես կարծում եմ, դա ապացուցված է բավարար չափով:

– Իսկ Կեբե՛սը,– հարցրեց Սոկրատեսը,– չէ՞ որ նրան էլ պետք է համոզել:

– Ըստ իս, նրան էլ բավարար է,– ասաց Սիմմիասը,– թեև նրանից ավելի դժվար համոզվող մարդ չկա: Այսուհանդերձ կարծում եմ, նա էլ համոզվեց, որ նախքան մեր ծնվելը հոգին գոյություն ունի: Բայց գոյություն կունենա՞ արդյոք նաև մեր մահից հետո,– դա, Սոկրատես, ինձ անապացույց է թվում: Դեռ ուժի մեջ է Կեբեսի հիշատակած բազմության կարծիքը, իբր մահացող մարդու հոգին ցրվում է և այդկերպ գալիս է նրա վերջը: Քանզի ի՞նչն է խանգարում նրան ծնվել, կազմավորվել և գոյություն ունենալ մեկ այլ տեղ նախքան մարդկային մարմնի մեջ մտնելը, իսկ մտնելուց հետո, երբ ազատվում է նրանից, վախճանվել ու քայքայվել:

c – Լավ ես ասում, Սիմմիաս,– արձագանքեց Կեբեսը,– ինձ թվում է, թե ապացուցված է պետք եղածի կեսը, այսինքն՝ որ նախքան մեր ծնվելը մեր հոգին գոյություն ուներ: Իսկ որպեսզի ապացույցն ավարտուն լինի, անհրաժեշտ է նաև ապացուցել, որ մեր մահանալուց հետո այն գոյություն կունենա ոչ պակաս, քան մինչև ծնվելը:

– Բայց, Սիմմիաս և Կեբես, ապացույցը հիմա էլ ավարտուն է,– ասաց Սոկրատեսը:– Եթե կամենաք ի մի բերել ասվածը, կհամաձայնեք, որ կենդանի ամեն բան ծնվում է մահացածից: Քանի որ հոգին գոյություն ուներ նաև նախկինում, ապա անհրաժեշտաբար կյանք մտնելով և ծնվելով՝ գոյանում է ոչ այլ տեղից, քան մահից և մահացումից, d հետևաբար անհրաժեշտ է, որ վերջինս գոյություն ունենա

Նաև մահից հետո, որովհետև պետք է ծնվի վերստին: Ուրեմն այն, ինչի մասին ասում եք, արդեն ապացուցված է: Ինձ թվում է, սակայն, որ դու և Սիմմիասը կուզեիք ավելի հղկել այդ դատողությունը, քանզի մանկական վախ ունեք, թե քամին, իրոք, հանկարծ չպատահուի ու չցրի հոգին, երբ այն լքում է մարմինը, հատկապես եթե վիժակվել է մեռնել ոչ թե խաղաղ եղանակին, այլ փոթորկի ժամանակ:

Կերեսը ժպտաց:

– Դե, Սոկրատես, ուրեմն փորձիր համոզել վախկոտներին: Իհարկե, վախեցողը մենք չենք, այլ մեր մեջ նստած մանուկը,– այդ նա է վախենում: Փորձենք ուրեմն համոզել նրան չվախենալ մահից, ասես բոբոյից:

– Սակայն այդ դեպքում,– պատասխանեց Սոկրատեսը,– հարկավոր է ամեն օր հմայական երգեր ասել նրան, մինչև որ կազատվի բոբոյից:

– Բայց որտեղի՞ց գտնենք այդպիսի երգասացի, եթե դու, Սոկրատես, լքում ես մեզ:

– Հունաստանը մեծ է, Կերես,– պատասխանեց Սոկրատեսը,– կգտնվեն բարի մարդիկ: Մեծ է նաև բարբարոսների ցեղը, բոլորին պետք է այցելեք ու գտնեք այդպիսի երգասացի, և պետք չէ դրամ ու ջանք խնայել, քանզի չկա մի բան, որի վրա առավել անհրաժեշտ լիներ դրամ ծախսել: Հարկավոր է փնտրել նաև ձեր մեջ: Զանգի հեշտ չեք գտնի ձեզնից ավելի լավ դա անել կարեցողին:

– Կանենք,– ասաց Կերեսը,– բայց վերադառնանք նրան, ինչից շեղվեցինք, եթե դեմ չես:

– Իհարկե դեմ չեմ:

– Հրաշալի է:

– Մենք պետք է հարցնենք մեզ հետևյալը,– ասաց Սոկրատեսը,– ինչի՞ն է հատուկ ցրվելը և ի՞նչն է վախենում ցրվելուց, իսկ ինչը չի վախենում: Այնուհետև պետք է խորհել, թե այդ երկուսից որն է հոգին, և ըստ այդմ հանգիստ լինել կամ երկյուղել մեր հոգու համար:

- c – Ճիշտ ես ասում:
- Մի՞թե բաղադրյալին և բաղադրելիին ի բնե հատուկ չէ ցրվել ճիշտ այնպես, ինչպես բաղադրվելը: Եվ եթե ինչոր բան բաղադրյալ չէ, ապա միայն այդ դեպքում կարող է խուսափել ցրվելուց:
 - Կարծում եմ, այդպես է,– պատասխանեց Կեբեսը:
 - Ուրեմն ոչ բաղադրյալ իրերն ավելի շուտ նրանք են, որոնք միշտ անփոփոխ և նույնն են, իսկ տարբեր ժամանակ տարբեր և ոչ նույնական են բաղադրյալ իրերը:
 - Ըստ իս, այդպես է:
- d – Կերադառնանք մեր նախորդ ասածին: Էությունը, որի գոյության մասին մենք խոսում ենք հարց ու պատասխանով, մշտապես նու՞յնն է, թե՞ տարբեր ժամանակ տարբեր: Ինքը հավասարը, ինքը գեղեցիկը, յուրաքանչյուր ինքնին գոյող բան, այսինքն՝ գոյ, երբևէ չի՞ փոխվում: Թե՞ դրանցից յուրաքանչյուրը միակերպ, ինքնին գոյ է, որը միշտ նույնն է և երբեք ոչ մի փոփոխություն չի կրում:
- Անհրաժեշտաբար,– ասաց Կեբեսը,– պետք է նույնը մնա, Սոկրատես:
 - Իսկ ի՞նչ կասենք բազում բաների մասին, ինչպես օրինակ, մարդկանց, ձիերի, թիկնոցների, հավատի կամ
- e գեղեցիկի և սրանց նման այլ բաների: Մի՞թե սրանք միշտ նույնն են, թե՞ միանգամայն հակադիր են առաջիններին և ըստ էության երբեք նույնը չեն ո՛չ իրենց, ո՛չ միմյանց նկատմամբ:
- Այդպես է,– ասաց Կեբեսը,– երբեք նույնը չեն:
- 79 – Ուրեմն դրանք կարելի է շոշափել, տեսնել կամ զգայել մեկ այլ զգայարանով, իսկ միշտ նույնը մնացող իրերին, որոնք անձն են և անտեսանելի, կարելի է հասու լինել ոչ այլ կերպ, քան խորհրդածությամբ:
- Ճշմարիտ ես ասում:
 - Եթե դեմ չես, դիտարկենք իրերի երկու կարգ՝ տեսանելի և անտեսանելի:

Ֆերոն

- Դիտարկենք,- ասաց Կեբեւը:
- Անտեսանելիները միշտ նույնն են, իսկ տեսանելիները երբեք նույնը չեն:
- Այդ էլ ընդունենք:
- Ուրեմն տես, մեր մեջ ուրիշ ի՞նչ կա, բացի մարմնից կամ հոգուց:
- Ոչինչ:
- Ուրեմն ո՞ր տեսակին ավելի նման և մոտ կլինի մարմինը: **b**
- Միանգամայն պարզ է, որ տեսանելիին:
- Իսկ հոգին տեսանելի՞ է, թե՞ անտեսանելի:
- Անտեսանելի է մարդու համար, Սոկրատես:
- Բայց չէ՞ որ մենք տեսանելիի և անտեսանելիի մասին խոսում ենք՝ ելնելով մարդու բնությունից: Թե՞ այլ կերպ ես մտածում:
- Ոչ, այդպէրպէս:
- Ուրեմն ի՞նչ ասենք հոգու մասին: Տեսանելի՞ է, թե՞ անտեսանելի:
- Անտեսանելի է:
- Ուրեմն այն հնարավոր չէ տեսնել:
- Ոչ:
- Ուրեմն հոգին մարմնից ավելի անտեսանելիին, իսկ **c** մարմինը հոգուց ավելի տեսանելիին է նման:
- Անհրաժեշտաբար, Սոկրատես:
- Բայց արդեն ասել ենք, որ հոգին, երբ օգտվում է մարմնից տեսողության, լսողության կամ մեկ այլ զգայության միջոցով ինչ-որ բան հետազոտելիս (քանզի մարմնի միջոցով հետազոտել նշանակում է հետազոտել զգայության միջոցով), մարմնի կողմից մղվում է դեպի այն, ինչը երբեք նույնը չի մնում, և, շփվելով դրա հետ, հոգին սկսում է թափառել, շեղվել ու կորցնել հավասարակշռությունը:
- Այդպես է:
- Իսկ երբ ինքն ըստ ինքյան է հետազոտում, գնում է **d**

այնտեղ, ուր ամեն բան մաքուր, հավերժ, անմահ և անփոփոխ է, և քանի որ հոգին ցեղակից է այդ ամենին, մշտապես գտնվում է դրա կողքին, հենց որ ինքն իր հետ է մնում և չունի խոչընդոտ: Այդժամ վերջինս դադարում է թափառել և միանում է մշտապես նույնը մնացողին: Մի՞թե նրա այդ վիճակը չի կոչվում բանականություն:

– Շատ գեղեցիկ և ճիշտ ես ասում, Սոկրատես:

– Արդ, քո կարծիքով, հոգին ո՞ր տեսակին է ավելի մոտ
e և ցեղակից, եթե ի մի բերենք ասվածը:

– Ինձ թվում է, Սոկրատես, այս ուղիով գնացող ամենաբթամիտն էլ կասի, որ ավելի մոտ է միշտ նույնը մնացողին, քան փոփոխականին:

– Իսկ մարմինը:

– Մարմինը ավելի մոտ է մյուս տեսակին:

– Մտածիր նաև այսպես. երբ հոգին և մարմինը միասին
80 են, բնությունը պատվիրում է մարմնին ծառայել և իշխվել, իսկ հոգուն՝ իշխել և տեր լինել²⁴: Ուրեմն, քո կարծիքով երկուսից ո՞րն է ավելի նման աստվածայինին և որը՝ մահկանացուին: Չե՞ս կարծում, որ աստվածայինը ստեղծված է իշխելու և ղեկավարելու համար, իսկ մահկանացուն՝ իշխվելու և ծառայելու:

– Կարծում եմ:

– Որի՞ն է ուրեմն մոտ հոգին:

– Պարզ է, Սոկրատես, որ հոգին մոտ է աստվածայինին, իսկ մարմինը՝ մահկանացուին:

– Ուրեմն, Կեբես, մտածիր, – շարունակեց, – արդյո՞ք ամբողջ ասվածից դուրս չի գալիս, որ աստվածայինին, անմահին, մտահասուին, միակերպին, չտարրալուծվողին և միշտ նույնը մնացողին ամենից նմանը հոգին է, իսկ մարդկայինին, մահկանացուին, բազմակերպին, ոչ մտահասուին, քայքայվողին և երբեք նույնը չմնացողին ամենից նման է մարմինը: Կեբես բարեկամ, սրա դեմ առարկելու բան ունե՞նք:

– Չունենք:

– Ուրեմն ի՞նչ, այս երկուսից մի՞թե մարմինը չէ, որ արագ քայքայվում է, իսկ հոգին միշտ չտարրալուծվող է կամ գրեթե այդպիսին:

– Ինչպես չէ:

– Յետևաբար հասկանում ես,– ասաց,– որ երբ մարդը մեռնում է, նրա տեսանելի մասը՝ մարմինը, հանգչում է տեսանելի ոլորտում, և դի կոչվածը, որին հատուկ է քայքայումն ու տարրալուծումը, ոչ թե անմիջապես է ենթարկվում դրան, այլ բավական ժամանակ պահպանվում է, եթե իհարկե մահը վրա հասնի, երբ մարմինը լավ վիճակում է և եղանակը՝ բարենպաստ: Իսկ եթե մարմինը չորացած է և զմռսված, ինչպես զմռսում են Եգիպտոսում, այն կարող է պահպանվել անվերջ: Ընդ որում, եթե մարմինը քայքայվում է և փտում, ոսկորները, ջլերը և նման այլ մասերը կարծես թե անմահ են: Թե՛ այդպես չէ:

– Այդպես է:

– Իսկ հոգին՝ անտեսանելին, այստեղից տեղափոխվում է մեկ ուրիշ՝ ազնիվ, մաքուր և անտեսանելի վայր,– հիրավի Յադես²⁵, բարի և իմաստուն աստծո մոտ, ուր, եթե կամենա աստված, շուտով կգնա նաև իմ հոգին: Եվ ահա հոգին, որ մեր կարծիքով այդպիսի բնություն ունի, մի՞թե մարմնից անջատվելով՝ քայքայվում և կործանվում է, ինչպես ասում են շատերը: Բնավ, իմ բարեկամներ Կեբես և Սիմմիաս: Եթե հոգին անջատվում է մաքուր, չտանելով մարմնից ոչինչ, քանզի կյանքի ընթացքում որևէ կերպ չի հաղորդակցվել մարմնին, այլ խուսափել է դրանից, կենտրոնացել ինքն իր վրա և միշտ նախապատրաստվել նրան, ինչը ոչ այլ ինչ է, քան ճշմարիտ փիլիսոփայությամբ զբաղվելը և, իրականում, մահվան նախապատրաստվելը: Մի՞թե այս ամենը մահվան նախապատրաստություն չէ:

– Իհարկե է՛:

– Ուրեմն այդպիսի հոգին հեռանում է իրեն նման աստվածային, անմահ, բանական, անտեսանելի մի վայր և, հաս-

նելով այնտեղ, ստանում երանություն՝ ազատվելով թափառումներից, անմտություններից, վախերից, վայրի տենչանքներից և մարդկային այլ չարիքներից և, ինչպես ասում են հաղորդյալների մասին, առհավետ ապրում է աստվածների հետ: Այդպե՛ս կասենք, Կեբես, թե՞ այլ կերպ:

– Այդպես, Ջևսը վկա,– պատասխանեց Կեբեսը:

- b** – Իսկ եթե հոգին անջատվում է մարմնից պիղծ ու անմաքուր, քանի որ միշտ եղել է մարմնի հետ, սպասարկել ու սիրել է նրան, հմայվել նրանով, նրա ցանկություններով ու հաճույքներով, ոչինչ չի համարել առավել ճշմարիտ, քան մարմնավորը, այսինքն այն, ինչը կարելի է շոշափել, տեսնել, խմել, ուտել ու օգտագործել սիրային վայելքների համար, իսկ տեսողության համար աղոտն ու անտեսանելին,
- c** մտահասուն և փիլիսոփայականը ատելով ատել է և վախենալով փախ տվել դրանից,– ի՞նչ ես կարծում, այդպիսի հոգին կազատվի՞ ինքն ըստ ինքյան և մաքուր:

– Երբեք,– ասաց:

– Ես կարծում եմ, որ այն այլևս ամբողջապես մարմնավոր է, և նրա կապն ու գոյակցությունը մարմնի հետ, վերջինիս մասին երկարատև հոգածությունը համաբնույթ է դարձրել նրանց երկուսին:

– Անկասկած:

- Բարեկամս, ըստ իս՝ մարմնավորը պետք է լինի թանձր, ծանր, հողեղեն և տեսանելի: Այդպիսին լինելու դեպքում հոգին ծանրանում է ու դարձյալ ձգվում դեպի տեսանելիի ոլորտը, վախենալով անտեսանելիից ու Յադեսից, և,
- d** ինչպես ասում են, շրջում է շիրմաքարերի և գերեզմանների մոտերքում, ուր մարդիկ հաճախ հանդիպում են հոգիների սովերակերպ ուրվականներին, որոնք մաքուր չազատված հոգիների ուրվականներն են ու երևում են տեսանելի ինչոր բան կրելու պատճառով:

– Կարծես այդպես է, Սոկրատես:

– Կարծես, Կեբես: Եվ դրանք ոչ թե առաքինիների հոգի-

ներ են, այլ հոռիների, որոնք ստիպված են թափառել՝ պատիժ կրելով նախկին հոռի վարքի համար: Եվ շրջում են այնքան ժամանակ, մինչև որ մարմնավորի հանդեպ տենչանքը նրանց կրկին չբանտարկի մարմնի մեջ: Այդ բանտը հավանաբար համապատասխանում է նախկին կյանքում ձեռք բերած սովորություններին:

– Ի՞նչ սովորություններ նկատի ունես, Սոկրատես:

– Օրինակ, նրանք, ովքեր տուրք են տվել որկրամոլությանը, զեխությանը, հարբեցողությանը և չեն խուսափել այդ չարիքներից, գուցե մտնեն ավանակների կամ ցեղակից այլ կենդանիների մեջ: Թե՞ այդպես չես կարծում:

– Միանգամայն ճիշտ ես ասում:

– Իսկ անարդարությանը, բռնությանը և կողոպուտին տրվողները կմտնեն գայլերի, բազենների և ուրուրների ցեղի մեջ: Կամ գուցե ա՞յլ ցեղի:

– Ոչ,– ասաց Կեբեսը,– հենց այդ ցեղի:

– Ուրեմն պարզ է, որ ուրիշները նույնպես կուղևորվեն այն տեղը, որի համար նախապատրաստել են իրենց:

– Պարզ է,– ասաց,– ինչպես չէ:

– Իսկ նրանցից ամենաերջանիկները,– շարունակեց,– ամենալավ ծանապարհով գնացողները նրանք են, ովքեր աչքի են ընկել (առանց որևէ փիլիսոփայության ու խելքի) հանրային և քաղաքական առաքինությամբ, որ կոչվում է խելամտություն ու արդարություն և ծնվում է բարքերից ու զբաղմունքներից:

– Ինչո՞վ են նրանք ամենաերջանիկները:

– Նրանք գուցե դարձյալ կհայտնվեն հանրային և զուսպ ցեղի մեջ՝ մեղուների, կրետների կամ մրջյունների, կամ այդտեղից դարձյալ կտեղափոխվեն մարդկային ցեղ և կծնեն զուսպ մարդկանց:

– Կարծես թե այդպես է:

– Բայց աստվածների ցեղին իրավունք չունի միանալ նա, ով չի զբաղվել փիլիսոփայությամբ և ամբողջովին չի

մաքրվել, այլ՝ միայն նա, ով իմացություն է տենչացել: Ահա ինչու, բարեկամներ Սիմմիաս և Կեբես, իսկական փիլիսոփաները խուսափում են բոլոր մարմնական ցանկություններից, ամուր են պահում իրենց և չեն ընկրկում դրանց առաջ, չեն վախենում սնանկացումից ու աղքատությունից, ինչպես ընչասեր մեծամասնությունը, և չեն վախենում անպատվությունից ու անփառությունից, ինչպես պատվամուկներն ու փառասերները, այլ խուսափում են դրանցից:

– Դա չէր սազի նրանց, Սոկրատես,– ասաց Կեբեսը:

- d – Այո, Զևսը վկա: Նրանք, Կեբես, ովքեր հոգ են տանում իրենց հոգու մասին և ապրելիս չեն ստրկանում մարմնին, չեն ընկնում նրանց ետևից, ովքեր չգիտեն, թե ուր են գնում: Նրանց առաջնորդում է այն սկզբունքը, որ չի կարելի գործել հակառակ փիլիսոփայությանը, դրան ուղեկցող ազատագրմանն ու մաքրմանը, և նրանք հետևում են դրան, ուր էլ տանի:

– Ինչպե՞ս, Սոկրատես:

- e – Հիմա ասեմ: Իմացատենչները գիտեն, որ երբ փիլիսոփայությունն առնում է հոգին, սա ուժեղ կապված ու գամված է լինում մարմնին և ստիպված է մարմնի միջով, ասես զնդանի միջից դիտել գոյը, և ոչ ինքնուրույնաբար, այնպես որ ընկնում է կատարյալ տգիտության մեջ: Փիլիսոփայությունը տեսնում է այդ զնդանի զորությունը, որն արտահայտվում է մարմնավոր տենչանքների ձևով, այնպես որ բանտարկյալը դառնում է ինքն իր բանտի պահապանը: Իմացություն տենչացողները գիտեն, որ փիլիսոփայությունն առնում է նրանց հոգին և հանդարտ ցուցումներով սկսում է ազատել նրանց, ցույց տալով, թե որքան է տեսողության, լսողության կամ այլ զգայությունների խաբկանքը համոզում հեռանալ դրանցից և օգտվել միայն անհրաժեշտության դեպքում, խորհուրդ տալիս հոգուն կենտրոնանալ ու հավաքվել՝ հավատալով միայն ինքն իրեն, երբ սա ինքն ըստ ինքյան մտածում է ինքն ըստ ինքյան գոյություն ունեցող

բաների մասին, իսկ այն, ինչ դիտարկում է այլ բանի միջոցով այլ բաներում, խորհուրդ է տալիս ճշմարիտ չհամարել: Դրանք են զգայելին և տեսանելին, իսկ այն, ինչ ինքն է տեսնում, մտածելի է և անտեսանելի: Արդ, սա է ազատագրումը, որին մտադիր չէ հակադրվել իսկական փիլիսոփայի հոգին, երբ հնարավորինս փախչում է հաճույքներից ու ցանկություններից, վշտերից ու վախերից, մտածելով, որ եթե ինչ-որ մեկը շատ ուժեղ է զգացել վախը, վիշտը կամ ցանկությունը, կրում է ոչ թե իր մտածած չարիքը, ինչպես օրինակ՝ հիվանդությունը կամ հաճույքի հետ կապված ծախսը, այլ ամենամեծ չարիքը, որի մասին չի էլ մտածում:

– Ո՞րն է դա, Սոկրատես,– հարցրեց Կեբեսը:

– Ամեն մարդու հոգին, ուժեղ ուրախություն կամ վիշտ զգալով, համարում է, որ այն, ինչից ներգործվել է, շատ որոշակի է և ճշմարիտ, բայց դա այդպես չէ: Դրանք ավելի շուտ տեսանելի իրերն են, համաձայն ես:

– Իհարկե համաձայն եմ:

– Եվ այդ վիճակում հոգին ամենից շատ է կալանվում մարմնի կողմից:

– Ինչպե՞ս:

– Յուրաքանչյուր հաճույք ու վիշտ ասես մեխով գամում է հոգին մարմնին, խոցում այն և դարձնում մարմնավոր, ստիպելով նրան ընդունել, որ մարմնի ասած ամեն բան ճշմարիտ է: Իսկ համակարծիք լինելով մարմնին՝ հոգին, ըստ իս, ստիպված է լինում վերցնել նաև նրա սովորություններն ու վարքը և այլևս երբեք չի հասնի Յադես մաքուր, այլ միշտ կհեռանա մարմնով ծանրաբեռնված, նորից կսուզվի այլ մարմնի մեջ և սերմի պես կաճի ու նորից կծնվի, անմասն մնալով աստվածայինի, անաղարտի ու միակերպի հետ համակեցությունից:

– Շատ ճշմարիտ ես ասում, Սոկրատես,– նկատեց Կեբեսը:

– Յենց այս պատճառով էլ, Կեբես, արդար իմացատենչներն են զուսպ ու արի, և ոչ թե նրանք, որոնց այդպիսին է համարում մեծամասնությունը: Այդպես չե՞ս կարծում:

84 – Իհարկե, այդպես:

– Փիլիսոփա մարդու հոգին այսպես է մտածում և չի կարծում, թե փիլիսոփայությունը պետք է ազատի իրեն, իսկ ինքը, երբ ազատվի, կարող է տուրք տալ հաճույքներին ու ցավերին և դարձյալ բանտարկվել՝ կատարելով անվերջանալի գործ, ինչպես Պենելոպեն²⁶, որ շարունակ քանդում էր իր գործվածքը: Ոչ, նրա հոգին պատրաստվում է հանդարտության, հետևում է բանականությանը և մշտապես գտնվում նրա ծիրում, հայում է ճշմարիտը, աստվածայինը, անխախտը և սնվում դրանով՝ համարելով, որ քանի դեռ ողջ է, այդպես պետք է ապրի, իսկ մեռնելուց հետո պիտի հեռանա դեպի ազգակիցը և, հասնելով դրան, ազատվի մարդկային չարիքներից: Այդպիսի վարքից հետո, Սիմփաս և Կեբես, հոգին ոչնչից չպետք է վախենա և չպետք է մտահոգվի, որ բաժանվելով մարմնից՝ կտարածվի ու կցրվի քամուց և այլևս ոչ մի տեղ գոյություն չի ունենա:

c Սոկրատեսի այս խոսքերից հետո երկար ժամանակ լռություն տիրեց: Երևում էր, որ մեզնից շատերի նման ինքն էլ էր մտածում իր ասածի մասին: Միայն Կեբեսն ու Սիմփասը մի երկու խոսք փոխանակեցին: Սոկրատեսը տեսնելով դա՝ հարցրեց.

– Ի՞նչ է, ասվածը բավակա՞ն չէր ձեզ: Իսկապես, կասկածելի և առարկելի շատ բան կա, եթե ուշադիր քննենք ասվածը: Եթե ուրիշ բան եք մտածում, ես չեմ խոսի: Իսկ

d եթե դժվարություն ունեք այս հարցում, մի՛ ամաչեք, ասեք ձեր առարկությունները, եթե, իհարկե, դրանք ձեզ լավն են թվում: Ինձ էլ մասնակից դարձրեք, եթե կարծում եք, որ իմ օգնությամբ ավելի հեշտ կշարժվեք առաջ:

Սիմփասը պատասխանեց.

– Ճշմարիտն ասեմ, Սոկրատես. մենք արդեն երկար

ժամանակ մշտում ենք իրար ու դրդում հարցնել, քանզի ցանկանում ենք լսել քո պատասխանը, բայց վախենում ենք վրդովվես, չէ՞ որ այս վիճակում դա կարող է տհաճ լինել քեզ:

Լսելով դա՝ Սոկրատեսը թեթև ժպտաց և ասաց.

– Ա՛խ, Սիմմիաս, ի՛նչ դժվար պիտի լիներ համոզել ուրիշ մարդկանց, որ դժբախտություն չեմ համարում այժմյան վիճակս, եթե նույնիսկ ձեզ չեմ կարողանում համոզել և դուք վախենում եք, թե տրամադրությունս այսօր ավելի վատ է, քան եղել է ողջ կյանքիս ընթացքում: Ձեզ հավանաբար թվում է, թե ես գուշակության մեջ զիջում եմ կարապետերին, որոնք զգալով, որ պետք է մեռնեն, սկսում են երգել ավելի ուժգին ու գեղեցիկ, քանզի ցնծում են, որ պետք է հեռանան աստծո մոտ, որին ծառայում են: Իսկ մարդիկ մահվան վախից ստեր են հորինում կարապետերի մասին ու ասում, իբր կարապետերը ողբում են իրենց մահը և երգում են վշտից: Այդ մարդիկ չգիտեն, որ ոչ մի թռչուն չի երգում սովից, ցրտից կամ այլ տառապանքից. նույնիսկ սոխակը, ծիծեռնակը կամ հոպուպը²⁷, որոնց մասին այդուհանդերձ ասում են, թե նրանք երգում են սգալով իրենց դժբախտությունը: Ինձ թվում է, որ ո՛չ նրանց, ո՛չ էլ կարապետերի երգելու պատճառը դա չէ. կարապետերը Ապոլլոնի գուշակներն²⁸ են և կանխատեսելով Յադեսի բարիքները՝ մահվան օրը բերկրում են, ինչպես երբեք: Իսկ ես ինձ համարում եմ կարապետերի ծառայակիցն ու աստծո քուրմը²⁹ և կարծում, որ տերն ինձ պակաս չի օժտել գուշակության արվեստով, և հեռանալու իմ վիշտն ավելի մեծ չէ, քան նրանցը: Հենց այդ պատճառով էլ դուք պետք է խոսեք և հարցուփորձ անեք ինձ ինչի մասին կուզեք, քանի դեռ ձեզ թույլ են տալիս աթենացիների նշանակած Տասնմեկը:

– Շատ լավ,– ասաց Սիմմիասը,– նախ ես կասեմ, թե որն է իմ դժվարությունը, իսկ հետո՝ Կեբեսը, թե ասվածից ինչը չի ընդունում: Ըստ իս, Սոկրատես, նման բաների

մասին այս կյանքում,– և դու դա գիտես,– կամ անհնար է, կամ շատ դժվար է ձեռք բերել ստույգ իմացություն: Այդուհանդերձ, բոլոր եղանակներով այս մասին ասված ամեն բան չստուգողն ու չքննողը փոքրագույնն արած կլիներ: Դարկավոր է անել երկուսից մեկը՝ կամ իմանալ դա իմացողներից, կամ գտնել սեփական ուժերով, իսկ եթե անհնար է, ընդունել մարդկային ուսմունքներից ամենալավն ու անհերքելի և դրա օգնությամբ, ասես լաստով լողալով, անցնել կյանքը, քանի դեռ հնարավոր չէ օգտվել առավել ապահով, անվտանգ, ամուր նավից՝ աստօռ խոսքից: Այնպես որ ես այժմ չեմ ամաչի ուղղել քեզ իմ հարցը, մանավանդ որ ինքդ ես պատվիրում դա անել, և հետագայում ինձ չեմ մեղադրի մտքիս եղածը թաքցնելու համար: Սոկրատես, ասածիդ մասին մտածելուց և Կեբեսի հետ քննարկելուց հետո այն ինձ բավականաչափ համոզիչ չի թվում:

Սոկրատեսը պատասխանեց.

- e – Գուցե քեզ ճիշտ է թվում, բարեկամս, միայն թե ասա, ինչ առումով բավականաչափ չէ:

– Ըստ իս, քո փաստարկը կարելի է բերել նաև ներդաշնակության, քնարի և լարերի համար³⁰, քանի որ ներդաշնակությունը անտեսանելի, անմարմին, գեղեցիկ ու աստվածային ինչ-որ բան է, իսկ ինքը քնարը և լարերը մարմնավոր

- 86 են, այսինքն՝ բաղադրյալ, հողեղեն և մահկանացուին ազգակից: Կոտրելով քնարը և կտրելով լարերը, որևէ մեկը կարող է բերել նույն փաստարկները, ինչ դու, և ասել, որ ներդաշնակությունն անհրաժեշտաբար շարունակում է գոյություն ունենալ և չի վերանում: Քանզի անհնար է, որ կտրված լարերով քնարը, որ մահկանացու է, պահպանվի, իսկ ներդաշնակությունը, որ բնությամբ նման և ազգակից է աստվածայինին ու անմահին, վերանա նախքան մահկանացուն:

- b Նա կասի, որ ներդաշնակությունը կշարունակի գոյություն ունենալ, և մինչև իրեն ինչ-որ բան պատահելը նախ կփտեն փայտն ու լարերը: Եվ ուրեմն, Սոկրատես, դու ինքդ գիտես,

որ ամենից հաճախ այդպիսին ենք համարում հոգին: Եթե մեր մարմինը կապակցում և պահում են ջերմությունը, ցուրտը, չորությունը և նման այլ բաներ, ապա այն դրանց խառնուրդն է և ներդաշնակությունը, երբ դրանք լավ և համաչափ են խառնված իրար: Իսկ եթե հոգին ինչ-որ ներդաշնակություն է, ապա ակնհայտ է, որ երբ մեր մարմինը չափից դուրս թուլանում է կամ լարվում հիվանդություններից կամ այլ արատներից, հոգին նույնիսկ աստվածային լինելով՝ անհրաժեշտաբար պետք է կործանվի, ինչպես կործանվում է ձայների կամ արվեստագետի երկերի ներդաշնակությունը, իսկ մարմնավոր մնացորդները կարող են երկար ժամանակ պահպանվել, մինչև որ չայրվեն կամ չփտեն: Մտածիր, թե ինչ կարող ենք պատասխանել այս հարցին, եթե ինչ-որ մեկը պնդի, թե հոգին մարմնի մեջ եղած տարրերի խառնուրդն է և մահ կոչվածի միջոցով վերանում է առաջինը:

Սուկրատեսը սովորության համաձայն նայեց շուրջբոլորը և ժպտալով ասաց.

– Սիմմիասը իրավացի է: Եթե որևէ մեկը ինձնից ավելի խորաթափանց է, թո՛ղ պատասխանի: Սիմմիասը կարծես վատ չառարկեց մեր խորհրդածությանը: Սակայն ինձ թվում է, նախքան պատասխանելը հարկավոր է լսել նաև Կեբեսին և պարզել, թե ինչում է նա մեղադրում մեր փաստարկը, իսկ այդ ընթացքում ժամանակ կունենանք մտածելու պատասխանի մասին. իսկ երբ լսենք նրան, կհամաձայնենք երկուսին էլ, եթե պարզվի, որ նույնն են ասում, իսկ եթե ոչ, կպաշտպանենք մեր փաստարկը: Ասա, Կեբես, ի՞նչն է անհանգստացնում քեզ:

– Ասեմ,– պատասխանեց Կեբեսը:– Ինձ թվում է, թե փաստարկը մնացել է նույնը, և առարկությունը, որ ունեինք նախկինում, կարելի է կրկնել նաև այժմ: Որ մեր հոգին գոյություն է ունեցել նաև նախքան այս կերպարանքն առնելը՝ չեմ հերքում, ապացուցվեց բավական համոզիչ կերպով: Իսկ այն, որ մեր մահից հետո ինչ-որ տեղ շարունակում

- է գոյել, ինձ այդպես չի թվում: Բայց ես համաձայն չեմ Սիմմիասի հետ, թե հոգին մարմնից ավելի ուժեղ և ավելի երկարակյաց չէ: Ինձ թվում է, բոլոր նման բաներում հոգին շատ է տարբերվում մարմնից: «Ինչու»,– կհարցնեն ինձ,– չես հավատում, եթե տեսնում ես, որ մարդու մեռնելուց հետո
- b** նույնիսկ նրա ամենաթույլ մասը դեռ շարունակում է գոյություն ունենալ: Մի՞թե չես կարծում, որ ամենաերկարակյացը անհրաժեշտաբար կպահպանվի նույնքան ժամանակ»: Տես, թե ինչ կպատասխանեն: Ես էլ Սիմմիասի պես պատկերավոր խոսքի կարիք ունեմ: Կարծում եմ, այսպես խորհրդածելը նույնն է, ինչ մեռած ծեր ջուլիակի մասին ասել, իբր նա չի վախճանվել, այլ անվնաս գտնվում է ինչ-որ տեղում, իսկ որպես ապացույց ներկայացնել իր գործած թիկնոցը, որն անվնաս է և չի վերացել: Իսկ եթե որևէ մեկը չհավատա ու հարցնի, արդյոք ինչն է ավելի երկարակյաց՝ մա՞րդը, թե՞ թիկնոցը, որն օգտագործման մեջ է, պատասխանել, որ իհարկե մարդը, ապացուցված համարելով, որ մարդուն ոչինչ չի պատահել, քանզի չի վերացել նրանից ավելի սակավակյաց իրը: Իսկ ես կարծում եմ, Սիմմիաս, որ այդպես չէ: Տես, ինչ նկատի ունեմ: Յուրաքանչյուր ոք հասկանում է, որ այսպես ասողը սխալվում է: Չէ՞ որ թիկնոց գործողը
- d** շատ այդպիսի թիկնոցներ է մաշել և վախճանվել է բոլոր դրանցից հետո, բացի, կարծում եմ, վերջինից, և այդուհանդերձ մարդը թիկնոցից պակասավոր կամ սակավակյաց չէ: Նույնը, կարծում եմ, կլինի հոգու և մարմնի դեպքում, և նա, ով այդ նույնն ասում է հոգու և մարմնի մասին, ըստ իս ճիշտ է, այսինքն՝ երբ ասում է, որ հոգին ավելի երկարակյաց է, իսկ մարմինը՝ ավելի թույլ ու սակավակյաց: Սակայն
- e** կարող են ասել նաև, որ յուրաքանչյուր հոգի բազում մարմիններ է մաշում, մանավանդ եթե շատ տարիներ է ապրում: Եթե մարմինն անվերջ փոխվում ու կործանվում է մարդու կենդանության օրոք, հոգին նորից վերագործում է մաշածը, և երբ հոգին կործանվում է, նրա հետ անհրաժեշ-

տաբար պետք է լինի վերջին հագուստը, որը միշտ վերանում է հոգուց հետո միայն: Հոգու կործանումից հետո մարմինը դրսևորում է իր տկար բնությունը և արագորեն փտում: Ուստի ընդունելով այս փաստարկը՝ մենք չենք կարող վստահ լինել, որ երբ մահանանք, մեր հոգին ինչ-որ տեղ գոյություն կունենա: Քանի որ եթե մենք ավելի շատ համաձայնենք այդպես ասողին, քան դու ես դա անում, կարող ենք ասել, որ հոգին գոյություն ունի ոչ միայն նախքան ծնվելը, այլ որ ոչինչ չի խոչընդոտում, որպեսզի որոշ հոգիներ գոյություն ունենան նաև մեր մահից հետո, այսինքն՝ բազում անգամներ ծնվեն ու մահանան: Չէ՞ որ հոգին իր բնությամբ ուժեղ է, ուստի կարող է դիմանալ բազում ծնունդների: Դիցուք, մենք համաձայնել ենք այդ ամենին, բացի նրանից, որ հոգին վնաս չի կրում բազում ծնունդների ընթացքում և չի վախճանվում այդ մահերից մեկի ժամանակ վերջնականապես: Իսկ այդ մահվան և մարմնի այդ քայքայման մասին, որ կործանում է բերում հոգուն, ոչ ոք չի ասի, թե ինչ-որ բան գիտի: Մենք անկարող ենք դա իմանալ: Իսկ եթե այդպես է, ուրեմն մահից չվախենալն անմտություն է, քանի դեռ չկա ապացույց, որ հոգին ընդհանրապես անմահ է և անկործան: Հակառակ դեպքում մահացողը շարունակելու է վախ տածել իր հոգու համար, որն այժմ բաժանվելով մարմնից՝ կարող է ընդհանրապես կործանվել:

88

Լսելով դա՝ բոլորս վիատվեցինք: Հետագայում մենք խոստովանեցինք իրար, որ նախորդ փաստարկը բավականաչափ համոզել էր մեզ, իսկ հիմա մենք դարձյալ տրտմեցինք և թերահավատությամբ լցվեցինք ոչ միայն նախորդ ասվածի, այլև հետագա ասվելիքի նկատմամբ: Գուցե մենք ունակ չէինք դատելու, կամ էլ խնդիրն էր խճճված:

b

c

Էքեկրատես. Աստվածները վկա, Ֆեդոն, ես հասկանում եմ ձեզ: Լսում եմ քեզ ու ինքս ինձ ասում. «Ի՞նչ փաստարկի այժմ հավատանք: Սկրատեսը շատ համոզիչ էր

d

խոսում, բայց հիմա մենք ընկանք թերահավատության մեջ»: Թե՛ այժմ, թե՛ նախկինում ինձ միշտ հրաշալի է թվացել փաստարկը, ըստ որի մեր հոգին ինչ-որ ներդաշնակություն է, և քո խոսքը հիշեցրեց ինձ, որ ես նույնպես այդպես եմ մտածել: Իսկ հիմա, ինչպես սկզբում, ես մեկ ուրիշ փաստարկի կարիք ունեմ, որը կհամոզեր ինձ, որ մեռնողի

e հոգին չի մահանում մարմնի հետ միասին: Հանուն Ջևսի, ասա՛ ուրեմն, ինչպես Սոկրատեսը վարեց զրույցը: Եվ արդյո՞ք տրտմեց, ինչպես դուք, թե հանգիստ պաշտպանեց փաստարկը: Եվ բավարա՞ր էր արդյոք պաշտպանությունը, թե՞ անբավարար: Հնարավորինս ձգարիտ պատմիր մեզ ամեն բան:

89 **Ֆեդոն.** Թեփետ, Էքեկրատես, հաճախ եմ զարմացել Սոկրատեսի վրա, բայց երբևէ չեմ հիացել նրանով ավելի, քան այդ օրը: Նա գիտեր, թե ինչ պիտի պատասխանի, և դա գուցե տարօրինակ չէր: Ինձ ավելի շատ զարմացրեց այն, թե ինչ հաճույքով, ջերմությամբ ու սիրով ընդունեց երիտասարդների խոսքը, այնուհետև՝ ինչպես զգաց այդ խոսքից ծնված մեր տրտմությունը և ապա՝ որքան լավ բժշկեց մեզ և ինչպես ետ դարձրեց մեզ՝ փախչողներիս ու նահանջողներիս, հրավիրելով հետևելու իրեն և միասին քննելու փաստարկը:

Էքեկրատես. Եվ ինչպե՞ս:

b **Ֆեդոն.** Պատմեմ: Այնպես էր պատահել, որ ես նստած էի նրանից աջ, մահձակայի մոտ, և նա ինձնից բարձր էր: Ձեռքը տանելով գլխիս ու շոյելով պարանոցին թափվող մազերս, — իսկ նա հաճախ էր այդպես անում, — ասաց.

— Վաղը, Ֆեդոն, գուցե կտրես այս գեղեցիկ մազերդ³¹:

— Գուցե, Սոկրատես, — պատասխանեցի ես:

— Եթե ինձ լսես, այդպես չես անի:

— Բայց ինչու՞, — հարցրի ես:

— Որովհետև ես արդեն այսօր կկտրեմ իմ մազերը քեզ

c հետ միասին, եթե մեր փաստարկի վերջը գա, և մենք չկա-

րողանանք այն նորից կյանքի կոչել: Եթե ես քո տեղը լինեի և ապացույցը ձեռքիցս փախչեր, արգոսցիների օրինակով³² երդում կտայի չերկարացնել մազերս, քանի դեռ չեմ շահել մարտն ընդդեմ Սիմմիասի ու Կեբեսի առարկության:

– Սակայն ասում են,– առարկեցի ես,– երկուսի դեմ Յերակլեսն էլ անգոր է:

– Այդ դեպքում օգնության կանչիր ինձ՝ քո Իոլաոսին³³, քանի դեռ չի մթնել:

– Կկանչեմ, բայց այնպես, իբրև թե Իոլաոսն է կանչում Յերակլեսին:

– Դա ոչինչ չի փոխում,– ասաց Սոկրատեսը,– բայց նախ ապահովագրվենք մի վտանգից:

– Ի՞նչ վտանգ,– հարցրի ես:

– Թող չլինի այնպես, իբր բանատյաց ենք դարձել, ինչպես մարդատյաց են դառնում: Չկա ավելի մեծ չարիք, քան խոսք ատելը: Իսկ բանատեցությունը ծնվում է նույն եղանակով, ինչ մարդատեցությունը, քանզի մարդատեցությունն առաջանում է մեկին ուժգին ու անսահմանորեն հավատալուց, երբ նրան համարում ենք միանգամայն ազնիվ, խոհեմ ու հավատարիմ մարդ, իսկ որոշ ժամանակ անց պարզվում է, որ նա կեղծավոր է, անհավատարիմ կամ դրանից էլ վատ: Ով հաճախ է նման փորձանքի ենթարկվել, հատկապես նրանց պատճառով, որոնց համարել է հարազատ և բարեկամ, ի վերջո բազմաթիվ վիրավորանքներից կատի բոլորին և ոչ ոքի մեջ առողջ ոչինչ չի գտնի: Յանդիպել ես նման բանի:

– Իհարկե հանդիպել եմ,– ասացի ես:

– Մի՞թե ամոթալի չէ, որ մարդկությանը ճանաչելու արվեստին չտիրապետելով՝ այդպիսի մեկը փորձում է գործ ունենալ մարդկանց հետ: Իրականում այդ արվեստին տիրապետելու դեպքում նա կհայտնաբերի, որ թե՛ լավագույնները և թե՛ վատագույնները քիչ են, շատ են միջինները:

– Այդ ինչպե՞ս,– հարցրի ես:

– Ինչպես շատ փոքրի և շատ մեծի դեպքում: Ի՞նչն է ավելի հազվադեպ պատահում, քան շատ մեծ մարդը կամ շունը, կամ էլ շատ փոքր մարդը կամ շունը, և այլն: Կամ՝ շատ արագն ու շատ դանդաղը, շատ այլանդակն ու շատ գեղեցիկը, շատ սևն ու շատ սպիտակը: Չե՞ս նկատել, որ այդպիսի բաներում ծայրահեղությունները հազվադեպ են և սակավ, իսկ միջինը՝ բազում:

– Իհարկե նկատել եմ,– ասացի ես:

b – Ուրեմն, եթե արատավորության մրցույթ լիներ, այդտե՞ղ էլ հաղթողները քիչ կլինեին:

– Կարծես թե:

– Այո, բայց դրանում չէ մարդկանց խորհրդածությունների նմանությունը,– ես այժմ հետևում էի քո ասածին,– այլ նրանում, երբ ինչ-որ մեկը հավատում է ուրիշի ասածի ճշմարտությանը, թեև չի տիրապետում խորհրդածության արվեստին, իսկ քիչ անց որոշում է, որ այն կեղծ էր, անկախ այն բանից՝ իսկապես կեղծ է, թե ոչ, և այդպես կրկին ու կրկին:

c Եվ ամենից շատ, գիտես, դա պատահում է փաստարկների դեմ փաստարկներ փնտրողների հետ, որոնք ի վերջո կարծում են, թե ամենափմաստունն են դարձել և միայն իրենք են հասկացել, որ ո՛չ իրերի, ո՛չ էլ փաստարկների մեջ ոչ մի ողջամիտ ու հաստատուն բան չկա, այլ՝ ամեն ինչ բարձրանում և իջնում է, ինչպես Էվրիպոսի³⁴ ջրերը:

– Շատ ճիշտ ես ասում:

– Հետևաբար, Ֆեդոն, ցավալի կլիներ, եթե որևէ մեկը,

d իմանալով ճշմարիտ, հաստատուն և ըմբռնմանը հասանելի փաստարկ, հանդիպելով այնպիսի փաստարկների, որոնք մերթ ժճմարիտ է համարում, մերթ՝ ոչ, չմեղադրեր ինքն իրեն կամ իր անվարժությունը, այլ բարկությունից սեփական մեղավորությունը բարդեր փաստարկների վրա և մնացյալ կյանքի ընթացքում ատեր ու կշտամբեր խորհրդածությունը և զրկվեր իրական ճշմարտությունից ու իմաստությունից:

– Ջևաը վկա,– ասացի,– ցավալի կլիներ:

– Ուրեմն, նախ զգուշանանք դրանից և թույլ չտանք, որ դա տեղի ունենա հոգու հարցում՝ մտածելով, թե մեր փաստարկներում ողջամիտ ոչինչ չկա: Ավելի շուտ մենք ողջամիտ չենք, սակայն արիաբար ցանկանում ենք ողջամտություն ունենալ. դու և մյուսները՝ հետագա կյանքի համար, իսկ ես՝ մահվան: Կարող է թվալ, որ ես այժմ ոչ թե փիլիսոփա եմ, այլ վիճաբան, ինչպես բոլոր անկիրթները: Քանզի վիճելիս նրանք չեն մտածում խնդրո առարկայի մասին, այլ մտահոգված են իրենց կարծիքը ներկաներին հասցնելով: Ինձ թվում է, ես տարբերվում եմ դրանցից լոկ նրանով, որ ոչ թե ներկաներին եմ ցանկանում համոզել մտքիս եղածը,– դա երկրորդական հարց է,– այլ ինքս եմ ուզում գալ ավելի ամուր համոզմունքի: Տես, բարեկամս, թե որքան եսասեր եմ. եթե այն, ինչ ասում եմ, ճշմարիտ է, ապա հրաշալի է այսպիսի համոզմունք ունենալը, իսկ եթե մահից հետո ինձ ոչինչ չի սպասում, մնացած ժամանակը չարժե անցկացնել ներկաներին զանգատներովս տհաժություն պատճառելով: Եվ իմ չիմացությունը նույնպես չի մնա, քանզի դա չարիք կլիներ, և շուտով կվերանա:

Միմիասս և Կեբես, ահա այսպես եմ պատրաստվել նախքան ապացույցին անցնելը: Եթե ինձ լսեք, Սոկրատեսի մասին քիչ կմտածեք, այլ ավելի շատ՝ ճշմարտության մասին, և կհամաձայնեք, երբ ինչ-որ բան ճիշտ ասեմ, իսկ եթե ոչ, կհակառակվեք ամեն կերպ, որպեսզի չխաբվեմ ու ձեզ էլ չմոլորեցնեմ և չհեռանամ, ինչպես մեղուն, որ հեռանում է՝ թողնելով խայթը:

Սկսենք: Նախ հիշեցրեք ձեր առարկությունը, որպեսզի հանկարծ մոռացած չլինեմ: Միմիասսը, կարծեմ, չի հավատում և երկյուղում է, թե հոգին մարմնից ավելի աստվածային և գեղեցիկ լինելով հանդերձ, առաջինը կկործանվի, քանզի մի տեսակ ներդաշնակություն է: Կեբեսն ըստ իս համաձայն է ինձ հետ, որ հոգին մարմնից ավելի երկարակյաց է, բայց կարծում է, որ ոչ ոք չի կարող

համոզված լինել, թե հոգին բազում մարմիններ փոխելով՝ վերջինը լքելիս չի կործանվի նրա հետ: Եվ մահը հենց հոգու կործանումն է, քանզի մարմինը երբեք չի դադարում մահանալ: Սա՞ պետք է քննենք, Սիմմիաս և Կեբես:

Երկուսն էլ համաձայնեցին, որ դա է:

e – Նախորդ բոլոր փաստարկներն եք մերժում, թե՞ մի մասն ընդունում եք, իսկ մյուս մասը՝ ոչ:

– Մի մասն ընդունում ենք, մյուսը՝ ոչ:

– Իսկ ի՞նչ կասեք այն փաստարկի մասին, ըստ որի սովորելը վերհիշելն է և որ եթե այդպես է, ուրեմն հոգին նախքան մեր մարմին մտնելը անհրաժեշտաբար պետք է գոյություն ունենար նաև այլ տեղում:

92 – Ես,– ասաց Կեբեսը,– նաև այն ժամանակ զարմանալիորեն համոզիչ գտա այդ փաստարկը և այժմ էլ անվերապահորեն ընդունում եմ:

– Ես նույնպես,– ասաց Սիմմիասը,– և շատ կզարմանայի, եթե երբևէ այլ կերպ սկսեի մտածել:

Այդժամ Սոկրատեսն ասաց.

b – Բայց, թերեացի՞ բարեկամ, դու կմտածես այլ կերպ, եթե մնաս այն մտքին, թե ներդաշնակությունը բաղադրյալ բան է, իսկ հոգին՝ մարմնի տարրերի ձգամամբ առաջ եկող ներդաշնակություն: Չէ՞ որ չես ընդունի, որ ներդաշնակությունը բաղադրված էր նախքան այն, ինչից պետք է բաղադրվեր: Թե՞ կընդունես:

– Ոչ մի դեպքում, Սոկրատես:

c – Տեսնու՞մ ես ուրեմն, որ հենց այդ նկատի ունես, երբ ասում ես, թե հոգին գոյություն ունի նախքան մարդու կերպարանք ու մարմին առնելը և բաղադրված է գոյություն չունեցող բաներից: Չէ՞ որ ներդաշնակությունն այնպիսին չէ, ինչպիսին ներկայացնում ես: Նախ ծնվում է քնարը, ապա լարերը, դեռևս աններդաշնակ հնչյունները, իսկ վերջում գոյանում է ներդաշնակությունը, որն առաջինն է վերանում: Այս փաստարկը համահունչ կլինի՞ նախորդին:

– Ոչ մի կերպ,– ասաց Սիմմիասը:

– Բայց համահնչությունը պետք է հատուկ լինի հենց ներդաշնակության փաստարկին:

– Այո,– ասաց Սիմմիասը:

– Իսկ քո դեպքում համահունչ չէ: Տես, երկու փաստարկից որն ես ընտրում՝ որ իմացությունը վերհու՞շ է, թե՞ որ հոգին ներդաշնակություն է:

– Իհարկե առաջինը, ո՛վ Սոկրատես,– պատասխանեց նա,– երկրորդին հետևեցի անապացույց ձևով՝ ելնելով նրա հավանականությունից ու գրավչությունից, ինչպես և մարդկանցից շատերը: Իսկ ես գիտակցում եմ, որ ճշմարտանմանության վրա կառուցվող փաստարկները դատարկաբանություն են, և եթե մենք չպաշտպանվենք դրանցից, հաջողությամբ խաբում են. այդպես է և՛ երկրաչափության մեջ, և՛ մյուս բոլոր բնագավառներում: Մինչդեռ վերհիշման և իմացության փաստարկը պայմանավորված է արժանի հիմունքով: Այն պնդում է, որ հոգին նախքան մարմին առնելը գոյել է իբրև էություն, որի անունն է գոյություն: Ես համոզված եմ դրանում և համարում եմ այդ փաստարկը բավարար և ճշմարիտ: Յետևաբար, ես կարծես թե չպետք է ընդունեմ, որ հոգին ներդաշնակություն է, անկախ նրանից, ով է դա ասում՝ ես, թե ուրիշը:

– Դե ինչ, Սիմմիաս, ի՞նչ ես կարծում, ներդաշնակությունը կամ մեկ այլ բաղադրություն կարո՞ղ է դրսևորվել այլ կերպ, քան մասերը, որոնցից բաղադրված է:

– Բոլորովին:

– Ուստի ինչ-որ բան անել, որ մասերը չեն անում, կամ էլ կրել մի վիճակ, որ մասերը չեն կրում, ներդաշնակությունը չի՞ կարող:

Սիմմիասը համաձայնեց:

– Որեմն ներդաշնակությունը չի առաջնորդում մասերին, որոնցից բաղադրված է, այլ հետևում է:

Դարձյալ համաձայնեց:

- Եվ մանավանդ ընդունակ չէ դեմ լինելու իր մասերի շարժմանը, հնչմանը կամ որևէ այլ գործողության:
- Բուլորովին:
- Եվ ի՞նչ: Արդյո՞ք յուրաքանչյուր ներդաշնակություն ի
- b** բնե այնպիսին է, ինչպիսին ներդաշնակվել է:
 - Չեմ հասկանում, - ասաց Սիմմիասը:
 - Եթե ավելի լավ է ներդաշնակված և ավելի լրիվ (ընդունենք՝ դա այդպես է), արդյո՞ք ավելի լավը չի լինի ներդաշնակությունը և ավելի լրիվ, իսկ ավելի վատ և քիչ ներդաշնակված լինելու դեպքում՝ ավելի նվազ ու թույլ:
 - Իհարկե:
 - Իսկ հոգու դեպքում դա հնարավոր է: Կարո՞ղ է մի հոգին մյուսից նվազագույն չափով ավելի լավը և լրիվ կամ ավելի վատը և թույլ լինել:
- c** - Ոչ մի դեպքում, - ասաց Սիմմիասը:
 - Շարունակենք, հանուն Զևսի: Ասում են, թե մի հոգին ունի խելք, առաքինություն և բարի է, իսկ մյուսն անմիտ է, արատավոր և չար: Ճի՞շտ են արդյոք ասում:
 - Այո, ճիշտ:
 - Իսկ ընդունելով, որ հոգին ներդաշնակություն է, ինչպե՞ս կոչենք այն, ինչն առկա է հոգիներում՝ առաքինություն և չարի՞ք: Նրանցից մեկը ներդաշնակություն, իսկ մյուսն աններդաշնակություն: Բարի հոգու մասին կասենք, որ այն ներդաշնակ է և ունի իր մեջ մեկ ուրիշ ներդաշնակություն, իսկ աններդաշնակը չունի՞ իր մեջ ուրիշ ներդաշնակություն:
 - Ասելու բան չեմ գտնում, - պատասխանեց Սիմմիասը,
- d** սակայն պարզ է, որ հիշյալ հիմքից ելնելով՝ այդ կասենք:
 - Բայց մենք նախապես համաձայնեցինք, որ մի հոգին մյուսից ավելի կամ պակաս չէ հոգի: Իսկ դա նշանակում է համաձայնել, որ մի ներդաշնակությունը մյուսից ավելի կամ պակաս չէ ներդաշնակություն: Այդպես չէ՞:
 - Իհարկե:

– Իսկ այն, ինչը ո՛չ ավելի մեծ, ո՛չ ավելի փոքր չափով ներդաշնակություն չէ, չի ներդաշնակվում ո՛չ ավելի մեծ, ո՛չ ավելի փոքր չափով: Այդպե՛ս է:

– Այդպես է:

– Իսկ ո՛չ ավելի մեծ, ո՛չ ավելի փոքր չափով ներդաշնակվածը հաղորդակից կլինի ներդաշնակությանը ավելի մեծ e կամ ավելի փո՞քր չափով, թե՞ հավասարապես:

– Հավասարապես:

– Ուրեմն եթե հոգին ո՛չ ավել, ո՛չ պակաս չափով միշտ նույն հոգին է, ապա ո՛չ ավելի մեծ չափով է ներդաշնակված, ո՛չ ավելի փո՞քր:

– Այդպես է:

– Իսկ եթե այդպես է, հոգին չի՞ կարող ավելի մեծ չափով հաղորդակից լինել աններդաշնակությանը կամ ներդաշնակությանը:

– Ոչ:

– Ուրեմն որևէ հոգի չի՞ կարող ավելի շատ հաղորդակից լինել չարիքին կամ առաքինությանը, քան մեկ ուրիշը, քանի որ չարիքը աններդաշնակություն է, իսկ առաքինությունը՝ ներդաշնակություն: 94

– Ոչ, չի կարող:

– Ավելի շուտ, Սիմմիաս, եթե ձիշտ դատենք, ոչ մի հոգի հաղորդակից չէ չարիքին, եթե հոգին ներդաշնակություն է: Քանզի որպես այդպիսին ներդաշնակությունը ոչ մի դեպքում հաղորդակից չէ աններդաշնակությանը:

– Իհարկե ոչ:

– Ոչ էլ հոգին, ամբողջապես լինելով հոգի, հաղորդակից կլինի չարիքին:

– Բայց ինչպե՛ս է դա հնարավոր ասվածի հիման վրա:

– Մեր խորհրդածությունից դուրս է գալիս, որ բոլոր կենդանի էակների հոգիները հավասարապես բարի են, եթե ի բնե հավասարապես հոգիներ են:

– Ինձ էլ է այդպես թվում, Սոկրատես:

- b** – Իսկ ժժմարի՞տ կթվար և կհանգե՞ր արոյոք սրան մեր խորհրդածությունը, եթե ժժմարիտ լիներ ենթադրությունը, թե հոգին ներդաշնակություն է:
- Ոչ մի դեպքում,– ասաց Սիմմիասը:
 - Ուրեմն, ինչպես ասում ես, մարդու մեջ ամեն ինչի վրա իշխում է հոգի՞ն, այն էլ բանական, թե՞ մեկ այլ բան է իշխում:
 - Հոգին:
 - Իսկ զիջելով մարմնին, թե՞ դիմակայելով նրան: Նկատի ունեն հետևյալը. եթե մարմինը ջերմում է ու ծարավ է, հոգին ստիպում է նրան հակառակը՝ չխմել, իսկ եթե մարմինը քաղցած է, հոգին ստիպում է չուտել, և ուրիշ բյուրավոր դեպքերում մենք տեսնում ենք, որ հոգին հակառակվում է մարմնին: Այդպե՞ս է, թե՞ ոչ:
- c**
- Այդպես է:
 - Բայց մի՞թե մենք չհամաձայնեցինք, որ հոգին, ներդաշնակություն լինելով, համահունչ է մասերի ձգվածությանը կամ արձակվածությանը, հնչմանը կամ մեկ այլ վիճակին և որ նա պիտի հետևի դրանց ու երբեք չառաջնորդի:
 - Համաձայնեցինք:
 - Եվ ի՞նչ: Այժմ պարզ է, որ այն գործում է հակառակ ձևով. իշխում է բոլոր մասերի վրա, որոնցից, ասում են,
- d**
- բաղկացած է, ողջ կյանքի ընթացքում հակառակվում է գրեթե ամեն ինչում և իշխում է նրա վրա բոլոր եղանակներով, մերթ դաժանորեն ու ցավոտ պատժում է մարմնամարզությամբ կամ բժշկությամբ, մերթ մեղմանում է, մերթ սպառնում է, մերթ խրատում՝ դիմելով կրքերին, տենչանքներին ու վախերին, ասես դրանք տարասեռ են իրեն: Այդ է գրել Հոմերոսն իր «Ոդիսականում», երբ Ոդիսևսի մասին ասում է.

*Եվ ծեծելով նա իր կուրծքը՝ այս խոսքերն էր
ասում սրտին.*

«Սիրտ իմ, տոկա՛, դու ավելի մեծ դառնության ես
տոկացել...»³⁵

Մի՞թե կգրեր դա, եթե մտածեր, որ հոգին ներդաշնակու- e
թյուն է և ղեկավարվում է մարմնի կրքերով, այլ ոչ հակա-
ռակը, որ ինքն է ղեկավարում ու տիրում և որ ներդաշնա-
կությունից առավել աստվածային է:

– Ձևսը վկա, Սոկրատես, ինձ էլ է այդպես թվում:

– Յետևաբար, բարեկամս, մենք ոչ մի կերպ չենք կարող 95
ասել, որ հոգին ներդաշնակություն է: Քանզի հակառակ
դեպքում չենք համաձայնվի ո՛չ աստվածային պոետ Յոմե-
րոսի, ո՛չ էլ ինքներս մեզ հետ:

– Ճիշտ է,– ասաց:

– Լավ,– շարունակեց Սոկրատեսը:– Թեթի Յարմոնիա-
յին³⁶ կարծես հաճոյացրինք: Իսկ Կադմոսին, Կեբես, ինչ-
պե՞ս հաճոյացնենք, ի՞նչ խոսքերով:

– Ինձ թվում է,– ասաց Կեբեսը,– դու կգտնես խոսքերը:
Ներդաշնակության դեմ քո բերած փաստարկները հիացրին
ինձ, այնքան անսպասելի էին: Երբ խոսում էր Սիմմիասը և
ասում, թե ինչու է դժվարանում, ես շատ էի կասկածում,
թե որևէ մեկը կարողանա հաղթահարել նրա փաստարկը: b
Ինձ շատ տարօրինակ էր թվում, որ նա տեղի տվեց քո
առաջին փաստարկին: Չեմ զարմանա, եթե նույն բախտին
արժանանա նաև Կադմոսի փաստարկը:

– Սիրելիս,– ասաց Սոկրատեսը,– մեծ-մեծ բաներ մի
ասա, որպեսզի աչքով չտաս դեռևս չսկսված փաստարկը:
Թեև դա արդեն Աստծո հոգսն է, իսկ մենք կշարժվենք
հոմերոսաբար ու կտեսնենք, թե ինչ ես ասում: Քեզ գլխա-
վորապես հուզում է հետևյալը: Դու պահանջում ես ցույց
տալ, որ մեր հոգին անկործան և անմահ է. հակառակ c
դեպքում անմիտ և անիմաստ է փիլիսոփա մարդու խիզա-
խությունը մահվան շեմին, երբ նա կարծում է, թե այնտեղ
ավելի լավ բախտի կարժանանա, քան այն դեպքում, եթե

- այլ կյանքով ապրեր ու մահանար: Մենք պարզեցինք, որ հոգին ուժեղ է և աստվածակերպ և գոյություն ունի նախքան մեր մարդ ծնվելը, բայց դա ըստ քեզ չի վկայում հոգու անմահություն, այլ՝ որ վերջինս երկարակյաց է և նախապես անորոշ ժամանակ գոյություն է ունեցել ինչ-որ տեղ և շատ բաներ է հասկացել ու արել: Բայց դա ոչ մի դեպքում անմահություն չէ, իսկ մարմին առնելը հենց նրա կործանման սկիզբն է, ինչպես հիվանդությունը: Հոգին ողբալով է ապրում այս կյանքը և կործանվում է մահ կոչվածի մեջ: Դու ասում ես, տարբերություն չկա՝ մի անգամ մուտք կգործի մարմին, թե մի քանի անգամ. յուրաքանչյուր դեպքում էլ մենք վախենում ենք: Եվ մարդ պետք է վախենա, եթե անմիտ չէ, քանզի չգիտի և չի կարող ապացուցել՝ անմահ է արդյոք հոգին:
- d
- e Կարծում եմ, Կեբես, սա էր ասածդ: Դիտմամբ եմ կրկնում, որպեսզի ոչինչ բաց չթողնենք, և, եթե ցանկանաս, լրացնես կամ պակասեցնես:
- Կեբեսը պատասխանեց.
- Ոչ, այժմ ես պակասեցնելու կամ լրացնելու ոչինչ չունեմ: Դա եմ ասել:
- Սոկրատեսը երկար ժամանակ լռեց և մտածում էր:
- Հեշտ բան չէ փնտրածդ, Կեբես: Քանզի պետք է ամբողջությամբ հետազոտենք ծննդի և կործանման պատճառը:
- 96 Ուզում ես, կպատմեմ ինձ հետ պատահածի մասին: Եթե ասածիցս որևէ բան օգտակար թվա քեզ, կօգտագործես դժվարությունդ լուծելու համար:
- Իհարկե կուզեի քեզ լսել,– պատասխանեց Կեբեսը:
- Լսիր ուրեմն: Երբ երիտասարդ էի, անչափ տենչում էի այն իմաստությունը, որը կոչում են բնության ճանաչողություն: Ինձ երևելի ինչ-որ բան էր թվում իմանալ յուրաքանչյուր իրի պատճառը, որով այդ իրը ծնվում է, կործանվում կամ գոյում: Հաճախ դես ու դեն էի ընկնում՝ քննելով, նախ, թե երբ են ջերմությունն ու ցուրտը առաջ բերում

քայքայում, արդյո՞ք ոչ այն ժամանակ, երբ, ինչպես ոմանք ասում են, կազմավորվում են կենդանի էակները³⁷: Մի՞թե արյունն է այն, ինչով մտածում ենք, թե՞ օդը կամ հուրը, թե՞ դրանցից ոչ մեկը, այլ ուղեղն է տրամադրում լսողության, տեսողության ու հոտառության զգայությունները, իսկ դրանցից ծնվում են հիշողությունն ու կարծիքը, իսկ հիշողությունից ու կարծիքից, երբ դրանք հաստատուն են դառնում, իմացությունը: Խորհրդածելով այդ ամենի վերացման, երկնքի և երկրի փոփոխությունների մասին՝ ես ի վերջո եկա այն համոզման, որ պիտանի չեմ նման քննության համար: Բերեմ դրա բավարար ապացույցը: Նախկինում ես հստակ

c
ինչ-որ բան գիտեի (այդպես էր թվում ինձ և ուրիշներին), բայց այդ քննությունից հետո լրիվ կուրացա ու կորցրի նաև այն իմացությունը, որ թվում էր, թե ունեմ, ներառյալ այն, թե ինչպես է աճում մարդը: [Նախկինում] կարծում էի, թե

d
դա միանգամայն հասկանալի է. սնվելու և խմելու միջոցով: Սնվելիս միսը միանում է մսին, ոսկրը՝ ոսկրին, և նույն ձևով մյուս բաները միանում են իրենց հարազատ մասերին, որի արդյունքում փոքր քանակությունը մեծանում է, և փոքր մարդը դառնում է մեծ: Այդպես էի կարծում: Իսկ քեզ դա ճիշտ է թվում:

– Այո,– պատասխանեց Կեբեսը:

– Մտածիր նաև այս մասին: Բավական էր, որ բարձրահասակ մարդը կանգնի ցածրահասակի կողքին և մի գլուխ բարձր երևա նրանից, կամ ձին ձիուց, որպեսզի ես համոզվեի դրանում: Կամ ավելի ակնառու դեպք. տասը ինձ թվում էր ավելի մեծ, քան ութը, քանի որ երկուսն էր գումարվում, իսկ երկու արմունկը ավելի մեծ էր թվում մեկ արմունկից, քանզի գերազանցում է այն իր կես չափով:

e

– Իսկ այժմ ինչ ես մտածում այդ ամենի մասին,– հարցրեց Կեբեսը:

– Չևսը վկա, ես շատ հեռու եմ այդ բոլորի պատճառը իմանալուց, ես, որ նույնիսկ երբ մեկին գումարում են մեկ,

- 97 չեմ համարձակվում պնդել՝ այն մեկն է դառնում երկուս, որին գումարել են, թե այս մեկը, որը գումարել են, թե երկուսն էլ միասին: Ես զարմանում եմ, որ դրանցից յուրաքանչյուրը լինելով առանձին՝ մեկ էր, և երկուս չկար, բայց երբ մոտեցան իրար, մի՞թե դրանց մոտենալը, այսինքն՝ հանդիպումը եղավ նրանց երկուս դառնալու պատճառը: Եվ երբ ոմն բաժանում է մեկը, չեմ կարող այլևս հավատալ, թե երկուսը առաջանում է այդ պատճառով: Քանզի այդ պատճառը հակառակ է երկուսի գոյացմանը: Մենք հենց նոր ասացինք, որ դրանք մոտենում են իրար և միանում, իսկ այժմ՝ որ հեռանում են և բաժանվում: Այս ճանապարհով ես չեմ կարող համոզել ինձ, թե գիտեմ, ինչի շնորհիվ է գոյանում երկուսը կամ ինչպես է մեկ այլ բան ծնվում, կործանվում, գոյում, այնպես որ ընտրում եմ մեկ այլ ճանապարհ, քանի որ նախորդը ինձ չի բավարարում:

- Բայց մի օր մի մարդուց, որն իր ասելով կարդացել էր
- c Անաքսագորասի գրքերը³⁸, լսեցի հետևյալը. խելքն է ամեն ինչի պատճառն ու կարգավորողը: Այդ պատճառն ինձ դուր եկավ, և մտածեցի, որ լավ կլիներ, եթե խելքը լիներ ամեն ինչի պատճառը: Ես որոշեցի, որ եթե այդպես է, խելքը, ամեն բան կարգավորելով, յուրաքանչյուր իր կդասավորեր վերջինիս համար լավագույն ձևով: Արդ, եթե ինչ-որ մեկը ցանկանում է գտնել յուրաքանչյուր իրի պատճառը, որի շնորհիվ այն ծնվում է, ոչնչանում կամ գոյում, նա պետք է պարզի, թե այդ իրի համար ինչպես լավ կլիներ գոյել կամ գործողության ենթարկվել: Ըստ այդմ թե՛ առանձին իրի և թե՛ այլ իրերի պարագայում մարդը պետք է դիտարկի ոչ այլ ինչ, եթե ոչ լավագույնն ու գերազանցը: Բայց անհրաժեշտ կլիներ, որ նա իմանա նաև ամենից վատթարը, քանզի երկուսի իմացությունն էլ նույնն է: Այսպես էի խորհրդածում ու հրձվում էի՝ կարծելով, թե ի դեմս Անաքսագորասի գտել եմ մի ուսուցչի, որն իմ խելքին հասանելի ձևով կբացատրի իրերի պատճառը և նախ կասի՝

Երկիրը տափակ է, թե կլոր, և այնուհետև կպարզի պատ- **e**
 ճառն ու անհրաժեշտությունը՝ ցույց տալով լավագույնը և
 այն, որ Երկրի համար լավագույնն է լինել այնպիսին, ինչ-
 պիսին որ է: Կամ եթե կասի, որ Երկիրը կենտրոնում է,
 կապացուցի, թե ինչու նրա համար լավագույնը կենտրոնում
 լինելն է: Եվ եթե ցույց տա ինձ, ես պատրաստ կլինեմ **98**
 այլևս չփնտրել այլ կարգի պատճառ: Նմանապես ես պատ-
 րաստ կլինեի նրան հարցնել Արևի, Լուսնի և մյուս աստ-
 դերի մասին, միմյանց նկատմամբ դրանց [շարժման] արա-
 գությունների, պտույտների և կրած այլ բաների մասին, կամ
 թե ինչու յուրաքանչյուրի համար լավագույնը ներգործելն է
 կամ կրելը: Քանզի երբևէ չէի կարծում, թե ասելով՝ խելքն
 է կարգավորել դրանք, նա կներմուծի մեկ այլ պատճառ,
 բացի նրանից, որ դրանց համար լավագույնն է լինել այն-
 պիսին, ինչպիսին որ կան: Եվ ահա, ես մտածում էի, որ **b**
 տալով յուրաքանչյուրի և բոլորի պատճառը՝ նա կբացատրի,
 թե որն է լավագույնը յուրաքանչյուրի և ընդհանուր բարիքը՝
 բոլորի համար: Ես ոչ մի բանի հետ չէի փոխի իմ այս
 հույսերը: Մեծ ջանասիրությամբ սկսեցի սերտել [Անաքսա-
 գորասի] գրքերը՝ լավագույնն ու ամենավատը հնարավորինս
 արագ հասկանալու համար:

Սակայն այս զարմանալի հույսի [բարձունքից], բարե-
 կամս, վայր ընկա, երբ շարունակելով ընթերցել՝ տեսա, որ
 այդ այրը չի օգտագործել խելքը և ցույց չի տվել այն որ-
 պես իրերի կարգավորման պատճառ, այլ պատճառ է համա- **c**
 րում օդը, եթերը, ջուրը և բազում ուրիշ անհեթեթություններ:
 Կարծում եմ, դա շատ նման է նրան, որ ինչ-որ մեկն ասեր,
 թե Սոկրատեսի արած ամեն բան խելքի շնորհիվ է, իսկ
 այնուհետև փորձելով խոսել յուրաքանչյուր արարքի պատ-
 ճառի մասին՝ նախ ասեր, որ ես այժմ նստած եմ այստեղ,
 որովհետև իմ մարմինը ոսկորներից ու ջլերից է և ոսկոր-
 ները կարծր են ու միմյանցից բաժանվում են հողերով, իսկ **d**
 ջլերը պրկվում և թուլանում են՝ պատելով ոսկորները մսով

ու մաշկով, որն ընդգրկում է դրանք: Եվ քանի որ ոսկորները շարժվում են հողերում, ջլերն ինձ թույլ են տալիս ծալել դրանք. և դա է պատճառը, որ նստած եմ ծալապատիկ: Կամ թե մեր զրույցի համար ցույց տար նմանատիպ մի պատճառ՝ ձայն, օդ, լսողություն և այսպիսի հազարավոր ուրիշ պատճառներ, չնշելով ճշմարիտ պատճառը, որն աթենացիները լավագույնն են համարել ինձ դատելու համար և որի հետևանքով ես լավագույնն եմ համարել այստեղ նստելը և ավելի արդար եմ գտել այստեղ մնալով կրել պատիժը, որը կսահմանեն: Քանզի, շունը վկա, կարծում եմ, այս ջլերն ու ոսկորները վաղուց կլինեին Մեգարայում և Բեովտիայում³⁹, ուր կտարվեին հանուն լավագույնի, եթե աքսորից ու փախուստից ավելի արդար և գեղեցիկ չհամարեի կրել քաղաքի սահմանած պատիժը:

- Սակայն նման բաները պատճառ անվանելն անմտություն է: Եթե որևէ մեկը պնդեր, թե առանց ոսկորների, ջլերի և այն ամենի, ինչ ունեմ, ես չէի կարողանա իրականացնել որոշումս, նրա ասածը ճշմարիտ կլիներ: Բայց որ ես դրանց պատճառով եմ անում, ինչ անում եմ, և որ ես գործում եմ
- b** խելքի օգնությամբ, բայց չեմ ընտրում լավագույնը, մեծ անմտություն կլիներ: Քանի որ անհնար կլիներ տարբերել, որ կեցության մեջ պատճառը մի բան է, իսկ այն, առանց ինչի պատճառը չի կարող պատճառ լինել՝ այլ բան: Ինձ թվում է, որ շատերը պատճառ համարելով վերջինս՝ խարխափում են խավարի մեջ: Այնպես որ մեկը կարծում է, թե Երկիրը
- c** գտնվում է երկնքի տակ և առնված է պտտահողմի մեջ⁴⁰, իսկ մեկ ուրիշը՝ որ Երկիրը նեղ տաշտակ է, որը պահվում է օդեղեն հիմքի վրա: Նրանք չեն փնտրում, սակայն, Երկիրն այդպես լավագույն ձևով կարգավորած ուժը, ինչպես նաև չեն ենթադրում աստվածային զորությունը, այլ հույս ունեն երբևէ մոգոնել մի Ատլասի⁴¹, որն ավելի զորեղ, ավելի անմահ և ավելի ամենապահ կլինի, և իրականում չեն կարծում, որ ամեն բան կապվում և պահվում է բարիքով

ու պիտոյութամբ: Իսկ ես այդպիսի պատճառը ճանաչելու համար սիրով կդառնայի ցանկացած մեկի աշակերտը: Բայց քանի որ ինձ տրված էր ո՛չ ինքնուրույն գտնել այն, ո՛չ էլ ուրիշից իմանալ, ես ձեռնարկեցի երկրորդ նավարկությունը: Ուզու՞մ ես լսել այդ մասին, Կեբես:

d

– Շատ եմ ուզում,– պատասխանեց Կեբեսը:

– Այն բանից հետո, երբ դադարեցի քննել իրերը, որոշեցի զգույշ լինել, որ ինձ չպատահի այն, ինչ պատահում է Արեգակի խավարումը դիտողներին: Ոմանք փչացնում են աչքերը, եթե նայում են Արեգակին, այլ ոչ թե նրա պատկերին ջրի վրա կամ մեկ ուրիշ արտացոլման մեջ: Մտածելով այդ վտանգի մասին, ես վախենում էի, որ հոգիս ամբողջությամբ չկուրանա իրերն աչքերով դիտելիս կամ որևէ զգայարանի միջոցով դրանց դիպչելիս: Ես որոշեցի դիմել հասկացություններին և նրանց մեջ գտնել գոյի ճշմարտությունը: Գուցե իմ այլաբանությունը ճշգրիտ չէ, քանզի բոլորովին էլ համաձայն չեմ, որ գոյը հասկացություններով դիտարկողը ավելի լավ է տեսնում դրանք պատկերի մեջ, քան նա, ով դիտում է դրանք իրագործման մեջ: Բայց ես այդպես շարժվեցի՝ ամեն անգամ հիմքում դնելով փաստարկը, որն ամենաուժեղն էի համարում. և այն, ինչ իմ կարծիքով համապատասխանում է դրան, ընդունում եմ իբրև ճշմարիտ և՛ պատճառի, և՛ մյուս բոլոր գոյերի համար, իսկ ինչը չի համապատասխանում, ճշմարիտ չեմ համարում: Կուզեի ավելի պարզ ներկայացնել խոսքս: Ինձ թվում է, դու դեռևս չես հասկանում, ինչ նկատի ունեմ:

e

100

– Ոչ, Ջևսը վկա,– ասաց Կեբեսը,– լավ չեմ հասկանում: b

– Բայց ես ոչ մի նոր բան չեմ ասում, այլ այն, ինչը միշտ ասել եմ նախկինում և քիչ առաջ: Ես պատրաստվում եմ քեզ ցույց տալ պատճառի այն տեսակը, որն ուսումնասիրել եմ, և դարձյալ վերադառնում եմ բազում անգամ ասվածին ու սկսում դրանից՝ ենթադրելով, որ կա ինքնին գեղեցիկը, բարիքը, մեծը և շատ ուրիշ բաներ: Եթե համա-

ծայնես ինձ, որ դրանք կան, ապա հույս ունեմ ելնելով դրանից՝ ցույց տալ և գտնել քեզ համար հոգու անմահության պատճառը:

c – Յամարիր, որ համաձայն եմ, և շարունակիր, – ասաց Կերեսը:

– Տես, ընդունում ես ինձ պես նաև հետևյալը: Ինձ թվում է, որ եթե գոյություն ունի գեղեցիկ ինչ-որ բան, բացի ինքնին գեղեցիկից⁴², այն չի կարող գեղեցիկ լինել այլ կերպ, քան հաղորդակցվելով հենց գեղեցիկին: Ամեն ինչի դեպքում էլ այդպես է: Ընդունում ես այդպիսի պատճառը:

– Ընդունում եմ:

– Այդ դեպքում ես չեմ հասկանում, ոչ էլ կարող եմ հասկանալ այլ իմաստուն պատճառներ, և եթե ինձ ասում

d են, որ ինչ-որ բան գեղեցիկ է՝ իր պայծառ գույնով կամ ձևով կամ նման այլ բաներով, ես դեմ եմ նետում դրանք, քանզի շփոթեցնում են ինձ: Ես շատ պարզ և ոչ հնարամիտ ձևով մնում եմ իմ այն կարծիքին, որ ոչ մի բան չի դարձնում իրը գեղեցիկ, բացի ինքնին գեղեցիկի ներկայությունից կամ նրա հետ հաղորդակցությունից: Ես այլևս չեմ ծավալվի և միայն կասեմ. գեղեցիկի միջոցով են բոլոր գեղեցիկ իրերը գեղեցիկ դառնում: Քանզի ինձ թվում է, դա

e ամենաստույգ պատասխանն է, որ մարդը կարող է տալ իրեն կամ ուրիշին: Այդպես պատասխանելով՝ ես երբեք չեմ սխալվի: Չե՛ն կարծում:

– Կարծում եմ:

– Եվ մեծ իրերն ուրեմն մեծությա՞ն միջոցով են մեծ և ավելի մեծերը՝ ավելի մեծի միջոցով, իսկ փոքրերը՝ փոքրի՞ միջոցով:

– Այո:

101 – Եվ դու չե՞իր ընդունի, եթե որևէ մեկը քեզ ասեր, որ մի մարդը մյուսից բարձրահասակ է մեկ գլուխ, իսկ մյուսը մեկ գլուխ ցածր է նրանից, և չե՞իր ասի. «Ամեն ինչ ավելի մեծ է ոչ այլ կերպ, քան ավելի մեծի միջոցով, իսկ ավելի

փոքրը՝ ոչ այլ կերպ, քան ավելի փոքրի միջոցով»: Կարծում եմ, եթե ընդունեիր, որ մի մարդը մեկ գլուխ բարձր է, իսկ մյուսը՝ մեկ գլուխ ցածր, ստիպված կլինեիր զգուշանալ առարկությունից. նախ, քեզ մոտ մեծը մեծ է, իսկ փոքրը՝ փոքր միևնույն պատճառով: Բացի այդ, ըստ քեզ՝ մեծը մեծ է դարձնում գլուխը, որը փոքր է, իսկ դա հրաշք է, որ ինչ-որ բան մեծ լինի փոքրի միջոցով: Թե՞ չէիր զգուշանա նման առարկությունից:

Կերեսը ծիծաղելով պատասխանեց.

– Կզգուշանայի:

– Ուրեմն կվախենայի՞ր ասել, որ տասը ութից մեծ է երկուսով և դա է գերազանցության պատճառը, այլ կասեիր, որ գերազանցում է քանակով և քանակի միջոցով: Եվ որ երկու արմունկը մեծ է մեկ արմունկից ոչ թե կիսով չափ, այլ երկարությամբ: Չէ՞ որ այստեղ էլ նույն մտավախությունն է:

– Միանգամայն:

– Ուրեմն ի՞նչ: Չէի՞ր զգուշանա ասել, որ երբ մեկին մեկ ենք գումարում, գումարումն է երկուսի գոյացման պատճառը, իսկ երբ բաժանում ենք՝ բաժանումը: Եվ չէի՞ր բղավի կոկորդով մեկ, որ քեզ հայտնի չէ, թե այլ կերպ ինչպես է գոյանում ամեն իր, եթե ոչ հաղորդակից լինելով հատուկ էությանը, և որ չես տեսնում երկու բաների գոյացման այլ պատճառ, քան երկուսին հաղորդակից լինելը: Այն, ինչը ձգտում է երկուս դառնալ, երկուսին պետք է հաղորդակից լինի, իսկ միավորին պետք է հաղորդակից լինի այն, ինչը ձգտում է դառնալ մեկ: Ինչ վերաբերում է բաժանումներին, գումարումներին և այլ նրբություններին, ապա դրանք հանգիստ թող: Այդ հարցերին կպատասխանեն քեզնից ավելի իմաստունները: Իսկ դու, վախենալով, ինչպես ասում են, սեփական սովերից ու տգիտությունից, ամուր պահիր վերոհիշյալ ապահով հիմունքը և պատասխանիր դրան համաձայն: Իսկ եթե որևէ մեկը կառչի հենց հիմունքից, թող նրան

և մի պատասխանիր, քանի դեռ չես քննել հետևանքները և չես պարզել՝ համահունչ են դրանք իրար, թե ոչ: Իսկ երբ հարկ լինի փաստարկել, կվարվես նույն ձևով, կընդունես այլ հիմունք, որն ավելի լավը կթվա նախորդից, և այդպես

- e շարունակ, մինչև չհասնես բավարար մի բանի: Դու չես խառնի իրար զրույցի սկիզբն ու հետևանքները, ինչպես անում են վիճաբանները, եթե իհարկե ուզում ես ինչ-որ բան գտնել [ձձմարիտ] գոյից: Իսկ վիճաբանները⁴³ այդ մասին ո՛չ խոսում են, ո՛չ էլ հոգ տանում: Իրենց իմաստությամբ նրանք կարող են միայն խառնել ամեն ինչ և գոհ մնալ իրենցից: Եթե դու փիլիսոփա ես, կվարվես ինչպես ասացի:

102

– Շատ ձիշտ ես ասում,— միաժամանակ պատասխանեցին Սիմմիասը և Կեբեսը:

Էքեկրատես. Ջևար վկա, Ֆեդոն, իրոք ձիշտ է: Ինձ թվում է, նա ասաց այդ ամենը զարմանալիորեն պարզ և նույնիսկ տկար մտքին հասանելի:

Ֆեդոն. Միանգամայն, Էքեկրատես, բոլոր ներկաներն էլ այդպես գտան:

Էքեկրատես. Մենք, որ ներկա չենք եղել, նույնն ենք զգում: Իսկ այնուհետև ինչի՞ մասին խոսեցիք:

- b **Ֆեդոն.** Հիշում եմ, երբ Սիմմիասն ու Կեբեսը համաձայնեցին և ընդունեցին, որ գաղափարներից յուրաքանչ-յուրը գոյություն ունի և մյուս իրերը դրանց հաղորդակից լինելով են անուններ ստանում, Սոկրատեսը հարցրեց.

– Եթե այդպես է, ապա երբ ասում են, որ Սիմմիասը Սոկրատեսից մեծ է, բայց փոքր՝ Ֆեդոնից, նկատի ունեն, որ Սիմմիասի մեջ կան այդ երկուսն էլ՝ և՛ մեծը, և՛ փոքրը:

– Այո:

– Բայց համաձայն չե՞ս, որ *Սիմմիասը Սոկրատեսից բարձր է* ասածը այնքան էլ ձձմարիտ չէ: Քանզի Սիմմիասը

- c ոչ թե ի բնե ավելի բարձր է, որպես Սիմմիաս, այլ՝ այն մեծության շնորհիվ, որ ունի: Եվ Սոկրատեսից բարձր է ոչ թե որովհետև Սոկրատեսը Սոկրատեսն է, այլ որովհետև Սոկ-

րատեսն ավելի շատ փոքրություն ունի, քան մեծություն:

– Ճշմարիտ է:

– Եվ Ֆեդոնը նրանից բարձր է ոչ թե որովհետև Ֆեդոնն է, այլ որովհետև Սիմմիասից շատ ունի մեծություն:

– Այդպես է:

– Հետևաբար Սիմմիասը կկոչվի և՛ փոքր, և՛ մեծ, քանզի նա երկուսի արանքում է. մեծի նկատմամբ նա փոքր է, փոքրի նկատմամբ՝ մեծ:

Եվ Սոկրատեսը ծիծաղեց.

– Ասես գրավոր արձանագրություն կարդամ, բայց դե ասածս էլ կարևոր է:

Սիմմիասը համաձայնեց:

– Ասածիս նպատակն այն է,– շարունակեց Սոկրատեսը,– որ դու ինձ պես մտածես: Քանզի ինձ թվում է, որ ոչ միայն մեծը երբեք չի ցանկանա միաժամանակ լինել և՛ մեծ, և՛ փոքր, այլ նաև մեր մեջ եղած մեծը երբեք թույլ չի տա և չի ցանկանա ընդունել փոքրը: Այդ դեպքում երկուսից մեկը՝ կամ մեծը փախչում և զիջում է, երբ գալիս է հակադիրը՝ փոքրը, կամ սրա մոտենալուն պես մահանում: Նա չի ցանկանա մնալ տեղում և ընդունել փոքրին՝ իր եղածից տարբեր դառնալով: Այսպես, ես ընդունել և թույլ եմ տվել փոքրը և այդպիսին եմ, ինչպես որ կամ՝ փոքր: Իսկ մեծը չի համաձայնի փոքր լինել: Այդպես նաև փոքրը մեր մեջ երբևէ չի ցանկանա մեծ դառնալ և լինել, ոչ էլ մեկ այլ բան կցանկանա դառնալ իր հակադիրը, այլ այդ փոփոխության ժամանակ կամ կհեռանա, կամ կոչնչանա:

– Ինձ թվում է, միանգամայն այդպես է,– ասաց Կեբեսը:

Իսկ ներկաներից մեկը (ով էր, լավ չեմ հիշում), լսելով դա, ասաց.

– Հանուն աստվածների, չէ՞ որ նախորդ գրույցի ժամանակ մենք համաձայնեցինք այժմ ասվածի ճիշտ հակառակին, այսինքն՝ որ փոքրից գոյանում է ավելի մեծը, իսկ ավելի մեծից՝ ավելի փոքրը, և որ ընդհանրապես այդպիսին

d

e

103

է հակադրությունների գոյացումը՝ միմյանցից: Իսկ այժմ, որքան հասկանում եմ, ասվում է, որ այդպես երբեք չի լինում:

Սուրատեսը շրջեց գլուխը, լսեց և ասաց.

- b** – Լավ հիշեցում էր, միայն թե դու չես հասկացել այժմ և այն ժամանակ ասվածի տարբերությունը: Չէ՞ որ այն ժամանակ ասում էինք, որ հակադիր իրից ծնվում է հակադիր իր, իսկ հիմա ասում ենք՝ ինքը հակադիրը երբեք չի դառնում իր հակադիրը ո՛չ մեր, ո՛չ էլ բնության մեջ: Այն ժամանակ, բարեկամս, մենք խոսում էինք հակադրություններ ունեցող բաների մասին, որոնց տալիս էինք այդ հակադրությունների անունները, իսկ այժմ՝ հենց հակադրությունների մասին, որոնց ներկայությունը անուն է տալիս այդ իրերին: Հակադրությունների մասին ենք այժմ ասում, որ երբեք չեն ցանկանա գոյանալ մեկը մյուսից:
- c** Եվ նայելով Կեբեսին՝ հարցրեց.
- Կեբես, քեզ նու՛յնպես շփոթեցրեց նրա ասածը:
 - Ոչ,– ասաց Կեբեսը,– թեև չեմ թաքցնի, որ շատ բան ինձ էլ է մտահոգում:
 - Ուրեմն մենք պարզապես կհամաձայնե՞նք, որ հակադրությունը երբեք ինքն իրեն հակադիր չէ:
 - Կհամաձայնենք:
 - Այդ դեպքում տե՛ս, կհամաձայնե՞ս նաև սրան: Կոչու՞մ են արդյոք որևէ բան տաք կամ պաղ:
 - Իհարկե:
 - Ուրեմն դա նու՛յնն է, ինչ կրակը և ձյունը:
 - Չևսը վկա, իհարկե ոչ:
- d** – Ուրեմն կրակը այլ բան է, քան տաքը, իսկ ձյունը տարբեր է պաղությունից:
- Այո:
 - Սակայն կարծում եմ, հասկանում ես, որ ձյունը ընդունելով ջերմությունը, ինչպես քիչ առաջ ասացինք, այլևս չի լինի այն, ինչ էր՝ ձյուն, և միաժամանակ ջերմություն, այլ

ջերմության մոտենալուն պես ձյունը կամ կնահանջի, կամ կոչնչանա:

– Իհարկե:

– Նմանապես նաև կրակը պաղության մոտենալուն պես կամ նահանջում է, կամ ոչնչանում և չի ցանկանում, ընդունելով պաղությունը, լինել այն, ինչ էր՝ կրակ, և միաժամանակ պաղություն:

– Ճշմարիտ ես ասում:

– Ուրեմն այդպիսի դեպքերից մի մասում ոչ միայն ինքը գաղափարն է պահպանում նույն անունը բոլոր ժամանակներում, այլև այն, ինչը գաղափար չէ, բայց իր գոյության ամբողջ ժամանակ ունի դրա ձևը: Այժմ քեզ ավելի պարզ կդառնա ասածս: Կենտը միշտ պետք է կրի կենտ անունը, թե՞ ոչ:

– Իհարկե միշտ:

– Սակայն,– ահա ինչ եմ ուզում հարցնել,– գոյություն ունեցողից միայն սա՞ է, թե՞ կա նաև ուրիշ ինչ-որ բան, որը կենտը չէ, բայց այնուհանդերձ, բացի իր անունից, պետք է այդպես կոչվի իր բնության պատճառով, քանզի անբաժանելի է կենտից: Ասածս վերաբերում է և՛ երեքին, և՛ շատ այլ բաների: Մտածիր երեքի մասին: Քեզ չի՞ թվում, որ այն միշտ պետք է նշել և՛ իր անունով, և՛ կենտի, թեև կենտը երեք չէ: Չէ՞ որ այդպիսին է երեքի, հինգի և բոլոր թվերի կեսի բնությունը, քանզի նրանցից յուրաքանչյուրը միշտ կենտ լինելով՝ ինքը կենտը չէ: Իսկ երկուսի, չորսի և բոլոր այդպիսի թվերի շարքը միշտ գույզ է, թեև ինքը գույզը չէ: Համաձայն ես, թե՞ ոչ:

– Ինչպես չէ:

– Ուրեմն տես, թե ինչ եմ ուզում պարզել: Թվում է, որ ոչ միայն տվյալ հակադրությունները չեն ընդունում միմյանց, այլ նաև ուրիշ բաները, որոնք հակադիր չեն, ունեն հակադիր հատկություններ և չեն ընդունում գաղափարը, որը հակառակ է իրենց մեջ եղած գաղափարին, այլ նրա մոտե-

104

b

c

նալուն պես կա՛մ վերանում են, կա՛մ նահանջում: Մի՞թե չենք ասում, որ երեքը ավելի շուտ կվերանա կամ կկրի մեկ այլ բան, քան կդառնա զույգ:

– Իհարկե,– ասաց Կեբեսը:

– Սակայն երկուսը հակադիր չէ երեքին:

– Ոչ:

– Հետևաբար ոչ միայն հակադրությունները չեն հանդուրժում միմյանց մոտենալուն, այլև կա ևս մի բան, որը չի հանդուրժում հակադիրի մոտեցում:

– Շատ ծիշտ է:

– Կցանկանայի՞ր հնարավորության դեպքում պարզել, ինչ է դա:

d – Իհարկե:

– Արդյո՞ք, Կեբես, դա այն չէ, որ տիրելով մի բանի՝ ստիպում է ընդունել ոչ միայն իր գաղափարը, այլև մշտապես նաև հակառակ ինչ-որ բան:

– Այդ ինչպե՞ս:

– Այնպես, ինչպես քիչ առաջ ասացինք: Չէ՞ որ գիտես, որ այն, ինչին տիրում է երեքի գաղափարը, անհրաժեշտաբար ոչ միայն երեք է, այլև կենտ:

– Իհարկե:

– Ասացինք, որ դրան ոչ մի դեպքում չի մոտենա գաղափարը, որը հակառակ է այդ իրը ստեղծող ձևին:

– Ոչ մի դեպքում:

– Իսկ կենտության գաղափարը ստեղծու՞մ էր:

– Այո:

– Եվ զույգի գաղափարը հակառա՞կ է դրան:

– Այո:

e – Ուրեմն երեքին զույգի գաղափարը երբեք չի մոտենում:

– Պարզ է, որ ոչ:

– Հետևաբար երեքը անմասն է զույգին:

– Անմասն է:

– Ուստի երեքն անզույգ է:

– Այո:

– Ես ասացի, որ կպարզենք, թե ինչն է, որ չլինելով հակառակ մի բանի, միևնույն է՝ չի ընդունում այն որպես հակառակ: Արդ, երեքը հակառակ չէ զույգին, բայց չի ընդունում այն, քանզի միշտ բերում է դրա հակառակը, երկուսը բերում է կենտի հակառակը, կրակը՝ պաղի, և այդպես շարունակ: Բայց տե՛ս, պարզ չէ հետևյալը: Ոչ միայն հակառակը հակառակ չի ընդունում, այլ նաև այն, ինչը հակառակ բան է բերում, մոտենալիս երբեք չի ընդունում իր բերածի հակառակը: Մեկ անգամ էլ հիշիր (չէ՞ որ լսելը վնաս չէ). հինգը չի ընդունում զույգի գաղափարը, ոչ էլ տասը՝ կենտի: Այդ տասը թեև ինքը ուրիշի հակառակը չէ, բայց չի ընդունում կենտը: Ո՛չ մեկուկեսը, ո՛չ մեկ երրորդը, ո՛չ մեկ այլ կոտորակ չեն ընդունում ամբողջի գաղափարը: Համաձայն ես:

105

b

– Լիովին համաձայն եմ և շարունակում եմ լսել:

– Վերադառնանք ելակետին: Բայց մի՛ պատասխանիր այնպես, ինչպես հարցնում եմ, այլ՝ նմանակելով ինձ: Բացի այն հուսալիությունից, որն առկա էր նախորդ պատասխանում, մեր այժմյան ասվածի մեջ ուրիշ հուսալիություն էլ տեսա: Եթե ինձ հարցնեիր, թե ինչ պիտի մուտք գործի մարմնի մեջ, որպեսզի այն տաք դառնա, այլևս չէի տա հուսալի, բայց տգետ պատասխան, թե ջերմությունը, այլ կտայի ավելի կշռադատված պատասխան՝ որ դա կրակն է: Իսկ եթե հարցնեիր, թե ինչն է մտնելով մարմին հիվանդացնում այն, չէի ասի՝ հիվանդությունը, այլ՝ ջերմը: Եվ եթե հարցնես, թե ինչ պետք է մտնի թվի մեջ, որպեսզի այն դառնա կենտ, կասեմ, որ ոչ թե կենտը, այլ միավորը, և այլն: Տե՛ս, բավարա՞ր է այսքանը:

c

– Միանգամայն բավարար:

– Ուրեմն պատասխանիր, ի՞նչ պետք է մուտք գործի մարմին, որպեսզի այն դառնա կենդանի:

- Յոգին,- ասաց Կեբեսը:
- d** - Եվ այդպես է միշտ:
- Իհարկե:
- Ուրեմն ինչին էլ տիրի հոգին, միշտ կյա՞նք է բե-
րում դրան:
- Այդպես է:
- Իսկ կա՞ կյանքին հակադիր ինչ-որ բան, թե՞ ոչ:
- Կա:
- Ի՞նչն է:
- Մահը:
- Բայց մենք արդեն համաձայնել ենք, որ հոգին երբեք
չի ընդունի իր բերածի հակադիրը:
- Միանգամայն ժիշտ է,- ասաց Կեբեսը:
- Ուրեմն ի՞նչ: Ինչպե՞ս անվանեցինք այժմ այն, ինչը
չի ընդունում զույգի գաղափարը:
- Կենտ, պատասխանեց:
- e** - Իսկ ի՞նչը չի ընդունում արդարը և չի ընդունում
արվեստը:
- Անարդարն ու անարվեստը:
- Լավ: Իսկ մահը ի՞նչ չի ընդունում: Ինչպե՞ս ենք կո-
չում դա:
- Անմահը,- ասաց Կեբեսը:
- Բայց հոգին չի՞ ընդունում մահ:
- Ոչ:
- Ուրեմն հոգին անմա՞հ է:
- Անմահ է:
- Լավ: Համարե՞նք սա ապացուցված, ինչպե՞ս ես կար-
ծում:
- Բավականաչափ, ո՛վ Սոկրատես:
- Ուրեմն, Կեբես, եթե կենտը պետք է լիներ անկործան,
106 այդպիսին կլիներ նաև երեքը:
- Իհարկե:
- Հետևաբար, եթե պաղը անհրաժեշտաբար անկործան

լիներ, ապա ձյունը ջերմության մոտենալուն պես կհեռանար անփոփոխ և անհալ: Չէ՞ որ չէր վերանա, ոչ էլ կպահպանվեր՝ ընդունելով ջերմությունը:

– Ճշմարիտ է,– ասաց Կեբեքը:

– Նույն ձևով, կարծում եմ, եթե անկործան լիներ նաև տաքը, ապա երբ կրակին մոտենար պաղ ինչ-որ բան, այն չէր հանգչի, չէր վերանա, այլ անվնաս կհեռանար:

– Անհրաժեշտաբար:

– Բայց նույնը չե՞նք ասի անհրաժեշտաբար նաև անմահի մասին: Եթե անմահն անկործան է, հոգին չի կարող վերանալ, երբ նրան մոտենում է մահը: Չէ՞ որ ասվածի հիման վրա նա չի ընդունի մահը և չի լինի մահկանացու, ծիշտ այնպես, ինչպես ո՛չ երեքը, ո՛չ կենտը չեն լինի զույգ, ինչպես որ չեն լինի պաղ ո՛չ կրակը, ո՛չ էլ ջերմությունը, որ առկա է կրակի մեջ: Բայց կհարցնեն. «Ի՞նչն է խանգարում կենտին, չդառնալով զույգ, երբ մոտենում է զույգը,– ինչպես պայմանավորվեցինք,– վերանալ»: Մենք չէինք կարողանա առարկել, թե կենտը չի վերանում, չէ՞ որ կենտն անկործան չէ: Բայց եթե մենք համաձայնեինք, որ այն անկործան է, հեշտությամբ կառարկեինք, որ զույգի մոտենալու ժամանակ կենտը և երեքը փախչում են: Նույնը մենք կարող էինք ասել նաև կրակի, ջերմության և այլ բաների մասին: Թե՞ ոչ:

– Իհարկե:

– Այժմ անմահի մասին: Եթե մենք համաձայն ենք, որ այն անկործան է, ապա հոգին անմահ լինելուց բացի նաև անկործան է: Իսկ եթե ոչ, այլ փաստարկ է հարկավոր:

– Ոչ,– ասաց Կեբեքը,– այլ փաստարկ ամենևին հարկավոր չէ: Դժվար թե ուրիշ ինչ-որ բան փրկվի կործանումից, եթե ինքը անմահը, որ հավերժ է, կործանվի:

– Կարծում եմ ո՛չ աստված, ո՛չ կյանքի գաղափարը, ո՛չ էլ անմահ մյուս բաները չեն վերանում,– սրան կհամաձայնեն բոլորը:

- Ձևը վկա, մարդիկ կհամաձայնեն, նույնիսկ ավելին՝ կհամաձայնեն նաև աստվածները:
- e - Ուրեմն, եթե անմահը նաև անկործան է, ապա հոգին, լինելով անմահ, անկործան է:
 - Միանգամայն:
 - Երբ մարդուն մոտենում է մահը, նրա մահկանացու մասը մեռնում է, իսկ անմահը պահպանվում է և հեռանում անվնաս՝ շրջանցելով մահը:
 - Կարծես թե:
 - Ուրեմն առավել ևս, ո՛վ Կեբես, հոգին անմահ և ան-
- 107 կործան է, և մեր հոգիները իսկապես գոյություն կունենան Յադեսում:
 - Ես, ո՛վ Սոկրատես,- ասաց Կեբեսը,- այս փաստարկի դեմ առարկելու ոչինչ չունեմ և հավատում եմ դրան: Բայց եթե Սիմմիասը կամ մեկ ուրիշը ասելու բան ունեն, լավ կլինի, որ չթաքցնեն: Քանզի չեմ կարծում, թե ուրիշ առավել պատեհ առիթ լինի, քան հիմա, արտահայտելու կամ լսելու այն, ինչ ցանկանում եմք:
 - Ես նույնպես ասվածին չհավատալու հիմք չունեմ,- ասաց Սիմմիասը:- Սակայն խնդրի մեծությունը և մարդկային ուժերի նկատմամբ անվստահությունը ստիպում են ինձ կասկածել ասվածին:
- b - Ոչ միայն,- ասաց Սոկրատեսը,- վերջին ասվածը, Սիմմիաս, այլև առաջին ենթադրությունները, եթե անգամ դրանք հավաստի են թվում ձեզ, պետք է քննել ավելի հստակ: Եվ եթե բավականաչափ հետազոտենք դրանք, կարծում եմ, կհասկանանք ապացույցը, որքանով այն հասանելի է մարդուն: Եվ երբ այն ձեզ պարզ դառնա, այլևս չեք շարունակի փնտրել:
 - Ճշմարիտ ես ասում,- ասաց Սիմմիասը:
 - Բայց, ո՛վ այրեր, շարունակեց Սոկրատեսը, տեղին
- c կլինի խորհրդածել հետևյալի մասին: Եթե հոգին անմահ է, նա հոգածության կարիք ունի ոչ միայն այս ժամանա-

կահատվածում, որը կյանք ենք կոչում, այլև բոլոր ժամանակներում, և այսուհետ պիտի որ սարսափելի համարենք վտանգը, որ սպառնում է նրան, ով հոգ չի տանում իր հոգու մասին: Քանզի եթե մահը վերջ դներ ամեն ինչին, ապա հիրավի երջանիկ գյուտ կլիներ հոռիների համար, որոնք մահանալով՝ կազատվեին մարմնից, իսկ հոգու հետ միասին՝ նաև իրենց չարիքներից: Բայց այժմ, երբ պարզվեց, որ հոգին անմահ է, չկա ուրիշ փախուստ և փրկություն չարիքներից, քան ավելի լավն ու բանական դառնալը: Քանզի Յադես գնալիս հոգին ոչինչ չի տանում իր հետ դաստիարակությունից ու բարքերից բացի, և ասում են՝ հենց դրանք են բերում ամենամեծ օգուտը կամ վնասը մահացողին նրա ուղևորության հենց սկզբից: Ասում են՝ յուրաքանչյուր մահացողի իր դեմոնը⁴⁴, որ ստացել է կենդանության օրոք, տանում է մի վայր, որտեղից հավաքվածները, դատաստանի ենթարկվելուց հետո, շարժվում են Յադես ուղեվարի հետ, որին պատվիրված է առաջնորդել նրանց այստեղից այնտեղ: Ընդունելով համապատասխան ձևակատագիրը և մնալով այդտեղ որոշ ժամանակ՝ նորից վերադառնում են այստեղ ուրիշ առաջնորդի հետ, և այդպես բազում անգամ երկար ժամանակահատվածներ անց: Բայց այդ ուղևորությունն այնպիսին չէ, ինչպես Էսքիլոսի մոտ ներկայացնում է Տելեփոսը⁴⁵: Նա ասում է, որ Յադես տանող ծանապարհը դյուրին է, բայց ինձ թվում է՝ ո՛չ դյուրին է, ո՛չ էլ մեկն է: Քանզի չէր լինի առաջնորդների կարիք և ոչ ոք չէր մոլորվի, եթե լիներ միայն մեկ ծանապարհ: Իրականում, սակայն, այդ ծանապարհն ասես բազում ուղեբաժաններ ու խաչմերուկներ ունի: Ես այդպես եմ դատում՝ ելնելով մեզ մոտ կատարվող սրբազան ծեսերից և օրենքներից: Եթե հոգին խոհեմ և բանական է, ապա հետևում է առաջնորդին, և այն, ինչ նրան շրջապատում է, իրեն ծանոթ է: Իսկ մարմնին կրքոտ կապված հոգին, ինչպես արդեն ասացի, երկար ժամանակ ձախրում է դրա

d

e

108

b

- շուրջը, տեսանելի վայրում⁴⁶, երկար ժամանակ համառում է և շատ տառապում, մինչև նշանակված դեմոնը բռնի ուժով չհեռացնի նրան: Սակայն մյուս հոգիները, երբ գալիս է նրանց մոտ, բոլորը փախչում են նրանից, խուսափում, չեն ցանկանում նրան ուղեկից կամ առաջնորդ լինել, եթե նա անմաքուր է, այսինքն հանցանք է գործել, ասենք՝ անարդար սպանություն կամ մեկ այլ մեղսարարք, որպիսին գործում են նման հոգիները: Նա թափառում է՝ կրելով բազում
- c զրկանքներ, մինչև որ լրանում է ժամանակը, և նա անհրաժեշտաբար տեղափոխվում է իրեն արժանի բնակավայր: Իսկ մաքուր ու չափավոր կյանք վարած հոգիները գտնում են և՛ ուղեկիցներ, և՛ առաջնորդներ աստվածների մեջ, և նրանցից յուրաքանչյուրը բնակվում է իրեն արժանի տեղում: Ոմանք ինձ համոզել են, որ Երկրի վրա բազում հրաշալի տեղեր կան, և Երկիրն այնպիսին չէ, ինչպես ասում են նրա մասին
- d խորհրդածելու սովոր այրերը:

Եվ Սիմմիասը հարցրեց.

– Ինչպե՞ս, Սոկրատես: Ես էլ եմ շատ լսել Երկրի մասին, բայց թե ինչն է համոզել քեզ, սիրով կլսեի, եթե պատմեիր:

– Սիմմիա՛ս, եղածի մասին խոսելու համար, կարծում եմ, հարկ չի լինի Գլավկոսի արվեստը: Սակայն ապացուցել, որ դա ճշմարիտ է, թվում է, դժվար է նույնիսկ Գլավկոսի արվեստն ունենալու դեպքում, և ինձ հազիվ թե հաջողվի անել դա⁴⁷: Եթե նույնիսկ իմանայի այդ արվեստը, կարծում եմ, կյանքս չէր բավականացնի այդ պատմությունն ավարտելու համար, Սիմմիաս: Սակայն կարող եմ ասել, թե ինչպիսին եմ համարում Երկրի տեսքը և նրա տարածքները:

- e – Դա բավական կլինի, – ասաց Սիմմիասը:
- Նախ ես համոզվեցի, որ եթե Երկիրը երկնքի մեջտեղում է և կլոր է, ապա չընկնելու համար նրան հարկավոր չէ ո՛չ օդ, ո՛չ ինչ-որ ուժ, նրան բավական է երկնքի համասեռությունը և իր սեփական հավասարակշռությունը: Քանզի

համասեռ իրը, որ հավասարակշռության մեջ է և դրված է ինչ-որ բանի մեջտեղում, չի կարող թեքվել որևէ կողմ, այլ կմնա համասեռ և անսասան: Սա առաջինն է, ինչում համոզվեցի:

– Եվ ճիշտ է, – ասաց Սիմմիասը:

– Այնուհետև՝ որ Երկիրը շատ մեծ է և մենք՝ Փասիսից մինչև Յերակյան սյուները⁴⁸ բնակվողներս, զբաղեցնում ենք նրա փոքր մասը. մրջյունների ու գորտերի պես բնակվում ենք ծովի շուրջ, և շատ ուրիշ ժողովուրդներ ապրում են բազում այսպիսի վայրերում: Քանզի Երկրի վրա ամենուր բազմաթիվ ակոսներ կան՝ զանազան թե՛ ձևով, թե՛ չափերով, որոնցում ջուր, մառախուղ և օդ է հավաքվում: Իսկ ինքը Երկիրը մաքուր վիճակում գտնվում է մաքուր երկնքում, ուր կան աստղեր: Այդ երկինքը շատերը սովոր են կոչել եթեր⁴⁹: Դրա տեղումները մշտապես հոսում են Երկրի ակոսների մեջ: Իսկ մենք՝ այդ ակոսներում բնակվողներս, չենք կռահում դա և կարծում ենք, թե բնակվում ենք հենց Երկրի վրա, ինչպես եթե մեկը, բնակվելով ծովախորշում, կարծեր, թե բնակվում է ծովի մեջ, և ջրի միջով տեսնելով արեգակն ու մյուս աստղերը՝ ծովը համարեր երկինք և իր դանդաղաշարժության ու թուլության պատճառով երբեք չհասներ ծովի մակերևույթին, ոչ էլ գլուխը հաներ ջրից ու այդտեղից տեսներ այս վայրը, լսելու փոխարեն ինքը տեսներ, թե որքան ավելի մաքուր և գեղեցիկ է: Նույնը տեղի ունի նաև մեր դեպքում: Մենք բնակվում ենք Երկրի ինչ-որ ակոսում և կարծում ենք, թե ապրում ենք մակերևույթի վրա, օդը կոչում ենք երկինք և հավատում, որ այդ երկնքի մեջ են շարժվում աստղերը:

Եվ դա այդպես է, որովհետև անզորության և դանդաղաշարժության պատճառով չենք կարողանում հասնել օդի սահմանին: Բայց եթե որևէ մեկը հասներ բարձունքին կամ թևեր առնելով թռչեր վեր, դուրս ցցվելով, ինչպես ձկները, որոնք դուրս են ցատկում ծովից ու տեսնում այս ցամաքը,

նա կտեսներ այն վայրը, և եթե իր բնությամբ ի զորու լիներ դիմանալու տեսածին, կիմանար, որ դա է իսկական երկինքը, իսկական լույսը և իսկական Երկիրը:

- 110 Այստեղ Երկիրը, քարերը և բոլոր վայրերը ավերված են և քայքայված, ինչպես ծովում աղից քայքայվող ժայռերը: Ուշադրության արժանի ոչինչ չի ծնվում ծովում, ոչինչ չի հասնում այսպես ասած կատարելության, և եթե կա հող, ապա ժայռեր են, տիղմ ու ցեխ, ու չի կարող համեմատվել ցամաքի գեղեցիկ վայրերի հետ:

Իսկ որքան տարբեր է այն աշխարհը ցամաքի վայրերից: Եթե տեղին է այստեղ առասպել պատմել, Սիմմիաս, ապա թերևս արժեր լսել, թե ինչպիսին է երկնքից ներքև գտնվող Երկիրը:

- b – Ո՛վ Սոկրատես,– ասաց Սիմմիասը, մենք սիրով կլսենք այդ առասպելը:
- Ուրեմն այսպես, բարեկամս, նախ ասում են, թե այդ Երկիրը վերևից դիտելիս նման է տասներկու կաշվե կտորից կարված գնդակի⁵⁰ և զարդարված է խայտաբղետ գույներով:
- c Այդ գույների օրինակ կարող են ծառայել մեր նկարիչների օգտագործած գույները: Իսկ այնտեղ ամբողջ Երկիրն է այդպիսի գույների մեջ, և շատ հաճախ ավելի պայծառ ու մաքուր: Մի տեղում դա պուրպուր է և հրաշագեղ, ոսկեգույն, մեկ այլ տեղում սպիտակ է, ավելի սպիտակ, քան ալաբաստրը կամ ձյունը: Այդպիսին են նաև մյուս գույները, սակայն ավելի բազմաթիվ և ավելի գեղեցիկ, քան տեսնում ենք այստեղ: Երկրի ակոսները լցված լինելով ջրով և օդով՝ ներկայացնում են խայտաբղետ գույների ամբողջություն և
- d հանդես են գալիս մեկ գունեղ տեսքով: Այդպիսին է Երկիրը, և այդպիսին են նրա աճող բույսերը՝ ծառերը, ծաղիկները և պտուղները, այդպիսին են ժայռերն ու քարերը՝ դրանք հարթ են ու գունեղ: Այստեղ սիրված քարերը, ինչպես սարդիոնները, հասպիսները, զմրուխտները և նման շատ ուրիշ
- e քարեր, այդ ժայռերի բեկորներն են: Իսկ այնտեղ ամեն քար

այդպիսին է և նույնիսկ ավելի գեղեցիկ: Դրա պատճառն այն է, որ այնտեղի քարերը մաքուր են, չքայքայված ու անեղծ, ի տարբերություն այստեղիների, որ փտում և աղակալում են հոսանքներից, այլանդակություն և հիվանդություններ են բերում Երկրին, կենդանիներին և բույսերին: Այդ Երկիրն ամբողջությամբ զարդարված է դրանցով, ինչպես նաև ոսկով, արծաթով և ուրիշ նման մետաղներով: Դրանք մեծ առատությամբ ամենուր են, ողջ Երկրի վրա, և երջանկություն է դրանք տեսնելը: Այդ Երկրի բազում կենդանի էակների թվում կան նաև մարդիկ՝ ոմանք ապրում են ցամաքում, ոմանք՝ օդի եզրագծով, ինչպես մենք՝ ծովի, իսկ ոմանք էլ՝ կղզիներում, որ երիզվում են օդով, ցամաքից ոչ հեռու: Մի խոսքով՝ այն, ինչ մեր կարիքների համար ջուրն է և ծովը, այնտեղ օդն է, իսկ այն, ինչ մեզ համար օդ է, նրանց համար եթեր է: Իսկ եղանակներն այնտեղ այնպես են զուգակցվում, որ մարդիկ չեն հիվանդանում, և կյանքի տևողությունը շատ ավելի երկար է, քան այստեղ: Տեսողությամբ, լսողությամբ, բանականությամբ և մնացյալ ամեն ինչով նրանք տարբերվում են մեզնից, ինչպես օդը տարբերվում է ջրից մաքրությամբ, իսկ եթերը՝ օդից: Նրանք ունեն նաև սրբատեղիներ ու տաճարներ, որոնցում բնակվում են աստվածները և նշանների, գուշակությունների ու տեսիլների միջոցով հաղորդակցվում մարդկանց հետ: Արեգակը, Լուսինը և աստղերը նրանք տեսնում են այնպես, ինչպես դրանք կան: Եվ այդ ամենի ուղեկիցն է երանությունը:

Այդպիսին է ընդհանուր առմամբ այդ Երկրի բնությունը և այն, ինչ նրա շուրջն է: Բայց այդ Երկրի ակոսներում կան շատ վայրեր՝ ավելի խոր և բաց, քան այն մեկը, որում բնակվում ենք մենք, իսկ մյուսները թեև խորն են, ավելի փոքր մուտք ունեն, քան մերը: Կան նաև պակաս խոր, բայց ավելի լայները: Դրանք կապված են միմյանց բազմապիսի ստորերկրյա անցումներով՝ լայն և նեղ, որոնց միջով առատ ջուր է հոսում մեկ ակոսից մյուսը, ասես թասից

111

b

c


d

թաս, իսկ հողի տակ հոսում են անսպառ, աներևակայելի լայնության տաք և պաղ գետեր: Կա շատ հուր, հրե հսկայական գետեր և ցեխի բազում հոսանքներ՝ տեղ-տեղ լայն և տեղ-տեղ նեղ, ինչպես Սիկիլիայում, որ լինում են նախքան լավայի ժայթքելը կամ հենց լավայի նման: Դրանք լցնում են ակոսներից յուրաքանչյուրը և թափվում մեկը մյուսի մեջ: Այդ ամենը շարժվում է վեր ու վար, ասես Երկրի ներսում ինչ-որ ցնցումներ տեղի ունենան: Այդ ցնցումների բնությունն այսպիսին է:

112 Երկրի անդունդներից մեկը՝ ամենամեծը, փորված է ամբողջ երկրի միջով: Դրա մասին Յոմերոսն ասում է.

Այն հեռագույն Սանդարամետոն անդնդախոր, ստորերկրյա...⁵¹

Ինքը Յոմերոսը մեկ այլ տեղում և նրա նման շատ ուրիշ պոետներ այն կոչում են Տարտարոս: Այս անդունդի մեջ են թափվում բոլոր գետերը և կրկին արտահոսում նրանից: Եվ այդտեղ յուրաքանչյուրը դառնում է այնպիսին, ինչպիսի երկրով որ հոսում է: Պատճառը, որով նրանք ներհոսում և արտահոսում են, այն է, որ այդ հեղուկը չունի ո՛չ հատակ, ո՛չ հիմք: Այն ծփում է, բարձրանում ու իջնում: Նույնն են անում նրա շուրջը եղած օդն ու քամին: Դրանք հետևում են հեղուկին, Երկրի որ վայրն էլ գնա, և ինչպես շնչառությունը, որ ներս ու դուրս է անում, այնպես էլ քամին շարժվում է հեղուկի հետ և մե՛րթ ներս է մտնում, մե՛րթ դուրս գալիս՝ առաջ բերելով ահարկու փոթորիկներ: Երբ ջուրը նահանջում է այն վայրը, որ մենք ստորին ենք կոչում, թափվում է Երկրի միջով անցնող գետերի մեջ և լցնում դրանք, ինչպես ոռոգման ջրանցքները: Երբ լքում է այդ վայրը և շարժվում այստեղ, դարձյալ սնում է այստեղի գետերը, և դրանք վարարելով հոսում են ջրանցքներով ու հողի միջով, և յուրաքանչյուրը հասնում է այնտեղ, ուր ճանապարհ է հարթել իրեն՝ կազմելով ծովեր, լճեր, գետեր և աղբյուրներ: Այստեղից դարձյալ մտնում են հողի տակ, և մի մասը անցնելով



Աղկաօն

մեծ տարածություն, իսկ մյուսը՝ փոքր և կարճ, կրկին վերադառնում են Տարտարոս: Եվ գետաբերանը միշտ շատ ավելի ցածր է ակունքից. երբեմն շատ ավելի ցածր այն բարձրությունից, որից արտահոսել է, երբեմն՝ նույնչափ բարձր: Երբեմն ակունքը և գետաբերանը հակադիր կողմերում են, իսկ երբեմն՝ միևնույն կողմի վրա, որից սկիզբ էին առնում գետերը: Կան, որ լրիվ շրջան են կազմում, մի քանի անգամ գրկում են Երկիրը, ասես օձեր, և իջնում են հնարավորին չափ ցածր՝ դարձյալ թափվելով Տարտարոս: Իսկ իջնել բոլոր կողմերից կարելի է մինչև Երկրի մեջտեղը, բայց ոչ ավելի հեռու, քանզի որտեղից էլ հոսեն, երկու կողմից էլ տեղանքը մեջտեղից կտրուկ բարձրանում է:

Այս գետերը բազմաթիվ են և մեծ: Բայց կան դրանց մեջ չորսը, որոնցից ամենամեծն ու ամենահեռավորը, որ շրջանաձև է, կոչվում է Օվկիանոս, իսկ նրան ընդառաջ հոսում է Աքերոնը, որն անցնում է ամայի վայրերով և գետնի տակով հասնում է Աքերուսիադե լիճ⁵², ուր ժամանում են շատ մահացածների հոգիներ և, սահմանված ժամանակ մնալով, — ոմանք երկար, ոմանք կարճ, — դարձյալ ուղարկվում են ապրող սերունդների մեջ ծնվելու: Երրորդ գետը դուրս է հոսում երկուսի արանքից և շուտով հասնում մի լայնատարած տեղանք, ուր վիթխարի կրակ է, և կազմում է այնտեղ լիճ, որ մեր ծովից մեծ է և որտեղ ծփում են ջուրն ու ջրիմուռները: Այստեղ այն շրջան է կազմում՝ պղտոր ու մամռոտ, պարուրելով ամեն ինչ, և հասնում է Աքերուսիադե լիճ, առանց դրա ջրերին խառնվելու: Երկրի տակ մի քանի անգամ պտտվելով՝ թափվում է Տարտարոս: Այդ գետի անունն է Պյուրիփլեգետոն⁵³, և այնտեղ, ուր վերջինս հանդիպում է հողի, լավա է արտանետում: Նրան հանդիպակաց սկիզբ է առնում չորրորդ գետը, որը նախ հոսում է, ինչպես ասում են, վայրի և ահարկու տեղանքով, որի գույնը սև է, և այն կոչվում է Ստիքսյան: Լիճը, որ կազմում է այդ գետը, նույնպես կոչվում է Ստիքս⁵⁴: Հասնելով

նրան և սոսկալի ուժ ստանալով նրա ջրերում՝ գետերը հոսում են Երկրի տակ, կազմելով Պյուրիփլեգետոնին հակառակ շրջան, և մոտենում են Աքերուսիադե լճին: Դրանք չեն խառնվում ուրիշ ջրերին, այլ շրջան կազմելով՝ մտնում են Տարտարոս՝ Պյուրիփլեգետոնին հակառակ: Այս գետի անունը, ինչպես ասում են, Կոկիտոս⁵⁵ է:

- d Այսպիսին է այն Երկրի բնությունը, ուր ժամանում են մեռյալները՝ յուրաքանչյուրն առաջնորդվելով իր դեմոնով: Նախ բոլորն անցնում են դատը՝ և՛ նրանք, ովքեր առաքինի ու պարկեշտ կյանք են վարել, և՛ նրանք, ովքեր՝ ոչ: Ում վերաբերյալ վճռվի, որ միջին կյանք են վարել, ուղևորվում են դեպի Աքերոն, մակույկներ են վերցնում և դրանցով հասնում լիճ: Այստեղ նրանք բնակվում են ու մաքրվում գործած
- e զանցանքներից, իսկ բարի գործերի համար վարձատրվում ըստ արժանվույն: Ովքեր իրենց մեղքերի մեծության պատճառով անուղղելի կճանաչվեն, այսինքն՝ նրանք, որ բազում սրբապղծություններ են գործել, անարդար սպանություններ, բյուրավոր օրինազանցություններ և նման այլ բաներ, իրենց ծակատագրի կողմից նետվում են Տարտարոս, որից երբեք դուրս չեն գա:

- 114 Իսկ նրանք, ովքեր ուղղելի են, թեև մեծ մեղքեր են գործել, ասենք՝ հոր կամ մոր դեմ որևէ բռնություն, և զղջացել են հետագա կյանքի ընթացքում, կամ իրերի բերումով մարդասպան են դարձել, անհրաժեշտաբար նետվում են Տարտարոս, մնալով այնտեղ մեկ տարի, և դուրս են շարտվում՝ մարդասպանները Կոկիտոսի ալիքով, իսկ հայրասպաններն ու մայրասպանները՝ Պյուրիփլեգետոնի: Այնուհետև նրանք բերվում են Աքերուսիադե լիճ և ձայն տալիս ու կանչում նրանց, որոնց սպանել են կամ վիրավորել, օգնություն և գթություն են աղերսում, որպեսզի սրանք թույլ տան դուրս գալ լճից և ընդունեն իրենց: Եվ եթե համոզում են, դուրս են գալիս ու ազատվում չարիքներից, իսկ եթե ոչ, դարձյալ տարվում են Տարտարոս և այնտեղից դարձյալ դեպի գետե-

որը, և տառապանքը չի դադարում, մինչև որ չեն ողորում նրանց, որոնց դեմ անարդարություն են գործել: Քանզի դա է դատավորների սահմանած պատիժը: Իսկ նրանք, ովքեր աչքի են ընկել բարեպաշտ կյանքով, ազատվում են Երկրի ստորին վայրերից և խուսափում բանտերից, հասնելով մաքուր բնակավայրեր և բնակվելով այդ Երկրից վեր: Իսկ նրանք, ովքեր բավականաչափ մաքրվել են փիլիսոփայությամբ, այսուհետ ապրում են անմարմին և անցնում են ավելի լավ բնակատեղիներ, որոնք հեշտ չէ նկարագրել, և ոչ էլ ժամանակ ունենք:

c

Ահա ինչու, ո՛վ Սիմմիաս, մենք պետք է ամեն ինչ անենք, որպեսզի ավելի առաքինի և բանական լինենք կյանքում: Քանզի հրաշալի է պարգևը, իսկ հույսը՝ մեծ: Իհարկե, պնդել, թե այդ ամենը հենց այնպես է, ինչպես ներկայացրի, հարիր չէ բանական մարդուն: Բայց քանի որ մեր հոգիների և նրանց բնակավայրերի հարցն այսպիսին է կամ մոտ է դրան և քանի որ հոգին, ինչպես երևում է, անմահ է, ես մտածում եմ, որ հնարավոր է և պետք է, որ այդպես լինի: Քանզի այդպիսի պարտականությունը հրաշալի է: Նման բաներով պիտի մարդը հմայի ինքն իրեն, ահա՛ ինչու մանրամասն վերապատմեցի այդ առասպելը:

d

Բայց հենց այս պատմությունն էլ ցույց է տալիս, որ իր հոգու համար չպետք է վախենա նա, ով կյանքի ընթացքում խուսափել է մարմնավոր հաճույքներից և զարդարանքից՝ որպես խորթ բաներից, որոնք ավելի շուտ չարիք կբերեն նրան, և հոգացել է ուսման մասին և հոգու զարդերի՝ խոհեմության, արդարության, արիության, ազատության և ճշմարտության: Ճակատագրի կանչով նրան սպասում է ուղևորություն դեպի Յադես:

e

115

Դուք՝ Սիմմիաս և Կեբես, և մյուսները նույնպես, յուրաքանչյուրն իր ժամին կբռնեք այդ ճանապարհը: Իսկ ինձ ծակատագիրն արդեն ձայն է տալիս, ինչպես կասեր ողբերգության հերոսը: Լվացվելու ժամանակն է: Կարծում եմ

ավելի լավ է լվացված խմել թույնը⁵⁶ և կանանց համար չստեղծել դիակ լվանալու հոգս:

Այդ ժամանակ խոսեց Կրիտոնը:

- b** – Լավ, Սոկրատես: Բայց ի՞նչ կկարգադրես նրանց կամ ինձ զավակներիդ և այլոց վերաբերյալ: Մենք սիրով կկատարենք պատգամներդ:

– Կասեմ այն, ինչ ասել եմ միշտ, Կրիտոն: Ոչ մի նոր բան: Հոգ տարեք ինքների ձեր մասին, քանզի դրանով բարի գործ արած կլինեք և՛ ինձ, և՛ իմ մերձավորներին, և՛ ինքների ձեզ, անգամ եթե այժմ ոչինչ չխոստանաք: Իսկ եթե չհոգաք ձեր մասին և չկամենաք ապրել այնպես, ինչ-

- c** պես ճիշտ համարեցինք քիչ առաջ և համարել ենք նախկինում, ոչնչի չեք հասնի նույնիսկ ամենաեռանդուն խոստումների դեպքում:

– Կաշխատենք այդպես անել,– ասաց Կրիտոնը: Իսկ ինչպե՞ս թաղենք քեզ⁵⁷:

– Ինչպես կամենաք, եթե իհարկե կարողանաք բռնել ինձ և ես չփախչեմ ձեզնից:

Նա ցածրաձայն ծիծաղեց և նայելով մեզ՝ շարունակեց.

- Ոչ մի կերպ չեմ համոզում, ո՛վ այրեր, Կրիտոնին, որ ես այն Սոկրատեսն եմ, որ այժմ գրուցում է և դեռ կառուցում իր խոսքը: Նա կարծում է, թե ես այն Սոկրատեսն եմ, որին քիչ անց կտեսնի մեռած, և հարցնում է, ինչպես **d** թաղի: Իսկ որ այսքան երկար խոսեցի և ասացի, որ թույնը խմելուց հետո այլևս չեմ մնա ձեզ հետ, այլ կհեռանամ դեպի երանելիների երջանկությունը, նրա կարծիքով ասել եմ ձեզ և ինքս ինձ մխիթարելու համար: Երաշխավորեք ուրեմն ինձ Կրիտոնի առաջ, սակայն հակառակ այն երաշխավորության, որով նա երաշխավորեց ինձ դատավորների առաջ: Նա երաշխավորում էր, որ ես կմնամ [քաղաքում]: Իսկ դուք երաշխավորեք, որ չեմ մնա, այլ մեռնելուն պես կհեռանամ, **e** որպեսզի Կրիտոնը ավելի հեշտ տանի սա և, տեսնելով, որ իմ մարմինը այրում են և թաղում, չտանջվի ինձ համար,

կարծելով, թե սարսափելի բան եմ կրում, և չասի հուղարկավորության ժամանակ, թե տեղավորում է, դուրս է բերում և թաղում է Սոկրատեսին: Քանզի լավ իմացիր, սիրելի՛ Կրիտոն, ճիշտը չասելը ոչ միայն ինքնին հանցանք է, այլև չարիք հոգիների համար: Պետք է արի լինել և ասել, որ թաղում են մարմինը, և թաղել այնպես, ինչպես հարմար ես գտնում և ինչպես կարգն է:

116

Այդ ասելով նա ոտքի ելավ և անցավ ուրիշ սենյակ լվացվելու, և Կրիտոնը հետևեց նրան, իսկ մեզ պատվիրեց սպասել: Մենք սպասում էինք՝ զրուցելով ասվածի և խորհելով կատարվածի մասին՝ մերթընդմերթ մտքով վերադառնալով մեզ պատուհասած դժբախտությանը, և անձար էինք, ինչպես հայրակորույսներն ու ողջ կյանքում որբ մնացածները:

Երբ Սոկրատեսը լվացվեց, նրա մոտ բերեցին որդիներին: **b**
Նրանցից երկուսը փոքր էին, մեկը՝ մեծ: Եկան նաև տան կանայք: Սոկրատեսը Կրիտոնի ներկայությամբ ինչ-որ բան ասաց նրանց և կարգադրություն արեց, այնուհետև պատվիրեց կանանց ու որդիներին հեռանալ, իսկ ինքը եկավ մեզ մոտ:

Մոտ էր մայրամուտի ժամը: Նա երկար ժամանակ մնաց ներսի սենյակում: Լվացումից հետո նա նստեց և այլևս համարյա չխոսեց: Ներս մտավ Տասնմեկի սպասավորը, կանգնեց նրա առաջ և ասաց.

– Ո՛վ Սոկրատես, չեմ բողոքի քեզնից, ինչպես մյուսներից, որոնք դառնացած հայիոյում են ինձ, երբ ենթարկվելով իշխանություններին՝ կարգադրում եմ խմել թույնը: Իսկ քեզ այսքան ժամանակ ճանաչում եմ իբրև ամենաազնիվ, հեզ ու առաքինի մարդու այստեղ երբևիցե եղածներից և այժմ լավ գիտեմ, որ չես բարկանա ինձ վրա, որովհետև գիտես մեղավորներին և նրանց վրա ես բարկանում: Քեզ հայտնի է, ինչ լուր եմ եկել հաղորդելու: Մնաս բարով և փորձիր որքան կարելի է թեթև տանել անխուսափելին: **c**

- d Եվ արտասովորով շրջվեց, որ հեռանա: Սոկրատեսը նայելով նրան՝ ասաց.
- Դու էլ բարով մնաս, իսկ ես կանեմ ինչպես ասում ես: Այնուիետև նայելով մեզ ասաց.
 - Որքան պարկեշտ մարդ է: Ամբողջ ժամանակ այցելում էր ինձ և երբեմն զրուցում. հրաշալի մարդ: Իսկ հիմա որքան անկեղծ է արտասվում: Սակայն, Կրիտոն, լսենք նրան. և թող բերեն թույնը, եթե արդեն պատրաստ է, իսկ եթե ոչ, թող պատրաստեն:
- Եվ Կրիտոնն ասաց.
- e – Բայց արևը, կարծես, սարերից վեր է և դեռ մայր չի մտել, Սոկրատես: Իսկ ես գիտեմ, որ ուրիշները հրամանից շատ ավելի ուշ են ընդունել թույնը: Նրանք ընթրում էին, խմում ու կենակցում, ում հետ ցանկանային: Մի՛ շտապիր, դեռ ժամանակ կա:
- Իսկ Սոկրատեսը պատասխանեց.
- Պարզ է, Կրիտոն, որ այդպես էին վարվում, քանզի նրանք, որոնց մասին ասում ես, կարծել են, թե այդպես ինչ-որ բան են շահում, և պարզ է նաև, թե ինչու ես չեմ անի դա: Չէ՞ որ չեմ կարծում, թե ավելի ուշ ընդունելով թույնը, ինչ-որ բան կշահեմ, այլ միայն ծիծաղելի կդառնամ ինքս իմ աչքում՝ կառչելով կյանքից ու դողալով ոչնչի վրա: Ո՛չ, լսիր ինձ և արա ինչ ասում եմ:
- Կրիտոնը լսելով նրան՝ նշան արեց մոտ կանգնած ստրուկին, որը բերեց տրորված թույնով թասը: Տեսնելով նրան՝ Սոկրատեսն ասաց.
- Բարի՛ մարդ, դու գիտե՞ս, թե ինչ պետք է անել:
 - Առանձնապես ոչինչ,– պատասխանեց սա,– խմելուց
- b հետո քայլիր, մինչև որ ծանրություն զգաս ոտքերում, հետո պառկիր: Թույնը ինքը կանի իր գործը:
- Նա թասը պարզեց Սոկրատեսին: Սոկրատեսը վերցրեց այն շատ հանգիստ, էքեկրատես, ո՛չ դողաց, ո՛չ դժգոհեց, ո՛չ էլ փոխեց դեմքի արտահայտությունը, այլ սովորականի

նման անթարթ նայեց այդ մարդուն և հարցրեց.

– Ինչ ես կարծում, այս բաժակով կարելի՞ է հեղում կատարել աստվածներից որևէ մեկի պատվին⁵⁸, թե՞ ոչ:

– Մենք, Սոկրատես, տրորում ենք այնքան, որքան պետք է խմելու համար:

– Հասկանում եմ, բայց աղոթել աստվածներին և՛ կարելի է, և՛ պետք է, որպեսզի այս աշխարհից այն աշխարհ վերաբնակությունը հաջող լինի: Դրա համար եմ աղոթում. և թո՛ղ այդպես լինի:

Ասելով դա՝ բարձրացրեց թասը և խմեց հեշտ ու հանգիստ: Մինչ այդ մեզնից շատերը դեռ ի վիճակի էին զսպել իրենց, բայց երբ տեսանք՝ ինչպես է խմում, այլևս չդիմացանք: Արցունքները առատորեն հոսեցին իմ աչքերից, ես ծածկեցի երեսս թիկնոցով ու ողբում էի ինքս ինձ, ոչ թե նրան, այլ իմ չար բախտը՝ այդպիսի բարեկամի կորուստը: Կրիտոնը դեռ նախքան իմ արտասվելը ոտքի կանգնեց, արցունքները զսպելու անկարող: Իսկ Ապոլլոդորոսը, որ մինչ այդ էլ անդադար լալիս էր, հեկեկաց ու աղաղակեց՝ սիրտ պատռելով բոլորիս, բացի Սոկրատեսից, որն ասաց.

– Այդ ի՞նչ եք անում, զարմանալի՛ մարդիկ: Ես գլխավորապես այդ պատճառով հեռացրեցի կանանց, որ նման սխալ չանեն: Լսել եմ, որ մեռնել պետք է բարեպաշտ լուրջության մեջ: Լուռ կացեք և եղեք քաջ:

Մենք ամաչեցինք և դադարեցինք լացել:

Սոկրատեսը քայլում էր, հետո ասաց, որ ոտքերը ծանրանում են, և պառկեց մեջքին: Այդպես էր պատվիրել այն մարդը: Սա դիպավ նրա ոտքերին և սրունքներին, հետո ուժեղ սեղմեց ոտքերը և հարցրեց՝ զգում է արդյոք: Սոկրատեսը պատասխանեց, որ չի զգում:

Դրանից հետո դարձյալ սեղմեց սրունքները և ցույց տվեց մեզ, որ սառչում են ու փայտանում: Մեկ անգամ էլ դիպավ Սոկրատեսին. ասաց, որ երբ սառնությունը հասնի սրտին, նա կհեռանա: Սառնությունն արդեն մոտ էր

որովայնին, և բացվելով,– քանզի ծածկված էր,– Սոկրատեսն ասաց.

– Կրիտո՛ն, Ասկլեպիոսին⁵⁹ աքլոր ենք պարտք: Տվե՛ք, չմոռանա՛ք:

– Կանենք,– ասաց Կրիտոնը,– բայց տես, ուրիշ ի՞նչ ունես ասելու:

Այդ հարցին Սոկրատեսն արդեն չպատասխանեց: Քիչ անց նա շարժվեց, և վերակացուն բարձրացրեց թիկնոցը. հայացքը կանգ էր առել: Տեսնելով դա՛ Կրիտոնը փակեց նրա բերանն ու աչքերը:

Այդպիսին էր մեր բարեկամի վախճանը, էքեկրա՛տես, մի մարդու, որ,– կարող ենք ասել,– երբևէ մեր իմացածներից ամենաազնիվն էր և ընդհանրապես՝ ամենաիմաստունն ու ամենաարդարը:



ԽՆԶՈՒՅՔ

ԱՊՈԼԼՈԴՈՐՈՍ, ՆՐԱ ԲԱՐԵԿԱՍԸ

Ես կարծես թե պատրաստ եմ ձեր հարցերին¹: Օրերս 172
այնպես պատահեց, որ Փալերոնից² բարձրանում էի դեպի
քաղաք: Ծանոթներիցս մեկը ետևից տեսնելով ինձ՝ հեռվից
ձայն տվեց ու կատակելով կանչեց.

– Ո՛վ փալերոնցի³, որ Ապոլլոդորոսն ես, սպասի՛ր:

Ես կանգ առա և սպասեցի:

– Ապոլլոդորոս,– ասաց նա,– հենց քեզ էի փնտրում, որ
հարցուփորձ անեմ Ագաթոնի մոտ եղած խնջույքից, որին
ներկա էին Սոկրատեսը, Ալկիբիադեսը⁴ և ուրիշներ, և իմա- b
նամ, թե այդ ինչ զրույցներ եք ունեցել սիրո մասին: Ինձ
պատմել է մի մարդ, որն այդ մասին լսել է Փիլիպպոսի
որդի Փյունիկից⁵: Նա ասաց, որ դու էլ տեղյակ ես այդ
զրույցներից: Ինքը կարգին ոչինչ չկարողացավ պատմել,
այնպես որ դու պատմիր ինձ այդ մասին, քանզի ինչ կա
ավելի արդար, քան այդպիսի բարեկամի ճառերը հաղորդե-
լը: Բայց նախ ասա ինձ, ինքդ ներկա եղե՞լ ես այդ խնջույ-
քին, թե՞ ոչ:

Ես պատասխանեցի.

– Ինչպես երևում է, պատմողը ընդհանրապես ոչ մի c
ստույգ բան չի հաղորդել, եթե կարծում ես, թե խնջույքը,
որի մասին հարցնում ես, տեղի է ունեցել վերջերս և ես
կարող էի այնտեղ ներկա լինել:

– Այդպես էլ կարծում էի:

173 – Ինչպե՞ս թե, Գլավկոն⁶: Մի՞թե չգիտես, որ շատ տարիներ արդեն Ագաթոնն այստեղ չի ապրում⁷, իսկ այն բանից հետո, ինչ ես սկսեցի շփվել Սոկրատեսի հետ և ամեն օր հետևել, թե ինչ է անում ու ասում⁸, երեք տարի էլ չի անցել: Մինչ այդ շրջում էի ուր պատահի և կարծում, թե պիտանի ինչ-որ բան եմ անում, բայց խղճալի էի, ինչպես դու հիմա, որ կարծում ես, թե արածդ ավելին է, քան փիլիսոփայությունը:

– Մի՛ ծաղրիր ինձ,– պատասխանեց նա,– այլ ասա, թե երբ տեղի ունեցավ այդ խնջույքը:

– Մեր մանկության օրերին⁹, Ագաթոնի առաջին ողբերգության տարած հաղթանակը խորևտների¹⁰ հետ զոհաբերությամբ նշելու հաջորդ օրը:

– Ուրեմն բավականին վաղուց է եղել: Բայց ո՞վ է պատմել քեզ, մի՞թե ինքը Սոկրատեսը:

b – Ոչ, Ջևաը վկա, նա, ով պատմել է Փյունիկին՝ կիդաթենցի Արիստոդեմոսը¹¹՝ փոքրամարմին, միշտ ոտաբորիկ: Նա ներկա էր խնջույքին, որովհետև, որքան գիտեմ, Սոկրատեսի այն ժամանակվա ամենաջերմ երկրպագուներից էր: Ամեն դեպքում, ես Սոկրատեսին էլ եմ հարցրել Արիստոդեմոսից լսածի մասին, և նա հաստատել է նրա պատմությունը:

– Ուրեմն, պատմիր ինձ էլ: Քաղաք գնալու ճանապարհին հարմար է խոսել ու լսել:

c Այդպես քայլելով գրուցում էինք այդ մասին: Եվ ինչպես ասացի սկզբում, պատրաստ եմ ձեզ էլ պատմել, այնպես որ, եթե ցանկանում եք, թող այդպես լինի: Քանզի ընդհանրապես, երբ խոսքը փիլիսոփայության մասին է, ես առանձնահատուկ ուրախություն եմ ապրում, անկախ այն բանից՝ ինքս եմ խոսում, թե լսում եմ, էլ չեմ ասում այն օգուտի մասին, որ հույս ունեմ քաղել այդտեղից: Իսկ երբ լսում եմ այլ կարգի ճառեր, ինչպիսին են ձեր՝ հարուստներիդ ու փողատերերիդ ճառերը, և՛ ինքս եմ վշտանում, և՛ ձեզ եմ խղճում՝ իմ բարեկամներին, որ կարծում եք, թե ինչ-որ բան

եք անում, բայց ոչինչ էլ չեք անում: Գուցե դուք էլ ինձ եք դժբախտ համարում, և գուցե ծիշտ էլ անում եք: Բայց որ դուք դժբախտ եք, ես ոչ թե կարծում եմ, այլ լավ գիտեմ:

– Միշտ նույնն ես, Ապոլլոդորոս: Միշտ մեղադրում ես և՛ ինքդ քեզ, և՛ ուրիշներին, և թվում է, Սոկրատեսից բացի բոլորին անխտիր նողկալի ես համարում, հատկապես ինքդ քեզ: Թե ինչի համար ես ստացել «խենթ» մականունը, ես չգիտեմ, համենայն դեպս քո ծառերում դու միշտ այդպիսին ես, հարձակվում ես ինքդ քեզ և ուրիշների վրա, բացի Սոկրատեսից:

– Սիրելիս, պարզ չէ՞, որ իմ և ուրիշների մասին այդպես մտածելով պիտի որ խենթանամ ու կորցնեմ գլուխս:

– Չարժե հիմա, Ապոլլոդորոս, վիճել այդ առիթով: Արա այն, ինչ խնդրեցի, և պատմիր, թե ինչ ծառեր են ասվել [խնջույքի ընթացքում]:

– Կարծես՝ դրանք այսպիսին էին... Բայց ավելի լավ է պատմեմ ամենասկզբից, ինչպես Արիստոդեմոսն է պատմել ինձ:

[Մի օր] նա հանդիպեց Սոկրատեսին, որը լոգանք էր ընդունել և սանդալ հագել,– մի բան, որ հազվադեպ էր պատահում,– և հարցրեց նրան, թե ուր է գնում այդպես զուգված-զարդարված:

Սա պատասխանեց.

– Ընթրիքի՝ Ագաթնի մոտ: Երեկ ես փախա հաղթանակի տոնակատարությունից՝ վախենալով ամբոխից, սակայն խոստացա ներկա լինել այսօր: Զուգվել եմ, որպեսզի գեղեցիկին գեղեցիկ ներկայանամ: Իսկ դու չե՞ս ուզում անկոչ գալ ընթրիքի:

– Ինչպես կիրամայես,– պատասխանեց Արիստոդեմոսը:

– Ուրեմն գնանք,– ասաց Սոկրատեսը,– շրջենք ասացվածքը և ցույց տանք, որ «առաքինի մարդկանց խնջույքին առաքինիներն ինքնակամ են գնում»¹²: Իսկ Զոմերոսը ոչ միայն խեղաթյուրել է այդ ասացվածքը, այլև ծանակի

ենթարկել, քանզի Ազամեմնոնին դարձրել է պատերազմի առաքինի այր, իսկ Մենելաոսին՝ «թույլ տեգավոր»: Յոմերոսն
 c այդպես է արել, որպեսզի Մենելաոսը անկոչ գա Ազամեմնոնի մոտ, երբ սա զոհ էր մատուցում ու խնջույք տալիս¹³: Պակաս առաքինին գնաց առաքինու մոտ:

Լսելով դա՝ Արիստոդեմոսն ասաց.

– Գուցե ասածիդ հակառակ ես՝ սխալականս, ինչպես Յոմերոսն է ասում, գնամ իմաստուն այրի մոտ անկոչ: Ինձ հետդ տանելով՝ դու պետք է ինչ-որ կերպ արդարանաս,
 d քանզի ես չեմ խոստովանի, թե անկոչ եմ եկել, այլ կասեմ, որ դու ես ինձ հրավիրել:

– «Երկուսով ճամփա ընկնելով»¹⁴,– ասաց նա,– մենք կորոշենք, ինչ ասել: Գնա՛նք:

Այսպես գրուցելով՝ նրանք ուղևորվեցին:

Սոկրատեսը ճանապարհին մտքերով տարված ետ էր մնում և իրեն սպասող Արիստոդեմոսին կարգադրում առաջ
 e գնալ: Իսկ երբ Արիստոդեմոսը հասավ Ագաթոնի տանը, դուռը բաց էր, և ինչպես ինքն է ասում՝ զավեշտական մի բան պատահեց: Նրան իսկույն դիմավորեց ներսից եկած ստրուկը և ուղեկցեց մյուսների մոտ, որոնք արդեն ընկողմանել էին և պատրաստվում էին ընթրել: Տեսնելով նրան՝ Ագաթոնն ասաց.

– Ո՛վ Արիստոդեմոս, շատ հարմար պահի ես եկել, կընթրես մեզ հետ: Իսկ եթե այլ պատճառով ես եկել, թո՛ղ այդ գործը հետագայի համար, քանզի ես արդեն երեկ փնտրել եմ քեզ, որ հրավիրեմ, բայց ոչ մի տեղ չեմ գտել: Իսկ Սոկրատեսին չե՞ս բերել այստեղ:

Եվ ես,– շարունակեց Արիստոդեմոսը,– շրջվեցի, բայց Սոկրատեսին չտեսա: Ասացի, որ նրա հետ եմ եկել և նա է ինձ այստեղ ընթրիքի հրավիրել:

– Լավ ես արել, որ եկել ես, բայց ու՞ր է նա:

175 – Յենց նոր իմ ետևից ներս մտավ: Ինքս էլ եմ զարմանում, թե որտեղ է:

– Տես, ուր է,– ասաց Ագաթոնը ստրուկին,– և ներս

ուղեկցիր: Իսկ դու, Արիստողեմոս, նստիր Էրիքսիմաքոսի¹⁵ կողքին:

Ստրուկը լվաց նրա ոտքերը, որպեսզի նա կարողանա ընկողմանել:

Սակայն մեկ ուրիշ ստրուկ ներս մտավ և հաղորդեց, որ Սոկրատեսը ետ է դարձել, կանգնել է հարևան տան շեմին և չի ուզում ներս գալ:

– Տարօրինակ բան ես ասում,– զարմացավ Ագաթոնը,– նորից կանչիր նրան և բաց մի՛ թող:

– Պետք չէ,– ասաց Արիստողեմոսը,– հանգիստ թողեք նրան. այդպիսի սովորություն ունի: Պատահում է, կանգ է առնում մի տեղ և մնում այդպես կանգնած: Կարծում եմ, շուտով կգա, միայն թե մի՛ անհանգստացրեք նրան:

– Եթե այդպես ես կարծում, թող քո ասածով լինի,– պատասխանեց Ագաթոնը,– իսկ մեզ, ծառաներ, ուտեստներ բերեք: Բերեք ամեն բան, ինչ կցանկանաք, քանզի ձեր գլխին վերակացու չունեք (ես դա երբեք թույլ չեմ տվել): Զամարեք, որ թե՛ ինձ, թե՛ մյուսներին դուք եք հրավիրել ընթրիքի, այնպես որ հոգ տարեք մեր մասին, որպեսզի արժանանաք մեր գովեստին:

Դրանից հետո նրանք սկսեցին ընթրել, իսկ Սոկրատեսը չէր գալիս: Ագաթոնը մի քանի անգամ ուզում էր ուղարկել նրա ետևից, բայց Արիստողեմոսը թույլ չէր տալիս: Սոկրատեսը եկավ ըստ իր սովորության ոչ շատ ուշ, ընթրիքի կեսից: Ագաթոնը, որ միայնակ ընկողմանել էր եզրից, ասաց.

– Մոտեցի՛ր, Սոկրատես: Նստիր կողքիս, որպեսզի ինձ էլ բաժին հասնի այն իմաստությունից, որ այցելեց քեզ շեմին: Քանզի ակնհայտ է, որ գտար այն և տիրեցիր, այլապես չէիր գա:

Սոկրատեսը նստելով ասաց.

– Լավ կլիներ, ո՛վ Ագաթոն, եթե իմաստությունն այնպիսին լիներ, որ միմյանց դիպչելիս դրանով առավել լեցունից հոսեր պակաս լեցունի մեջ, ինչպես լիքը անոթից ջուրը

թելի միջով լցվում է դատարկի մեջ: Եթե իմաստությունն
 e այդպիսին է, ապա շատ են գնահատում քո կողքին նստելը:
 Կարծում են, որ քեզնից կլցվեն ամբողջական և հրաշալի
 իմաստությամբ: Քանզի իմը մի տեսակ թերի է և կասկա-
 ծելի, ինչպես երազը, իսկ քոնը փայլուն է և հաջողություն
 է բերում: Չնայած երիտասարդ տարիքիդ, ինչ ուժեղ երևաց
 ու փայլեց երեսուն հազարից ավելի հեղինակների առաջ¹⁶:

– Ծաղրում ես, Սոկրատես,– ասաց Ագաթոնը,– քիչ
 անց դատավոր վերցնելով 'Դիոնիսոսին' մենք դեռ կվիճենք
 իմաստության մասին¹⁷: Իսկ այժմ մոտեցիր սեղանին:

176 Այնուհետև, երբ Սոկրատեսն ընկողմանեց, բոլորն ընթ-
 րեցին, հեղում կատարեցին՝ փառաբանելով աստծուն, այլ
 ընդունված բաներ արեցին և անցան խմիչքին:

Այդժամ Պալսանիասն¹⁸ այսպես ասաց.

– Ո՛վ այրեր, եկեք քիչ խմենք: Պիտի ասեմ, որ ինքս
 շատ վատ եմ ինձ զգում երեկվա գինարբուքից հետո և
 դադարի կարիք ունեմ, կարծում եմ՝ նաև ձեզնից շատե-
 րը, քանի որ դուք էլ երեկ ներկա էիք: Մտածեք, ինչպես
 b անենք, որ քիչ խմենք:

Արիստոփանեսն¹⁹ ասաց.

– Ճիշտ ես ասում, Պալսանիաս: Պետք է ամեն կերպ
 փորձել քիչ խմել: Ես նույնպես երեկ շատ խմեցի:

Այդ լսելով Էրիքսիմաքոսը՝ Ակումենոսի որդին, ասաց.

– Ճիշտ եք ասում: Բայց մենք պետք է լսենք ևս մեկին:
 Ի՞նչ է մտածում խմելու մասին Ագաթոնը:

– Ոչ, ես նույնպես ի վիճակի չեմ խմելու,– պատասխանեց
 Ագաթոնը:

c – Ուրեմն,– շարունակեց Էրիքսիմաքոսը,– իմ, Արիստոդե-
 մոսի և Ֆեդրոսի²⁰ բախտը բերել է, եթե դուք՝ ամենակարող
 խմողներդ, հրաժարվում եք խմիչքից: Չէ՞ որ մենք թույլ
 խմողներ ենք: Սոկրատեսը հաշվից դուրս է, նա կարող է
 և՛ խմել, և՛ չխմել, ուստի ինչ էլ անենք, բավարարված կմնա:
 Իսկ քանի որ ներկաներից ոչ ոք չի ցանկանում շատ գինի

խմել, տեղին կլինի, որ ճշմարտությունն ասեմ հարբեցողության մասին: Բժշկությունից ինձ հայտնի է, որ հարբելը մարդկանց համար վատ է: Ո՛չ ես եմ ցանկանում խմել, ո՛չ էլ մեկ ուրիշին խորհուրդ կտայի, մանավանդ եթե երեկվանից հետո խումարի մեջ է:

– Սակայն,– ընդմիջեց միրինուսցի Ֆեդրոսը,– ես միշտ էլ լսում եմ քեզ, հատկապես երբ խոսում ես բժշկությունից: Իսկ հիմա մյուսները, եթե լավ մտածեն, նույնպես կհամաձայնեն քեզ:

Այդ լսելով՝ բոլորը պայմանավորվեցին գինարբուքի չվերածել այդ խնջույքը և խմել միայն հաճույքի համար:

– Այժմ,– ասաց Էրիքսիմաքոսը,– երբ որոշեցինք, որ յուրաքանչյուրս խմի, որքան ցանկանում է, առանց պարտադրանքի, ես առաջարկում եմ ետ ուղարկել հենց նոր ներս մտած ֆլեյտահարուհուն: Թող նվագի ինքն իր համար, եթե կուզի, կամ ներսում եղած կանանց համար, իսկ մենք ժամանակը կանցկացնենք գրուցելով: Եթե ցանկանում եք, ես կառաջարկեմ գրույցի նյութը:

Բոլորն ասացին, որ ցանկանում են, և խնդրեցին, որ առաջարկի: Էրիքսիմաքոսն ասաց.

– Իմ խոսքը կսկսեմ, ինչպես Եվրիպիդեսի Մելանիպպեն. «Դուք կլսեք ոչ թե իմ խոսքը»²¹, այլ այս Ֆեդրոսի: Նա հաճախ է բարկացած ասել ինձ. «Ո՛վ Էրիքսիմաքոս, մի՞թե զարմանալի չէ, որ մյուս աստվածներին հիմներ և պեաններ²² ձոնելով՝ պոետներից ոչ ոք,– իսկ նրանք շատ են,– նույնիսկ գովեստի խոսք չի ընծայել Էրոսին²³ այդ մեծ աստծուն: Կամ վերցնենք մեր արգո սոփեստներին, որոնք գրավոր փառաբանում են Յերակլեսին և ուրիշներին, ինչպես անում է պատվական Պրոդիկոսը²⁴: Դա դեռ այնքան էլ զարմանալի չէ, սակայն ինձ պատահել է մի գիրք, որում խոսվում էր այն մասին, թե որքան օգտակար է աղը: Եվ նման այլ շատ բաներ կարող եք տեսնել, որ փառաբանվում են, սակայն Էրոսին մարդկանցից ոչ ոք մինչ օրս չի

համարձակվել փառաբանել ըստ արժանվույն, և այդպիսի աստվածը մնում է անտեսված»: Ինձ թվում է, Ֆեդրոսը ճիշտ է ասում: Եվ ես ցանկանում եմ հաճույք պատճառել նրան, քանզի կարծում եմ, տեղին կլինի, եթե ներկաները

d հարգանքի տուրք մատուցեն այդ աստծուն: Եթե համակարծիք եք ինձ, մենք, զրույց անելով, բավական լավ ժամանակ կանցկացնենք: Իմ կարծիքով, սկսելով աջ կողմից՝ յուրաքանչյուրս պետք է գովեստի խոսք ասի Էրոսին, և թո՛ղ առաջինը լինի Ֆեդրոսը, քանի որ և՛ առաջինն է նստած, և՛ այս զրույցի հայրն է:

– Քեզ ոչ ոք չի հակաճառի, Էրիքսիմաքոս,– ասաց Սուկրատեսը,– ո՛չ ես, որ սիրային բաներից զատ ոչինչ չգիտեմ,

e ո՛չ Ագաթոնը և Պավսանիասը, ո՛չ էլ մանավանդ Արիստոփանեսը, որի ողջ զբաղմունքը կապված է Դիոնիսոսի և Ափրոդիտեի²⁵ հետ, ո՛չ էլ որևէ մեկը նրանցից, ում տեսնում եմ: Թերևս մենք՝ ետևում ընկողմանածներս, հավասար պայմաններում չենք: Սակայն եթե մեր առջևինները բավականաչափ լավ խոսեն, կգոհանանք և դրանով: Ուրեմն բարին ընդ մեզ, սկսի՛ր, Ֆեդրոս, և փառաբանի՛ր Էրոսին:

178 Ներկաները համաձայնեցին Սուկրատեսի առաջարկին: Բոլորի ասածները մանրամասնությամբ ո՛չ Արիստոփեմոսը, ո՛չ էլ ես չենք հիշել: Յուրաքանչյուրի ճառից ես կպատմեմ ձեզ ամենից հիշարժան դրվագները:

Առաջինը, ինչպես ասացի, խոսեց Ֆեդրոսը: Նա սկսեց, ասելով, որ Էրոսը մեծ աստված է՝ բազում առումներով մարդկանց և աստվածների համար զարմանալի, և հատկապես իր ծննդյան առումով: Չէ՞ որ աստվածների մեջ ամե-

b նաավագի փառքը այս աստծունն է: Դրա ապացույցն այն է, որ նրա ծնողների մասին չի հիշատակում ո՛չ պատմիչը, ո՛չ պոետը: Յեսիոդոսն ասում է, որ սկզբում եղել է Քաոսը²⁶, իսկ այնուհետև

*Լայնալանջ Գեան՝ ամենի ապահով հենքը հավերժական,
Եվ Էրոսը...²⁷*

Յեսիողոսին համաձայն է նաև Ակուսիլաոսը: Նա ասում է, որ Քաոսից հետո ծնվել են Գեան և Էրոսը: Իսկ Պարմենիդեսը ծնունդի մասին ասում է.

Առաջինը աստվածներից Էրոսին ծնեց²⁸:

Այսպես, շատերն են համաձայն, որ Էրոսը հնագույն աստվածներից է: Լինելով հնագույններից՝ մեզ համար ամենամեծ բարիքների աղբյուր է, քանզի ես չգիտեմ ավելի մեծ բարիք երիտասարդի համար, քան արժանի սիրահարը, և սիրահարի համար՝ արժանի պատանին²⁹: Չէ՞ որ մարդկանց, որոնք ամբողջ կյանքում ճիշտ ապրելակերպ են վարում, ո՛չ հարազատները, ո՛չ պատիվները, ո՛չ հարստությունը, ո՛չ էլ որևէ այլ բան չեն բավարարում այնքան, որքան սերը: Ասեմ, թե ինչ է դա, — ամաչել ամոթալիից և ձգտել գեղեցիկին: Քանզի առանց դրա ո՛չ պետությունը, ո՛չ էլ առանձին մարդը մեծ և գեղեցիկ գործ չի անի: Ասում եմ, որ եթե սիրող մարդը ամոթալի արարք գործի կամ վախկոտության պատճառով չհատուցի կրած վիրավորանքի դիմաց, պակաս չափով կտառապի, եթե դա հայտնի դառնա իր հորը, ընկերոջը կամ ուրիշ մեկին, բայց ոչ սիրեցյալին: Նույնը տեսնում ենք նաև սիրեցյալի դեպքում, որը հատկապես ամաչում է իր սիրահարից, եթե վերջինիս հայտնի է դառնում ամոթալի արարքը: Եվ եթե հնարավոր լիներ սիրահարներից ու սիրեցյալներից պետություն կամ բանակ կազմել, նրանք կլինեին լավագույն քաղաքացիները և կխուսափեին ամեն ամոթալիից և կձգտեին գերազանցել միմյանց: Մարտնչելով միասին, անգամ սակավաթիվ լինելու դեպքում, նրանք կհաղթեին ամեն թշնամու³⁰: Չէ՞ որ սիրող մարդուն առավել ծանր է լքել շարքը և գցել զենքը սիրեցյալի ներկայությամբ, քան ուրիշ որևէ մեկի, ահա ինչու շատ հաճախ նա գերադասում է մահը: Չկա մեկը, որ կթողնի սիրեցյալին և վտանգի դեպքում չի հասնի նրան օգնության, քանզի Էրոսը քաջություն է ներշնչում նրան և նմանեցնում

c

d

e

179

- ի ծնե քաջին: Եվ կասկածից վեր է, որ Յոննեսը, խոսելով
- b** «խիզախության մասին, որ ներշնչում է» աստված որոշ հերոսների³¹, նկատի ունի, որ խիզախություն սիրահարներին տալիս է Էրոսը:

- Միմյանց համար մեռնել պատրաստ են միայն սիրահարները, և ոչ միայն այրերը, այլև կանայք: Այսպես, հելլեններից Պելիոսի դուստր Ալկեստիսը³² համոզիչ կերպով ապացուցում է դա, քանզի միայն նա ցանկացավ մեռնել իր ամուսնու համար, որի հայրը և մայրը դեռ կենդանի էին: Նա այնքան գերազանցեց վերջիններիս սիրո մեջ իրենց
- c** որդու նկատմամբ, որ ապացուցեց՝ նրանք օտար են իրենց որդուն և միայն անունով են նրա հարազատները: Այդ արարքը գեղեցիկ համարեցին ոչ միայն մարդիկ, այլև աստվածները, և նրանք, որ գեղեցիկ գործեր արած բազում մարդկանցից միայն ընտրագույններին են իրավունք տվել հոգու վերադարձ Յադեսից³³, Ալկեստիսի հոգին վերադարձ
- d** ձրին՝ հիացած նրա արարքից: Այնպես որ աստվածները նույնպես բարձր են գնահատում սիրո մեջ անվեհերությունն ու առաքինությունը: Իսկ Օրփեոսին՝ Էագրոսի որդուն³⁴, ձեռնունայն արձակեցին Յադեսից, միայն ցույց տալով ուրվականն իր կնոջ, որի ետևից եկել էր, բայց կնոջը չվերադարձրին, համարելով, որ իբրև կիթառահար՝ նա չափից ավելի փափկակյաց է դարձել և չի հանդգնում մեռնել հանուն սիրո, ինչպես Ալկեստիսը, այլ հնար է գտել կենդանի մտնելու Յադես: Ահա ինչու պատժեցին նրան, այնպես
- e** անելով, որ ստանա իր մահը կանանց ձեռքից, իսկ Աքիլլեսին՝ Թետիսի որդուն, փառքով պսակեցին և ուղարկեցին Երանելիների կղզիներ³⁵: Իմանալով մորից, որ Յեկտորին սպանելու դեպքում մեռնելու է, իսկ չսպանելու դեպքում կվերադառնա տուն ու կապրի մինչև խոր ծերություն, նա համարձակություն ունեցավ օգնության հասնել սիրելի Պատրոկլոսին³⁶ և, վրեժխնդիր լինելով, ընդունել մահը ոչ միայն նրա փոխարեն, այլև նրանից հետո: Եվ որովհետև ամեն

ինչ արեց իր սիրելիի համար, աստվածները փառքի արժանացրին նրան: Էսքիլոսը ցնորաբանում է, երբ ասում է, թե Աքիլլեսը սիրահարված էր Պատրոկլոսին. Աքիլլեսը ոչ միայն ավելի գեղեցիկ էր Պատրոկլոսից, ինչպես և բոլոր հերոսներից, այլ նաև շատ ավելի երիտասարդ, քանզի դեռ անմորուս էր, ինչպես ասում է Յուներուր: Իրոք, աստվածները ամենից շատ սիրո մեջ գնահատում են առաքինությունը և ավելի շատ զարմանում, հիանում ու բարեգործում են, երբ սիրեցյալն է հավատարիմ սիրահարին, քան երբ սիրահարն՝ իր սիրեցյալին: Չէ՞ որ սիրահարը ներշնչված է աստծուց: Ահա ինչու Աքիլլեսին ավելի շատ պատվեցին, քան Ալկեստիսին, և ուղարկեցին Երանելիների կղզիներ: Կրկնում եմ, Էրոսը հնագույն, ամենափառավորն ու զորեղն է աստվածներից, որ կարող է առաքինություն ու երջանկություն շնորհել մարդկանց՝ կյանքի օրոք թե հետմահու:

b

Ահա այսպիսի ճառ ասաց Ֆեդրոսը: Նրանից հետո խոսեցին ուրիշները, բայց նրանց ճառերը Արիստոդեմոսը լավ չէր հիշում, ուստի բաց թողնելով դրանք՝ նա սկսեց վերապատմել Պալսանիասի ճառը:

c

– Ինձ թվում է, Ֆեդրոս, լավ չենք սկսել մեր զրույցը, ցանկանալով Էրոսին փառաբանել այդքան ընդհանուր ձևով, քանզի Էրոսը մեկը չէ: Եվ քանի որ մեկը չէ, ավելի ճիշտ կլիներ նախ պարզել, թե որ Էրոսին ենք գովերգելու: Ես կփորձեմ այժմ ուղղել դա՝ ասելով, թե որ Էրոսին է պետք գովերգել, իսկ այնուհետև արժանի ձևով կփառաբանեմ այդ աստծուն: Բոլորս էլ գիտենք, որ առանց Էրոսի չկա Ափրոդիտե: Եթե Ափրոդիտեն մեկը լիներ, մեկը կլիներ նաև Էրոսը: Բայց քանի որ կա երկու Ափրոդիտե, պետք է լինի նաև երկու Էրոս: Այդ դիցուհիները երկուսն են: Մեկը ավագն է և անմայր. դա Ուրանոսի դուստրն է: Նրան կոչում են նաև Երկնային: Իսկ կրտսերը Ջևսի և Դիոնեի³⁷ դուստրն է, և նրան կոչում ենք Յանրային³⁸: Յետևաբար պետք է նաև երկու Ափրոդիտեներին գործակցող Էրոսներին կոչել

d

e

- երկնային և հանրային: Պետք է, իհարկե, գովերգել բոլոր աստվածներին, և ես կփորձեմ բնորոշել այս երկուսից յուրաքանչյուրին: Ամեն գործ այնպիսին է, որ ինքնին ո՛չ լավն է, ո՛չ էլ ամոթալի: Օրինակ՝ այն, ինչ այժմ անում ենք՝ թե՛ խմելը, թե՛ երգելը, թե՛ գրուցելը, գեղեցիկ է ոչ թե ինքնին, այլ գործի մեջ, նայած, թե ինչպես է արվում: Եթե լավ է արվում և ճիշտ, լավն է դառնում, իսկ եթե ոչ՝ ամոթալի է: Այդպես է նաև սերը. ամեն էրոս գեղեցիկ և փառաբանման արժանի չէ, այդպիսին է միայն այն էրոսը, որը գեղեցիկ սեր է արթնացնում:
- b** Հանրային Ափրոդիտեի էրոսն ըստ էության հանրային է և կարող է անել, ինչ պատահի: Դա այն սերն է, որով սիրում են հոռի մարդիկ: Նախ՝ այդպիսիք կանանց սիրում են ոչ պակաս, քան պատանիներին, այնուհետև՝ սիրում են ավելի շատ մարմինը, քան հոգին, և, բացի այդ, ընտրում են ամենաանմիտներին, քանզի հոգ են տանում բացառապես մարմնական վայելքի, բայց ոչ այն մասին՝ գեղեցիկ է դա, թե ոչ: Ահա ինչու համաձայն են ամեն ինչ անել, միևնույն է՝ առաքինի է դա, թե ոչ: Չէ՞ որ այդ սերը մի աստվածուհուց է, որը ոչ միայն շատ ավելի երիտասարդ է, քան մյուսը, այլև իր ծնունդով հաղորդակից է և՛ իգականին, և՛ արականին: Իսկ երկնային էրոսը հաղորդակից չէ իգականին, այլ՝ միայն արականին. դա սեր է պատանիների հանդեպ: Բացի այդ, այն ավելի մեծ է և զերծ է լկտիությունից: Ահա ինչու այդ սիրուց ներշնչվածները միտվում են դեպի արականը, նախընտրելով այն, ինչը բնությունից ավելի ուժեղ է և ավելի բանական: Պատանիներին սիրողների մեջ
- d** նույնպես կարելի է ծանաչել նրանց, ովքեր առաջնորդվում են այս սիրով: Քանզի սիրում են ոչ թե մանուկներին, այլ նրանց, ովքեր արդեն միտք են դրսևորում: Իսկ դա սկսվում է այն տարիքում, երբ սկսում է աճել մորուքը: Կարծում եմ, նրանք, ովքեր սիրել են սկսել այդ ժամանակ, պատրաստ են միասին ապրել ողջ կյանքի ընթացքում: Նրանք չեն

խաբի պատանուն՝ օգտվելով նրա անխոհեմությունից, և ծիծաղելով չեն հեռանա ուրիշի մոտ: Պետք է լինի օրենք, որը կարգելի սիրել դեռահասներին, որպեսզի այդքան ջանք
 չվատնվի մի բանի վրա, որը չգիտես, թե ինչ է: Չէ՞ որ
 հայտնի չէ, թե ինչպիսին կլինի դեռահասի հոգու և մարմնի
 վերջը՝ լավ, թե վատ: Առաքինի մարդիկ իրենք են իրենց
 համար դնում այդ օրենքը, սակայն հարկ է պարտադրել
 այն նաև հանրային սիրաբաններին, ինչպես որ ստիպում
 ենք նրանց (կարեցածի չափ) չսիրել ազատ ծնված կանանց:
 Այդպիսիք այնքան են այլասերել սերը, որ ոմանք նույնիսկ
 ասում են, թե ամոթ է գոհացնել սիրողին: Բայց այդպես են
 ասում՝ աչքի առաջ ունենալով նման մարդկանց և տեսնելով
 նրանց անամոթությունն ու արատավորությունը, քանզի ինչ
 արվում է անկարգ և անօրեն ձևով, արժանի է կշտամբանքի:

e

182

Այլ պետություններում սիրային բարքերը հեշտ է հասկա-
 նալ, քանի որ հստակ սահմանված են: Իսկ այստեղ և Լա-
 կեդեմոնում դա դժվար է: Էլիսում, Բեռվոտիայում և ամենուր,
 որտեղ չկան իմաստուն ճառեր, ընդունված է պարզապես
 գոհացնել սիրահարներին, և ո՛չ երիտասարդը, ո՛չ ծերը չի
 ասում, թե դա ամոթալի է, կարծում են, որպեսզի երիտա-
 սարդներին խոսքով համոզելու գործ չստեղծեն, քանզի խոս-
 քի մեջ ուժեղ չեն: Իսկ Յոնիայում³⁹ և շատ այլ տեղերում,
 որտեղ բնակվում են բարբարոսներ, դա ամոթալի է համար-
 վում: Չէ՞ որ բարբարոսների համար իրենց բռնապետական
 կարգերի պատճառով ամոթալի է և՛ փիլիսոփայությունը, և՛
 մարմնամարզությունը: Կարծում են, այնտեղի իշխաններին
 ձեռնտու չէ, որ իրենց հպատակները մեծ մտահոլացումներ
 ունենան, որ ամուր ընկերություններ ու միություններ գոյա-
 նան, ինչի համար ուրիշ շատ բաների թվում հիմք է նաև
 սերը: Այդ մեկը սեփական փորձից իմացան նաև այստեղի
 տիրակալները: Չէ՞ որ Արիստոգիտոնի սերը և նրա հետ
 Յարմոդիոսի⁴⁰ սերտ բարեկամությունը վերջ դրեց նրանց
 իշխանությանը:

b

c

- Այսպիսով, սիրողներին գոհացնելը ամոթ է համարվում արատավորների պնդմամբ, որ գալիս է իշխողների շահա-
- d մոլությունից և հպատակների երկչոտությունից: Իսկ այնտեղ, ուր դա պարզապես հրաշալի է համարվում, գալիս է օրենքը հաստատողների հոգու պարապությունից: Մեր պետության մեջ դա ավելի լավ է հաստատված, սակայն, ինչպես ասացի, դյուրին չէ հասկանալու համար: Այսպես, օրինակ, ասում են, թե բացահայտ սերը ավելի լավ է, քան ծածուկը, և ավելի լավ է սիրել առավել ազնվագարմ և ազնվաբարո երիտասարդներին, անգամ եթե տգեղ են, և, բացի այդ, որ սիրողը բոլորի կողմից զարմանալի կարեկ-
- e ցանքի է արժանանում: Ոչ ոք չի մտածում, թե նա ամոթալի բան է անում, և սիրային հաղթանակը համարվում է բարիք, իսկ պարտությունը՝ ամոթ: Հաղթելու ձգտումներում օրենքը ազատություն է տալիս սիրահարին և հավանություն՝ նրա զարմանալի արարքներին, որոնք, եթե նա հանդգներ անել մեկ այլ բանի համար, ամեն դեպքում կշտամբանքի առիթ
- 183 կտային: Եթե հանուն դրամի, իշխանության կամ մեկ այլ շահի որևէ մարդ ցանկանա գործել, ինչպես սիրահարներն են գործում՝ սիրահետելով պատանիներին, ստորանալով աղաչանքներով ու պաղատանքներով, երդումներ տալով, թավալ գալով նրանց դռների առաջ՝ պատրաստ ստրկա-
- նալու նրանց այնպես, ինչպես ոչ մի ստրուկ չի ստրկանա, ապա նրան կխանգարեն դա անել և՛ ընկերները, և՛ թշնա-
- b միները: Առաջիները կկշտամբեն նրան և կամաչեն նրա փոխարեն, իսկ երկրորդները կմեղադրեն հաճոյակատարության ու ստորության մեջ: Իսկ սիրեցյալին այդ ամենը պատիվ է բերում, և օրենքը կշտամբանքի չի ենթարկում նրա գործողությունները, ասես նրա վարքն անթերի է: Ամենատարօրինակը, ինչպես ասում են շատերը, այն է, որ միայն սիրահարների երդմնազանցություններն են ներում աստվածները: Քանզի ասում են, որ սիրային երդումը երդում չէ: Այնպես
- c որ այստեղի օրենքի համաձայն և՛ աստվածները, և՛ մարդիկ

տալիս են սիրահարին ամեն իրավունք: Սրանից կարելի է եզրակացնել, որ սիրեցյալի նկատմամբ սերն ու բարեկամությունը մեր պետության մեջ համարվում է մեծագույն բարիք: Բայց եթե հայրերը վերակացուներ են կարգում, որպեսզի իրենց որդիներին արգելեն զրուցել սիրահարների հետ, իսկ հասակակիցներն ու ընկերները կշտամբում են նրանց նման զրույցների համար, ընդ որում ավագներն այդպիսի կշտամբանքները չեն մերժում որպես անարդար, ապա տեսնելով դա՝ կարելի է մտածել, թե այստեղ նույնպես նման բաները ամոթալի են համարվում: Սակայն ինձ թվում է, որ հարցն այդքան միանշանակ չէ: Ինչպես ասացի սկզբում, ոչինչ ինքնին ո՛չ լավ է, ո՛չ էլ ամոթալի: Եթե գեղեցիկ է կատարվում, լավ է, եթե ամոթալի է կատարվում, ամոթալի է: Ուստի վատ է հոռի մարդուն հաճոյանալը, իսկ արժանի մարդուն արժանիորեն գոհացնելը լավ է: Ստոր է այն հանրային սիրահարը, որը մարմինը հոգուց ավելի է սիրում: Եվ նա հաստատուն չէ, քանզի հաստատուն չէ նրա սիրո առարկան: Յենց որ մարմնի ծաղկունքն անցնի, իսկ նա հենց մարմինն էր սիրում, «թռչելով կփախչի»՝ արատավորելով իր ճառերն ու խոստումները: Իսկ նա, ով սիրում է արժանի բարքերի համար, հավատարիմ է մնում սիրեցյալին ամբողջ կյանքում, որովհետև կապվում է հաստատունին: Մեր օրենքը ձգտում է լավ փորձել սիրահարներին և ոմանց գոհացնել, իսկ մյուսներից խուսափել: Ահա ինչու սիրահարներին պատվիրում է հետամուտ լինել, իսկ սիրեցյալներին՝ խուսափել, և այդ մրցույթից ու փորձությունից պարզ է դառնում, թե ինչպիսին են սիրահարը և սիրեցյալը: Սա է պատճառը, որ ամոթալի է համարվում նախ՝ արագ հանձնվելը, քանզի պետք է որոշ ժամանակ անցնի, որն էլ շատերի կարծիքով հրաշալի փորձաքար է, և այնուհետև՝ ամոթալի է տրվել հանուն դրամի կամ քաղաքական հեղինակության, անգամ եթե տրվում են ծանր կարիքի վախից և դիմադրելու անկարողությունից կամ դրամի ու քաղաքական հովանավորչության

d

e

184

b

գայթակղությունից: Չէ՞ որ ոչ ոք չի համարում դրանք ո՛չ ամուր, ո՛չ էլ մնայուն, իսկ առանց դրա չի կարող ծնվել ազնիվ բարեկամություն: Ուրեմն մեր օրենքով սիրելիին գրավելու մեկ ճանապարհ է մնում: Մենք կարգ ունենք, համաձայն որի ինչպես սիրողների դեպքում սիրելիներին ծառայելիս արված հաճոյախոսությունը չի համարվում ամոթալի, այնպես էլ մյուս կողմին միայն մեկ կամավոր ստրկություն է մնում՝ ստրկություն հանուն առաքինության:

- c Իսկապես, եթե որևէ մեկը կամենում է ուրիշին ծառայություն մատուցել՝ նպատակ ունենալով նրա միջոցով ավելի լավը դառնալ իմաստության կամ որևէ այլ առաքինության մեջ, ապա այդպիսի կամավոր ծառայությունը մեզ մոտ չի համարվում ո՛չ ամոթալի, ո՛չ էլ ստորացուցիչ: Հարկ է ի մի բերել այդ երկու կարգերը՝ սերը պատանիների և սերը փիլիսոփայության և այլ առաքինությունների հանդեպ: Ի մի բերելով՝ կտեսնենք, որ սիրելիին սիրաշահելը հրաշայի է: Երբ սիրահարը ծառայում է սիրելիին՝ համարելով դա արդար, իսկ սիրելին իր հերթին օժանդակում է իրեն իմաստուն և առաքինի դարձնողին, և եթե սիրահարը ավելացնում է սիրեցյալի խոհեմությունն ու առաքինությունը, իսկ
- e սիրեցյալը ցանկանում է ձեռք բերել կրթություն և իմաստություն, այդժամ միայն, երբ նրանց միավորում է այդ կարգը, գեղեցիկ է սիրահարի կողմից սիրեցյալին հմայելը, և ոչ այլ դեպքում: Քանզի այդժամ խաբվելը ամոթալի չէ, իսկ մյուս բոլոր դեպքերում և՛ խաբվելն է ամոթալի, և՛ չխաբվելը: Չէ՞ որ եթե սիրեցյալը տրվում է թվացյալ հարուստին հանուն հարստության և խաբվում է, չստանալով դրամ, երբ պարզվում է, որ սիրահարն աղքատ է, ապա դա պակաս ամոթալի չէ նրա համար: Նա ապացուցել է, որ հանուն դրամի կծառայի ցանկացած մեկին, իսկ դա լավ չէ: Նույն ձևով, եթե որևէ մեկը տրվել է առաքինի մարդու՝ հույս ունենալով
- b սրա հետ բարեկամության միջոցով ավելի լավը դառնալու, բայց խաբվում է, քանզի պարզվում է, որ սա հոռի մարդ

185

է, և սիրեցյալը առաքինություն չի ստանում, նման մոլորությունը, միևնույն է, հրաշալի է: Չէ՞ որ նա ցույց է տվել, որ հանուն առաքինության և ավելի լավը դառնալու ամեն ինչ կանի ցանկացած մեկի համար, իսկ դա ամենալավ բանն է: Հանուն առաքինության հաճոյանալը ամեն դեպքում լավագույնն է:

Այդպիսին է երկնային դիցուհու սերը, և ինքը երկնային լինելով՝ անչափ արժեքավոր է և՛ պետության, և՛ առանձին մարդու համար, քանզի սիրահարից և սիրեցյալից մեծ հոգատարություն է պահանջում առաքինության հանդեպ: Սիրո բոլոր մյուս տեսակները պատկանում են հանրային Ափրոդիտեին: Այս պահին սա կարող եմ ավելացնել Էրոսի մասին քո ասածին:

Այսպես Պավսանիաս այրը ավարտեց իր ծառը, — նման ձևով խոսել ինձ սովորեցրել են սոփեստները, — և, ըստ Արիստոդեմոսի, Արիստոփանեսի հերթն էր, բայց այնպես պատահեց, որ կշտանալուց կամ մեկ այլ պատճառով նա սկսել էր զկռտալ և, ի վիճակի չլինելով ծառելու, միայն իր կողքին նստած ընկերոջը՝ Էրիքսիմաքոսին, ասաց:

— Ճիշտ կլինի, որ կամ վերջ տաս զկռտոցիս, կամ էլ խոսես իմ փոխարեն:

Էրիքսիմաքոսը պատասխանեց.

— Կանեմ երկուսն էլ: Ես կխոսեմ քո փոխարեն, իսկ դու, երբ զկռտոցդ անցնի՝ իմ: Խոսելուս ընթացքում երկար պահիր շունչդ ու էլ չես զկռտա: Եթե չանցնի, կոկորդդ ջրով ողողիր: Իսկ եթե զկռտոցդ շատ ուժեղ է, որևէ բանով քորիր քիթդ և փռշտա: Այդպես արա մի քանի անգամ, և ինչքան էլ ուժեղ լինի, կանցնի:

— Դե խոսիր վերջապես, — ասաց Արիստոփանեսը, — իսկ ես կանեմ ասածներդ:

Էրիքսիմաքոսը այսպես խոսեց.

— Քանի որ Պավսանիասը հրաշալի սկսեց իր ծառը, սակայն ավարտեց ոչ այնքան հաջող, ես կփորձեմ ավարտու-

- 186 նություն հաղորդել նրա խոսքին: Որ Էրոսը երկակի է՝ լավ դիտողութուն է: Բայց Էրոսը ոչ միայն մարդկանց հոգիների ձգտումն է դեպի գեղեցիկ մարդիկ, այլ նաև դեպի շատ ուրիշ բաներ, այն առկա է բոլոր կենդանիների մարմիններում, բույսերում և ըստ էության ողջ գոյի մեջ, ինչպես
- b ցույց է տալիս բժշկությունը՝ մեր արվեստը, քանզի Էրոսը մեծ, զարմանալի և համապարփակ աստված է՝ հաղորդակից թե՛ աստվածային գործերին, թե՛ մարդկային: Ես կսկսեմ բժշկությունից, որպեսզի նաև մեծարեմ այդ արվեստը: Երկակի Էրոսը առկա է մարմնի բնության մեջ: Չէ՞ որ մարմնավոր առողջությունն ու հիվանդությունը,– և այս հարցում բոլորը համաձայն են,– տարբեր և իրար ոչ նման բաներ են, իսկ ոչ նմանը ձգտում ու սիրում է ոչ նմանին: Յետևաբար առողջ մարմնի սերը մի բան է, հիվանդինը՝ ուրիշ:
- c Եթե, ինչպես Պավսանիասն է ասում, առաքինի մարդկանց սիրաշահեղը լավ է, իսկ անառակներին՝ ամոթալի, ուրեմն մարմնի մեջ [եղած] առողջ բաներին գոհացնելը լավ է և անհրաժեշտ,– սա է բժշկության իմաստը,– իսկ հիվանդ բաներին գոհացնելը՝ ամոթալի, և պետք է ամեն կերպ հակառակվել դրան, եթե ուզում ես բանիմաց բժիշկ լինել: Չէ՞ որ բժշկությունն ըստ էության գիտություն է լցվելու և դատարկվելու նկատմամբ մարմնի հակումների մասին⁴¹, և նա,
- d ով տարբերում է այդ հակումների մեջ բարերարն ու վնասակարը, բժիշկ է, իսկ եթե կարող է փոփոխություն ապահովել՝ մի հակումը փոխարինելով մյուսով, առաջ բերելով վերջինն այնտեղ, որտեղ պետք է լիներ, բայց չկար, ապա նման մեկը մեծ վարպետ է: Չէ՞ որ նա պետք է այնպես անի, որ մարմնի մեջ եղած ամենաթշնամական տարրերը բարեկամանան և սիրեն միմյանց⁴²: Ամենաթշնամական տարրերը ամենից հակադիրներն են՝ սառը և տաքը, դառը և քաղցրը, խոնավը և չորը, և այլն: Մեր նախնի Ակսկլեպիոսը⁴³, որը գիտեր,– ինչպես ասում են մեր պոետները, իսկ
- e ես հավատում եմ նրանց,– թե ինչպես սեր և համերաշխու-

թյուն հաղորդել հակադիր տարրերին, հիմք դրեց մեր արվեստին: Սակայն ինչպես և բժշկությունը, որի մասին արդեն ասացի, մարմնամարզությունն ու հողագործությունը նույնպես ամբողջությամբ ղեկավարվում են էրոսի կողմից: Բիչ թե շատ խելամիտ ամեն մարդու պարզ է, որ երաժշտության դեպքում ևս նույն բանն է, և հավանաբար դա էր ուզում ասել Յերակլիտոսն իր այս աղոտ խոսքերով. «Պառակտվելով՝ ինքն իր հետ միանում է, ինչպես աղեղի և քնարի ներդաշնակությունը»⁴⁴: Սակայն շատ անմիտ է պնդել, թե ներդաշնակությունը պառակտում է կամ որ այն գոյանում է տարբեր բաներից: Գուցե նա ցանկացել է ասել, որ ներդաշնակությունը գոյացել է նախապես տարբեր ցածրության ու բարձրության հնչյուններից երաժշտական արվեստի միջոցով: Չէ՞ որ ցածր և բարձր հնչյունների տարբերությունից ներդաշնակություն չի ծնվի: Ներդաշնակությունը համահնչություն է, իսկ համահնչությունը՝ համաձայնություն: Բայց տարբեր բաներից, քանի դեռ տարբերվում են, համաձայնություն չի կարող գոյանալ: Տարբերվողը և անհամաձայնը հնարավոր չէ ներդաշնակեցնել, ինչպես ռիթմը, որ ստեղծվում է նախապես տարանջատվող արագության և դանդաղության հետագա համաձայնեցումից: Եվ այդ ամենի մեջ համաձայնություն է ներմուծում երաժշտական արվեստը, որը, ինչպես և բժշկությունը, սեր և համերաշխություն է հաստատում տարբեր բաների միջև: Արդ, երաժշտության արվեստը ներդաշնակությանը և ռիթմին վերաբերող սիրային մղումների իմացություն է: Յենց ներդաշնակության կառուցվածքի մեջ արդեն դժվար չէ ծանաչել սիրային մղումը, և այստեղ չկա երկակի սեր: Բայց երբ ներդաշնակությունն ու ռիթմը պիտի տրամադրվեն մարդկանց կամ երբ մենք պիտի ստեղծենք այն, ինչ կոչվում է մեղեդի, և ճիշտ կատարենք եղանակն ու չափերը, ինչը ձեռք է բերվում ուսումնառությամբ, ապա դա դժվար է և մեծ վարպետ է պահանջվում: Զանգի այստեղ դարձյալ տեղին է խոսքը, թե հարկ է

187

b

c

d

- e գոհացնել չափավոր մարդկանց, որպեսզի նաև ոչ չափավորներն այդպիսին դառնան, և որ չափավորների սերը, որը պետք է պահպանել, գեղեցիկ, երկնային սեր է: Դա Ուրանիա մուսայի⁴⁵ էրոսն է: Իսկ Պոլիհիմնիայի⁴⁶ էրոսը հանրային է, և նրան հարկ եղած դեպքում պետք է դիմել զգուշությամբ, որպեսզի հաճույք պարզևի, բայց չծնի անառակություն: Մեր արհեստում նույնպես շատ կարևոր է, որ ձիշտ օգտագործվեն խոհարարական արվեստի հետ կապված նախասիրությունները, որպեսզի հաճույքն իր հետ հիվանդություն չբերի: Ե՛վ երաժշտության մեջ, և՛ բժշկության, և՛ մյուս բոլոր բաներում՝ մարդկային թե աստվածային, հնարավորինս պետք է նկատի առնել երկու էրոսներին, քանզի երկուսն էլ

188 այդտեղ առկա են:

- Անգամ տարվա եղանակների կարգն է բովանդակում նրանց երկուսին, և ինչպես արդեն ասացի, երբ ջերմության ու սառնության, չորության ու խոնավության միջև գոյանում է չափավոր սեր ու ներդաշնակություն և դրանք միավորվում են խոհեմաբար, տարին լինում է բարեբեր ու առողջ թե՛ մարդկանց, թե՛ կենդանիների, թե՛ բույսերի համար և ոչ ոքի չի վնասում: Սակայն երբ տարվա եղանակներին տիրում է անսանձ, բռնի էրոսը, ապա ամեն բան վնասում ու կործանում է: Չէ՞ որ դրանից են գոյանում կենդանիներին և բույսերին պատուհասող վարակներն ու զանազան հիվանդությունները: Քանզի եղյամը, կարկուտը և մեղրացողը գոյանում են նման չափազանցված ու անկարգ սիրային տենչանքներից, որոնց իմացությունը աստղերի շարժման և տարվա եղանակների հարաբերությամբ կոչվում է աստղագիտություն⁴⁷: Նմանապես նաև զոհաբերությունները և այն, ինչ վերաբերում է գուշակությանը՝ աստվածների և մարդկանց հաղորդակցմանը, ոչ այլ բանի միջոցով են, քան սիրո պահպանության և բժշկման: Չէ՞ որ ամեն անօրենություն սովորաբար գոյանում է, երբ չեն գոհացնում չափավոր էրոսին, չեն մեծարում որպես ամենակարևորի, փոխարենը

պատվելով մյուսին՝ լինի ծնողների հետ կապված հարցերում՝ ողջ կամ մահացած, թե աստվածների: Գուշակությունը կոչված է հետևելու և բժշկելու սիրողներին. այնպես որ գուշակությունն է աստվածների և մարդկանց բարեկամության արարիչը, քանի որ գիտի, թե մարդկանց որ սիրային հակումներն են օրինավոր և բարեպաշտ:

d

Այսպիսի բազմազան և մեծ, ավելի ծիշտ՝ համատարած զորություն ունի ամբողջական Էրոսը, սակայն Էրոսը, որը թե՛ մեր և թե՛ աստվածների դեպքում տանում է դեպի բարին, խոհեմությունն ու արդարությունը, ամենազորեղն է և մեզ բերում է երանություն՝ հնարավոր դարձնելով, որ շփվենք միմյանց հետ և բարեկամներ լինենք, անգամ մեզնից ավելի կատարյալ աստվածների հետ:

e

Գուցե ես էլ այժմ գովելով Էրոսին՝ շատ բաներ բաց թողեցի, բայց դա եղավ կամքիցս անկախ, և եթե բաց թողեցի, լրացնելը, Արիստոփանես, քո գործն է: Կամ գուցե դու այլ կերպ ես մտադիր գովերգելու Էրոս աստծուն, այդ դեպքում սկսիր, մանավանդ որ զկռտոցդ անցել է:

Արիստոփանեսը պատասխանեց.

189

– Զկռտոցս իսկապես անցավ, բայց միայն փռշտալուց հետո, և զարմանում եմ, որ մարմնի պարկեշտ վարքը ձեռք է բերվում այսքան աղմուկ ու փռշտոցի գնով: Զկռտոցը դադարեց, հենց որ սկսեցի փռշտալ:

– Սիրելի՛ Արիստոփանես,– ասաց Էրիքսիմաքոսը,– մի տես, թե ինչ ես անում: Սրամտում ես դեռ խոսել չսկսած և ինձ ստիպում, որ հսկեմ, որպեսզի ճառը զավեշտի չվերածես, մինչդեռ կարող էիր խոսել առանց այլապլությունների:

– Ծիշտ ես, Էրիքսիմաքոս,– ծիծաղելով պատասխանեց Արիստոփանեսը,– համարիր, որ ոչինչ չեմ ասել: Մի՛ հսկիր խոսքս, քանի որ ես չեմ վախենում զավեշտական ինչ-որ բան ասելուց,– չե՞ որ դա շահավետ կլիներ ինձ և իմ մուսային,– այլ վախենում եմ զավեշտի առարկա դառնալուց:

b

– Ուզում ես հեշտ պրծնել, Արիստոփանես: Ոչ, ուշա-

c դիր եղիր և խոսիր այնպես, որ կարողանաս պաշտպանել ասածդ: Թեպետ հնարավոր է, որ հանգիստ թողնեմ քեզ:

– Էրիքսիմա՛քոս,– ասաց Արիստոփանեսը,– ես մտադիր չեմ խոսել այնպես, ինչպես դու կամ Պավսանիասը: Ինձ թվում է, որ մարդիկ բոլորովին չեն զգում սիրո զորությունը, քանզի եթե զգային, մեծագույն տաճարներ ու բազիլիկներ կկառուցեին նրան և մեծ զոհեր կմատուցեին, մինչդեռ չեն անում, թեև ամենից առաջ հենց դա պիտի անեին: Չէ՞ որ

d Էրոսը ամենամարդասեր աստվածն է, նրանց պաշտպանը և բժշկողն այն արատների, որոնցից ազատվելը կլիներ մարդկության ամենամեծ երանությունը: Ես այժմ կփորձեմ ներկայացնել ձեզ նրա զորությունը, իսկ դուք արդեն կլինեք ուրիշների ուսուցիչները:

Նախ դուք պետք է ինչ-որ բան իմանաք մարդկային բնության և դրա կրած փոփոխության մասին: Քանզի հնում մեր բնությունը այնպիսին չէր, ինչպիսին է այժմ, այլ՝ բոլորովին ուրիշ:

e Նախ մարդկային սեռերը երեքն էին, և ոչ ինչպես այժմ երկուսը՝ արական և իգական, այլ գոյություն ուներ երրորդը, որը երկուսի ընդհանուրն էր: Սրանից միայն անունն է մնացել, ինքն անհետացել է: Դա անդրոգինն է, որի տեսքը և անունը միավորել են արականն ու իգականը. ինքը այժմ չկա, իսկ անունը մնացել է որպես հայիոյանք: Բոլոր երեքը արտաքուստ կլոր էին, մեջքը և կուրծքը մեկ շրջան էր կազմում, նրանք ունեին չորս ձեռք, նույնքան

190 ոտք և կլոր պարանոցի վրա երկու դեմք՝ կատարելապես նման: Այդ երկու հակադիր դեմքերով գլուխը մեկն էր, ականջները՝ չորսը, սեռական անդամները՝ երկուսը, մնացածը կարելի է պատկերել նույն ձևով: Քայլում էր անդրոգինը, ինչպես և մենք այժմ, շիտակ կեցվածքով, ցանկացած ուղղությամբ: Եթե սկսում էր արագ ընթանալ, գլորվում էր՝ վեր հանելով ոտքերը և շրջվելով ութ վերջույթների վրա:

Այդ սեռերը երեքն էին, որովհետև արականը սերում էր Արեգակից, իգականը՝ Երկրից, իսկ անդրոգինը՝ Լուսնից,

քանզի Լուսինը նույնպես միավորում է երկու սեռը: Իսկ դրանց գնդաձևությունն ու շարժումը նմանություն ունի իրենց նախնիների հետ, որոնք լինելով սարսափելի ուժի և զորության տեր՝ մեծագույն ծրագրեր են փայփայել և փորձել են ելնել աստվածների դեմ: Այն, ինչ ասում է Յոմերոսը Էփիալտեսի և Օտոսի մասին, վերաբերում է նրանց. այդ նրանք են փորձել երկինք բարձրանալ և հարձակվել աստվածների վրա⁴⁸:

Ջևար և մյուս աստվածները խորհուրդ արեցին, թե ինչպես վարվել նրանց հետ, և չգիտեին ինչ անել: Սպանել սրանց շանթահարելով, ինչպես մի ժամանակ գիգանտներին, որոնց ցեղը ոչնչացրին, նրանք չէին կարող, քանզի այդ դեպքում կզրկվեին մարդկանց մատուցած պատիվներից ու գոհերից, բայց նաև չէին կարող այլևս տանել անարգանքը: Ջևար դժվարությամբ գտավ հնարը:

– Կարծես թե գիտեմ, – ասաց նա, – թե ինչպես կարելի է թողնել մարդկանց և միաժամանակ վերջ դնել անօրենությանը՝ դարձնելով նրանց պակաս զորեղ: Յուրաքանչյուրին ես կկիսեմ երկու մասի, և նրանք նախ ավելի թույլ կդառնան, իսկ բացի այդ՝ ավելի օգտակար մեզ համար, քանի որ կավելանա նրանց թիվը: Նրանք կքայլեն ուղիղ կեցվածքով երկու ոտքերի վրա: Իսկ եթե շարունակեն անկարգությունը և չցանկանան հանգիստ մնալ, կրկին կհատեմ նրանց, որպեսզի մնան մեկ ոտքով:

Ասելով դա, սկսեց հատել մարդկանց երկու մասի, ինչպես արոսի պտուղները թթու դնելուց առաջ կամ ինչպես ձուն, որ կտրում են մազով: Եվ յուրաքանչյուրին, ում հատում էր, Ապոլլոնն իր հրամանով պետք է դեմքով ու պարանոցի կեսով շրջեր դեպի կտրված տեղը, որպեսզի դա տեսնելով՝ մարդն ավելի համեստ դառնար, իսկ մնացյալ մասերը հրամայեց բժշկել: Եվ Ապոլլոնը շրջում էր գլուխները և բոլոր տեղերից ձգում մաշկը դեպի այն մասը, որ այժմ որովայն ենք կոչում, պարկի նման կապում որովայնի

- 191 մեջտեղում գոյացած խռոչը, որին պորտ ենք ասում: Նա հեռացրեց բոլոր կնճիռները և ավարտուն տեսք հաղորդեց կրծքին՝ որպես գործիք օգտագործելով մի սարք, որի նմանը կոշկակարներն են կիրառում ոտնամանի կաշին հարթեցնելիս: Մի քանի ծալք թողեց որովայնի և պորտի մասում, և դա էլ պիտի հիշեցնեք նախկին վիճակը: Այժմ, երբ մարմինը հատված էր երկու մասի, յուրաքանչյուր կեսը տենչում էր միանալ իր մյուս կեսին. նրանք գրկում էին միմյանց ու փաթաթվում, տենչում սերտաճել, բայց մեռնում էին քաղցից ու անգործությունից, քանզի անջատ-անջատ ոչինչ չէին ցանկանում անել: Եվ երբ կեսերից մեկը մեռնում էր, մյուսը թողնում էր նրան և փնտրում ուրիշին, իսկ երբ գտնում էր, փաթաթվում էր դրան, անկախ այն բանից՝ դա նախկին ամբողջական կնոջ կեսն էր, այսինքն՝ նրա, ինչն այժմ կին ենք կոչում, թե տղամարդու կեսը: Այդպես կործանվում էին: Ջևար խղճաց նրանց և մի ուրիշ հնար գտավ: Նա առջևում տեղադրեց նրանց ամոթույքը, քանզի մինչ այդ ետևի մասում էր, և նրանք բեղմնավորում էին ոչ թե միմյանց, այլ հողը, ինչպես ծղրիդները: Իսկ տեղափոխելով ամոթույքը առաջ, այնպես արեց, որ մարդիկ ծնվեն միմյանցից՝ կնոջ ու տղամարդու միացումից, որպեսզի նրանք սերունդ տան ու կենակցումից բավարարում ստանան, անցնեն ուրիշ գործերի և հոգ տանեն կյանքի մյուս կողմերի մասին: Այստեղից է սկիզբ առնում մարդկանց փոխադարձ սերը, որը միացմանը նախկին կեսերը, փորձում է երկուսը դարձնել մեկ և բժշկել մարդկային բնությունը:

Յուրաքանչյուրս օրինակ ենք մարդու, որը հատվել է, ասես տափածուկ դառնալով, և մեկից վերածվել երկուսի: Ահա ինչու ամեն ոք մշտապես փնտրում է իր կեսին: Տղամարդիկ, որոնք անդրոգին կոչված այդ ամբողջի հատվածքն են, կնամուլ են, և բոլոր վավաշոտները սերում են այդ ցեղից, ու նաև կանայք, որոնք տղամարդամուլ և անառակ են, սերում են այդ ցեղից: Կանայք, որոնք կանացի

ամբողջի հատվածք են, լիովին անտարբեր են տղամարդկանց նկատմամբ ու տենչում են կանանց, և լեսբուիկները սերում են այս ցեղից: Արական ամբողջի հատվածք հանդիսացող տղամարդկանց ձգում է արականը: Դեռ մանուկ հասակում, լինելով արականի կեսը, նրանք սիրում են պառկել տղամարդկանց հետ և փաթաթվել նրանց: Այդպիսիք լավագույնն են տղաների և պատանիների մեջ, քանզի ի բնե ամենաարին են: Ոմանք ասում են, թե նրանք անամոթ են, բայց դա մոլորություն է, քանի որ այդպես են պահում իրենց ոչ թե անամոթությունից, այլ խիզախությունից, արիությունից և քաջությունից, չէ՞ որ տենչում են իրենց նմաններին: Դրա ապացույցները քիչ չեն: Հասունանալով՝ միայն այդպիսի այրերն են մուտք գործում քաղաքականություն: Դառնալով հասուն այրեր՝ նրանք սիրում են տղաներին և իրենց բնությամբ հակված չեն ամուսնանալու և զավակներ ունենալու, այլ անում են դա օրենքի պարտադրմամբ: Եթե չլիներ օրենքը, նրանք կբավարարվեին՝ կենակցելով միմյանց հետ և մնալով ամուրի: Այդպիսի այրը դառնում է պատանիների սիրահար ու սիրահարների բարեկամ և մշտապես տենչում է սեռակիցներին: Երբ նման մարդուն բախտ է վիճակվում հանդիպել իր կեսին, երկուսն էլ համակվում են այնպիսի զարմանալի բարեկամությամբ, հարազատությամբ ու սիրով, որ հիրավի կարճ ժամանակով անգամ չեն ցանկանում բաժանվել: Նրանք, ովքեր միմյանց հետ անցկացնում են ողջ կյանքը, անգամ չեն կարող ասել, թե ինչ են ուզում իրարից: Չէ՞ որ չի կարելի կարծել, թե նրանց համատեղ կեցության այդքան մեծ տենչը սոսկ մարմնավոր հաճույքի համար է: Պարզ է, որ յուրաքանչյուրի հոգու ուզածը մեկ այլ բան է, որի մասին այն չի կարող ոչինչ ասել, և միայն գուշակում է, թե ինչ է ցանկանում, և աղոտ ակնարկում: Եվ եթե նրանց, երբ պառկած են, ներկայանար Հեփեստոսն⁴⁹ իր գործիքներով և հարցներ. «Ի՞նչ եք ցանկանում, մարդիկ, մեկդ մյուսից»,– և այնուհետև, երբ

192

b

c

d

- նրանք դժվարանային պատասխանել, դարձյալ հարցներ.
- e «Գուցե ուզում եք, որքան կարելի է երկար լինել միմյանց հետ և ցերեկ ու գիշեր անբաժա՞ն մնալ: Եթե դա եք ցանկանում, ես պատրաստ եմ միաձուլել ձեզ այնպես, որ սերտաճեք և երկուսից վերածվեք մեկի, և քանի դեռ ապրում եք, կլինեք մեկը, կապրեք ընդհանուր կյանք, իսկ երբ մեռնեք, Յադեսում կլինի մեկ մեռած: Տեսեք, սակայն, դա՞ եք ուզում և կբավարարվե՞ք արդյոք դրան հասնելով»: Սա լսելով՝ ոչ ոք չէր հրաժարվի և առհասարակ չէր կարողանա այլ ցանկություն արտահայտել, իսկ լսածը կհամարեր հենց այն, ինչը վաղուց ի վեր տենչացել է, այն է՝ միաձուլվել սիրելիի հետ և երկուսից վերածվել մեկի: Սրա պատճառը մեր նախնական բնությունն է և այն, որ մենք եղել ենք մեկ ամբողջ:
- 193 Ամբողջի տենչն ու ձգտումը սերն է: Նախկինում, ինչպես ասացի, մենք մեկն էինք, իսկ այժմ մեր անարդարության պատճառով տարանջատվել ենք աստծո կողմից, ինչպես արկադացիներն են տարանջատված լակեդեմոնացիների կողմից⁵⁰: Ուրեմն կա վտանգ, որ եթե բարեպաշտ չլինենք աստվածների հանդեպ, կհատվենք ևս մեկ անգամ և կնմանվենք գերեզմանաքարերի պատկերներին, որոնք հատված են քթի երկայնքով, կամ ինչպես հյուրընկալության նշանիկները⁵¹: Ահա ինչու ամեն ոք պարտավոր է մյուսին բարեպաշտություն սովորեցնել աստվածների նկատմամբ, որպեսզի խուսափենք պատահածի կրկնությունից և լինենք ամբողջական, և այդ գործում մեզ առաջնորդ ու ղեկավար է Էրոսը: Ոչ ոք չափտի գործի նրան հակառակ: Նրան հակառակ գործում է նա, ով թշնամի է աստվածներին: Քանզի բարեկամանալով և հաշտվելով այդ աստծո հետ՝ մենք մեր սիրելիների մեջ կգտնենք մեզ, մի բան, որ քչերին է հաջողվում այժմ:
- c Թող Էրիքսիմաքոսը չժաղրի իմ ծառը՝ կարծելով, թե նկատի ունեմ Պավսանիասին և Ագաթոնին: Գուցե նրանք այդ քչերից են, և երկուսի բնությունն էլ արական է: Սակայն ես նկատի ունեմ բոլորին՝ և տղամարդկանց, և կանանց, երբ

ասում եմ, թե մեր ցեղը երջանիկ կդառնա այն ժամանակ, երբ մենք լրիվ կիրագործենք մեր սերը, և յուրաքանչյուրը կգտնի իր սիրելիին ու կվերադառնա իր նախնական բնությանը: Եթե դա է ամենից ազնվաբարոն, ուրեմն այժմ եղած ամեն բանից ամենալավը անհրաժեշտաբար այն է, ինչն ամենից մոտ է դրան: Իսկ դա նշանակում է՝ գտնել մեզ հարազատ սիրելիին: Եվ եթե հարկ է սրա համար որևէ աստօժ փառաբանել, ճիշտ կլինի փառաբանել Էրոսին, որը և այժմ շատ օգուտ է բերում մեզ, տանելով դեպի հարազատը, և աստվածների հանդեպ բարեպաշտ լինելու դեպքում հույսեր է տալիս վերականգնելու մեր նախնական բնությունը և դառնալու երանելի ու բախտավոր:

Սա է, ո՛վ Էրիքսիմաքոս, իմ ճառը Էրոսի մասին, և այն բոլորովին տարբեր է քոնից: Ինչպես ասացի, մի՛ ծաղրիր այն, և թող խոսեն մյուսները, ավելի ճիշտ, մնացած երկուսը՝ Ագաթոնը և Սոկրատեսը:

– Չամաձայն եմ,– պատասխանեց Էրիքսիմաքոսը,– մանավանդ որ ճառդ հաճելի էր ինձ: Եթե չիմանայի, որ Սոկրատեսը և Ագաթոնը սիրային հարցերի գիտակներ են, կվախենայի, որ այսքանից հետո ասելու բան չեն գտնի: Բայց ես հանգիստ եմ:

Եվ Սոկրատեսն ասաց.

– Իհարկե հանգիստ ես, Էրիքսիմաքոս, չէ՞ որ դու հաջող ելույթ ունեցար: Իսկ եթե լինեիր այն կացության մեջ, որում ես եմ հիմա կամ որում գուցե հայտնվեմ, երբ խոսի նաև Ագաթոնը, շատ կվախենայիր և կլինեիր ճիշտ իմ վիճակում:

– Դու ցանկանում ես հմայել ինձ, ո՛վ Սոկրատես,– ասաց Ագաթոնը,– որպեսզի շփոթվեմ այն մտքից, թե այս լսարանը մեծ սպասումներ ունի իմ ճառից:

– Ես շատ մոռացկոտ կլինեի, ո՛վ Ագաթոն,– ասաց Սոկրատեսը,– եթե տեսած լինեի արիությունն ու վեհությունը, որով դու բարձրանում ես բեմ դերասանների հետ և, նայելով բազմաթիվ հանդիսականներին, պատրաստվում արտա-

սանել սեփական ճառերն առանց որևէ երկյուղի, այժմ մտածեի, իբր կարող ես երկնչել այսքան փոքրաթիվ մարդկանցից:

c – Ինչ է, Սոկրատես,– ասաց Ագաթոնը,– քո կարծիքով այնպես եմ տարված թատրոնով, որ չե՞մ հասկանում, թե փոքրաթիվ, բայց խելամիտ մարդկանց լսարանը ավելի վտանգավոր է, քան բազմաթիվ անխելքների լսարանը:

d – Ոչ, Ագաթոն,– պատասխանեց Սոկրատեսը,– այդպես մտածելն անարդար կլիներ քո նկատմամբ: Լավ գիտեմ, որ եթե հանդիպեիր իմաստունների, ավելի շատ նրանց նկատի կառնեիր, քան բազմությանը: Բայց մենք դրանցից չենք: Չե՞ որ մենք էլ ենք եղել թատրոնում բազմության մեջ: Հանդիպելով իմաստուն մարդկանց՝ դու կամաչեիր նրանցից, եթե կարծեիր, որ ամոթալի ինչ-որ բան ես անում: Այդպես չէ՞:

– Ճիշտ ես ասում,– պատասխանեց Ագաթոնը:

Եվ Ֆեդրոսը միջամտելով ասաց.

– Սիրելի՛ Ագաթոն, եթե շարունակես պատասխանել Սոկրատեսին, նրա համար արդեն միևնույն կլինի, թե ինչ է այստեղ կատարվում, միայն թե գրուցակից ունենա, ընդ որում գեղեցիկ գրուցակից: Ես հաճույքով եմ լսում Սոկրատեսի գրույցները, սակայն պարտավոր եմ հոգ տանել Էրոսի գովքի մասին և լսել յուրաքանչյուրիդ ճառը: Նախ մեզնից յուրաքանչյուրը թո՛ղ տուրք մատուցի՝ այդ աստծուն, հետո գրուցեք միմյանց հետ, որքան կամենաք:

e – Ճիշտ ես, Ֆեդրոս,– պատասխանեց Ագաթոնը,– ինձ ոչինչ չի խանգարում խոսել, իսկ Սոկրատեսի հետ գրուցելու դեռ բազում առիթներ կունենամ:

195 Նախքան սկսելը ուզում եմ ասել, թե ինչպես պետք է խոսեմ: Կարծում եմ, նախորդ հռետորները փառաբանում էին ոչ թե աստծուն, այլ բարիքները, որ նա բերում է մարդկանց: Իսկ ինչպիսին է ինքը բարիքներ տվողը՝ ոչ ոք չասաց: Սակայն փառաբանող ճառի ձիշտ ձևը բոլորի համար էլ մեկն է՝ ճառը պետք է բնութագրի նրան և պարզի, թե

ինչի պատճառն է նա: Այնպես որ ծիշտ կլինի, եթե մենք էլ նախ փառաբանենք հենց իրեն, ելնելով նրա որպիսությունից, և հետո միայն նրա տված բարիքները:

Ես ասում եմ, որ բոլոր երանելի աստվածներից Էրոսը, եթե պատշաճ և ամոթալի չէ այդպես ասելը, ամենաերանելին է, քանզի ամենագեղեցիկն է և կատարյալը: Ամենագեղեցիկն է, որովհետև, ո՛վ Ֆեդրոս, աստվածներից ամենաերիտասարդն է: Խոսքերիս լավ ապացույցն ինքն է տալիս, քանզի փախչում է ծերությունից, որն արագաշարժ է և մեզ այցելում է պետք եղածից ավելի արագ: Էրոսը ի բնե ատում է ծերությունը և իրեն շատ հեռու է պահում դրանից: Նա միշտ երիտասարդների հետ է: Ճշմարիտ է հին արտահայտությունը, թե նման զնմանն գտանե: Յամաձայնելով Ֆեդրոսին շատ հարցերում՝ ես համաձայն չեմ, որ Էրոսը ծեր է Կրոնոսից և Իապետոսից⁵²: Ես ասում եմ, որ նա աստվածներից ամենաերիտասարդն է և միշտ է երիտասարդ, իսկ ինչ վերաբերում է աստվածների հին գործերին, որոնց մասին խոսում են Յեսիոդոսն ու Պարմենիդեսը, ապա, եթե ճշմարիտ են ասում, դրանք ծնվել են Անիրաժեշտությունից⁵³, և ոչ Էրոսից: Չէ՞ որ աստվածները չէին կրտի ու շղթայի միմյանց և չէին գործի բազում ուրիշ բռնություններ, եթե նրանց մեջ լիներ Էրոսը, այլ կապրեին բարեկամության և խաղաղության մեջ, ինչպես այժմ, երբ նրանց թագավորում է Էրոսը: Ուրեմն նա երիտասարդ է և, բացի այդ, նուրբ: Այդ աստծուն ներկայացնելու համար հարկավոր է այնպիսի պոետ, ինչպիսին Յոմերոսն է: Որ Ատեն⁵⁴ աստվածուհի է և նուրբ է,– նուրբ են նրա ոտքերը,– Յոմերոսն արտահայտում է այսպես.

*Նուրբ ու թեթև ոտքեր ունի, սակայն գետնին չի
 հենվում նա,
 Այլ լուկ մարդկանց գլուխների վրայով է նա միշտ
 շրջում...»⁵⁵:*

- Իմ կարծիքով նրբության հրաշալի ապացույց է այն, որ
- e նա քայլում է ոչ թե ամուրի, այլ փափուկի վրայով: Նույն ապացույցից կօգտվենք նաև մենք ցույց տալու համար Էրոսի նրբությունը: Չէ՞ որ նա քայլում է ո՛չ գետնի վրայով, ո՛չ էլ գլուխների, որոնք այդքան էլ փափուկ չեն, այլ քայլում ու բնակվում է գոյի ամենափափուկ մասերում: Նա տեղավորվում է աստվածների և մարդկանց բարքերում ու հոգիներում, ընդ որում ոչ բոլոր հոգիներում: Հանդիպելով կոշտ հոգիների՝ նա հեռանում և բնակվում է փափուկներում: Իսկ մշտապես դիպչելով ամենափափուկ բաների և՛ ոտքերով, և՛ այլ մասերով, նա անհրաժեշտաբար ամենանուրբն է: Այնպես որ նա ամենաերիտասարդ և ամենանուրբ աստվածն է և, բացի այդ, նաև տեսքից ամենաճկունը: Եթե լիներ կարծր, չէր թափանցի ամեն բանի մեջ և նախ թաքուն ձևով չէր մտնի ամեն հոգու մեջ, իսկ այնուհետև դուրս չէր գա: Էրոսի արտաքինի համաչափության և ճկունության լավ ապացույց է նրա բոլորից տարբերվող և բոլորի կողմից ընդունվող բարեկազմությունը: Չէ՞ որ Էրոսի և այլանդակության միջև մշտապես պատերազմ է: Իսկ նրա մաշկի գեղեցկության մասին կարելի է դատել ծաղկունքից, որ նա ապրում է:
 - b Քանզի նա չի իջնի ծաղկունքն արդեն ապրած մարմնի, հոգու կամ մեկ այլ բանի վրա, նա կիջնի միայն փթթող, բուրավետ վայրեր և կմնա այնտեղ:

Այդ աստծո գեղեցկության մասին շատ բան է ասված և դեռ շատ բան մնում է: Այժմ պետք է ասվի նրա առաքինությունների մասին, որոնցից ամենամեծն այն է, որ Էրոսը չի գործում անարդարություն ո՛չ մարդկանց, ո՛չ աստվածներին և անարդարություն չի կրում նրանցից: Եթե նա տառապում է, ապա ոչ բռնությունից: Բռնությունը նրան չի դիպչում, ոչ էլ ինքն է բռնության դիմում, քանզի բոլորը նրան ծառայում են կամովի, իսկ այն, ինչին համաձայնում են կամովի, «քաղաքի տիրակալ օրենքները» արդար են կոչում: Բացի արդարամտությունից, նրան շատ հատուկ է խոհեմությունը:

Չէ՞ որ խոհեմություն է համարվում հաճույքներն ու տեն-
 չանքները զսպելու կարողությունը, և ոչ մի հաճույք ուժեղ չէ
 էրոսից: Իսկ եթե կրքերն ավելի թույլ են նրանից, հետևաբար
 պետք է զսպվեն նրա կողմից, իսկ նա զսպի դրանք,
 ուստի եթե զսպում է հաճույքներն ու տենչանքները, նա
 արտասովոր խոհեմության տեր է: Արիության հարցում
 էրոսի հետ «չի կարող մրցել անգամ Արեսը⁵⁶», քանզի ոչ **d**
 թե Արեսն է տիրում էրոսին, այլ էրոսը Արեսին, նկատի
 ունեմ սերը Ափրոդիտեի հանդեպ: Իսկ տիրողը առավել ուժեղ
 է, քան նա, ում տիրում է: Ամենաարիից ավելի զորեղ լինելով՝
 էրոսը նաև ամենաարին է:

Այդ աստծո արդարամտության, խոհեմության և խիզա-
 խության մասին ասվեց, մնաց իմաստությունը: Կաշխատեմ
 հնարավորինս չթերանալ նաև այս հարցում: Նախ որպեսզի **e**
 հարգանքի տուրք մատուցեմ իմ արվեստին, ինչպես էրիք-
 սիմաքոսը՝ իր արվեստին, ասեմ. այդ աստվածն այնքան
 իմաստուն պոետ է, որ ուրիշներին էլ այդպիսին է դարձ-
 նում: Յուրաքանչյուր ոք, ում դիպչում է էրոսը, պոետ է
 դառնում, «թեկուզ նախկինում հեռու լիներ մուսաներից»⁵⁷:
 Դա վկայում է, որ էրոսը մեծ պոետ է, որը գլուխ է **197**
 հանում մուսայական բոլոր գործերից: Չէ՞ որ այն, ինչ
 չունես կամ չգիտես, չես կարող փոխանցել կամ սովորեցնել
 ուրիշներին: Իսկ ահա բոլոր կենդանի բաների արար-
 ման վերաբերյալ ո՞վ կառարկի, թե էրոսի իմաստության
 շնորհիվ է այդ ամենը գոյանում և աճում: Մի՞թե չգիտենք,
 որ արհեստների դեպքում նա, ում ուսուցիչն է դառնում այդ
 աստվածը, փառք ու պատվի է արժանանում, իսկ նա, ում
 էրոսը չի դիպչում, մնում է անհայտության մեջ: Նետաձգու-
 թյան, բժշկության ու գուլշակության արհեստները Ապոլլոնը **b**
 հայտնագործեց՝ առաջնորդվելով տենչանքով ու սիրով,
 այնպես որ նա էլ աշակերտն է էրոսի, որը մուսաների
 առաջնորդն է արվեստներում, Ջեփեստոսինը՝ դարբնության,
 Աթենայինը՝ ջուլիակության և Ջևսինը՝ «մարդկանց և աստ-

- վածներին կառավարելու»⁵⁸ մեջ: Ահա ինչու, երբ ի հայտ եկավ սերը,– պարզ է, գեղեցիկի նկատմամբ,– աստվածների գործերը կարգավորվեցին: Այլանդակը Էրոսի համար չէ: Նրանից առաջ, կրկնեմ՝ աստվածների մեջ, ինչպես ասում են, բազում և զարհուրելի բաներ են տեղի ունեցել, և դրա պատճառն է եղել Անհրաժեշտության թագավորությունը: Իսկ
- c երբ հայտնվեց Էրոսը, գեղեցիկի սիրուց բազում բարիքներ բաժին ընկան թե՛ աստվածներին, թե՛ մարդկանց:

Այնպես որ, ո՛վ Ֆեդրոս, Էրոսը սկզբնապես լինելով գեղեցկագույնն ու ամենակատարյալը՝ այնուհետև դարձավ մյուս բոլոր գեղեցիկ և կատարյալ բաների պատճառը: Ես նույնիսկ չափածո կասեմ. նա է, որ տալիս է

*Խաղաղություն մարդկանց, ծովին՝ անհողմություն,
Դադար՝ քամուն, և մեզ մահճում՝ միշտ քաղցր քուն*⁵⁹:

- d Նա է մեզ հանում օտարացումից և միավորում՝ կազմակերպելով այսօրվա նման հավաքներ, առաջնորդում՝ լինելով տոնակատարություններում, շուրջպարերում, զոհաբերության ծեսերին: Չեզոքության սիրահար՝ նա դեմ է կոպտությանը: Բարեհաճ է և զերծ անբարեհաճությունից: Չեզերի նկատմամբ հանդուրժող է: Իմաստունների կողմից հարգված է, աստվածներից՝ սիրված: Դժբախտների տենչանքն է, բախտավորների ունեցվածքը: Չայրն է պերճության, նրբագեղության, լիության, բերկրանքի, տենչանքի և կրքերի: Առաքինիներին պահապան է, հոռիների նկատմամբ՝ անտարբեր:
- e Զրկանքի, երկյուղածության, տանջանքի և մտածմունքի մեջ ամենալավ առաջնորդն է, օգնականը, ուղեկիցն ու փրկիչը: Աստվածների և մարդկանց զարդն է, ամենագեղեցիկ և ամենակատարյալ առաջնորդը, որին պետք է հետևեն բոլորը՝ երգելով նրան ու միանալով նրա հրաշալի երգին, որ հմայում է բոլոր մարդկանց և աստվածներին:

Այսպիսի ճառ եմ ես ձոնում այդ աստծուն, ո՛վ Ֆեդրոս,

ուժերիս ներածին չափ խոսքիս մեջ խառնելով լուրջն ու կատակը:

Երբ Ագաթոնն ավարտեց, բոլորը, ըստ Արիստոդեմոսի, բարձրաձայն հավանություն տվեցին՝ երիտասարդի ասածը համարելով արժանի և՛ իրեն, և՛ աստծուն: Այդժամ Սոկրատեսը, նայելով Էրիքսիմաքոսին, ասաց.

198

– Դե ինչ, Ակումենոսի՛ որդի, չե՞ս կարծում, որ իմ նախկին վախն անտեղի չէր, և մի՞թե գուշակ չէի, երբ ասացի, որ Ագաթոնի հրաշալի ճառից հետո ես դժվար կացության մեջ կհայտնվեմ:

– Ինձ թվում է,– պատասխանեց Էրիքսիմաքոսը,– կատարվել է առաջին գուշակությունը՝ որ Ագաթոնը լավ կխոսի: Իսկ որ դու կդժվարանաս, չեմ կարծում:

b

– Բայց սիրելի՛ս,– ասաց Սոկրատեսը,– ինչպե՞ս կարող եմ ես կամ մեկ ուրիշը չմտախոգվել այսպիսի հրաշալի և ճոխ ճառից հետո խոսել պատրաստվելիս: Եվ եթե սկզբում այն դեռ այնքան էլ գրավիչ չէր, ապա ո՞ր ունկնդրին չի զարմացնի վերջում ասված բառերի և արտահայտությունների գեղեցկությունը: Երբ հասկացա, որ դրան մոտ ոչինչ ասել չեմ կարողանա, քիչ մնաց ամոթից փախչեի, միայն թե հնար չկար: Այդ ճառն ինձ հիշեցրեց Գորգիասին, և ես վախեցա,– ուղղակի ըստ Յոմերոսի,– որ վերջում Ագաթոնը իմ ճառի վրա կգցի Գորգիասի ահավոր գլուխը⁶⁰ ինձ վերածելով ձայնազուրկ քարի: Այդժամ ես հասկացա, թե որքան զավեշտալի էի, երբ համաձայնեցի իմ հերթին փառաբանել Էրոսին և ասացի, որ ուժեղ եմ սիրային հարցերում, իրականում սակայն բոլորովին զուլի չհանելով փառաբանող ճառերից: Ես միամտաբար կարծում էի, թե յուրաքանչյուր առարկա փառաբանելիս պետք է ասել ճշմարտությունը, և դա է գլխավորը՝ քաղել ճշմարտությունից լավագույնը և դասավորել ամենահարմար ձևով: Ես շատ ինքնավստահ էի, երբ կարծում էի, թե լավ կխոսեմ՝ իմանալով գովերգման համար անհրաժեշտ ճշմարտությունը: Պարզվում է, սակայն,

c

d

- e որ ինչ-որ բան գովերգելը ոչ թե դա է, այլ առարկային բազում լավ բաներ վերագրելը, անկախ նրանից՝ ունի այդպիսիք, թե ոչ: Եթե ստես, ցավ չէ: Կարծես պայմանավորվել էինք, որ մեզնից յուրաքանչյուրը ձևացնի, թե գովերգում է Էրոսին, բայց իրականում չգովերգի: Ահա ինչու, իմ կարծիքով, դուք վերագրում եք Էրոսին ամեն ինչ, ասում եք, թե այսպիսին է և այսպիսի բաների պատճառն է, որպեսզի նա
- 199 լավագույնն ու ամենակատարյալը երևա նրանց աչքին, ովքեր չգիտեն նրան, բայց ոչ նրանց, ովքեր գիտեն: Այսպես գովերգման ճառը ստացվում է գեղեցիկ և հանդիսավոր: Սակայն ես ծանոթ չեմ ճառի նման ձևին և անտեղյակությունից համաձայնեցի խոսել իմ հերթին: «Լեզուս համաձայնեց, բայց ոչ միտքս»⁶¹: Ուրեմն ազատ եմ իմ պարտավորություններից: Այդ ձևով ես չեմ գովերգի, որովհետև չեմ կարող:
- b Սակայն եթե ցանկանում եք, կասեմ ձեզ ճշմարտությունը իմ ձևով, որը նման չի լինի ձեր ճառերին, որպեսզի հանկարծ ծիծաղելի չերևամ: Տե՛ս, Ֆեդրոս, հարկավոր է արդյոք քեզ նաև այնպիսի ճառ, որում Էրոսի մասին կասվի ճշմարտությունը առաջին իսկ պատահած բառերով ու արտահայտություններով:
- Ֆեդրոսը և մյուսները խնդրեցին նրան խոսել, ինչպես
- c ինքն է հարկ համարում:
- Ուրեմն, Ֆեդրոս,– ասաց Սկրատեսը,– թույլ տուր մի քանի հարց տալ Ագաթոնին, որպեսզի նրա հետ համաձայնության գալուց հետո սկսեմ ճառս:
- Թույլ եմ տալիս,– ասաց Ֆեդրոսը,– հարցրու՛:
- Դրանից հետո, շարունակեց Արիստոդեմոսը, Սկրատեսը սկսեց այսպես.
- Սիրելի՛ Ագաթոն, դու քո ճառի մեջ շատ լավ ցույց տվեցիր, որ նախ պետք է ներկայացնել հենց Էրոսին, թե ինչպիսին է ինքը, իսկ այնուհետև նրա գործերը: Այդպիսի սկիզբն ինձ դուր եկավ: Քանի որ հրաշալի և շատ արժանի
- d ձևով ներկայացրիր նրան, ասա մի բան ևս: Արդյո՞ք Էրոսը

սեր է ինչ-որ մեկի նկատմամբ, թե՞ ոչ: Ես չեմ հարցնում սեր է արդյոք մոր կամ հոր նկատմամբ, նման հարցը զավեշտական կլիներ, այլ հարցնում եմ, ինչպես եթե հարցների հոր մասին՝ արդյո՞ք նա ինչ-որ մեկի հայրն է, թե՞ ոչ: Ճիշտ պատասխանելու ցանկության դեպքում դու կասեիր, որ հայրը միշտ էլ հայր է որդուն կամ դստերը: Այդպես չէ՞:

– Իհարկե,– պատասխանեց Ագաթոնը:

– Նմանապես նաև մայրը, այո՞:

Ագաթոնը համաձայնեց նաև սրան:

– Այդ դեպքում պատասխանիր ևս մի քանի հարցերի, որպեսզի ավելի լավ հասկանաս, թե ինչ եմ ցանկանում ասել: Համաձայն՞ ես, որ եղբայրը նա է, ով եղբայր է ինչ-որ մեկին:

Ագաթոնը համաձայնեց:

– Եղբայր է եղբորը կամ քրոջը, այնպես չէ՞:

Համաձայնեց:

– Իսկ փորձիր ասել դա Էրոսի վերաբերյալ: Արդյո՞ք Էրոսը սեր է ինչ-որ մեկի նկատմամբ, թե՞ ոչ:

– Իհարկե ինչ-որ մեկի նկատմամբ:

– Ուրեմն միտդ պահիր դա,– ասաց Սոկրատեսը,– և ասա ինձ՝ տենչում է արդյոք Էրոսը նրան, ում նկատմամբ է սերը, թե՞ ոչ:

– Իհարկե:

– Իսկ ե՞րբ է տենչում ու սիրում, երբ տիրում է սիրո առարկային, թե՞ երբ չի տիրում:

– Հավանաբար, երբ չի տիրում,– պատասխանեց Ագաթոնը:

– Իսկ գուցե դա ոչ թե հավանականություն է, այլ անհրաժեշտություն, որ տենչանքը ուղղված է նրան, ինչը պակասում է, և ոչ թե նրան, ինչի պակասը չկա: Ինձ, ո՞վ Ագաթոն, զարմանալիորեն թվում է, որ դա անհրաժեշտություն է, իսկ քե՞զ:

– Ինձ նույնպես,– պատասխանեց Ագաթոնը:

e

200

b

– Շատ լավ: Արդյոք կցանկանա՞ր բարձրահասակ մեկը բարձրահասակ լինել, կամ ուժեղը՝ ուժեղ:

– Մենք համաձայնեցինք, որ դա անհնար է: Չէ՞ որ ունեցածի պակասը չեն զգում:

- Ճիշտ ես ասում: Իսկ եթե ուժեղը ցանկանում է ուժեղ լինել,– ասաց Սոկրատեսը,– արագաշարժը՝ արագաշարժ, և առողջը՝ առողջ, զուցե պետք է մտածել, որ նրանք, ովքեր արդեն այդպիսին են և ունեն այդ հատկությունները, ցանկանում են հենց իրենց ունեցածը: Որպեսզի չխժժվենք, ես կասեմ հետևյալը: Ո՛վ Ագաթոն, եթե մտածենք, կտեսնենք, որ այդպիսիք արդեն այժմ պիտի ունենան այդ հատկությունները, ուրեմն ինչու՞ ցանկանան դրանք: Եթե որևէ մեկն ասում է. «Ես, առողջ լինելով, ուզում եմ առողջ լինել կամ, հարուստ լինելով, ցանկանում եմ հարուստ լինել և ցանկանում եմ այն, ինչ ունեմ»,– կարող ենք ասել նրան. «Դու, ո՛վ մարդ, ունենալով հարստություն, առողջություն և ուժ, ցանկանում ես նաև հետագայում ունենալ դա, քանզի ներկայում, ուզես թե չուզես, ունես այդ ամենը: Ասելով, որ ուզում ես այն, ինչն ունես, այլ բան չես ասում, քան որ ներկայում ունեցածդ ցանկանում ես ունենալ նաև հետագայում»: Կհամաձայնե՞ր արդյոք նա մեզ հետ:

– Կհամաձայներ,– պատասխանեց Ագաթոնը:

- Այդ դեպքում,– շարունակեց Սոկրատեսը,– չի՞ նշանակում դա սիրել մի բան, որը չկա կամ որը չունես, եթե ցանկանում ես բոլոր ժամանակներում պահպանել այն, ինչն ունես միայն ներկայում:

– Իհարկե,– պատասխանեց Ագաթոնը:

– Ուրեմն և՛ այդ մարդը, և՛ ուրիշ մեկը ցանկանում է այն, ինչը չկա ներկայում և ինչը չունի, մի բան, որ ինքը չէ և ինչի պակասն ունի. այդպիսի՞ բաներն են տենչանքի և սիրո առարկա:

– Անշուշտ:

– Ուրեմն ի մի բերենք ասվածը: Էրոսն այլ բան չէ,

քան առաջին հերթին սեր ինչ-որ բանի նկատմամբ, իսկ սա այն է, ինչի պակասը կա ներկայում:

– Այո,– պատասխանեց Ագաթոնը:

201

– Յիշիր նաև, թե քո ճառի համաձայն ինչի նկատմամբ էր Էրոսը սեր: Եթե ուզում ես, կհիշեցնեմ: Ինձ թվում է, դու ասացիր, որ աստվածների գործերը կարգավորվեցին գեղեցիկ սիրո միջոցով, քանզի այլանդակի սեր չի լինում: Մի՞թե դա չէիր ասում:

– Դա էի ասում:

– Եվ ճիշտ էիր ասում, բարեկամս,– շարունակեց Սոկրատեսը: – Իսկ եթե դա այդպես է, ստացվում է, որ Էրոսը սեր է գեղեցիկի նկատմամբ, և ոչ այլանդակի: Յամաձայն ես:

Ագաթոնը համաձայնեց:

b

– Ուրեմն համաձայն ենք, որ սիրում են այն, ինչը պակասում է և ինչի կարիքն ունեն:

– Այդպես է:

– Յետևաբար Էրոսը չունի գեղեցկություն և ունի դրա կարի՞քը:

– Անհրաժեշտաբար:

– Բայց մի՞թե գեղեցիկ կանվանես մի բան, որը բոլորովին չունի գեղեցկություն, այլ ունի դրա կարիքը:

– Իհարկե ոչ:

– Եթե այդպես է, դու դեռ համաձայն ես, որ Էրոսը գեղեցիկ է:

– Կարծես ինքս չգիտեի, թե ինչ էի ասում այն ժամանակ,– պատասխանեց Ագաթոնը:

c

– Դու իրոք շատ գեղեցիկ էիր խոսում, Ագաթոն: Բայց ասա նաև հետևյալը: Քեզ չի՞ թվում, որ բարին գեղեցիկ է:

– Թվում է:

– Եթե Էրոսը ունի գեղեցիկի կարիքը, իսկ բարին գեղեցիկ է, հետևաբար Էրոսն ունի նաև բարու պակասը:

– Ես ի վիճակի չեմ հակաձառել քեզ, Սոկրատես,– ասաց Ագաթոնը,– պարզապես ասա՛ մտքինդ:

d – Ոչ, սիրելի՛ Ագաթոն, դու չես կարողանում հակաճառել ճշմարտությանը, քանզի Սոկրատեսին հակաճառելը դժվար չէ։ Բայց այժմ ես քեզ հանգիստ կթողնեմ։ Ես կփորձեմ փոխանցել ձեզ Էրոսին վերաբերող ճառը, որ լսել եմ մանտինեացի Դիոտիմայից⁶² սիրո և այլ հարցերում իմաստուն կնոջից, որը զոհաբերության ժամանակ տասը տարով հետաձգեց արենացիներին սպառնացող ժանտախտը. և հենց նա էլ եղավ իմ ուսուցիչը սիրո հարցում։ Փոխանցեմ, ինչպես կկարողանամ՝ սկսելով նրանից, ինչի վերաբերյալ Ագաթոնի հետ համաձայնության եկանք։ Յետևելով քո ասածին, Ագաթոն, նախ պետք է պարզել, թե ինչ է Էրոսը և ինչպիսին է, իսկ այնուհետև՝ թե ինչպիսին են նրա գործերը։

e Կարծում եմ, ամենից հեշտ դա կարելի է անել հարցերի միջոցով, ինչպես մի ժամանակ արեց այդ օտարերկրուհին։ Քանզի ես պատասխանում էի նրան մոտավորապես այնպես, ինչպես այժմ Ագաթոնն է ինձ պատասխանում՝ ասելով, որ Էրոսը մեծ և գեղեցիկ աստված է։ Եվ նա նույն խոսքերով, ինչ ես այժմ, ցույց տվեց ինձ, որ, հակառակ իմ պնդումներին, ո՛չ գեղեցիկ է, ո՛չ էլ բարի։

– Ի՞նչ ես ասում, Դիոտիմա,– հարցրի ես,– ուրեմն Էրոսը այլանդակ և չա՛ր է։

– Մի՛ չարախոսիր,– պատասխանեց նա,– մի՛թե այն, ինչը գեղեցիկ չէ, պետք է անհրաժեշտաբար այլանդակ լինի։

202

– Իհարկե։

– Ուրեմն այն, ինչը իմաստուն չէ, տգե՛տ է։ Մի՛թե չես նկատել, որ իմաստության և տգիտության միջև գոյություն ունի միջանկյալ մի բան։

– Ի՞նչ։

– Այսինքն դու չգիտե՞ս, որ ճիշտ կարծիքը, որը չի ուղեկցվում փաստարկներով, իմացություն չէ։ Փաստարկից զուրկն ինչպե՞ս կարող է իմացություն լինել։ Բայց դա նաև տգիտություն չէ։ Եթե համապատասխանում է եղածին, ինչպե՞ս կարող է տգիտություն լինել։ Ճիշտ կարծիքը

հավանաբար ըմբռնման և տգիտության արանքում է:

– Ճիշտ ես ասում,- պատասխանեցի ես:

– Ուրեմն մի՛ պնդիր, թե ոչ գեղեցիկը այլանդակ է, իսկ **b**
 ոչ բարին՝ չար: Այնպես էլ համաձայնելով, որ Էրոսը ո՛չ
 բարի է, ո՛չ գեղեցիկ, մի՛ կարծիր, թե պետք է լինի այլան-
 դակ ու չար, այլ՝ դրանց միջինը:

– Եվ այնուամենայնիվ բոլորը համաձայն են, որ նա
 մեծ աստված է,- ասացի ես:

– Դու նկատի ունես իմացողների՞ն, թե՞ նաև չիմացող-
 ներին:

– Բոլորին,- պատասխանեցի ես:

– Ինչպես կարող են, Սոկրատես,- ծիծաղեց նա,- մեծ **c**
 աստված համարել Էրոսին նրանք, ովքեր պնդում են, թե
 նա աստված չէ:

– Ովքե՞ր են դրանք,- հարցրի ես:

– Մեկը՝ դու, մեկն էլ՝ ես:

– Ինչպե՞ս թե:

– Շատ պարզ: Ասա ինձ, արդյո՞ք բոլոր աստվածները
 երանելի և գեղեցիկ են: Կհանդգնե՞ս ասել, թե աստված-
 ներից որևէ մեկը գեղեցիկ ու երանելի չէ:

– Ոչ, Ձևսը վկա,- պատասխանեցի ես:

– Իսկ մի՞թե երանելի չես համարում բարիներին ու
 գեղեցիկներին:

– Իհարկե համարում եմ:

– Սակայն Էրոսի համար համաձայնեցիր, որ ունենալով **d**
 բարության և գեղեցկության պակաս՝ տենչում է իր չունեցածը:

– Համաձայնեցի:

– Այդ ի՞նչ աստված է ուրեմն, որ զուրկ է գեղեցկու-
 թյունից և բարությունից:

– Կարծում եմ, աստված չէ:

– Տեսնում ես,- ասաց Դիոտիման,- դու էլ աստված չես
 համարում Էրոսին:

– Այդ դեպքում ի՞նչ է Էրոսը, մահկանացու՞,- հարցրի ես:

- Բնավ:
- Ուրեմն ի՞նչ է:
- e - Ինչպես արդեն տեսանք, նա մահկանացուի և անմահի մեջտեղում է:
 - Ո՛վ է ուրեմն, Դիտոիմա:
 - Մեծ դեմոն է, Սոկրատես, իսկ բոլոր դեմոնները աստծո և մահկանացուի մեջտեղում են:
 - Ի՞նչ զորություն ունեն նրանք,- հարցրի ես:
 - Նրանք մարդկանց և աստվածների մեկնիչներն ու միջնորդներն են, որ աստվածներին փոխանցում են մարդկանց աղոթքներն ու զոհաբերությունները, իսկ մարդկանց՝ աստվածների հրահանգներն ու շնորհները: Նրանք զբաղեցնում են աստվածների և մարդկանց միջակա տարածությունը, այնպես որ [տիեզերական] ամբողջը կապված է ինքն իր մեջ: Դրա շնորհիվ են հնարավոր գուշակությունը, քրմերի արվեստը և ամեն բան, որ կապված է զոհաբերությունների, սրբազան արարողությունների, հմայական խոսքերի, մարգարեությունների և կախարդությունների հետ: Չշփվելով՝ աստվածները միայն այդկերպ են հաղորդակցվում ու զրուցում մարդկանց հետ թե՛ քնի մեջ, թե՛ արթմնի: Այդպիսի հարցերում գիտակ մարդն աստվածային է, իսկ որևէ այլ արվեստի կամ արհեստի գիտակը՝ արհեստավոր: Այդ դեմոնները շատ են և բազմազան, և Էրոսը նրանցից մեկն է:
 - Իսկ ովքե՞ր են նրա հայրն ու մայրը,- հարցրի ես:
 - b - Դա երկար պատմություն է,- պատասխանեց նա,- բայց ես կպատմեմ քեզ: Երբ ծնվեց Ափրոդիտեն, աստվածները խնջույք արեցին, և նրանց թվում էր նաև Մետիսի որդի Պորոսը: Երբ նրանք ծաշեցին, իսկ կերակուրը շատ առատ էր, եկավ Պենիան հաց խնդրելու և կանգնեց դռանը:
 - c Պորոսը՝ նեկտարից հարբած,- քանզի գինի այն ժամանակ չկար,- դուրս եկավ Ջևսի այգին և, ծանրացած, քնեց: Այդ-ժամ Պենիան ցանկանալով իր աղքատության մեջ երեխա

ունենալ Պորոսից՝ պառկեց նրա կողքին և հղիացավ Էրոսով: Ահա ինչու Էրոսը դարձավ Ափրոդիտեի ուղեկիցն ու օգնականը, չէ՞ որ բեղմնավորվեց նրա ծննդյան օրը, և, բացի այդ, նա ի բնե սիրահարված է գեղեցիկին, քանզի Ափրոդիտեն գեղեցկուհի է: Լինելով, սակայն, Պորոսի և Պենիայի որդին, նա յուրահատուկ դեպք է⁶³: Նախ մշտապես աղքատ է, և չնայած շատերը կարծում են, թե նուրբ է և գեղեցիկ, իրականում կոպիտ է ու փնթի, ոտաբորբիկ ու անտուն. պառկում է հողին, բաց երկնքի տակ, դռների առաջ, ճանապարհներին և, ունենալով իր մոր բնությունը, մշտապես կարիքի մեջ է: Սակայն հոր նման ձգտում է գեղեցիկին ու բարուն, արի է, քաջ և ուժեղ, հմուտ որսորդ է, որ միշտ հնարներ է բանեցնում, տենչում է բանականություն և հասու է դառնում դրան, ողջ կյանքում զբաղվում է փիլիսոփայությամբ, մեծ մոգ է, կախարդ և սոփեստ: Իր բնությամբ նա ո՛չ անմահ է, ո՛չ մահկանացու, այլ միևնույն օրը ծաղկում ու ապրում է, եթե ամեն բան հաջող է, և մեռնում, սակայն դարձյալ վերակենդանանում է հոր բնության շնորհիվ: Նա կորցնում է այն ամենը, ինչ ձեռք է բերում, հետևաբար Էրոսը ո՛չ աղքատ է, ո՛չ էլ հարուստ: Նա իմաստության և տգիտության մեջտեղում է: Դա այդպես է, որովհետև աստվածներից ոչ ոք չի զբաղվում փիլիսոփայությամբ և չի ցանկանում իմաստուն դառնալ, քանզի [արդեն] այդպիսին է: Նա, ով իմաստուն է, չի զբաղվում փիլիսոփայությամբ: Տգետները նույնպես չեն զբաղվում փիլիսոփայությամբ և չեն ցանկանում իմաստուն դառնալ: Չէ՞ որ տգիտության վատն էլ հենց այն է, որ ոչ առաքինի և անմիտ մեկը միշտ էլ գոհ է իրենից: Իսկ եթե չի կարծում, թե ինչոր բանի կարիք ունի, չի էլ ցանկանում դա:

d

e

204

– Ովքե՞ր են ուրեմն, Դիոտիմա, փիլիսոփայությամբ զբաղվողները,– հարցրի ես,– եթե ո՛չ իմաստուն են, ո՛չ էլ տգետ:

– Մանկանն էլ պարզ է,– պատասխանեց նա,– որ դրանց

b

միջև գտնվողները, և Էրոսն այդպիսին է: Քանզի իմաստությունը ամենագեղեցիկ բաներից մեկն է, իսկ Էրոսը սեր է գեղեցիկի նկատմամբ, այնպես որ Էրոսը անհրաժեշտաբար պետք է փիլիսոփա լինի, իսկ փիլիսոփան իմաստունի և տգետի մեջտեղում է: Պատճառը նրա ծագումն է: Չէ՞ որ նրա հայրը իմաստուն և բարեկեցիկ է, իսկ մայրը՝ ոչ իմաստուն և աղքատ: Այդպիսին է, ո՛վ Սոկրատես, հիշյալ դեմոնի բնությունը: Էրոսի մասին քո պատկերացրածի մեջ զարմանալի

c

ոչինչ չկա: Ըստ իս, դու մտածել ես, որ Էրոսը ինքը սիրո առարկան է, այլ ոչ սիրողը: Ահա ինչու, կարծում եմ, նա քեզ այդքան հրաշալի է թվացել: Չէ՞ որ սիրելին իրականում և՛ գեղեցիկ, և՛ նուրբ, և՛ կատարյալ, և՛ ամենից երանելին է: Իսկ սիրահարը բոլորովին այլ է, այնպիսին, ինչպիսին ես ներկայացրի նրան:

Եվ ես ասացի.

d

– Թո՛ղ այդպես լինի, օտարերկրուհի՛, դու գեղեցիկ խոսեցիր: Բայց եթե Էրոսն այդպիսին է, ի՞նչ օգուտ ունեն նրանից մարդիկ:

– Ես կփորձեմ բացատրել քեզ, Սոկրատես: Այսպիսին է ուրեմն Էրոսը և նրա ծագումը, և, ինչպես դու ես ասում, նա սեր է գեղեցիկի նկատմամբ: Իսկ եթե մեզ հարցնեին. «Սոկրատես և Դիոտիմա, ի՞նչ է գեղեցիկի սերը»: Ավելի հստակ ձևակերպեմ հարցը. «Ի՞նչ է սիրում գեղեցիկ սիրողը»:

– Նա ուզում է, որ գեղեցիկը իրենը դառնա,– պատասխանեցի ես:

– Քո պատասխանը, սակայն, նոր հարց է ծնում,– ասաց նա.– «Ի՞նչ կլինի նրա հետ, ով կունենա գեղեցիկը»:

e

Ես ասացի, որ չեմ կարող հեշտությամբ պատասխանել այդ հարցին:

– Իսկ եթե գեղեցիկը փոխարինենք բարիով: «Ասա՛, Սոկրատես, ի՞նչ է ցանկանում բարին սիրողը»:

– Որ այն իրենը դառնա:

– Եվ ի՞նչ է լինում նրա հետ, ով ունենում է բարին:
 – Դա ավելի հեշտ հարց է,– պատասխանեցի ես,– նա երջանիկ է:

– Բարին ունենալով են երջանիկ երջանիկները,– ասաց 205
 Դիոտիման,– և պետք չէ հարցնել, թե ինչու է երջանիկ լինել ցանկացողը ցանկանում երջանիկ լինել: Քո պատասխանը վերջնական է:

– Ճիշտ ես,– ասացի ես:

– Իսկ այդ ցանկությունն ու սերը հատուկ են բոլոր մարդկանց և միշտ են արդյոք նրանք ցանկանում բարին, ի՞նչ ես կարծում:

– Կարծում եմ, հատուկ են բոլոր մարդկանց:

– Սակայն, Սոկրատես, չնայած բոլորը միշտ սիրում են b
 նույնը,– ասաց նա,– ոմանց մասին մենք ասում ենք, որ սիրում են, իսկ ոմանց մասին՝ ոչ:

– Ինքս եմ զարմանում,– պատասխանեցի ես:

– Մի՛ զարմացիր,– ասաց նա,– մենք վերցնում ենք սիրո ինչ-որ տեսակ և տալիս դրան ընդհանուր անուն, իսկ մյուսները կոչում ենք այլ անուններով:

– Ինչպե՞ս,– հարցրի ես:

– Դու գիտես, որ ստեղծագործությունը տարաբնույթ բան c
 է: Այն ամենը, ինչը պատճառ է չգոյությունից գոյության անցնելու՝ ստեղծագործություն է, հետևաբար արվեստների բոլոր արգասիքները ստեղծագործություն են, իսկ վարպետները՝ ստեղծագործողներ:

– Ճիշտ ես ասում:

– Սակայն, դու գիտես, որ նրանք չեն կոչվում ստեղծագործողներ, այլ ուրիշ անուններ են կրում, քանզի ամբողջ ստեղծագործությունից անջատվում է երաժշտության և չափածոյի արվեստը, որը և կրում է ստեղծագործություն անունը: Միայն սա է կոչվում ստեղծագործություն և միայն սրան տիրապետողներն են կոչվում ստեղծագործողներ:

– Ճիշտ ես ասում,– համաձայնեցի ես:

- d** – Նույնն է նաև սիրո հարցում: Ըստ էության բարու և երջանկության տենչը բոլորի համար մեծ և դավադիր սեր է: Սակայն նրանք, ովքեր հակված են այնպիսի սիրո, ինչպիսին է դրամասիրությունը, մարզասիրությունը և իմաստասիրությունը, չեն կոչվում ո՛չ սիրահարներ, ո՛չ էլ սիրելիներ: Միայն սիրո որոշակի տեսակի ձգտողներին են վերաբերում «սիրել» և «սիրահարներ» ընդհանուր անունները:

– Կարծես թե այդպես է,– պատասխանեցի ես:

– Ոմանք պնդում են,– շարունակեց Դիոտիման,– թե

- e** սիրել նշանակում է փնտրել սեփական կեսը: Իսկ ես պնդում եմ, որ սերը ո՛չ կեսի նկատմամբ է, ո՛չ էլ ամբողջի, եթե, բարեկամս, միաժամանակ ինքը բարին չէ: Մարդիկ, եթե կարծում են, որ իրենց ձեռքերն ու ոտքերը անպիտան են, որոշում են կտրել դրանք: Չէ՞ որ նրանք գնահատում են ոչ սեփականը, իհարկե, պայմանով, որ բարիք չենք կոչում հարազատը և սեփականը, իսկ չարիք՝ օտարը: Ոչ, մարդկանց սիրածը հենց բարին է: Թե՞ դու այդպես չես կարծում:

– Ջևար վկա, այդպես,– պատասխանեցի ես:

– Չի՞ կարելի ուրեմն պարզապես ասել, որ մարդիկ սիրում են բարին:

– Կարելի է,– պատասխանեցի ես:

– Ուրեմն ի՞նչ, չավելացնենք նաև, որ սիրում են ունենալ բարին:

– Ավելացնենք:

– Եվ ոչ միայն ունենալ, այլև ունենալ հավերժ:

– Դա էլ ավելացնենք:

– Մի խոսքով, սերը,– ասաց նա,– սեր է հավերժաբար բարիք ունենալու նկատմամբ:

– Շատ ճիշտ ես ասում,– պատասխանեցի ես:

- b** – Իսկ եթե սերը դա է, ինչպե՞ս պիտի գործեն դրան ձգտողները, որպեսզի նրանց ջանքն ու եռանդը սեր կոչվի: Ի՞նչ պետք է անեն նրանք, կարո՞ղ ես ասել:

– Եթե կարողանայի, Դիոտիմա, չէի հիանա քո իմաստությամբ և չէի գա քեզ մոտ այս ամենն իմանալու:

– Ասեմ: Նրանք պետք է ծնեն գեղեցիկի մեջ՝ թե՛ մարմնապես և թե՛ հոգեպես:

– Ասածդ հասկանալու համար պետք է գուշակ լինել: Ես չեմ հասկանում:

– Ասեմ ավելի պարզ: Բոլոր մարդիկ հղի են ինչպես մարմնով, այնպես էլ հոգով, և երբ հասնում են որոշակի տարիքի, նրանց բնությունը տենչում է ազատվել: Բայց սա չի կարող ազատվել այլանդակի մեջ, այլ՝ միայն գեղեցիկի: Տղամարդու և կնոջ կենակցությունն այդպիսի ազատում է: Դա աստվածային գործ է, քանզի բեղմնավորումն ու ծնունդը անմահի դրսևորումներն են մահկանացուի մեջ: Բայց դրանք չեն կարող տեղի ունենալ անհարիրի մեջ: Իսկ ամենայն աստվածայինին անհարիր է այլանդակը, և հարիր է գեղեցիկը: Ուրեմն ամեն ծննդի Մոյրան և Իլիթիան⁶⁴ Գեղեցիկն է: Ահա ինչու մոտենալով գեղեցիկին՝ հղին ուրախանում ու հրճվում է, ծնում է ու լույս աշխարհ բերում, իսկ երբ մոտենում է այլանդակին, մռայլվում է, վշտանում, կծկվում, շրջվում, փակվում և չի ծնում, այլ շարունակում է կրել պտուղը դժվարությամբ: Ահա ինչու հղիներն ու ծննդկանները գեղեցիկի մեծ տենչ ունեն, որը և ազատում է նրանց երկունքի սոսկալի ցավերից: Որովհետև սերը, Սոկրատես, գեղեցիկի ձգտում չէ, ինչպես կարծում էիր:

c

d

e

– Իսկ ի՞նչ է,– հարցրի ես:

– Դա ծնելն ու լույս աշխարհ բերելն է գեղեցիկի մեջ:

– Միգուցե,– ասացի ես:

– Իհարկե,– շարունակեց նա:– Իսկ ինչու՞ ծնելը: Որովհետև ծնունդն է մահկանացուի հավերժությունն ու անմահությունը: Անմահությունը անհրաժեշտաբար տենչանքի առարկա է, ինչպես համաձայնեցինք բարու հարցում, քանզի սերը բարին հավերժ ունենալու ցանկություն է: Ըստ այդմ՝ նաև անմահության ձգտում:

207

Դա էր ինձ [ամեն անգամ] սովորեցնում Դիոտիման, երբ խոսք էր բացվում սիրո մասին: Եվ մի օր նա հարցրեց.

- Ի՞նչ ես կարծում, Սոկրատես, ո՞րն է այդ սիրո և տենչանքի պատճառը: Չե՞ս նկատել, թե ինչ տարօրինակ են իրենց պահում կենդանիները՝ և՛ վերգետնյա բնակվողները, և՛ փետրավորները, երբ ուզում են ծնել: Նրանք բոլորն էլ
- b** սիրային տենդի մեջ են, նախ՝ զուգավորվելիս, իսկ այնուհետև՝ իրենց սերունդը կերակրելիս, որոնց համար պատրաստ են կռվել ամենաուժեղների դեմ ու մեռնել, սով կրել սերունդը կերակրելու համար, և նման այլ բաներ: Մարդկանց դեպքում դեռ կարելի է մտածել, թե նրանք դա անում են բանականությամբ: Բայց ո՞րն է կենդանիների այդ սիրային վարքի պատճառը: Կարո՞ղ ես ասել:

Եվ ես կրկին պատասխանեցի, որ չգիտեմ:

– Եվ չիմանալով դա՝ մտածում ես սիրային հարցերում մեծ գիտա՞կ լինել:

– Բայց ես հենց նոր ասացի, Դիոտիմա, որ եկել եմ քեզ մոտ, որովհետև ինձ ուսուցիչ է պետք: Ասա՛ ինձ սիրուն վերաբերող այս, ինչպես նաև ուրիշ բաների պատճառը:

- Եթե,– շարունակեց նա,– ընդունում ես, որ սիրո բնությունն այնպիսին է, ինչպիսին հաստատեցինք մի քանի
- d** անգամ, ապա այստեղ էլ չպետք է զարմանաս: Համաձայն հիշյալ փաստարկի՝ կենդանիների դեպքում նույնպես բնությունը փորձում է ըստ կարելիւյն հավերժ ու անմահ դառնալ, բայց կարող է անել դա միայն մեկ բանի միջոցով՝ ծննդաբերության, հնի փոխարեն թողնելով նորը: Չէ՞ որ յուրաքանչյուր էակ այն ժամանակահատվածում, որի ընթացքում համարվում է ողջ և մնում է նույն ինքը,– օրինակ, մարդը, որի մասին ասում են, որ նա մանկությունից մինչև
- e** ծերություն նույնն է,– երբեք նույնը չէ, թեև համարվում է այդպիսին: Նա միշտ նորանում է, ինչ-որ բան կորցնում՝ մազեր, միս, ոսկոր, արյուն, մարմնավոր ամեն բան, և ոչ միայն մարմնավոր, այլև հոգեկան՝ սովորություններ, կարծիք-

ներ, ցանկություններ, վայելքներ, ցավեր, երկյուղներ,— սրանցից յուրաքանչյուրը երբեք չի մնում նույնը. մի բան գոյանում է, մյուսը՝ կորչում: Սակայն շատ ավելի զարմանալի է իմացությունների հարցը: Այստեղ ոչ թե մի մասը սոսկ գոյանում է, իսկ մյուսը՝ կորչում, այլ հենց մենք երբեք նույնը չենք իմացությունների հանդեպ, և այդպես է ամեն առանձին իմացության դեպքում: Այն, ինչ կոչվում է վարժություն, իմացության կորստից խուսափելու համար է: Քանի որ մոռանալը իմացության կորուստ է, իսկ վարժությունը, դարձյալ թարմացնելով կորչող իմացությունը, փրկում է այն, մեզ թվում է, թե սա մնում է նույնը: Ճիշտ այդպեք պահպանվում է նաև ամենայն մահկանացուն, որովհետև չի մնում միշտ նույնը, ինչպես աստվածայինը, այլ հնանալով և հեռանալով՝ թողնում է իր նոր նմանակը: Այս եղանակով է, Սոկրատես, մահկանացուն,— մարմինը և մնացյալ ամեն բան,— հաղորդակից դառնում անմահությանը: Այլ կերպ լինել չի կարող: Մի՛ զարմացիր, ուրեմն, որ ամեն էակ ի բնե հոգ է տանում իր սերնդի մասին: Հանուն անմահության է ամեն ինչին ուղեկից գործվն ու սերը:

208

b

Լսելով այս խոսքերը՝ ես զարմացած հարցրի.

— Մի՞թե այդ ամենը ճշմարիտ է, ո՛վ ամենափմաստուն Դիոտիմա:

Եվ նա պատասխանեց, ինչպես պատասխանում են իսկական իմաստունները.

c

— Հենց այդ է, որ կա, Սոկրատես: Վերցրու՛ մարդկային փառասիրությունը և շատ կզարմանաս դրա անփմաստության վրա, եթե չիիշես ասածներս այն մասին, թե որքան ուժգին են մարդիկ տենչում անվանի դառնալ՝ «առհավերժ անմահ մնալու համար», և հանուն դրա պատրաստ են ավելի մեծ վտանգների ենթարկվել, քան ի սեր իրենց զավակների, պատրաստ են դրամ ծախսել, զրկանքներ կրել ու մեռնել: Մի՞թե քո կարծիքով Ալկեստիսը կմեռներ հանուն Ադմետոսի, Աքիլլեսը՝ Պատրոկլոսի, կամ ձեր Կողոսը՝ հանուն

d

- իր զավակների արքայության⁶⁵, եթե մտադիր չլինեին թողնել այն «անմահ հիշատակն իրենց առաքինության», որը և ունենք այժմ: Ըստ իս՝ բոլորը ամեն ինչ անում են հանուն
- e այդպիսի անմահ փառքի, և որքան ավելի զորեղ են, այնքան ավելին են անում, չէ՞ որ սեր են տածում դեպի անմահը: Նրանք, ովքեր ուզում են ազատվել մարմնով, ավելի շատ դիմում են կանանց և սիրաբանում նրանց հետ՝ հույս
- 209 ունենալով զավակածնությամբ ձեռք բերել անմահություն, հավիտենական հիշողություն ու երջանկություն: Իսկ նրանք, ովքեր հղի են հոգով,– իսկ այդպիսիք կան,– այն էլ ավելի շատ, քան մարմնով, հղի են այնպիսի բաներով, որոնք պատշաճ են հենց հոգուն և նրանից պետք է ելնեն: Այդ ինչ բաներ են: Բանականություն և այլ առաքինություններ: Սրանց ծնողներն են բոլոր ստեղծողները և վարպետներից նրանք, ովքեր հնարամիտ են: Ամենակարևոր ու հրաշալի իմացությունը պետության և տան ղեկավարության իմացությունն է, իսկ կոչվում է դա խոհեմություն և արդարամտություն: Նա, ում հոգին երիտասարդ հասակից հղի է
- b աստվածայինով և ով տարիք առնելով՝ ցանկանում է ծնել և սերել, փնտրում է գեղեցիկը, որում կկարողանար ծնել, քանզի այլանդակի մեջ ոչ մի դեպքում չի ծնի: Լինելով հղի՝ նա ավելի շատ հրճվում է, տեսնելով գեղեցիկ մարմին, քան այլանդակ, բայց հատկապես հրճվում է, եթե նրան հանդիպում է նաև գեղեցիկ, ազնիվ և օժտված հոգի: Այդպիսի մարդու համար նա իսկույն գտնում է խոսքեր առաքինության մասին, այն մասին, թե ինչպիսին պետք է լինի առաքինի
- c այրը և ինչին նվիրաբերի իրեն, և սկսում է դաստիարակել նրան: Ծփվելով և հաղորդակցվելով գեղեցիկ մարդու հետ՝ նա լույս աշխարհ է բերում այն, ինչով հղի էր վաղուց: Նա հիշում է իր բարեկամին, լինի նրա կողքին թե նրանից հեռու, մեծացնում իր սերունդը նրա հետ միասին, այնպես որ նրանք ավելի մոտ են միմյանց, քան մորը և հորը, իսկ նրանց ընկերությունը ավելի ամուր է, քանզի նրանց կապող

զավակները ավելի գեղեցիկ են և անմահ: Ամեն ոք կուզենա ծնել ավելի շուտ այդպիսի զավակներ, քան մարդկային սովորական սերունդ, եթե հիշի Յոմերոսին, Յեսիողոսին և մյուս պոետներին, որոնց սերունդն արժանի է նախանձի, քանզի ինքը լինելով անմահ՝ նրանց տալիս է անմահ հիշատակ: Վերցրու, եթե կուզես, Լակեդեմոնին թողած Լիկուրգոսի զավակներին, որոնք փրկեցին Լակեդեմոնը և ըստ էության ողջ Յունաստանը: Փառավոր է նաև Սոլոնը, որը ստեղծել է օրենքները: Ամենուր՝ թե՛ Յունաստանում, թե՛ բարբարոսների երկրում կան այրեր, որոնք բազում հրաշալի գործեր են արել և զանազան առաքինություններ ծնել: Այդպիսի զավակների պատվին բազմաթիվ սրբատեղիներ են կառուցվել, բայց մարդկային սովորական զավակների համար նույնիսկ մեկը չի կառուցվել:

Քեզ գուցե նույնպես կարելի է հաղորդակից դարձնել սիրո այդ ոլորտներին, Սոկրատես: Իսկ բարձրագույն և ամենագաղտնի ոլորտներին, հանուն որոնց գոյություն ունեն առաջինները, ձիշտն ասած չգիտեմ՝ կարող ես հասնել, թե ոչ: Ամեն դեպքում ես կասեմ նրանց մասին և կիսատ չեմ թողնի խոսքս: Փորձի՛ր ուժերիդ ներածին չափով հետևել ինձ: Նա, ով ուզում է ձիշտ ճանապարհով մոտենալ այդ ամենին, պետք է սկսի երիտասարդ հասակում գեղեցիկ մարմիններին ձգտելուց: Նախ, եթե խորհրդատուն ձիշտ առաջնորդի նրան, նա կսիրի որևէ մարմին և սրա մեջ կծնի գեղեցիկ մտքեր, այնուհետև կհասկանա, որ մի մարմնի գեղեցկությունը ազգակից է մեկ ուրիշ մարմնի գեղեցկությանը և որ եթե պետք է ձգտել գեղեցիկի գաղափարին, անմտություն է կարծելը, թե բոլոր մարմինների գեղեցկությունը միևնույնը չէ: Յասկանալով դա՝ նա կսիրի բոլոր գեղեցիկ մարմինները, իսկ այն մեկի նկատմամբ նրա սերը կթուլանա, որովհետև նա կհասկանա, որ այդ մեծ սերը փոքր է: Դրանից հետո նա կսկսի ավելի բարձր գնահատել հոգու գեղեցկությունը, քան մարմնի, և եթե նրան հանդիպի

գեղեցիկ հոգով, բայց ոչ այնքան ծաղկուն արտաքինով մարդ, դա բավական կլինի նրան, և նա կսիրի այդ մարդուն, հոգ կտանի նրա մասին, կփորձի ծնել այնպիսի մտքեր, որոնք ավելի լավն են դարձնում երիտասարդներին, ինչը կստիպի նրան բարքերի և օրենքների մեջ տեսնել գեղեցիկը, և հասկանալով, որ այդ բոլորը ցեղակից են իրար, նա ունայն կհամարի մարմնի գեղեցկությունը: Բարքերից նա կանցնի գիտություններին՝ տեսնելու համար գիտությունների գեղեցկությունը, որպեսզի դրանց բազմազանությունն ըմբռնելուց հետո այլևս չլինի ինչ-որ մեկի՝ պատանու, տղամարդու կամ բնավորության գեղեցկության նվաստ ու խեղճ ստրուկը, այլ շրջվի դեպի գեղեցկության ծովը և հայի այն, իմաստության ձգտման մեջ ծնելով գեղեցիկ մտքեր և խոսքեր, մինչև որ զորացած ու հասունացած՝ կտեսնի այն միակ իմացությունը, որը միակ գեղեցիկի մասին է: Հիմա հնարավորինս ուշադիր լսիր ինձ:

- Նա, ով սիրային հարցերում խրատներ ստանալով՝ ճիշտ հերթականությամբ է հայել գեղեցիկը, ի վերջո կտեսնի իր բնությամբ զարմանալիորեն գեղեցիկ մի բան, Սոկրատես, որի համար էլ գործի են դրվել նախորդ բոլոր ջանքերը: Նախ, դա հավերժ գոյող, երբեք չառաջացող և երբեք չոչնչացող բան է, որը ո՛չ աճում է, ո՛չ նվազում և, բացի այդ, ոչ թե մի առումով գեղեցիկ է, իսկ ուրիշ առումով՝ այլանդակ, կամ այստեղ գեղեցիկ է, իսկ այնտեղ՝ այլանդակ, մեկի համար գեղեցիկ է, իսկ մյուսի համար՝ այլանդակ, այլ գեղեցիկ է բոլոր առումներով, ամենուրեք և բոլորի համար: Այդ գեղեցիկը կերևա նրան ո՛չ դեմքի, ձեռքերի կամ մարմնի մեկ այլ մասի ձևով, ո՛չ խոսքի կամ իմացության, ո՛չ էլ որևէ այլ բանի, լինի դա կենդանի էակ, երկիր, երկինք կամ մեկ ուրիշ գոյ, այլ որպես ինքն ըստ ինքյան միշտ միակերպ մի բան: Մինչդեռ բոլոր գեղեցիկ բաները հաղորդակից են դրան այնպես, որ գոյանում և ոչնչանում են, իսկ վերջինս ո՛չ ավելանում է, ո՛չ պակասում և ո՛չ էլ

փոխվում: Նա, ով ծիշտ պատանեսիրության շնորհիվ վեր է բարձրացել այս տեսանելի բաներից և սկսել է տեսնել այդ գեղեցիկը, գրեթե հասել է նպատակին:

Սա է ծիշտ ճանապարհը դեպի սերը, լինի դա սեփական ուժերով, թե ուրիշի առաջնորդությամբ. սկսելով առանձին գեղեցիկ բաներից՝ հարկ է ասես աստիճաններով բարձրանալ հանուն բարձրագույն գեղեցիկի, մի գեղեցիկ մարմնից անցնելով երկուսին, երկուսից բոլորին, իսկ այնուհետև գեղեցիկ մարմիններից դեպի գեղեցիկ բարքերը, բարքերից դեպի գիտությունները և գիտություններից դեպի այն մեկը, որը գիտություն է հենց գեղեցիկի մասին՝ ի վերջո հասկանալու համար, թե ինչ է գեղեցիկը: Այստեղ է, սիրելի՛ Սոկրատես, — ասաց մանտինեացին, — ապրում մարդն իր իսկական կյանքը՝ գեղեցիկի հայեցողության մեջ: Եթե դու տեսնես այն, չես համեմատի ոսկու կամ զգեստների, կամ էլ տղաների ու պատանիների հետ, որոնց տեսքից այժմ հրձվում ես, և շատ ուրիշների նման, որոնք զմայլվում են իրենց սիրելիներով ու լինում նրանց հետ, հնարավորության դեպքում պատրաստ ես ո՛չ ուտել, ո՛չ խմել, այլ միայն զմայլվել նրանցով ու լինել նրանց հետ: Ուրեմն ի՞նչ կլինե՞ր, եթե որևէ մեկը տեսներ ինքը գեղեցիկը՝ զուտ, անխառն, չծանրաբեռնված մարդկային մարմնով, գույներով և այլ մահկանացու ավելորդություններով, այսինքն՝ եթե կարողանար տեսնել աստվածային գեղեցիկն իր միակերպության մեջ: Մի՞թե դու կարծում ես, որ այդ գեղեցիկին հայացք նետած, այն հայող և դրա հետ եղող մարդը կարող է խղճալի կյանք վարել: Մի՞թե չես հասկանում, որ հայելով գեղեցիկը ինչպես որ հարկն է՝ որպես գեղեցիկ, նա կծնի ոչ թե առաքինության ուրվականներ, այլ ճշմարիտ առաքինություն, քանզի գործ ունի ոչ թե ուրվականների, այլ ճշմարտության հետ: Իսկ նա, ով ծնել և սնել է ճշմարիտ առաքինություն, արժանանում է աստվածային սիրո, և եթե մարդկանց մեջ ինչ-որ մեկն անմահ է, ապա հենց նա:

c

d

e

212

- b** Սա պատմեց ինձ Դիտտիման, Ֆեդրոս և դուք բոլորդ, և ես հավատում եմ նրան: Իսկ հավատալով՝ նաև ուրիշներին եմ փորձում հավատացնել, որ մարդկային բնության այս բարձրագույն ձեռքբերումներին ամենից դյուրին կարելի է հասու դառնալ Էրոսի ընկերակցությամբ: Ահա ինչու ես պնդում եմ, որ բոլորը պետք է մեծարեն Էրոսին, և ինքս մեծարելով այն, ինչ կապված է սիրո հետ, ու ջանասիրաբար վարժվելով դրանում, ուրիշներին էլ խորհուրդ եմ տալիս դա անել, իսկ ինքս կարեցածիս չափ փառաբանում եմ
- c** Էրոսի զորությունն ու քաջությունը: Եթե ուզում ես, Ֆեդրոս, համարիր այս ճառը փառաբանման խոսք՝ նվիրված Էրոսին, իսկ եթե ոչ, անվանիր, ինչպես կուզես:

Երբ Սոկրատեսն ավարտեց, բոլորը գովեցին նրան, իսկ Արիստոփանեսը փորձում էր ինչ-որ բան ասել, քանի որ իր խոսքում Սոկրատեսը հիշատակել էր մի հատված իր ճառից: Հանկարծ բախեցին բակի դուռը, այն էլ այնքան ուժեղ, որ թվաց, թե նոր խնջույքավորներ են եկել, և լսվեց ֆլեյտայի ձայնը:

- d** – Ծառաններ,- ասաց Ագաթոնը,- տեսե՛ք, թե ովքեր են, և եթե մերձավորներից են, ներս հրավիրեք, իսկ եթե ոչ, ասեք, որ մենք արդեն չենք խմում, այլ հանգստանում ենք:
- Շուտով բակից լսվեց Ալկիբիադեսի ձայնը, որը սաստիկ հարբած էր և բարձր բղավում էր, հարցնելով, թե ուր է Ագաթոնը, և պահանջելով, որ ուղեկցեն նրա մոտ: Նրան
- e** ներս ուղեկցեցին ֆլեյտահարուհու, որը պահում էր նրան, և ուրիշ մի քանի հոգու հետ: Ալկիբիադեսը՝ գլուխը բաղեղի ու մանուշակների պսակով և բազում ժապավեններով զարդարած, կանգնեց դռան շեմին և ասաց.

– Ողջուն՛ց ձեզ, ո՛վ այրեր: Թույլ կտա՞ք, որ ձեր խնջույքին միանա շատ հարբած մեկը, թե՞ հեռանանք: Սակայն նախ պսակ կղնենք Ագաթոնի գլխին, քանի որ դա է մեր գալու նպատակը: Երեկ ես չկարողացա գալ, իսկ այժմ եկել եմ գլուխս ժապավեններով զարդարած, որպեսզի հանեմ

դրանք և պսակեմ ամենախմաստունի և գեղեցիկի գլուխը: Դուք ծիծաղում եք վրաս, որովհետև ես հարբած եմ: Ծիծաղե՞ք, ես միևնույն է գիտեմ, որ ճիշտ եմ: Միայն թե ասեք, այսքանից հետո ներս գա՛մ, թե՞ ոչ: Կխմե՞ք ինձ հետ, թե՞ չեք խմի:

213

Բոլորը աղմկեցին, ներս կանչելով նրան և առաջարկելով ընկողմանել, Ագաթոնը՝ նույնպես: Ալկիբիադեսը ներս մտավ ծառաների օգնությամբ և հանեց ժապավենները, որպեսզի զարդարի Ագաթոնին: Ժապավենները ծածկում էին նրա աչքերը, և նա, չնկատելով Սոկրատեսին, նստեց Ագաթոնի կողքին՝ նրա և Սոկրատեսի միջև, որը մի կողմ քաշվեց: Նստելով Ագաթոնի կողքին՝ Ալկիբիադեսը համբուրեց նրան և կապեց ժապավենները: Եվ Ագաթոնն ասաց.

b

– Ծառաներ, հանե՞ք Ալկիբիադեսի կոշիկները, որպեսզի նա նույնպես ընկողմանի մեզ հետ և լինի երրորդը:

– Իհարկե,– ասաց Ալկիբիադեսը,– բայց ո՞վ է մեր երրորդ սեղանակիցը:

Շրջվելով՝ տեսավ Սոկրատեսին և, ճանաչելով նրան, ոտքի ելավ ու բացականչեց.

– Ո՞վ Ջերակես, այս ի՞նչ է: Մի՞թե Սոկրատեսն է: Նորից դարան ես լարել և սովորությանդ համաձայն անսպասելիորեն հայտնվել այնտեղ, ուր քեզ չեմ սպասում: Ինչու՞ ես եկել այս անգամ: Եվ ինչու՞ ես ընկողմանել այստեղ, և ոչ Արիստոփանեսի կողքին կամ ուրիշ մեկի, որ ծիծաղելի է կամ ցանկանում է այդպիսին լինել, այլ նստել ես հավաքվածներից ամենագեղեցիկի կողքին:

c

Սոկրատեսն ասաց.

– Ագաթոն, լավ կլիներ, որ պաշտպանների ինձ, քանի որ սերը այս մարդու նկատմամբ իսկական պատուհաս է դարձել ինձ համար: Այն օրից, ինչ սիրեցի նրան, ո՛չ կարող եմ նայել գեղեցիկ մեկին, ո՛չ էլ զրուցել նրա հետ, առանց շարժելու Ալկիբիադեսի կատաղի խանդը, երբ նա քարը քարին չի թողնում, պարսավում է ինձ և քիչ է մնում

d

ազատություն տա ձեռքերին: Տե՛ս, որ հիմա էլ մի բան չանի, հաշտեցրու մեզ, իսկ եթե նա բռնության դիմի, պաշտպանի՛ր ինձ, քանզի ես շատ եմ վախենում նրա մոլի սիրուց:

- Ինձ և քեզ,– ասաց Ալկիբիադեսը,– հաշտեցնել չի լինի: Ես մեկ ուրիշ անգամ կլուծեմ այսօրվա վրեժը: Իսկ այժմ, Ագաթոն, տու՛ր ինձ քո ժապավեններից, և ես կգարդարեմ նաև այս զարմանալի գլուխը, որպեսզի նա չմեղադրի ինձ, թե քեզ զարդարեցի, իսկ իրեն, որ միշտ հաղթել է ուրիշներին իր խոսքով, այլ ոչ քո պես միայն երկու օր առաջ, չզարդարեցի:

Եվ վերցնելով Ագաթոնի ժապավեններից՝ նա զարդարեց Սոկրատեսին և ընկողմանեց:

- Դուք կարծես թե սթափ եք, ո՛վ այրեր: Չեղավ, պետք է խմել՝ պայմանավորվել ենք: Իսկ մինչև որ դուք բավականաչափ չխմեք, խնջույքը կղեկավարեմ ես: Դե, Ագաթոն, հրամայիր, որ մեծ գավաթ բերեն, եթե կա այդպիսինը: Ասենք, հարկավոր չէ: Յեյ, ծառա՛, բեր ինձ այդ սառեցման գավաթը,– ասաց նա՝ տեսնելով, որ այն ութ կոտիլեից⁶⁶ ավել կտեղավորի:

Լցնելուց հետո նախ ինքը խմեց, հետո կարգադրեց լցնել Սոկրատեսին՝ ասելով.

– Սոկրատեսին իմ հնարքը ոչինչ է: Նա կարող է խմել, որքան ասեն, և բոլորովին չհարբել:

Ծառան լցրեց գավաթը, և Սոկրատեսը խմեց: Այդժամ Էրիքսիմաքոսն ասաց.

- Եվ ի՞նչ կկոչվի մեր արածը, Ալկիբիադես: Ո՛չ գրուցում ենք գավաթի շուրջ, ո՛չ երգում, այլ պարզապես խմում ենք, ինչպես ծարավները:

– Ո՛վ Էրիքսիմաքոս, ազնվագույն և խոհեմ հոր ազնվագույն որդի, ողջու՛յն,– բացականչեց Ալկիբիադեսը:

– Ողջույն,– պատասխանեց Էրիքսիմաքոսը,– բայց ինչպե՞ս վարվենք:

– Ինչպես կհրամայես: Չէ՞ որ քեզ հարկ է լսել:

Բժիշկն հմուտ բազմապատիկ գերադաս է,
քան այլ անձինք⁶⁷:

Կարգադիր, ինչպես հարմար ես գտնում:

– Ուրեմն լսիր,– ասաց Էրիքսիմաքոսը,– նախքան քո գալը մենք որոշեցինք հերթով, սկսած աջից, հնարավորինս գեղեցիկ ծառ ծոնել Էրոսին և փառաբանել նրան: Մենք բոլորս արդեն խոսել ենք: Դու չես խոսել, թեև խմել ես: Արդար կլիներ, եթե դու էլ խոսեիր, իսկ այնուհետև հաղորդեիր Սոկրատեսին քո խրատը, իսկ նա՝ իր աջից նստածին, և այդպես հերթով:

– Լավ ես ասում, Էրիքսիմաքոս: Սակայն հարբած մարդը չի կարող խոսքով մրցել սթափ մարդու հետ: Եվ բացի այդ, ո՛վ երանելի, մի՞թե հավատացիր Սոկրատեսի ասածին: Մի՞թե չգիտես, որ իրականում նրա ասածի ճիշտ հակառակն է: Այդ նա է, որ եթե իր ներկայությամբ գովեմ որևէ մարդու կամ աստծո, բայց ոչ իրեն, դիմում է ձեռքերի օգնությանը:

– Մի՛ գրպարտիր,– ասաց Սոկրատեսը:

– Ոչինչ մի՛ ասա,– շարունակեց Ալկիբիադեսը,– ես ոչ ոքի չեմ գովի քո ներկայությամբ, Պոսեյդոնը վկա:

– Ուրեմն,– առաջարկեց Էրիքսիմաքոսը,– գովերգի՛ր Սոկրատեսին:

– Ի՛նչ նկատի ունես,– պատասխանեց Ալկիբիադեսը,– կարծում ես, պետք է նստեմ նրա առջև և բոլորիդ ներկայությամբ վրեժ լուծեմ:

– Մտքինդ ի՛նչ է,– հարցրեց Սոկրատեսը,– գուցե ուզում ես ինձ զավեշտի առարկա՞ դարձնել քո խոսքում:

– Ճշմարտությունը կասեմ: Բայց չգիտեմ՝ թույլ կտաս, թե ոչ:

– Ճշմարտությունը ոչ միայն թույլ կտամ, այլև կիրամայեմ ասել:

– Դեմ չեմ,– պատասխանեց Ալկիբիադեսը,– իսկ դու արա հետևյալը. ընդմիջիր խոսքս, եթե ճշմարտությունը

215 չասեմ: Ես մտադրված սուտ չեմ ասի: Չզարմանաս, եթե եղածը հիշելիս խոսքս կապակցված չլինի. հեշտ չէ հերթականությամբ թվարկել քո տարօրինակությունները:

Ո՛վ այրեր, ես կփորձեմ գովաբանել Սոկրատեսին համեմատությունների միջոցով: Գուցե նա մտածի, թե ես դա անում եմ զավեշտի համար, սակայն համեմատությունները

- b** ճմարտության համար են, ոչ զավեշտի: Ամենից շատ նա նման է քանդակագործների արվեստանոցներում այն նստած սիլենոսներին, որոնց վարպետները քանդակում են սրինգը կամ ֆլեյտան ձեռքին: Եթե կիսես այդպիսի սիլենոսներին, նրանց մեջ կտեսնես աստվածների քանդակներ: Ես ասում եմ, որ Սոկրատեսը նման է Մարսիաս սատիրոսին⁶⁸: Սոկրատե՛ս, այն, որ արտաքինով նման ես սիլենոսներին, ինքդ էլ չես հերքի: Իսկ որ նաև մնացյալ բաներում ես նման, այդ մասին լսիր ինձնից: Ասա՛, դու հանդու՛գն մարդ ես, թե՞ ոչ: Եթե չհամաձայնես, ես վկաներ կբերեմ: Մի՛թե դու ֆլեյտահար չես: Եվ շատ ավելի հրաշալի ֆլեյտահար, քան Մարսիասն է: Նա գործիքի միջոցով, իր բերանի զորությամբ է հմայել մարդկանց, ինչպես որ այժմ անում է յուրաքանչյուր ֆլեյտահար, որ նվագում է նրա մեղեդիները: Այն մեղեդիները, որ նվագել է Օլիմպոսը⁶⁹, ըստ իս սովորել է Մարսիասից: Միայն նրա մեղեդիներն են, որ անկախ այն բանից՝ նվագում է լավ ֆլեյտահար, թե վատ ֆլեյտահարուհի, գրավում են և բացահայտում նրանց, ովքեր աստվածների և հաղորդությունների կարիք ունեն: Դու Մարսիասից ոչնչով չես տարբերվում, սակայն անում ես այդ բոլորը առանց գործիքի, միայն խոսքով: Երբ լսում ենք մեկ այլ, նույնիսկ լավ հռետորի ճառը, այն, ձիշտն ասած. մեզնից ոչ ոքի չի հուզում: Բայց լսելով քո խոսքը՝ ուրիշի նույնիսկ շատ վատ վերապատմությամբ, անկախ այն բանից՝ ունկնդիրը կին է, այր թե պատանի, բոլորս էլ ազդվում ենք և հափշտակվում:

Իսկ ես, ո՛վ այրեր, եթե չվախենայի կատարելապես հարբած թվալ, կպատմեի ձեզ, թե ինչ եմ զգացել և ինչ

եմ զգում նույնիսկ այժմ նրան լսելիս: Քանզի երբ լսում եմ նրան, սիրոս բաբախում է ավելի ուժեղ, քան կորիբանտների⁷⁰ մոտ, և նրա խոսքերից աչքերիցս արցունք է հոսում: Նույնը, տեսնում եմ, տեղի է ունենում նաև ուրիշների հետ: Լսելով Պերիկլեսին⁷¹ և ուրիշ հրաշալի հռետորների, ես գտնում էի, որ նրանք լավ են խոսում, բայց նման բան չէի զգում, հոգիս չէր խռովվում՝ ընդդիմանալով իմ ստրկական ապրելակերպին: Իսկ այս Մարսիասն ինձ հաճախ է գցել 216 այդպիսի վիճակի մեջ, այնպես որ ինձ սկսում էր թվալ, թե չի կարելի այլևս ապրել այնպես, ինչպես ապրում եմ: Եվ դու, Սոկրատես, չես ժխտի ասվածի ճշմարտությունը: Ես այժմ քաջ գիտակցում եմ, որ եթե սկսեմ լսել նրան, չեմ դիմանա ու կզգամ նույնը: Չէ՞ որ նա կստիպի ինձ համաձայնել, որ ունենալով թերություններ, հոգ չեմ տանում ինքս իմ մասին, այլ զբաղվում եմ աթենացիների գործերով: Ահա ինչու առնում եմ գլուխս ու փախչում նրանից, ինչպես սիրեններից, այլապես մինչև ծերությունն նրա կողքին կմնամ: Միայն նրա առջև եմ զգում ամոթ, մի բան, որի մեջ ինձ ոչ ոք չի կասկածի: Ես միայն նրանից եմ ամաչում, քանզի գիտակցում եմ, որ չեմ կարող հակաձառել նրա խրատներին, բայց հենց որ հեռանում եմ նրանից, տեղի եմ տալիս բազմության պատիվներին: Ես խուսափում և փախչում եմ նրանից, իսկ երբ տեսնում եմ, ամոթ եմ զգում, քանզի համաձայն եմ եղել նրան: Հաճախ նույնիսկ ուզում եմ, որ այդպիսի մարդ ընդհանրապես չլինի: Սակայն եթե չլինի, լավ գիտեմ, շատ ավելի կցավեմ: Մի խոսքով՝ ինքս էլ չգիտեմ, ինչպես վարվեմ նրա հետ:

Ահա թե ինչ ազդեցություն են ունենում ինձ և ուրիշների վրա այդ սատիրոսի մեղեդիները: Սակայն լսեք, թե որքան նման է նա նրան, ինչի հետ որ համեմատեցի, և ինչ զարմանալի ուժ ունի: Լավ իմացեք, որ ոչ ոք ձեզնից նրան չի ճանաչում: Իսկ ես, քանի որ սկսել եմ, ցույց կտամ, թե ինչպիսին է: Դուք տեսնում եք, որ Սոկրատեսը սիրում է

գեղեցիկներին, միշտ նրանց հետ է, հիանում է նրանցով և այդքանից հետո ոչինչ չգիտի ու ոչնչից տեղյակ չէ: Մի՞թե դրանով նման չէ սիլենոսի: Շատ նման է: Չէ՞ որ նա միայն արտաքուստ է պահում իրեն այնպես, ասես քանդակված սիլենոս լինի: Բայց եթե բացեք նրան, սեղանակից այրեր, չեք պատկերացնում, թե որքան խոհեմություն կգտնեք նրանում:

- e Իմացեք, որ նրան չի մտահոգում՝ գեղեցիկ է մարդը, թե ոչ, նա բոլորովին անտարբեր է հարստության կամ այլ առավելության նկատմամբ, որ այդքան կարևորում է ամբոխը: Բոլոր այդ ձեռքբերումները նա չի արժևորում, իսկ մեզ բոլորիս համարում է ոչինչ, ասում եմ ձեզ, և ամբողջ կյանքում նա միայն ձև է անում ու խաղում է մարդկանց հետ: Չգիտեմ, տեսե՞լ է արդյոք որևէ մեկը նրա ներսի քանդակները, երբ նա իսկապես բացվում է: Ես տեսել եմ մեկ անգամ, և դրանք ինձ այնքան աստվածային, ոսկե, գեղեցիկ և զարմանալի թվացին, որ շուտով սկսեցի անել այն, ինչ նա կարգադրում էր: Կարծելով, թե նա լրջորեն տարված է իմ ծաղկուն տարիքով, համարեցի դա իմ զարմանալի հաջողությունը, որովհետև տեղի տալով Սոկրատեսին՝ կարող էի լսել այն ամենը, ինչ նա գիտի: Քանզի հրաշալի էի համարում իմ տարիքը: Այդպես մտածելով՝ ես ազատ արձակեցի վերակացուին, առանց որի մինչ այդ չէի հանդիպում Սոկրատեսի հետ, և գնացի նրա մոտ մենակ: Կպատմեմ ողջ ժժմարտությունը, այնպես որ ուշադիր եղեք, և եթե ստեմ, Սոկրատես՛ս, ուղղիր ինձ:

Մենք հանդիպեցինք, ո՛վ այրեր, առանձին, և ես կարծում էի, թե նա կխոսի ինձ հետ այնպես, ինչպես խոսում են սիրահարվածներն իրենց սիրեցյալների հետ, երբ մենակ են, և ցնծում էի: Բայց դա տեղի չունեցավ. սովորականի նման անցկացնելով օրը և զրուցելով ինձ հետ, նա հեռացավ: Դրանից հետո ես հրավիրեցի նրան ինձ հետ մարզվելու, և մարզվում էի՝ սպասելով, որ գուցե այստեղ կհասնեմ հաջողության: Նա հաճախ էր մարզվում և ըմբշամարտում ինձ հետ,

երբ ոչ ոք ներկա չէր: Ի՞նչ ասեմ: Կրկնվում էր նույն պատմությունը: Երբ այդպես ոչնչի չհասա, որոշեցի ուժով գրավել այդ մարդուն և ետ չկանգնել սկսածից, այլ պարզել, թե բանն ինչն է: Ես հրավիրեցի նրան ընթրիքի՝ ճիշտ ինչպես սիրահարվածը, որը դարան է լարում սիրեցյալին: Դրան էլ նա միանգամից չհամաձայնեց, թեև որոշ ժամանակ հետո ընդունեց հրավերս: Երբ եկավ առաջին անգամ, ընթրիքից հետո ցանկացավ հեռանալ, այդ անգամ ամաչեցի ու բաց թողեցի նրան: Հաջորդ անգամ ընթրիքից հետո մենք զրուցեցինք մինչև մութն ընկնելը, և երբ նա ուզեց գնալ, ես, ասելով, թե ուշ է, ստիպեցի մնալ: Նա պառկեց իմ կողքի մահձին, որին ընկողմանել էր ընթրիքի ժամանակ, իսկ սենյակում մեզնից բացի ոչ ոք չկար:

Մինչև այստեղ իմ պատմածը կարող էր ինձնից լսել յուրաքանչյուր ոք: Բայց ահա մնացյալը դուք չէիք լսի, եթե, նախ, ինչպես ասում են, գինին չլիներ ճշմարտախոս, — առանց տղաների կամ տղաների հետ, — և, այնուհետև, եթե ինձ անարդար չթվար Սոկրատեսին գովաբանելիս թաքցնել նրա հրաշալի արարքը: Բացի այդ, ես ինձ զգում եմ, ինչպես օձից խայթվածը: Ասում են, թե այդպիսի մարդն իր զգացածը պատմում է միայն նրանց, ովքեր նույնպես խայթված են եղել, քանզի միայն նրանք կարող են հասկանալ ու հանդուրժել, ինչ էլ անի և ասի ցավից: Ինձ խայթեց ավելի ցավոտ բան, ընդ որում խայթեց ամենացավոտ տեղը՝ սիրտս, հոգիս, — անվանեք դա, ինչպես կուզեք, — քանզի խայթվել ու վիրավորվել էի փիլիսոփայական խոսքով, որը օձից ավելի ուժեղ է խայթում երիտասարդ, շնորհալի հոգին և ստիպում նրան անել և ասել ամեն ինչ: Ես տեսնում եմ այստեղ Ֆեդրոսին, Ագաթոնին, Էրիքսիմաքոսին, Պավսանիասին, Արիստոդեմոսին և ուրիշների, էլ չեմ ասում Սոկրատեսին: Բոլորդ համակված եք փիլիսոփայական մոլուցքով և կրքով: Ուրեմն լսեք բոլորդ: Չէ՞ որ դուք կներեք ինձ այն, ինչ արեցի այն օրը և ինչը կպատմեմ այժմ: Իսկ տնեցի-

ները և մյուս անհաղորդներն ու անտեղյակները թո՛ղ փակեն իրենց ականջները մեծ դարպասով:

- c Երբ, ո՛վ այրեր, կանթեղը մարեց և ստրուկները դուրս եկան, ես որոշեցի այլևս չխորամանկել և բացահայտ ասել մտքինս:

– Քնա՞ծ ես, Սոկրատես,– հարցրի՝ ցնցելով նրան:

– Ոչ,– պատասխանեց նա:

– Գիտե՞ս, թե ինչ եմ որոշել:

– Ի՞նչ,– հարցրեց նա:

– Ինձ թվում է, դու ինձ միակ արժանի սիրահարն ես և, իմ կարծիքով, վարանում ես ասել դա ինձ: Ինչ վերաբերում է ինձ, ապա միանգամայն անմիտ կլիներ չգոհացնել քեզ, անգամ եթե դա վերաբերեր իմ ունեցվածքին կամ ընկերներին: Ինձ համար լավագույնը ավելի կատարյալ

- d դառնալն է, իսկ այդ հարցում ես քեզնից լավ օգնական չեմ գտնի: Ահա ինչու չգոհացնելով այդպիսի մարդու, ես ավելի շատ կամաչեի իմաստուն մարդկանցից, քան գոհացնելու դեպքում՝ բազմությունից և անմիտներից:

Լսելով դա՝ նա իրեն հատուկ հեգնանքով ասաց.

– Ալկիբիադես, բարեկա՛մս, կարծես դու իրոք հիմար չես, եթե ճշմարիտ է այն, ինչ ասացիր իմ մասին, և իմ մեջ կա

- e մի ուժ, որը կարող է ավելի լավը դարձնել քեզ, այսինքն՝ եթե դու իմ մեջ տեսել ես մի գեղեցկություն, որը բոլորովին տարբեր է քո բարեստությունից: Եթե տեսնելով այն՝ դու փորձում ես մերձենալ ինձ հետ և գեղեցիկը փոխել գեղեցիկի հետ, ուրեմն մտադիր ես ինձնից ավելի շատ ստանալ և ճշմարիտ գեղեցիկը ձեռք բերել թվացյալի փոխարեն՝ փոխելով պղինձը ոսկու հետ: Սակայն, երանելի՛ս, ավելի լավ նայիր ինձ, որպեսզի քեզնից ոչինչ չվրիպի: Մտքի տեսողությունը սկսում է սրվել, երբ աչքերի տեսողության ծաղկուն ժամանակն անցնում է: Բայց դու դեռ հեռու ես դրանից:

Լսելով դա՝ պատասխանեցի.

– Քեզ ասացի, ինչ մտածում էի: Իսկ դու ինքդ որոշիր, թե որն է ավելի լավ քեզ և ինձ համար:

– Այդ մեկը ճիշտ ես ասում: Ապագայում մենք նախ կխորհրդակցենք, իսկ հետո կգործենք, ինչպես ճիշտ կհամարենք, և դա վերաբերում է թե՛ այս և թե՛ ուրիշ հարցերին: b

Ես կարծեցի, թե այս հարց ու պատասխանի ընթացքում խոցել եմ նրան, ինչպես նետով: Ես ոտքի կանգնեցի և չթողնելով, որ խոսք ասի, հագա իմ այս հիմատիոնը (ձմեռ էր), մտա նրա թիկնոցի տակ և, ձեռքերով գրկելով այդ հիրավի աստվածային և զարմանալի մարդուն, այդպես պառկած մնացի ամբողջ գիշեր: Այս անգամ էլ, Սոկրատես, չես ասի, թե ստում եմ: Չնայած իմ այդ արարքին, նա հաղթեց ինձ, արհամարհեց իմ ծաղկուն տեսքն ու զավեշտի վերածեց, իսկ ես մտածում էի, թե սա ինչ-որ բան արժե, դատավոր այրեր,– չէ՞ որ դուք Սոկրատեսի ամբարտավանության դատավորներն եք: Քանզի լավ իմացեք,– աստվածներն ու դիցուհիները վկա,– Սոկրատեսի հետ գիշերն անցկացնելուց հետո, ես վեր կացա այնպես, ինչպես եթե քնած լինեի հորս կամ ավագ եղբորս կողքին: c

Ի՞նչ հոգեվիճակ պիտի ունենայի ձեր կարծիքով դրանից հետո՝ լինելով մի կողմից վիրավորված, իսկ մյուս կողմից հիացած այդ մարդու բնավորությամբ, խելամտությամբ և արիությամբ,– մարդ, որի միտքն ու ինքնատիրապետումն ունեցող ոչ ոքի երբևէ հույս չեմ ունեցել հանդիպելու: Յետևաբար, ո՛չ կարող էի բարկանալ նրա վրա, ո՛չ էլ հրաժարվել նրա ընկերակցությունից, իսկ իրեն մերձեցնելու հնար չունեի: Ես լավ գիտեի, որ դրամով նրան նվաճելը ավելի անհնար է, քան Այասին⁷¹ թրով հաղթելը, իսկ այն միակ բանից, որով հույս ունեի գրավել նրան, նա խույս տվեց: Ես շփոթված էի և հաղթված նրանից, ինչպես ոչ մեկի: d

Այդ ամենը տեղի էր ունեցել նախքան Պոտիդեա⁷² արշա-

220

վելը, ուր մենք սեղանակից էինք: Նախ ասեմ, որ զրկանքներ կրելու կարողությամբ նա գերազանցում էր ոչ միայն ինձ, այլև բոլոր մյուսներին: Երբ կտրվեցինք զորքից, ինչպես պատահում է արշավանքների ժամանակ, և մնացինք առանց սնունդի, ոչ ոք չէր կարող մրցել նրա հետ ինքնատիրապետմամբ: Միայն լի օրերին նա կարող էր արժանիորեն վայելել եղածը, ու թեև չէր սիրում խմել, ստիպելու դեպքում գերազանցում էր մյուսներին, իսկ ամենազարմանալին այն է, որ Սոկրատեսին երբեք ոչ ոք չի տեսել հարբած: Կարծում եմ, դա կապացուցվի նաև այժմ: Ձմեռը նույնպես (իսկ ձմեռներն այնտեղ սաստիկ ցրտաշունչ են) նա զարմանալիորեն լավ էր տանում, և մի օր սարսափելի սառնամանիքին, երբ ուրիշներն ընդհանրապես դուրս չէին գալիս կամ դուրս գալու դեպքում շատ տաք էին հագնվում՝ փաթաթելով ոտքերը թաղիքով ու ոչխարի մորթով, նա դուրս էր գալիս իր սովորական թիկնոցով և սառույցի վրա ոտաբորիկ քայլում ավելի հեշտ, քան ուրիշները ոտնամաններով: Ջինվորները խեթ-խեթ նայում էին նրան, մտածելով, թե ծաղրում է:

Այս մասին բավական է, արժե, որ լսեք, թե

- c *Ինչ հորինեց նա՝ մեծ հերոսը քաջազոր,
Ու կատարեց...⁷³*

այնտեղ, արշավի ժամանակ: Մի անգամ առավոտյան նա տեղում կանգնած ինչ-որ բան սկսեց մտածել և, քանի որ նրան հուզող խնդիրը չէր լուծվում, չդադարեցրեց մտորումները և շարունակեց կանգնած մնալ: Արդեն կեսօր էր, նրան տեսնող մարդիկ զարմանքով ասում էին միմյանց, թե Սոկրատեսն առավոտից տեղում կանգնած ինչ-որ բան է մտածում: Ի վերջո երեկոյան, ընթրիքից հետո, որոշ հոնիացիներ դուրս հանեցին իրենց տապաստակները՝ բացօթյա ընկողմանելու,– ամառ էր,– և միաժամանակ տեսնելու՝ կանգնած կմնա արդյոք Սոկրատեսը նաև գիշերը: Այնպես եղավ, որ

կանգնեց մինչև արշալույս, իսկ հետո աղոթեց Արևին և հեռացավ:

Իսկ կուզե՞ք իմանալ, թե ինչպիսին է մարտի դաշտում: Այստեղ էլ հարկ է նրան արժանին մատուցել: Մարտում, որի համար ինձ պարգևատրեցին զորավարները, ինձ փրկեց ոչ **e** այլ ոք, քան Սոկրատեսը: Այդ նա չկամենալով ինձ թողնել՝ դուրս բերեց մարտի դաշտից և՛ ինձ՝ վիրավորիս, և՛ իմ զենքը: Ես, Սոկրատես, այն ժամանակ պահանջում էի զորավարներից, որ քեզ հանձնեն պարգևը, դու չես կարող սա մերժել և ասել, թե ստում եմ: Սակայն զորավարները, հաշվի առնելով իմ բարձր դիրքը, ցանկացան պարգևը շնորհել ինձ, իսկ դու նրանցից ավելի էիր ուզում, որ ինձ հանձնեն, և ոչ քեզ: Ամենից շատ, ո՛վ այրեր, արժեր տեսնել Սոկրատեսին, երբ մեր զորքը նահանջում էր Դելիոսից: Ես այն ժամանակ հեծելագորում էի, իսկ նա հուպիտների մեջ: Մարդիկ արդեն ցրված էին, իսկ նա վերադառնում էր Լաքեսի⁷⁴ հետ: Ես հանդիպեցի նրանց և տեսնելուն պես կոչ արեցի արիանալ, և ասացի, որ չեմ լքի նրանց: Այդ ժամանակ Սոկրատեսն իրեն դրսևորեց ավելի լավ, քան Պոտիդեայում: Ես ինքս պակաս վտանգված էի, քանի որ հեծյալ էի: Նախ որքա՞ն ավելի խոհեմ էր Լաքեսից: Բացի այդ, ինձ թվում էր, Արիստոփա՛նես, թե քո խոսքերով ասած՝ նա քայլում էր «հպարտ՝ շրջելով գլուխը մերթ այս, մերթ այն կողմ⁷⁵», նայում և՛ ընկերներին, և՛ թշնամիներին, այնպես որ բոլորին պարզ էր, որ այս մարդն ի վիճակի է հակահարված տալու իրեն դիպչողին: Նրանք երկուսն էլ անվնաս ետ նահանջեցին: Չէ՞ որ իրեն այդպես պահողին պատերազմում հազիվ թե ձեռք տան, քանզի հետապնդում են գլխակորույս փախչողներին: **c**

Սոկրատեսին գովաբանելիս շատ ուրիշ զարմանալի բաներ էլ կարելի է հիշել: Նրա սովորություններից շատերը կարելի է տեսնել նաև ուրիշ մեկի մոտ, բայց որ նրա խոսքը նման չէ մարդկանցից և ոչ մեկի խոսքին՝ ո՛չ հներից,

ո՛չ ապրողներից, – ամենազարմանալին է: Աքիլլեսին կարելի է նմանեցնել Բրասիդասին կամ ուրիշներին, Պերիկլեսին՝ Նեստորին և Անտենորին⁷⁶, թերևս նաև ուրիշներին էլ կարելի է ինչ-որ մեկին նմանեցնել: Բայց Սոկրատեսի նմանին, որ այդպիսի ճառեր ասի, դժվար թե գտնենք ողջերի կամ հնե-րի մեջ: Նրան կարելի է նմանեցնել, ինչպես և անում եմ, ոչ թե մարդկանցից որևէ մեկին, այլ սիլենոսներին և սատիրոսներին՝ թե՛ իրեն, թե՛ իր ճառերը:

e Սկզբում ես չնշեցի, որ նրա ճառերն էլ նման են բացվող սիլենոսների: Սոկրատեսի խոսքը լսելիս՝ այն կարող է զավեշտական թվալ. նա պարուրում է այն բառերով ու արտահայտություններով, որոնք լպիրշ սատիրոսի մորթի են հիշեցնում: Նա խոսում է գրաստային ավանակների, դարբինների, կոշկակարների, դաբաղների մասին և կարծես միշտ նույնն է ասում նույն բառերով, ահա ինչու անփորձ և անտեղյակ մարդը կարող է ծիծաղել նրա խոսքերի վրա: Սակայն բացելով դրանք և ներս նայելով՝ կտեսնեն, որ դրանց մեջ իմաստ կա և որ այդ բառերն աստվածային են, որ պարունակում են առաքինության բազում քանդակներ և առնչվում շատ բաների կամ, ավելի շուտ, ամեն բանի, որ պիտի անի գեղեցիկ և առաքինի դառնալ ցանկացողը:

b Սա է, ո՛վ այրեր, որ ուզում էի ասել ի գովք Սոկրատեսի և միաժամանակ ի կշտամբանք, քանզի պատմեցի ձեզ, թե ինչպես վիրավորեց ինձ: Սակայն այդպես է վարվել ոչ միայն ինձ, այլև Գլավկոնի որդի Ջարմիդեսի, Դիոկլեսի որդի Էվթիդեմոսի⁷⁷ և շատ ուրիշների հետ, որոնց խաբելով՝ իրեն նախ պահեց ինչպես սիրահարը սիրեցյալի հանդեպ, իսկ հետո ինքը դարձավ սիրեցյալ: Քեզ նույնպես, ո՛վ Ազաթոն, խորհուրդ կտամ չխաբվել նրանից, այլ, մեր փորձն իմանալով, զգուշանալ և չվարվել այնպես, ինչպես այն ասացվածքի մանուկը, որը սովորում է սեփական փորձից⁷⁸:

c Երբ Ալկիբիադեսն ավարտեց, բոլորը ծիծաղեցին նրա անկեղծ պատմությունների վրա, քանզի նա կարծես դեռ

սիրահարված էր Սոկրատեսին: Իսկ Սոկրատեսն ասաց.

– Ինձ թվում է, դու սթափ ես, Ալկիբիադես, քանզի հա-
կառակ դեպքում այդքան խորամանկորեն չէիր պատվի նրա
շուրջ, ինչի համար ըստ էության պատմեցիր այս ամենը և
ինչի մասին ասես ի միջի այլոց նշեցիր վերջում, պառակ-
տելով ինձ և Ագաթոնին և կարծելով, թե ես պետք է սիրեմ
միայն քեզ և ուրիշ ոչ մեկին, իսկ դու սիրես Ագաթոնին և
ուրիշ ոչ մեկին: Սակայն քեզ չի հաջողվի թաքցնել դա, քան-
զի քո սատիրային և սիլենային դրաման պարզից էլ պարզ
է: Ուրեմն, Ագաթոն բարեկամս, մի՛ թող, որ նա հասնի իր
նպատակին, տե՛ս, որ ինձ և քեզ ոչ ոք չպառակտի:

d

Ագաթոնը պատասխանեց.

– Թերևս դու ճիշտ ես, Սոկրատես: Տե՛ս, Ալկիբիադեսը
ընկողմանել է իմ և քո մեջտեղը, որ պառակտի մեզ: Դա
թույլ չտալու համար ես կգամ և կընկողմանեմ քո կողքին:

e

– Իհարկե՞,– ասաց Սոկրատեսը,– նստիր այստեղ, կող-
քիս:

– Ո՛վ Ջևս,– բացականչեց Ալկիբիադեսը,– ահա թե ինչ
փորձության է դարձյալ ենթարկում ինձ: Նա կարծում է,
թե միշտ պետք է հաղթի ինձ: Բայց եթե այդպես է, թո՛ղ
Ագաթոնը ընկողմանի մեր միջև:

– Անհնար է,– ասաց Սոկրատեսը,– քանի որ դու գովես-
տի խոսք ասացիր ինձ, ես պետք է գովաբանեմ ինձնից
աջ նստածին: Իսկ եթե Ագաթոնն ընկողմանի քո կողքին,
ստիպված կլինի կրկին ինձ գովաբանել, առանց իմ գովեստը
ստանալու: Այնպես որ, սիրելիս, չնախանձես այդ պատա-
նուն, երբ գովաբանեմ նրան, քանզի ես շատ եմ ուզում դա
անել:

223

– Ավանդ, Ալկիբիադես,– ասաց Ագաթոնը,– չեմ կարող
այստեղ մնալ և պետք է տեղափոխվեմ՝ Սոկրատեսից գովք
լսելու համար:

– Միշտ այսպես է,– պատասխանեց Ալկիբիադեսը:–
Սոկրատեսի ներկայությամբ ձեռք քաշիր գեղեցիկ մարդուց:

Հիմա էլ առանց դժվարության համոզիչ փաստարկ գտավ, որ իր կողքին նստեցնի Ագաթոնին:

- b Դրանից հետո Ագաթոնը ուղքի ելավ, որ նստի Սոկրատեսի կողքին: Հանկարծ դրսից զվարճասերների մեծ խումբ մոտեցավ դռանը, և երբ նրանք տեսան, որ դուռը բաց է (քանզի ինչ-որ մեկը դուրս էր գալիս), ներս մտան և տեղ զբաղեցրին սեղանի շուրջ: Մեծ աղմուկ բարձրացավ, և բուրլորը սկսեցին խմել առանց չափ ու դադարի, քանզի գինին շատ էր: Արիստոդեմոսի ասելով՝ Էրիքսիմաքոսը, Ֆեդրոսը և
- c էլի ուրիշներ հեռացան, իսկ ինքը քնով անցավ ու քնեց շատ երկար, քանի որ գիշերները երկար էին: Նա զարթնեց լուսաբացին, երբ արդեն աքաղաղն էր կանչում, և տեսավ, որ ոմանք քնած են, ոմանք գնացել են, իսկ արթուն են միայն Ագաթոնը, Արիստոփանեսը և Սոկրատեսը, որոնք հերթով խմում էին մեծ գավաթից: Սոկրատեսը զրուցում էր նրանց հետ, բայց նրա զրույցը Արիստոդեմոսը չհիշեց, քանզի չէր լսել սկզբից և քունը գլխին էր: Զրույցի էությունը հետևյալն էր. Սոկրատեսը համոզեց նրանց, որ միևնույն մարդը պետք է կարողանա ստեղծել և՛ կատակերգություն, և՛ ողբերգություն և որ հմուտ ողբերգակը նաև հմուտ կատակերգու է⁷⁹: Նրանք ստիպված էին համաձայնել, թեև այդքան էլ ուշադիր չէին հետևում նրա մտքին և արդեն ննջում էին: Առաջինը քուն մտավ Արիստոփանեսը, իսկ ավելի ուշ, երբ բացվեց լույսը, քնեց նաև Ագաթոնը: Սոկրատեսը թողնելով նրանց՝ Արիստոդեմոսի ուղեկցությամբ գնաց Լիկեյոն⁸⁰, լվացվեց և օրն անցկացրեց սովորականի նման, իսկ երեկոյան ուղևորվեց տուն հանգստանալու:

ՍՈԿՐԱՏԵՍԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆԸ

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

«Սոկրատեսի պաշտպանականը» և «Կրիտոնը» Պլատոնի վաղ շրջանի կենտրոնական գործերն են և նշանակալի են հատկապես Սոկրատեսի հերոսական անձի մասին պատկերացում ստանալու տեսանկյունից:

«Պաշտպանականը» Պլատոնի միակ ստեղծագործությունն է, որ տրամախոսություն չէ: Այն վերարտադրում է Սոկրատեսի ծառը՝ արտասանված Բ.ա. 399 թ. Աթենքի դատարանում, ուր նա բերվել էր՝ մեղադրվելով աստվածների փոխարեն դեմոններ ընդունելու և երիտասարդներին այլասերելու մեջ: Թե որքանով է «Պաշտպանականն» արտացոլում Սոկրատեսի իրական ծառը, հարց է, որի միանշանակ պատասխանը դժվար է ակնկալել: Հավանաբար իր էական գծերով Սոկրատեսի խոսքը եղել է այնպիսին, ինչպես հաղորդում է Պլատոնը, թեպետ գուցեև չի եղել այդչափ ընդարձակ և գրավիչ: «Պաշտպանականը» բաղկացած է երեք մասից:

I մաս. Սոկրատեսը սկսում է իր ծառը հեգնական դիտողությամբ, ըստ որի մեղադրողների ելույթն այնքան համոզիչ էր, որ ինքն էլ քիչ մնաց մոռանա իրեն (17 A): Ակնարկվում է հռետորիկայի պաթոլոգիկ ազդեցությունը՝ համոզել, բայց չլինել ծշմարիտ: Ինքը Սոկրատեսը խոստանում է խոսել պարզ ու անպաճույճ: Մեղադրողները երկու կարգի են: Առաջինները ավելի վտանգավոր են, քանի որ վաղուց է, ինչ մեղադրում են: Նրանց մեղադրանքը խոր արմատներ ունի, և այն դժվար է հերքել կարճ ժամանակում: Այժմյան մեղադրողներն են Անիտոսը, Մելետոսը և Լիկոնը, որոնք պակաս վտանգավոր են, քանի որ նրանք դատավարության պատճառն են, բայց ոչ այն մեծ զրպարտանքի, որ գոյացել է հեռակա մեղադրողների ստերից (18a-18e):

Առաջին մեղադրողների մեղադրանքը, ըստ որի Սոկրատեսը հետազոտել է երկրի տակ և երկնքում եղածը, զրպարտանք է: Զրպարտանք է նաև այն, որ Սոկրատեսը իրեն համարում է ինչ-որ իմաստության կրող: «Մարդկային» այդ իմաստությունը Սոկրատեսը սահմանափակում է իր կատարյալ չիմացությունը հաստատող իմացությամբ, - գիտեմ *միայն*, որ ոչինչ չգիտեմ, - որով և տարբերվում է

այլ մարդկանցից, ովքեր կարծում են, թե ինչ-որ իմաստություն ունեն (19a–24a):

Երկրորդ մեղադրողների մեղադրանքը՝ իբր Սոկրատեսը այլասերում է երիտասարդներին և նոր դեմոններ է ներմուծում, նույնպես զրպարտանք է: Անհնար է ապացուցել, որ Սոկրատեսը այլասերել է երիտասարդներին, այլապես կնշանակեր, որ միայն ինքն է այլասերում, իսկ դատարանը, խորհրդի անդամները կամ հենց Մելետոսը երբեք չեն այլասերել: Բացի այդ, անապացուցելի է, որ նա արել է դա կամովին, իսկ ակամա հանցանքի համար պետք է ոչ թե դատել, այլ մասնավոր խրատներ տալ, ինչը սակայն ո՛չ Մելետոսը, ո՛չ մյուս մեղադրողները չեն արել (24b–26a): Անաստվածության մեջ մեղադրանքը նույնպես անհիմն է, քանզի եթե անգամ Սոկրատեսը նոր դեմոններ է ներմուծել, ապա առնվազն անաստված չէ: դեմոններ ընդունողը չի կարող չընդունել աստվածներին (26b–28a):

Ինքը Սոկրատեսը չի վախենում մահից. ամոթն ու փոքրոգությունը ավելի են վախեցնում իրեն: Բացի այդ, նա չի կարող վախ տածել մի բանի հանդեպ, որը չի ծանաչում: Սոկրատեսը չի կարող դադարել ինքն իրեն և ուրիշներին փորձելուց, և մահապատիժը կորուստ է ոչ թե իր, այլ քաղաքի համար, քանի որ դժվար թե գտնվի ուրիշ մեկը, ով թողնելով իր մասնավոր հոգսերը՝ կստիպի այլոց մտածել ճշմարտության մասին: Համեմատում է իրեն բռնի հետ, որ աստծո կողմից կցված է քաղաքին, ինչպես ազնվացեղ ծիուս: Նա ոչինչ չի սովորեցրել, այլ հարցեր է տվել և այլոց դրդել անելու նույնը: Այդ հարցերի ու դրանց տրված պատասխանների մեջ այլասերող ոչինչ չի եղել, և այդ բանը շատերը կարող են վկայել, իսկ հակառակը՝ ոչ ոք: Սոկրատեսը թե՛ իր, թե՛ դատավորների համար անպատվություն է համարում գթություն աղերսել և մահապատիժը պատժի այլ ձևով փոխարինելու նպատակով դատարան բերել իր երեխաներին ու ազգականներին (28b–35d):

II մաս. Սոկրատեսը խոսում է ընդհանուր մեղադրանքից հետո: Նա զարմացած է, որ իր դեմ ուղղված մեղադրանքին կողմ եղածների գերակշռությունը այդքան աննշան է եղել: Ինքը Սոկրատեսը իր արածի համար իրեն կսահմաներ ընթրիք պրիտանեյոնում: Մահապատժի փոխարեն այլ պատիժ կրելը Սոկրատեսը համարում է անընդունելի, քանի որ բանտը ստրկություն է, աքսորը՝ կյանքից կառչող մարդու խղճուկ գոյություն, իսկ փրկագին վճարել նա ի վիճակի չէ: Աշակերտների երաշխավորությունը և իր համար վճարելիք փրկագինը նա համարում է անընդունելի, քանի որ չի պատրաստվում դադարեցնել ճշմարտության իր որոնումներն ու մարդկանց փորձելը (35e–38b):

III մաս. Սոկրատեսը խոսում է մահավճռից հետո: Իր դեմ քվեարկածները իրեն չարիք չեն գործել, քանի որ նա ծեր է և նրա մահը կգար ինքնաբերաբար: Նրանք չարիք են գործել իրենք իրենց, որովհետև հետագայում մարդիկ իրեն կհամարեն իմաստուն, իսկ նրանց կմեղադրեն: Նա չի փորձել խուսափել մահից, ինչը դժվար չէ անել անգամ պատերազմում. բավական է միայն ստորանալ, իսկ դա նրա համար անընդունելի է: Այժմ Սոկրատեսի թշնամիները կենթարկվեն նրանց մերկացումներին, որոնց ինքը զսպում էր: Իրեն արդարացնել ցանկացողներին դիմելով՝ Սոկրատեսն ասում է, որ նախկինում իր ամեն սխալ քայլը կանխող ու ընդվզող ներքին ձայնը այս անգամ լուռ է մնացել, այդպես հուշելով նրան չհակառակվել մահվանը և չխուսափել նրանից: Մահը չարիք չէ, քանի որ եթե դա ոչնչացում է, ապա իսկական ձեռքբերում է Սոկրատեսի համար, իսկ եթե տեղափոխություն է Յադես, ինչպես ասում են, ուրեմն նույնպես ձեռքբերում է, քանի որ այնտեղ կգտնի արդար դատավորների, կհաղորդակցվի իր պես անարդար դատապարտվածների հետ և կշարունակի այնտեղ փնտրել առաքինություն և իմաստություն: Դիմելով մեղադրողներին՝ Սոկրատեսը պահանջում է, որ իր զավակների հետ վարվեն ճիշտ այնպես, ինչպես ինքն է վարվել նրանց (մեղադրողների) հետ, այսինքն՝ տարհամոզել նրանց, եթե շատ տարվեն ընչաքաղցությամբ և դառնան ամբարտավան: Իր խոսքի վերջում Սոկրատեսն ասում է, որ ինքը գնում է մեռնելու, իսկ իր մեղադրողները՝ ապրելու, և միայն աստծուն է հայտնի, թե դրանցից որն է ավելի լավ (38c-42a):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թարգմանությունն արվել է Plato, Euthyphro. Apology. Crito. Phaedo. Phaedrus (Loeb Classical Library, Volume I, Harvard University Press) հին հունարեն/անգլերեն հրատարակությունից: Նկատի են առնվել հետևյալ թարգմանությունները. անգլերեն (The Apology, նշվ. աշխ., with an English translation by Harold North Fowler), գերմաներեն (Platons, Apologie/Kriton, Jena, 1908, ins Deutsche Übertragen von Otto Kiefer), ռուսերեն (Платон, Сочинения, том I, Москва, 1970, Апология Сократа, перевод М. С. Соловьева):

¹ Դիմելով իր ունկնդիրներին «ո՛վ աթենացի այրեր» արտահայտությամբ, Սոկրատեսը նկատի ունի ոչ միայն դատավորներին, այլև բոլոր ներկաներին, որոնք դատական առանձին գործը քննող բաժանմունքում հինգ հարյուրն էին և որոնց քվեարկության ժամանակ

ավելանում էր ևս մեկ երդվյալ, որպեսզի լսողների թիվը դառնար կենս: – 3

² Սուկրատեսի մեղադրողներն են եղել՝ երիտասարդ ողբերգակ Մելետոսը, որդին Մելետոսի, նույնպես ոչ նշանավոր ողբերգակի, որին Արիստոփանեսը ծաղրի է ենթարկել իր «Գորտերում» (տող 1302), Անիտոսը՝ հարուստ աթենացի դեմոկրատ, կաշեգործական արհեստանոցների տեր, որը Ք.ա. 401 թ. ակտիվ պայքար է մղել Երեսունի իշխանության դեմ, և հռետոր Լիկոնը: Ֆորմալ առումով առաջին մեղադրողը եղել է Մելետոսը, բայց իրականում մեղադրող կողմի առաջատար ու ազդեցիկ ուժն էր Անիտոսը: Դիոգենես Լաերտոսը վկայությամբ Մելետոսի մեղադրական ծառը գրել է Պոլիկրատեսը (Diog. Laert., II, 38) – 3

³ Հայտնի է, որ Սուկրատեսը հրաժարվել է ճառից, որը նրա համար գրել էր հռչակավոր լոգոգրաֆ՝ դատական ճառերի հեղինակ Լիսիասը (Diog. Laert., II, 40): – 3

⁴ *Դրամափոխների սեղաններ* – սեղաններ, որոնց առաջ կատարվում էին դրամի փոխանակումներ. քաղաքի ամենաեռուն վայրն էր: – 3

⁵ Սուկրատեսը ծնվել է Ք.ա. 469 թ., հետևաբար 399 թ. նա յոթանասուն տարեկան էր: – 4

⁶ *...խորհում է երկնքում եղածի մասին և հետազոտում է երկրի տակ եղած ամեն բան...* – այս մեղադրանքը ընդհանուր առմամբ արտահայտում է հասարակության մեջ բնափիլիսոփաների նկատմամբ ձևավորված բացասական կարծիքը, որոնք փորձում էին աստվածային նախասկիզբ գտնել բնական երևույթների մեջ: – 4

⁷ *Ինչ-որ կատակերգու* – Սուկրատեսը ակնարկում է աթենացի հռչակավոր կատակերգու Արիստոփանեսին (Ք.ա. մոտ. 445–մոտ. 385), որը ծաղրել է նրան իր «Ամպեր» (Ք.ա. 423) կատակերգության մեջ: Սուկրատեսին ուղղված ծաղրի դրվագներ կան նաև Արիստոփանեսի «Թռչուններ» (414) և «Գորտեր» (405) կատակերգություններում: – 5

⁸ *Լեոնտացի Գորգիասը* (Ք.ա. 483–375) – սոփեստական փիլիսոփայության հիմնադիրներից մեկը. եղել է լեոնտական դեսպանության գլուխը Աթենքում, այնուհետև մնացել է այստեղ և հռետորի հռչակ վայելել:

Կեոսացի Պրոդիկոս (ծնվ. Ք.ա. մոտ. 470) – սոփեստ փիլիսոփա, ծնվել է Կեոս կղզում: Նրա ուսմունքը տոգորված է եղել բարոյախրատական մեծ պաթոսով, իսկ նրա իմաստության համբավն այնքան մեծ է եղել Հունաստանում, որ «Պրոդիկոսից առավել իմաստուն» արտահայտությունը ասացվածք էր դարձել: Զբաղվել է նաև լեզվի փիլիսոփայությամբ: Սուկրատեսը հարգանքով է վերաբերվել նրան:

Էլիսացի Հիպպիաս (ծնվ. Ջ.ա. մոտ. 460) – սոփեստական փիլիսոփայության հիմնադիրներից է, ուսուցանել է Աթենքում և այլ քաղաքներում դրամ և համբավ ծեռք բերելու նպատակով: Հայտնի է եղել ուսման համար մեծ վճար վերցնելու սովորությամբ: – 6

⁹ ...իմաստուն այր... Պարիոսից... – նկատի ունի Էվենոսին, քնարական բանաստեղծին, որին ակնարկում է որպես ոչ շատ բարձր վարկ ունեցող սոփեստ ուսուցիչ: – 6

¹⁰ Կալլիասը, Հիպպոնիկոսի որդին – հարուստ աթենացի, որ շատ դրամ էր վատնել սոփեստների մոտ սովորելու համար: – 6

¹¹ Էվենոսը ուսուցման համար վերցնում է հինգ մինա (մեկ մինան հավասար է հարյուր դրաքմեի), որը մյուս սոփեստների պահանջածի համեմատ բավական համեստ վճար էր: Տեն նաև ծանոթ. 9: – 7

¹² Դելփիքի աստված – այսինքն Ապոլլոնը, որը համաձայն հույների հավատալիքի՝ իր տաճարում քրմուհու (Պյութիայի) շուրթերով գուշակություններ էր անում: Պյութիան մի կում ջուր էր խմում Կասսոտիս սրբազան աղբյուրից, սրբազան դափնու տերև էր ծամում և նստում ժայռի ծերպին դրված եռոտանու վրա: Հին հեղինակներն ասում են, որ եռոտանու վրա նստած Պյութիայի՝ հափշտակության մեջ ընկնելը ժայռի ծերպից բարձրացող թունավոր գոլորշին շնչելու հետևանք է եղել: – 7

¹³ Քերեփոն – Սոկրատեսի ընկերն ու հետևորդն է եղել: Դեմոկրատական իշխանության ակտիվ ջատագովներից մեկը, որը Անիտոսի հետ միասին աքսորվել էր Օլիգարխիայի իշխանության օրերին, և հետևաբար նրա վկայությունը, ըստ Սոկրատեսի, պիտի օբյեկտիվ լինի իր թշնամիների համար: – 7

¹⁴ Քերեփոնի եղբայրը – Քերեկրատեսն է, որի հետ Սոկրատեսը բարոյախոսական զրույց է ունեցել եղբայրական սիրո մասին (տես Քսենոփոն, «Սոկրատյան երկեր», Ե., Սարգիս Խաչենց, 2001, էջ 51–55, թարգմ.՝ Ս. Գրքաշարյանի): – 8

¹⁵ ...շունը վկա... – առօրյա զրույցներում Սոկրատեսը երբեք վկա չէր բերում աստվածներին: «Գորգիաս» տրամախոսության մեջ նա երդվում է «շուն եգիպտական աստծո անունով»: – 9

¹⁶ ...Մելետոսից... որն... հայրենասեր այր է... – Սոկրատեսը ակնբերաբար հեգնում է, որովհետև Երեսունի իշխանության օրոք սա հետապնդում էր դեմոկրատներին և մասնակցել էր Լեոն Սալամիսցու մահապատժին: – 12

¹⁷ Մեղադրանքը, որ Սոկրատեսը բերում է հիշողությամբ, հնչել է մոտավորապես այսպես (Diog. Laert, II, 40). «Այս մեղադրանքը գրել և երդումով հավաստել է Մելետոսը՝ Մելետոսի որդին Պիթոսից,

ընդդեմ Սոկրատեսի՝ Սոփրոնիսկոսի որդու Ալոպեկեից: Սոկրատեսը մեղադրվում է նրանում, որ չի ընդունում աստվածներին, որոնց ընդունում է քաղաքը և ներմուծում է նոր աստվածներ: Մեղադրվում է նաև երիտասարդներին այլասերելու մեջ: Պահանջվող պատիժն է մահը»: – 12

¹⁸ *Յերա* – հունական պանթեոնի դիցուհի՝ Կրոնոսի և Յեայի դուստրը, Ջևաի կինը, ընտանիքի ու ամուսնության հովանավորն ու պաշտպանը: – 13

¹⁹ *խորհրդի անդամներ* – դատին ներկա բուլետներն են՝ Աթենքի հինգ հարյուրի գերագույն խորհրդի անդամները: – 13

²⁰ *Կլագոմենցի Անաքսագորաս* (Ք.ա. մոտ. 500–428) – փիլիսոփա, Սոկրատեսի ժամանակակիցը և Պերիկեսի ընկերը, որն իր հայացքների պատճառով վտարվել էր Աթենքից: Արեգակը համարում էր շիկացած բեկոր, իսկ Լուսինը՝ մարմին, որը նման է երկրին (տես *Die Fragmente der Vorsokratiker. Griechisch und deutsch v. Hermann Diels. 9. Aufl., herausg. von Walter Kranz, Bd. I–II, Berlin, 1959–1960*): – 16

²¹ *Օրքեստրա* – սա երկու իմաստ է ունեցել: Առաջինը հարթակ է թատրոնում (բեմի և հանդիսականների միջև) երգչախմբային քնարական երգեր կատարելու համար: Սակայն օրքեստրա էր կոչվում նաև Աթենքի հայտնի գրավածառ սեղանը: Հավանաբար հենց վերջինը նկատի ունի Սոկրատեսը: – 16

²² *...Թեստիսի որդի...բեռ իմ երկրի*: – Աքիլլեսն է՝ Հոմերոսի «Իլիականի» հերոսը: Տվյալ հատվածը տես «Իլիական», XVIII, 95:

Յեկտոր – Տրոյայի արքա Պրիամոսի որդին:

Պատրոկլոս – Աքիլլեսի ընկերը: – 19

²³ Սոկրատեսը մասնակցել է Պելոպոննեսյան պատերազմին՝ Պոտիդեայում (Ք.ա. 432), Դելիոնում (Ք.ա. 424) և Ամփիպոլիսում (Ք.ա. 422): Տես Պլատոն, «Խնջույք», 219d–221: – 19

²⁴ *Հադես* – մեռյալների ստորեկրյա թագավորություն, նաև մահվան աստված և հենց մահ: – 19

²⁵ Սոկրատեսի ներքին ծայնի մասին հիշատակում է նաև Քսենոփոնը («Սոկրատեսի պաշտպանականը», I 1, 2–5) – 23

²⁶ Սոկրատեսը Աթենքի խորհրդի անդամ է ընտրվել Ք.ա. 406թ. Ալոպեկեի համայնքից, որը մտնում էր Անտիոքեսի ֆիլեի կազմի մեջ: – 23

²⁷ Ծովամարտում, որ տեղի ունեցավ Արգինուսյան կղզիների մոտ Ք.ա. 406 թ., պելոպոննեսցիներին հաղթած աթենացիները չկարողացան ընդունված ավանդույթի համաձայն թաղել զոհվածներին: Զորավարները, որոնք վեցն էին, վերադառնալով Աթենք մահապատժի ենթարկվեցին որպես ավանդախախտներ:

Սոկրատեսը, որը պրիտան էր և էպիստատ, այսինքն՝ խորհրդի գլուխ, հակառակվել է այդ որոշմանը: Հաջորդ էպիստատի օրոք զորավարներն այնուամենայնիվ մահապատժի են ենթարկվել: Աթենացիք հետագայում զղջալով այդ որոշման համար պատասխանատվության են կանչել մեղադրողներին: Այս մասին մանրամասնորեն հաղորդում է Դիոդորոս Սիկիլիացին իր «Պատմական գրադարանում», XIII, 100-103: - 27

²⁸ Թոլոս - «կլոր պալատի» պես մի բան, գմբեթածև շենք ագորայում, որտեղ խորհուրդ էին անում և պետության հաշվին ծաշում էին պրիտանները: - 24

²⁹ Սոկրատեսը նկատի ունի իրեն լսող Ալկիբիադեսին և Կրիտիասին՝ երեսուն տիրաններից մեկին: - 24

³⁰ Սոկրատեսի նշած ընկերների թվում են Կրիտոնը (տես Պլատոն, «Կրիտոն»), Էսքինեսը, որը հետագայում ապրել է Սիրակուզում Դիոնիսիոս Ա-ի և Դիոնիսիոս Բ-ի օրոք, Անտիփոնը, որը կապ չունի հռամնուսցի հետտոր Անտիփոնի հետ, Թեագեսը, որի անունով կոչվում է Պլատոնին վերագրվող տրամախոսությունը և Ապոլլոդորոսը, որին հիշատակում է նաև Քսենոփոնը իր «Հուշեր Սոկրատեսի մասին» երկում: - 26

³¹ Հոմերոս, «Ոդիսական», XIX, 162: - 27

³² Սոկրատեսն ուներ երեք որդի: Ավագը Լամպրոկլեսն էր, կրտսեր երկուսը՝ Սոփրոնիսկոսը և Մենեքսենոսը: - 27

³³ Սոկրատեսի ծառը սկսած 35e-ից ասվում է մեղադրական վճռից հետո: Ըստ ընդունված ավանդույթի՝ հատուկ դեպքերում, ինչպիսին էր Սոկրատեսի դեպքը, մեղադրական վճռի ընդունումից հետո որոշվում էր պատժի չափը: Մելետոսը պահանջել էր մահապատիժ: Այժմ Սոկրատեսն ինքը պիտի իրեն պատիժ առաջարկեր: Դատելով Սոկրատեսի խոսքերից՝ իր դեմ տված քվեների քանակն էր 280, կողմ էին 221-ը: Նա չհավաքեց ընդամենը 30 քվե, քանի որ արդարացման համար պահանջվում էր ունենալ նվազագույնը 251 քվե 501-ից: - 28

³⁴ Աթենքի օրենսդրությամբ մեղադրողը քվեների 1/5 մասը չհավաքելու դեպքում պարտավոր էր հազար դրաքմե տուգանք վճարել և զրկվում էր հետագայում նման մեղադրանքով դատարան դիմելու իրավունքից: Միայն Անիտոսի և Լիկոնի ընկերակցությունը հնարավորություն տվեց Մելետոսին հավաքել անհրաժեշտ քվեների քանակը: - 28

³⁵ Պրիտանեյոնում հանրային հաշվին ծաշելը համարվում էր պատիվ, որին արժանանում էին, օրինակ, Օլիմպիական խաղերում հաղթողները: - 29

³⁶ Սուկրատեսը պատրաստ է իր համար փրկագին վճարել մեկ մինա, որ փոքր գումար է, իսկ նրա ընկերները՝ Կրիտոնը, Կրիտոբուլոսը և Ապոլլոդորոսը, պահանջում են սահմանել երեսուն մինա: – 31

³⁷ Սկսած 38c-ից Սուկրատեսի ճառն ասվում է արդեն մահապատժի հռչակումից հետո: Դիոգենես Լաերտցու հաղորդմամբ՝ պրիտանեյոնում անվճար ընթրիքին վերաբերող Սուկրատեսի խոսքից հետո նրա դեմ քվեարկողների թիվն անց ութսունով (Diog. Laert., II, 42): – 31

³⁸ *Արքոնտներ* – բանտերը հսկում էին յուրաքանչյուր տարի ընտրվող տասնմեկ արքոնտները (պետերը): – 33

³⁹ *Մեծ արքա* – հույները սովորաբար այսպես էին կոչում պարսից արքային: – 34

⁴⁰ *Մինոս, Յոադամանթիս, Էակոս, Տրիպտոլեմոս* – դիցաբանական թագավորներ ու հերոսներ, հանդերձյալ աշխարհի դատավորներ: – 35

⁴¹ *Օրփեոս, Մուսեոս* – դիցաբանական երգիչներ: – 35

⁴² *Պալամեդես* – Տրոյայի պատերազմի հերոսներից մեկն է, զրպարտվելով սպանվել է հույների կողմից: – 35

⁴³ *Այաս, Տելամոնի որդի* – աքայացիների առաջնորդներից մեկը Տրոյայի մոտ, որը Աթենա դիցուհու անեծքով խելակորույս լինելով՝ ինքնասպանություն գործեց: Սա նույնպես անարդար դատավճռի զոհ է, քանի որ մահացած Աքիլլեսի զրահը հանձնվեց ոչ թե իրեն՝ ամենաարի աքայացուն, այլ Ոդիսևսին: – 35

⁴⁴ *...նրան, ով Տրոյա բերեց մեծ զորքը...* – խոսքը Արգոսի և Միկենեի արքա Ագամեմնոնի մասին է: – 35

⁴⁵ *Ոդիսևս* – Տրոյայի պատերազմի հերոսներից է, Իթակեի թագավորը՝ հայտնի իր խելամտությամբ և խորամանկությամբ: – 35

⁴⁶ *Միսիփոս* – Ըստ մյուսոսի՝ Կորնթոսի արքա կամ հիմնադիր: Հայտնի է եղել իր խորամանկությամբ, կարողացել է շղթայել մահվան աստած Թանատոսին: Բազմաթիվ խարդախությունների համար պատիժ է կրել Հադեսում. ստիպված է եղել մշտապես սար բարձրացնել ծանր քար, որը կատարին հասնելուն պես վար է գլրովել: – 35

ԿՐԻՏՈՆ

ՄԵԿԼՈՒԹՅՈՒՆ

Սուրբատեսի վաղեմի ընկեր ու աշակերտ Կրիտոնը այցելել է նրան բանտում և սպասել, մինչև որ զարթնի: Կրիտոնը լուր է բերել դելուսյան պատվիրակության վերադարձի մասին, իսկ դա նշանակում է, որ շուտով Սուրբատեսի մահապատիժը պիտի ի կատար ածվի (43a–44b):

Կրիտոնը ասում է, որ Սուրբատեսի մահը մեծագույն կորուստ կլինի իր և մյուս ընկերների համար, և բազմությունը հետագայում կարող է մեղադրել իրենց, որ չեն փորձել փրկել ընկերոջը: Սուրբատեսն առարկում է, նշելով, որ բազմությունը չի կարող գործել մեծագույն չարիքը, ինչպես նաև մեծագույն բարիքը, և հետևաբար բազմության կարծիքը չարժե հաշվի առնել (44b–d):

Կրիտոնը առաջարկում է իր ընկերների օժանդակությունը Սուրբատեսին բանտից փախցնելու և Աթենքից դուրս ապաստան տրամադրելու հարցում: Մահապատժից հրաժարվելով՝ Սուրբատեսն ըստ Կրիտոնի կրկնում է իր թշնամիների անարդարությունը: Բացի այդ, նա բախտի քմահաճույքին է թողնում իր ընտանիքն ու զավակներին (44e–46a):

Սուրբատեսը առաջարկում է քննել իրադրությունը և շարժվել՝ առաջնորդվելով ոչ թե բազմության կարծիքով, այլ ճշմարիտ համոզմունքով: Առաջնորդել կարող է նման հարցում ոչ թե բազմությունը, այլ միայն քջերը: Մինչդեռ Կրիտոնի փաստարկները հիմքում ունեն ճշմարտությանը ոչ հասու մեծամասնության կարծիքը: Սուրբատեսը և Կրիտոնը նախկինում գրուցելով միշտ համաձայնել են, որ անարդարությանը չի կարելի անարդարությամբ և չարիքին չարիքով պատասխանել: Յետևաբար հարկ է չխախտել արդարությունը և կատարել դրա թելադրած պահանջները (46b–49e):

Իր խոսքը Սուրբատեսը կառուցում է պետության անձնավորված օրենքների անունից: Օրենքներն են հաստատում ամուսնության, քաղաքացիների դաստիարակության կարգը և ինչ-որ իմաստով ծնողներից առավել կարևոր են: Յետևաբար օրենքներ խախտելն անթույլատրելի է: Նրանք, ովքեր համաձայն չեն օրենքներին, կարող են

հեռանալ պետությունից, սակայն մնացողը պարտավոր է հնազանդվել նրանց (50a–51c):

Բացի այդ, դատավարության ընթացքում Սոկրատեսն իրավունք ուներ իր համար աքսոր պահանջել, ինչպե՞ս կարող է ուրեմն այդ չանելուց հետո այժմ դեմ գնալ օրենքներին: Սոկրատեսի փախուստի դեպքում նրա մերձավորները կենթարկվեն հետապնդումների, իսկ ինքը չի ընդունվի օտար պետության մեջ, չի վայելի հարգանք և չի կարողանա արդարության կոչ անել ուրիշ մարդկանց, և հետագայում որպես օրինախախտ չի ընդունվի ստորերկրյա օրենքների (որոնք եղբայրակից են երկրայիններին) կողմից: Այս փաստարկները արձագանքում են Սոկրատեսի սրտում, ինչպես կորիքանտների սրնգի ծայնը, այնպես որ հակառակ Կրիտոնի աղերսների Սոկրատեսը հրաժարվում է փախուստից (52a–54e):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թարգմանությունն արվել է Plato, Euthypro. Apology. Crito. Phaedo. Phaedrus (Loeb Classical Library, Volume I, Harvard University Press) հին հունարեն/անգլերեն հրատարակությունից: Նկատի են առնվել հետևյալ թարգմանությունները. անգլերեն (Crito, նշվ. աշխ., with an English translation by Harold North Fowler), գերմաներեն (Platons Apologie/Kriton, Jena, 1908, ins Deutsche Übertragen von Otto Kiefer), ռուսերեն (Платон, Сочинения, том I, Москва, 1970, Критон, перевод М. С. Соловьева):

¹ Սոկրատեսը ստիպված էր երեսուն օր սպասել մահապատժի, քանի որ նրա դատավարության նախօրեին Դելոս կղզի ուղարկվեց ամենամյա պատվիրակությունը՝ Թեսևսի պատվին, որը մի ժամանակ Կրետեում Մինոտավրոսից փրկել էր յոթ զույգերին և երդում էր տվել Ապոլլոնին ամեն տարի կույսեր ուղարկել Դելոս աստծո տոնի օրերին: Թեսևսը Կրետեից վերադառնալիս իջևանել էր Դելոսում և մեկնելուց առաջ մոռացել էր մեծարել Ապոլլոնին: Դելոսում պատվիրակության գտնվելու օրերին մահապատժի հետաձգման ավանդույթի մասին տե՛ս «Ֆեդոն», 58a–c, ինչպես նաև Զսենոփոն, «Սոկրատյան երկեր», էջ 158 և հաջ.: – 40

² *Սունիոն* – հրվանդան Ատտիկեի հարավ-արևելքում, որտեղ գտնվում էր Աթենայի տաճարը: Պանաթենական տոնակատարությունների ժամանակ այնտեղ անցկացվում էին տրիերների մրցույթներ: – 40

³ Այդպես ասացին իրավասունները – նկատի ունի տասնմեկ արքուններին: – 40

⁴ Սոկրատեսը հիշում է Աքիլլեսի խոսքերը (Հոմերոս, «Իլիական», IX, 363), որ նա ասում է Ագամեմնոնից վիրավորված, երբ ցանկանում է վերադառնալ հայրենիք՝ Փթիե: Սոկրատեսն ակնարկում է այդ խոսքերի ներքին իմաստը, քանի որ հունարեն Փթիա (φθία) և φθ(ω)-ն (վախճանվում եմ) հնչմամբ շատ մոտ են: – 40

⁵ Ակնհայտ է Սոկրատեսի դիրքորոշման աղերսը Հերակլիտոսի նշանավոր ասույթի հետ. «Մեկն ինձ համար տասը հազար է, եթե լավագույնն է» (DK, B, 49, D9): – 41

⁶ Կրիտոնը նկատի ունի Սոկրատեսի թեսսալացի ընկերներ ու հետևորդներ Սիմիասին և Կեբեսին: Ըստ Դիոգենես Լաերտցու՝ Սիմիասը հեղինակել է 23 տրամախոսություն (Diog. Laert., II, 124), իսկ Կեբեսը՝ երեք (II, 125): – 42

⁷ Սոկրատեսի զավակների մասին տե՛ս «Սոկրատեսի պաշտպանականը», ծանոթ. 32: – 42

⁸ Օրենքների և պետության անձնավորումը (պրոսոպոպեան) հնարք է, որին հաճախ էին դիմում բարոյախոսական խորհրդածություններում: Նման հնարքի է դիմում նաև Քսենոփոնը իր «Հուշեր Սոկրատեսի մասին» երկում, երբ պատմում է Հերակլեսին այցելած Առաքինության և Արատի մասին: Տե՛ս Քսենոփոն, «Սոկրատյան երկեր», էջ 43–47: – 49

⁹ Պատերազմական գործողություններին Սոկրատեսի մասնակցության մասին տե՛ս «Սոկրատեսի պաշտպանականը», ծանոթ. 23: – 53

¹⁰ Լակեդեմոնի և Կրետեի օրենսդրությունը պլատոնյան Սոկրատեսը միշտ հիշատակում է հատուկ համակրանքով: – 53

¹¹ Թեբեում և Մեգարայում այդ ժամանակ մեղմ օլիգարխիա էր: Մեգարան զուտ դորիական պոլիս էր: – 54

¹² Թեսսալացիները հայտնի էին ոչ միայն բարքերի անկատարությամբ, այլև անկայունությամբ: – 54

¹³ Այժի մորթին հովիվների սովորական հագուստն էր: – 54

¹⁴ ...այնտեղ իշխողներից... – նկատի ունի Հադեսի դատավորներին՝ Մինոսին, Հռադամանթիսին և Էակոսին: – 55

¹⁵ Կորիթանտներ – աստվածների Մեծ Սոր (փոյուզիական դիցուհի Կիբելայի կամ կրետական Հռեայի) քրմերն են, որ հափշտակության մեջ փառաբանում էին նրան ֆլեյտաների ու ծնծղաների նվագակցությամբ: – 56

ՖԵՂՈՆ

ՄԵԿԼՈՒԹՅՈՒՆ

Պյութագորյան փիլիսոփա էքեկրատեսը հանդիպում է Սոկրատեսի աշակերտ Ֆեդոնին, որը ներկա է եղել իր ուսուցչի մահվանը, և խնդրում է նրան պատմել Սոկրատեսի վերջին ժամերի մասին (57a-58d): Ֆեդոնը ներկայացնում է մահապատժի օրը իր և Սոկրատեսին այցելած մյուս աշակերտների ու բարեկամների ընկճված տրամադրությունը (58e-60a): Շղթաներից ազատված Սոկրատեսը խոսում է հաճույքի և ցավի միասնության մասին, այնուհետև բացատրություն է տալիս, թե ինչու է վերջին օրերին սկսել բանաստեղծաբար փոխադրել Եզովպոսի առակները. դրա պատճառը նրա երազներն են (60b-61b): Ապացուցում է ինքնասպանության անթույլատրելիությունը. մարդու կյանքը ոչ թե իր, այլ աստվածների ձեռքին է, որոնք նրա մահից հետո, եթե նա առաքինի ու խոհեմ է եղել, լավագույն կյանք են պարգևում: Ճշմարիտ փիլիսոփաները տենչում են մեկ բան՝ մահացում և մահ (61c-64ab): Յետագա խորհրդածությունների նպատակը այդ դրույթը ապացուցելն է:

Նախ՝ մարմնի կյանքը և նրա պահանջները խոչընդոտում են զուտ մտածողությանը, մինչդեռ միայն սրան է հասանելի իսկական և ինքնին գոյը: Յետևաբար ինչ-որ բան ինքն ըստ ինքյան ճանաչելու համար մարդը պիտի ազատվի մարմնից և հայի իրերը հոգով: Սոկրատեսը պնդում է, որ բանականությանը կարելի է հասու դառնալ միայն այդկերպ, ահա ինչու փիլիսոփաները տենչում են մահանալ և հաղորդակից դառնալ նրան անդրաշխարհում՝ այն բանից հետո, երբ հոգին կազատվի մարմնից: Խորհուրդներ սահմանողները դա են նկատի ունեցել՝ ուսուցանելով, թե անդրաշխարհում փրկությունը տրվում է միայն նրանց, ովքեր կյանքի ընթացքում մաքրագործվել են այսրաշխարհում: Սոկրատեսը հնարավորինս փորձել է հետևել այդ ուսմունքին և հույս ունի, որ մահից հետո ձակատագիրը նրա հանդեպ բարեհաճ կգտնվի: Ներկաներից մեկը՝ Կրեեսը, կասկած է հայտնում կարծիքի դեմ, թե հոգին մահից հետո էլ կարող է մտածել: Դա առիթ է տալիս Սոկրատեսին ներկայացնելու հոգու անմահության իր նշանավոր չորս ապացույցները:

I ապացույց. Նախ, Սոկրատեսը պատմում է հոգիների վերաբնակության մյուսոսը, այնուհետև անդրադառնում գոյացման հասկացությանը, որն իմաստավորվում է հակադիր վիճակների փոփոխության հասկացությամբ: Այսպես, եթե կա փոքրը, կա նաև մեծը, որի հարաբերությամբ փոքրը կարող է գոյանալ: Նույնն է նաև տաքի ու պաղի, քնի ու արթունության, կյանքի ու մահվան դեպքում և հետևաբար նաև հոգու ծննդի և մահվան, մարմնի կյանքի ընթացքում և մարմնի մահվանից հետո: Եթե հակադիր վիճակների փոփոխաջորդումը բացառվեր, ամեն բան կավարտվեր մեկ վիճակով, այսինքն՝ մահով: Այստեղից Սոկրատեսը հետևություն է անում, որ հոգին մահից հետո անցնում է գոյության այլ վիճակի՝ առանց մարմնի, ինչը հնարավորություն է տալիս նրան հետագայում դարձյալ վերադառնալ երկրային գոյության (70c–72e):

II ապացույց. Մի բանի միջոցով մենք միշտ հիշում ենք մեկ ուրիշ բան: Բոլոր կողմնակի հիշողություններից մեզ համար տվյալ դեպքում կարևոր է վերհուշն այն էականի, որին հանգում ենք վերացարկվելով առանձին իրերի հայեցողությունից, օրինակ՝ ինքնին հավասարին: Իրերի հիման վրա այդ հավասարն անձանաչելի է, քանի որ հավասար իրերը բուն հավասարությունից բացի կարող են բազում տարբերություններ ունենալ, և այդ տարբերությունների մեջ հավասարն ըմբռնելու համար մենք պիտի իմանայինք հավասարը նախքան իրերին ծանոթանալը: Հետևաբար, մենք դեռ նախքան ծնվելը պիտի ունենայինք ոչ միայն ինքն ըստ ինքյան հավասարի, այլև մյուս գաղափարների իմացությունը, այսպես օրինակ՝ ինքն ըստ ինքյան արդարի, առաքինիի և սրբազանի և այն ամենի, ինչը ինքն ըստ ինքյան կեցություն է: Ինչ վերաբերում է իրերին, ապա դրանք հարահոս վիճակում են և կարող են առաջ բերել ոչ թե իսկական կեցության իմացություն, այլ վերհուշն այն իմացության, որ հոգին ունեցել է նախքան մարմնի մեջ ծնվելը: Ասվածին հակադիր վիճակների փոփոխաջորդման փաստարկը հավելելու դեպքում կարելի է պնդել, որ հոգին գոյություն կունենա նաև մահից հետո (73a–78b):

III ապացույց. Առանձին իրերը միշտ փոփոխության մեջ են, միշտ իրենք իրենց հետ հակասության մեջ, միշտ մի բանից վերածվում են մեկ այլ բանի: Սակայն գոյացումը ենթադրում է միշտ հենց այն, ինչը պիտի գոյանա, բաղադրյալը ենթադրում է պարզը, ընդ որում գոյացողը հասանելի է դառնում զգայարաններով, իսկ պարզ ու ինքնանույնական էությունը՝ միայն մտածողությամբ: Հոգին ավելի մոտ է անտեսանելի էություններին, իսկ մարմինը՝ տեսանելի իրերին: Հոգին և մարմինը մեկ միասնություն են, սակայն հոգին, այդուհանդերձ, ավելի մոտ է նույնականին, աստվածայինին, մնա-

յունին և իշխողին, իսկ մարմինը՝ փոփոխականին, երկրայինին և իշխվողին: Հետևաբար հոգին ավելի նման է աստվածայինին, մտահասունին, անմահին, միակերպին, մինչդեռ մարմինը բոլոր այս հատկություններին հակադիր է: Եթե անգամ մարմինը մահից հետո զմռաման միջոցով կարող է պահպանվել որոշ ժամանակ, ապա հոգին առավել ևս կարող է և պահպանվում է: Եթե այն միտված է եղել փիլիսոփայությանը և չի ստրկացել մարմնին, մահից հետո արժանանում է պարգևների, իսկ եթե ստրկացել է մարմնին և հոգ չի տարել մարմնից մաքրագործվելու մասին, հետագայում ծնվում է կենդանիների մարմնի մեջ: Սիմմիասն առարկում է. Սոկրատեսի նկարագրած հոգին նման է քնարի արծակած ձայների ներդաշնակությանը, բայց այդ դեպքում հոգին կարող է վերանալ մարմնի կործանումից հետո այնպես, ինչպես վերանում է ներդաշնակությունը քնարի կործանումից հետո: Կեբեսի կասկածները վերաբերում են հոգու գոյությանը մարմնի մահից հետո, քանի որ եթե ապացուցված է հոգու գոյությունը նախքան մարմնի մեջ ծնվելը, ապա մարմնից բաժանվելուց հետո նրա գոյությունը դեռ ապացուցված չէ: Հնարավոր է, որ փոխելով (մաշելով) մի քանի մարմիններ՝ հոգին, այնուամենայնիվ, մահանա, ինչպես ջուլիակը, որը մի քանի թիկնոց է գործել և մաշելով դրանք՝ այդուհանդերձ մի օր մահացել է: Սոկրատեսի հակափաստարկը հիմնվում է պնդման վրա, ըստ որի հոգին ներդաշնակություն չէ, այն էություն է: Նախքան մարմին կազմավորելն ու ներդաշնակելը հոգին պիտի իր մեջ ունենա ներդաշնակման սկզբունքը, որը կախված չէ մարմնավոր պահերից: Այս հակափաստարկը ուղղված էր Սիմմիասի կասկածին: Կեբեսի առարկությունը պահանջում է առանձին ապացույց (78b-96a):

IV ապացույց. Սոկրատեսը պատմում է իր նախկին բնափիլիսոփայական հետազոտությունների մասին, որոնց արդյունքում հասկացել է կեցության նախապատճառները ֆիզիկորեն սահմանելու անհնարությունը: Անաքսագորասը թեև ասել է, որ ամեն ինչի պատճառը խելքն է, սակայն ցույց չի տվել, թե ինչպես է այն պատճառ դառնում և գործում որպես պատճառ: Հենց իր՝ Սոկրատեսի այժմ բանտում գտնվելը որպես պատճառ ունի ոչ թե նրա մարմնի կառուցվածքը, այլ աթենացիների վճիռը և բանտից չփախչելու իր կամքը: Իրերի իսկական պատճառ կարող է լինել լոկ այն, ինչը գոյում է նրանց մեջ ինքն ըստ ինքյան: Մի գլուխ մյուսից բարձրահասակ մարդը այդպիսին է շնորհիվ այն բանի, որ հաղորդակից է բարձրի գաղափարին: Վերջինս գոյի ճշմարտությունն է՝ այն, ինչից ամեն բան ստանում է իր անունը: Ֆեդոնի, Սիմմիասի և Սոկրատեսի հասակների տարբերությունները խոսում են այն մասին, որ նրանք երեքը տարբեր

չափով են հաղորդակից հիշյալ գաղափարին: Իրենք գաղափարները չեն համեմատվում, համեմատվում է սոսկ այն, ինչը ենթարկված է իրենց: Եվ այսպես, կրակը և ձյունը, երկուսը և երեքը, որոնք հակադիր չեն իրար, բայց հաղորդակից են հակադիր գաղափարների, չեն հանդուրժում իրենց մեջ երկու հակադիր գաղափարների միաժամանակյա գոյակցությունը: Կրակը, դառնալով ձյուն, կորցնում է ձյան գաղափարը, իսկ երկուսը դառնում է երեք՝ կորցնելով կենտոության գաղափարը: Այստեղից Սոկրատեսը եզրակացնում է, որ ինչպես կենտոությունը համատեղելի չէ զույգի գաղափարին, այնպես էլ հոգին, լինելով հոգու կյանքի գաղափար, չի կարող մահանալ, այլ՝ միայն հեռանալ մարմնից: Դա վերաբերում է բոլոր առաջին պատճառներին, այսինքն՝ գաղափարներին (96a-107b):

Ապացույցներին հետևում են մի շարք բարոյագիտական և տիեզերաբանական դիտարկումներ: Եթե մարմնի մահը նշանակեր նաև հոգու մահ, հոռի մարդիկ անհանգստանալու առիթ չէին ունենա: Մինչդեռ կյանքի ընթացքում գործած մեղքերը անջնջելի կնիք են թողնում նրանց հոգիներում: Արդարները արժանի բնակություն են հաստատում Չաղեսում, իսկ հոռիները, որոնց անձնական դեմոնը բռնի տանում է Չաղես, հատուցում են երկրային մեղսագործությունների համար: Երկիրը մեծ գունդ է և մենք ժանաչում ենք նրա մի մասը միայն՝ այն, որ ձգվում է Փասիսից մինչև Չերակլյան սյուները: Մենք բնակվում ենք Երկրի բազմաթիվ ակոսներից մեկում՝ չունենալով այդ ակոսից դուրս ընկած տարածքները տեսնելու հնարավորություն: Իսկական Երկիրը գտնվում է երկնքի տակ, զուտ եթերի մեջ և կազմում է բազմագույն տասներկուանկյուն: Այն ունի հարուստ բուսականություն, քարեր ու լեռներ, որ նման են մեր Երկրի թանկարժեք քարերին: Մարդիկ այդտեղ երբեք չեն հիվանդանում, իսկ տաճարներում բնակվում են աստվածները: Այնուհետև Սոկրատեսի շուրթերով Պլատոնը դիցաբանորեն նկարագրում է նաև ստորերկրյա աշխարհը՝ իր գետերով, լճերով, ինչպես նաև պատժի, մաքրագործման և հատուցման վայրերով (108c-114e):

Տրամախոսությունն ավարտվում է Սոկրատեսի մահվան տեսարանով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թարգմանությունն արվել է Plato, Euthypro. Apology. Crito. Phaedo. Phaedrus (Loeb Classical Library, Volume I, Harvard University Press) հին հունարեն/անգլերեն հրատարակությունից: Նկատի են առնվել հետևյալ թարգմանությունները. անգլերեն (Phaedo, նշվ. աշխ.,

with an English translation by Harold North Fowler), գերմաներեն (Platon, Meisterdialoge, Zürich, 1970, Phaidon, Übertragen von Rudolf Rufener), ռուսերեն (Платон, Сочинения, том 2, Москва, 1970, Федон, перевод С. П. Маркиша), գրաբար (Պղատոնի Փեդոն կամ վասն անմահութեան հոգոյ, ի Սուրբ Ղազար Վենետկոյ, 1870, թարգմ.՝ Զ. Ա. Ճ.):

¹ Դատարանի վճռով Սոկրատեսը պիտի թույն խմեր: – 59

² Փյոնարը քաղաք է Պելլոպոննեսի հյուսիս-արևելքում: Մշտապես եղել է Սպարտայի դաշնակիցը: – 59

³ Դատավճիռը կայացնելուց մինչև դրա կատարելն անցավ երեսուն օր: – 59

⁴ Նավի խելը զարդարում էին դափնիներով՝ ի պատիվ Ապոլլոնի: Դելուրը Ապոլլոնի հայրենիքն է: Այստեղ են գտնվել նրա տաճարը և այն արմավենին, որի տակ Լետո դիցուհին ծնեց երկվորյակներ Ապոլլոնին և Արտեմիսին: Տես նաև «Կրիտոն», ծանոթ. 1. – 59

⁵ Թեսսա – Աթենքի թագավոր Էգևի որդին: Յոթ զույգերի հետ ուղևորվեց Կրետե, որպես կենդանի տուրք Մինոս թագավորին, որտեղ սպանեց Մինոտավրոսին, որին պիտի հանձնվեր այդ զոհը: – 59

⁶ Ապոլլոդորոս – Սոկրատեսի աշակերտն է, «Խնջույք» տրամախոսության մեջ Արիստոդեմոսի անունից պատմում է ողբերգակ Ագաթոնի տանը եղած տոնական խնջույքի մասին: Կրիտորուլոս – Կրիտոնի որդին է: Հերմոգենես – Սոկրատեսի աշակերտ, «Կրատիլոս» տրամախոսության զրուցակիցներից մեկը: Էպիգենես – հիշատակվում է «Սոկրատեսի պաշտպանականում» (33e), կեփեսացի Անտիփոնի որդին է: Էսքինես – Լիսանիասի որդին, յոթ տրամախոսությունների հեղինակ: Անտիսթենես – կինիկյան դպրոցի ապագա հիմնադիր: Կտեսիպպոս – ատտիկյան Պեանիա համայնքից է, հիշատակվում է «Էվթիդեմոս» տրամախոսության մեջ: Մենեքսենոս – Սոկրատեսի աշակերտ, Կտեսիպպոսի եղբայր, նրա անունով է կոչվում Պլատոնի տրամախոսություններից մեկը: – 61

⁷ Միմնիասի և Կեբեսի մասին տես «Կրիտոն» տրամախոսության ծանոթ. 6: Թեբեսացի Ֆեդոնիդեսի մասին տեղեկություն չկա: Էվկլիդես – Մեգարայի փիլիսոփայական դպրոցի ապագա հիմնադիր, «Թեստետոս» տրամախոսության մասնակիցներից է: Տերփսիոն – նույնպես «Թեստետոս» տրամախոսության մասնակից է: – 61

⁸ Կլեոմբրոտոս – առասպելի համաձայն՝ «Ֆեդոնը» կարդալուց հետո իրեն նետել է ծովը: Այս մասին վկայություն ենք գտնում Դավիթ Անհաղթի մոտ. «Եւ պարտ է գիտել, թէ ոմն Կլեոմբրոտոս

ամբռակիացի կարծելով, թէ Պղատոն զքնատրական մահուանէն հրամայէ խոկալ իմաստասիրին, ընկեցեալ զինքն ի պարսպէն վախճանեցաւ» (Դավիթ Անյաղթ, «Սահմանք իմաստասիրութեան», Ե., 1960, էջ 72): Արիստիպպոս Կիրենեացի (Ք.ա. V դ.) – կիրենեյան հեղոնիստների դպրոցի ապագա հիմնադիր: – 61

⁹ Տասնմեկ արքունիների մասին տես «Սոկրատեսի պաշտպանականը», ծանոթ. 37: – 62

¹⁰ Սոկրատեսը և Քսանտիպպեն ունեին երեք որդի՝ ավագն էր Լամպրոկլեսը, կրտսեր երկուսը՝ Սոփրոնիսկոսը և Մենեքսենոսը: Քսանտիպպեն հայտնի էր իր հոռի բնավորությամբ: – 62

¹¹ Եզովպոս (Ք.ա. VI դ.) – առակագիր, որին վերագրվում է մի քանի հարյուր առակ: – 63

¹² Էվենոսի մասին տես «Սոկրատեսի պաշտպանականը», ծանոթ. 11: – 63

¹³ Սոկրատեսը գրել էր Ապոլլոնին նվիրված ծոն, որը համաձայն Դիոգենես Լաերտցու (Diog. Laert., II, 42) սկսվում էր այսպես. «Տնձա՛, դելոսցի Ապոլլոն, ցնձա՛ և դու, Արտեմիս, երանելի՛ մանուկներ»: – 64

¹⁴ Դիոգենես Լաերտցին հաղորդում է (Diog. Laert., II, 42), որ Եզովպոսի առակի սոկրատյան փոխադրությունը սկսվել է այսպես. «Մի անգամ Եզովպոսը հայտարարեց Կորնթոսի բնակիչներին, որ չի կարելի դատել առաքինության մասին ժողովրդական վճռի իմաստության հիման վրա»: – 64

¹⁵ Փիլոլաոս (Ք.ա. V դ.) – նշանավոր պյութագորյան փիլիսոփա հարավային Իտալիայի Տարաս կամ Կրոտոն քաղաքից: – 64

Պլատոնը դատապարտել է ինքնասպանությունը, հատկապես իր «Օրենքներում»: Պյութագորյանները, որոնք քարոզում էին հոգիների վերաբնակություն, նույնպես մերժում էին ինքնասպանությունը: – 64

¹⁶ Գաղտնի ուսմունք – նկատի ունի պյութագորյանների ուսմունքը: – 65

¹⁷ Զգայական ճանաչողության պակասավորությունն են մատնանշել էլեատները, Էմպեդոկլեսը, Զերակլիտոսը և Անաքսագորասը: – 70

¹⁸ Նկատի ունի Ալկեստիսի մյութոսն այն մասին, թե ինչպես նա պատրաստ էր մեռնել իր ամուսնու՝ Ադմետոսի փոխարեն, և Օրփեոսի մյութոսը, որը Զադես իջավ իր կնոջ՝ Էվրիդիկեի ետևից: – 74

¹⁹ Դավիթ Անհաղթը փիլիսոփայությունը սահմանում է որպես «խոկում» մահվան մասին, քանզի դրանով են մտահոգված փիլիսոփայությանը «մերձեցածները»: Ըստ նրա՝ մեռնելն ու մահը հանդես են գալիս միասնաբար, քանի որ մեռնելու միջոցով բացվում է

պրակտիկ փիլիսոփայությունը, իսկ մահվամբ՝ տեսական փիլիսոփայությունը: «Եւ բարիոք առկայանան երկորքին մեռանելն և էմեռանելն. քանզի ի ձեռն մեռանելոյն զգործական իմաստասիրութիւնն մեկնեաց: Քանզի իմաստասէրն ի մեռանելն իրում ունի զգործականն. քանզի յայնժամ մեռելութիւն բացագործէ ախտից:

Իսկ ասելովն էմեռանել՝ զտեսականն յայտնեաց. քանզի էմեռանելն զանցեալ ժամանակն նշանակեաց, և իմաստասիրի յետ մեռանելոյն է տեսականն: Քանզի յետ մեռուցանելոյ զախտս և մաքրելոյ և սրբելոյ զհոգին վերածգտի առ տեսութիւն և սկիզբն առնէ աստուածաբանելոյ» (Դաւիթ Անյաղթ, «Սահմանք իմաստասիրութեան», էջ 66): – 74

²⁰ Խորհուրդներին հաղորդ դառնալը և մաքրագործվելը հատուկ է եղել մի շարք կրոնական և փիլիսոփայական միաբանությունների՝ Դեմետերի պաշտամունքի հետևորդներին, պյութագորայաններին և օրփեականներին: Նարթեքս կրողներին և բաքսաներին վերաբերող խոսքը հին օրփեական համեմատություն է, որ ասացվածքի ուժ էր ստացել: Բաքսականները Դիոնիսոսի պատվին կազմակերպվող օրգիաների մասնակիցներն էին: Նարթեքսը գավազան է, որ պատված էր բաղեղով ու խաղողի վազով՝ Դիոնիսոսի սիրած բույսերով: Ակնարկվում է օրփեական ուսմունքը տիտաններին հաղորդակից մարդու մարմնի քարացածության և մաքրագործված բաքսականների մասին: Յմմտ. ավետարանական ասույթը (Ավետարան ըստ Մատթեոսի, 20, 16). «...բազում են կանչվածները, բայց սակավ են ընտրյալները»: – 76

²¹ Տե՛ս «Սոկրատեսի պաշտպանականը», ծանոթ. 7: – 77

²² *Էնդիմիոն* – Սելենեի (Լուսնի) սիրեցյալը, որը հավերժական քուն է մտել Լաթիս լեռան վրա: – 80

²³ Համաձայն Անաքսագորասի՝ խելքը, «հանկարծ սկսելով գործել, կապեց նախապես անկարգության մեջ եղած ամեն բան» (DK, 59 A 1 D): – 80

²⁴ Հոգու և մարմնի ստորադասական փոխհարաբերության վերաբերյալ նախասոկրատյան փիլիսոփաները արել են տարբեր մեկնաբանություններ: Այսպես, Հերակլիտոսը հոգին համեմատում է սարդի, իսկ մարմինը սարդոստայնի հետ (DK, B 67 a D): Հերակլիտյան փիլիսոփա Հիպոկրատեսը գտնում է, որ բարձրագույն կենսական ուժը կազմակերպում է մարդու հոգին և մարմինը (22 C 1 D): Պյութագորյան փիլիսոփա Փիլոլաոսը ասում է, որ հոգին միացած է մարմնին և, ասես գերեզմանի մեջ, թաղված է նրանում (44 B 14 D): – 92

²⁵ Հաղեսը անվանվում է «անտեսանելի» հին ստուգաբանական մեկնության համաձայն. այսպես, «ἀειδής» հունարեն նշանակում է անտեսանելի: – 93

²⁶ Պենելոպեն՝ Ոդիսևսի կինը, գիշերը քանդում էր ցերեկվա ընթացքում գործածը՝ աշխատանքը երբեք չավարտելու և նոր ամուսնության համաձայնություն չտալու համար: Այդ մասին պատմում է նրա փեսացուներից մեկի հոգին Չադեսում («Ոդիսևսական», XXIV 120–146): – 98

²⁷ Համաձայն առասպելի՝ սոխակի, ծիծեռնակի և հոպոպի էին վերածվել Պրոկնեն, նրա քույր Փիլոմելան և Պրոկնեի ամուսինը՝ Թրակիայի թագավոր Տերևսը, որը բռնությամբ տիրել էր Փիլոմելային և իր չարագործությունը թաքցնելու համար կտրել նրա լեզուն: Պրոկնեն վրեժ առնելով քրոջ համար՝ սպանեց իր որդի Իտիսին: – 99

²⁸ Կարապը համարվել է Ապոլլոնի սրբազան թռչունը: – 99

²⁹ Սոկրատեսը կոչում է իրեն Ապոլլոնի քույր, քանի որ Ապոլլոնը մարգարեության աստվածն է համարվել: – 99

³⁰ Զնարի հետ հոգու և մարմնի համեմատությունը հիշեցնում է Չերակլիտոսի միտքն այն մասին, որ տարամետը համաձայնության է գալիս ինքն իր հետ. այն դեպի իրեն վերադարձող ներդաշնակություն է, ինչպիսին նկատվում է աղեղի կամ քնարի դեպքում (DK, B 51): – 100

³¹ Սուգ պահելիս հույները կտրում էին մազերը: – 104

³² Չերոդոտոսը («Պատմություն», I, 82) հաղորդում է, որ սպարտացիների հաղթանակից հետո «...մինչև հիմա արգոսցիները, որոնք նախկինում, ըստ սովորության, երկար վարսեր էին պահում, սկսեցին սափրել իրենց գլուխը և նույնիսկ օրենք հաստատեցին և անեծք, որ ոչ մի արգոսցի երկար վարսեր չպահի և ոչ մի արգոսուհի ոսկե զարդեր չկրի...» (Ե., 1986, թարգմ.՝ Ս. Կրկյաշարյանի): – 105

³³ Իոլաոս – Չերակլեսի զարմիկն ու զինակիրը: Միասին կռվել են Չիդրայի և հսկայական խեցգետնի դեմ: – 105

³⁴ Էվրիպոսի (նեղուց Ատտիկայի, Բեովտիայի և Էվբեայի միջև) ջրերի անկայունությունը ասացվածք է դարձել: – 106

³⁵ Հոմերոս, «Ոդիսևսական», XX 17, Ե., 1957, թարգմ.՝ Ս. Գրքաշարյանի: – 113

³⁶ Հարմոնիա – Թեբեի թագավոր Կադմոսի կինը, այսինքն՝ երկուսն էլ Սիմմիասի և Կեբեսի համերկրացիներն են: – 113

³⁷ Տաքի և սառի խառնուրդից կենդանի էակների առաջացման մասին տե՛ս Անաքսիմանդրոսի (DK, 12 A 9, 16, 28, 30), Էմպեդոկլեսի (31 B 21, 22, 96, 98, 115), Անաքսագորասի (59 A 64, B 14, 16), նրա աշակերտ Արքելաոսի (A 5) և Չիպակրատեսի (22 C 1) մոտ: – 115

³⁸ Սոկրատեսը նկատի ունի Անաքսագորասի «Բնության մասին» երկը: – 116

³⁹ Մեգարա և Բեովտիա Սոկրատեսին առաջարկում էին փախչել նրա ընկերները: Տես «Կրիտոն»: – 118

⁴⁰ Այս ուսմունքի հեղինակն է Էմպեդոկլեսը (DK, 31 A 67): – 118

⁴¹ Ըստ հին պատումի՝ տիտան Ատլասը պահում էր երկինքը երկրից անջատող սյուները: Տես «Ողիսական», I 53: – 118

⁴² Գեղեցիկի մասին տես «Խնջույք», 211b: – 120

⁴³ Նկատի ունի սփեստներին: – 122

⁴⁴ Դեմոնը, համաձայն դիցաբանական պատկերացումների, տրվում է մարդուն ծննդի հետ միասին և անբաժան է նրանից ողջ կյանքի ընթացքում: – 131

⁴⁵ *Տելեփոս* – Մյուսիայի (Փոքր Ասիա) թագավորն է, Էսքիլոսի չպահպանված համանուն ողբերգության հերոսը: Մեջբերումը հավանաբար այդ ողբերգությունից է: – 131

⁴⁶ *Տեսանելի վայր* – գերեզման, թաղման վայրը, որի մոտակայքում «ճախրում» է հոգին: Ճախրող հոգի զուգորդությունը հանդիպում է նաև Զոմերոսի մոտ, տես «Ողիսական», XXIV 5–9: – 132

⁴⁷ Այս ասացվածքը բացատրվում է այն սքոլիաներով, որ բերում է Զերման Դիլսը (DK, 18, 12): Գլավկոսը հայտնաբերել է պյութագորյան Զիպպասի ձեռք բերած պղնձե սկավառակների համահնչության գաղտնիքը և սկսել է երաժշտական գործիքներ պատրաստել: – 132

⁴⁸ *Փասիսը* (ժամանակակից Ռիոնը) և *Յերակլյան սյուները* (ժամանակակից Զիբրայթարը) հների պատկերացմամբ հանդիսանում էին ծայրագույն Արևելքը և Արևմուտքը: – 133

⁴⁹ Ասելով եթեր՝ Պլատոնը նկատի ունի մթնոլորտի վերին հատվածը, մինչդեռ բնափիլիսոփաները դիտում էին այն որպես տարրերից մեկը: Օրփեականների դեպքում եթերը աստվածություն է, որին նաև կոչում էին Զևս և վերագրում արարչական հատկանիշներ: – 133

⁵⁰ Երկրի գնդաձևությունը Պլատոնը պնդում է հետևելով պյութագորյաններին: Սրանք սովորեցնում էին, որ մարմնավոր ձևերից ամենագեղեցիկը գունդն է: – 134

⁵¹ Զոմերոս, «Իլիական», VIII 14, Ե., 1955, թարգմ.՝ Զ. Զամբարձու-մյանի: – 136

⁵² *Աքերոն* գետը և *Աքերուսիադե* լիճը գտնվում են Զոնաստանի հյուսիսում: Ըստ դիցաբանական պատումների՝ դրանք հոսում են նաև ստորերկրյա աշխարհով: – 137

⁵³ *Պյուրիփլեգեսոն* – հրեղեն գետ: – 137

⁵⁴ *Ստիքս* – բառացիորեն «ցուրտ», «ահ»: Ըստ Զոմերոսի՝ այդ գետի անունով էին երգվում աստվածները («Ողիսական», V 185): – 137

⁵⁵ *Կոկիտոս* (բառացի՝ «լաց», «ոռնոց») – Աքերոնի վտակ: – 138

⁵⁶ Հավանաբար մահապատժի համար սահմանված թույնը պատրաստվում էր մոլեխինդից, որի սերմերը նախապես տրորում էին: – 140

⁵⁷ Սոկրատեսի դին կարող էին հողին հանձնել կամ այրել: – 140

⁵⁸ Հեղումը կատարում էին Ջևս փրկչի և անձնական դեմոնի պատվին: – 143

⁵⁹ Ապաքինվողը զոհ էր մատուցում Ասկլեպիոսին՝ բժշկության աստծուն: Քանի որ Սոկրատեսը համոզված է, որ մարմնից ազատվելն իր հոգու համար ապաքինում է ու մաքրագործում, իր պարտքն է համարում Ասկլեպիոսին աքլոր զոհաբերել: – 144

ԽՆՋՈՒՅՔ

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Փալերոնցի Ապոլլոդորոսը հանդիպում է ոմն Գլավկոնի: Վերջինս խնդրում է նրան պատմել Ագաթոնի տանը մի ժամանակ տեղի ունեցած խնջույքի մասին, որի ընթացքում հյուրերը հետաքրքրական զրույցներ են ունեցել: Ապոլլոդորոսը համաձայնում է վերապատմել այդ զրույցները, քանզի ինքը խնջույքին ներկա չի եղել և լսել է այդ մասին Արիստոդեմոսից, որն անձամբ է մասնակցել խնջույքին:

Պատահաբար հանդիպելով Ագաթոնի մոտ խնջույքի գնացող Սոկրատեսին՝ Արիստոդեմոսը վերջինիս առաջարկով միանում է նրան: Ինքը Սոկրատեսը ճանապարհին մտածմունքի մեջ է ընկնում և ներկայանում է խնջույքին փոքր-ինչ ուշացումով: Պավսանիսը առաջարկում է հավաքվածներին չտարվել խմիչքով, այլ հերթով փառաբանել Էրոսին՝ սիրո աստծուն (172a-178a):

I. Ֆեդրոսի ճառը. Խոսում է Էրոսի հնագույն ծագման մասին, նրա հետ է կապում ամենայն գոյի կենսական ուժը: Սիրահարը ներշնչված է այդ աստծո կողմից և ավելի երանելի է, քան սիրեցյալը, իսկ սիրեցյալը առաքինի է իր հավատարմությամբ սիրահարին (178a-180b):

II. Պավսանիասի ճառը. Ոչինչ չի կարող լինել ինքնին ո՛չ գեղեցիկ, ո՛չ էլ այլանդակ, այնպես որ գեղեցիկ Էրոսի գեղեցկության պատճառը նրա ծագումն է Երկնային Ափրոդիտեից, ի տարբերություն Յանրային Էրոսի, որը սերում է Յանրային Ափրոդիտեից: Երկնային սերը տղամարդու հանդեպ է, որն ավելի խելացի և արժանի է, քան կինը: Ի տարբերություն հանրային սիրո, այն միտված է հոգուն և խելքին (180c-185):

III. Էրիքսիմաքոսի ճառը. Ասում է, որ Էրոսն առկա է ոչ միայն մարդու, այլև ողջ կեցության մեջ: Երկու Էրոսների բաժանումը պահանջում է, որ նրանք մշտապես ներդաշնակության մեջ լինեն: Դա վերաբերում է ոչ միայն բժշկությանը, այլև մարմնամարզությանն ու երաժշտությանը: Երկու Էրոսների համատեղ ճիշտ գործունեությունը պահանջում է նաև ժամանակի մեջ նրանց ճիշտ փոխհաջորդում, ինչպիսին է տարվա եղանակների հաջորդումը: Զոհաբերությունները

աստվածների և մարդկանց միջև սիրո և ներդաշնակության դրսևորումներ են (185e-188e):

IV. Արիստոփանեսի ճառը. Ներկայացնում է երեք սեռերի նախամարդկանց՝ տղամարդկանց, կանանց և անդրոգինների մյուսոսը: Հանդուգն ծրագրերի համար Ջևաը պատժում է նրանց՝ կիսելով մեջտեղից: Դա ստիպում է նրանց մշտապես փնտրել իրենց կեսը նախկին ամբողջությունը վերագտնելու համար: Էրոսը մարդկանց ձգտումն է վերագտնելու իրենց կեսը, ինչը սակայն հնարավոր է աստվածների պաշտամունքի պայմաններում, որոնք իրենց նկատմամբ թույլ տրված անպատվությանն ի պատասխան կարող են դարձյալ կիսել մարդկանց:

V. Ագաթնի ճառը. Թվարկում է Էրոսի առանձին հատկությունները՝ գեղեցկությունը, մշտնջենական երիտասարդությունը, նրբությունը և ճկունությունը, արդարությունը, իմաստությունը, խիզախությունը, մուսաների արվեստի իմացությունը, ինչպես նաև բոլոր արվեստներում և արհեստներում նրա իմաստությունը: Թվարկում է Էրոսի այլ հրաշալի հատկություններ ևս:

VI. Սոկրատեսի ճառը. Ամեն ձգտում ենթադրում է ինչ-որ բանի կարիք: Կարիքը ինչ-որ բանի պակաս է, իսկ Էրոսը ձգտում է գեղեցիկին և բարուն, հետևաբար ինքը ո՛չ գեղեցկություն է, ո՛չ էլ բարիք: Էրոսի բնությունը միջանկյալ է մարդկանց և աստվածների միջև: Նրա նպատակն է ոչ թե առանձին բարիքի ձեռքբերումը, այլ ամեն բարիքի, ընդ որում նա ձգտում է տիրել դրան առհավետ: Իսկ քանի որ հավիտենականը չի կարող տրվել միանգամից, մարդիկ հասնում են դրան աստիճանաբար՝ նորի հղացմամբ և ծննդաբերությամբ: Էրոսը հավերժական ծննդաբերություն է գեղեցիկի մեջ հանուն անմահության՝ ինչպես մարմնավոր, այնպես էլ հոգևոր: Սերը մի գեղեցիկ մարմնի հանդեպ անցնում է բոլոր մյուս գեղեցիկ մարմիններին, այնուհետև հոգիներին, հետո գիտություններին և, վերջապես, գեղեցիկի գաղափարին, որն անփոփոխ է ու հավերժական:

VII. Ալկիբիադեսի ճառը. Հարբած Ալկիբիադեսը ներս է խուժում մի խումբ զվարճասերների ուղեկցությամբ: Նրան նույնպես ճառի իրավունք է տրվում, որը նա ուղղում է Սոկրատեսին: Համեմատում է Սոկրատեսին սիլենոսների և Մարսիաս սատիրոսի հետ: Ի տարբերություն Մարսիասի՝ նա հմայում է մարդկանց ոչ թե ֆլեյտայի հնչյուններով, այլ խոսքով՝ ստիպելով նրանց ամաչել իրենց արատավոր վարքից: Ներկայացնում է Սոկրատեսի հետ ունեցած անձնական հարաբերությունների դրվագներ, որոնցում ցույց է տալիս Սոկրատեսի յուրահատուկ հեգնանքը, արհամարհանքը մարմնավոր սիրո հանդեպ, ինչպես նաև նրա ֆիզիկական բարձր դիմացկունությունը և պատերազմի օրերին հերոսական պահվածքը (199c-222c):

Վերջում գալիս են նոր խնջույքավորներ, որից հետո արդեն ներկաները սկսում են խմել «առանց չափ ու դադարի»: Լուսաբացին Սոկրատեսը և Արիստոդեմոսը հեռանում են (222d–223d):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թարգմանությունն արվել է Plato, *Lysis. Symposium. Gorgias* (Loeb Classical Library, Volume III, Harvard University Press) հին հունարեն/անգլերեն հրատարակությունից: Նկատի են առնվել հետևյալ թարգմանությունները. անգլերեն (*Symposium*, նշվ. աշխ., with an English translation by W. R. M. Lamb), գերմաներեն (*Platon Meisterdialoge*, Zürich, 1970, *Symposion, Übertragen von Rudolf Rufener*), ռուսերեն (Платон, *Сочинения*, том II, Москва, 1970, Пир, перевод С. К. Анта):

¹ *Ձեր հարցերին* – այսինքն՝ Ապոլլոդորոսի հարցերին: – 147

² *Փալերոն* – Աթենքի Էանտիսի ֆիլեի քաղաքամերձ համայնք, այդպես է կոչվել նաև տեղի նավահանգիստը: – 147

³ Կատակի հիմքում հավանաբար փալերոնցի (φάληρος) և «փայլուն», «հարթ» (φάλακρος), այսինքն՝ «ծաղառ գլխով», բառախաղն է: – 147

⁴ *Ագաթոն*, Տիսամենոսի որդի – աթենացի ողբերգակ (Ք.ա. մոտ. 400/399 – մոտ. 448/46), որի մասին Պլատոնից բացի հիշատակում են նաև Արիստոփանեսն ու Արիստոտելը: Նրա գործերից պահպանվել են միայն աննշան պատառիկներ: Կապված է եղել օլիգարխների հետ, հետևել է սոփեստ Գորգիասի ուսմունքին, հայտնի է եղել իր բարեսես արտաքինով:

Ալկիբիադես (Ք.ա. 450–404) – աթենացի քաղաքական գործիչ, զորավար, Սոկրատեսի աշակերտ, որը հետագայում հեռացել է նրանից: Դաստիարակվել է քեռու՝ Պերիկլեսի տանը: Դեռևս պատանի տարիքից հայտնի էր իր կրթությամբ, պերճախոսությամբ և գեղեցիկ արտաքինով: Մի քանի անգամ ընտրվել է Աթենքի ստրատեգոս: Ձգտել է Աթենքի գերիշխանությունը պարտադրել հունական պոլիսներին: Ք.ա. 415 թ. նրա ձեռնարկած Սիկիլիական արշավանքի ծախողումից հետո Աթենքի դատարանը նրան դատապարտել է մահվան: Այդ մասին իմանալով՝ փախչել է Սպարտա: Հետագայում ապաստան է գտել Աքեմենյան սատրապ Տիսսափեռնեսի մոտ: 411 թ. Աթենքը հայրենադարձման իրավունք է շնորհել նրան, որից հետո աթենացիները մի շարք հաղթանակներ են տարել նրա գլխավորությամբ: Աթենքի համար պատերազմի անհաջող ելքից հետո,

Սպարտայի պահանջով Ալկիբիադեսը սպանվել է իր ապաստանատուի՝ Փռյուզիայի պարսկական սատրապ Փառնաբազոսի հրամանով: – 147

⁵ Փյունիկ, Փիլիպպոսի որդի – այս տրամախոսությունից բացի, այլ տեղերում չի հիշատակվում: – 147

⁶ Գլավկոն – այս տրամախոսությունից բացի այլ տեղերում չի հիշատակվում: Պետք չէ նույնացնել Պլատոնի եղբոր կամ հորեղբոր հետ: – 148

⁷ Բ.ա. 411 թ. և 408-ի կամ 407-ի միջև Ագաթոնը հեռացավ Աթենքից և ապաստանեց Մակեդոնիայի թագավոր Արքեվաոսի արքունիքում: – 148

⁸ Յմմտ. Սոկրատեսի խոսքերը Քսենոփոնի մոտ. «...ինչու՞ Ապոլլոդորոսը և Անտիսթենեսը ինձանից երբեք չեն հեռանում...», «Սոկրատյան երկեր», էջ 113: – 148

⁹ Մեր մանկության օրերին – այսինքն՝ Բ.ա. 416 թ.: – 148

¹⁰ Խորևտներ – ողբերգու երգչախմբի անդամներ: Տվյալ դեպքում ողբերգության հեղինակ Ագաթոնը ինքն էր հավաքել և սովորեցրել նրանց որպես խմբավար: – 148

¹¹ Արիստոդեմոս – Սոկրատեսի հետևորդներից է: Նրա մասին հաղորդում է միայն Քսենոփոնը իր «Յուշեր Սոկրատեսի մասին» երկում (I 4): – 148

¹² Պլատոնը օգտագործում է Յերակլեսին վերագրվող ասացվածքը: Գալով Կեիքս թագավորի խնջույքին՝ նա ասում է. «Արդար այրերը առանց հրավերի են գալիս անարժանների մոտ»: – 149

¹³ Ագամեմնոն և Մենելաոս – Յոմերոսի «Իլիականի» հերոսներ: Մենելաոսի մասին, որպես «թույլ տեգավորի», խոսում է Ապոլլոնը՝ դրդելով Յեկտորին մարտի («Իլիական», XVII 585–590): Ագամեմնոնի խնջույքին անհրավեր գալիս է Մենելաոսը («Իլիական», II 408): – 149

¹⁴ Դիոմեդեսը՝ Արգոսի թագավորը, գիշերային հետախուզության գնալով, առաջարկում է, որ հերոսներից որևէ մեկը ուղեկցի իրեն՝ ասելով.

Ընկերակից երկու հոգին շատ ավելի լավ են խորհում...:

(«Իլիական», X 224, թարգմ.՝ Զ. Զամբարծումյանի) – 150

¹⁵ Էրիքսիմաքոս – հռչակավոր բժիշկ Ակունենոսի որդին է: Զարուցում էր զսպվածություն սննդի և խմիչքի օգտագործման մեջ (տե՛ս Քսենոփոն, «Յուշեր Սոկրատեսի մասին», I 13, 2) – 151

¹⁶ Նկատի ունի Ագաթոնի հաղթանակը Աթենքի թատրոնում: – 152

¹⁷ Այստեղ հավանաբար ակնարկվում է Արիստոփանեսի «Գորտերում» նկարագրված զավեշտական դատը, երբ թատրոնի հովանավոր Դիոնիսոսը իջնելով մեռյալների թագավորություն, գնահատում է Էսքիլոսի և Եվրիպիդեսի ստեղծագործությունը: – 152

Մեկնություններ և ծանոթագրություններ

¹⁸ Պավսանիաս – Կերամեսյս համայնքից էր: Հիշատակվում է նաև Քսենոփոնի մոտ («Խնջույք», 8, 32): – 152

¹⁹ Արիստոփանես – տե՛ս «Սոկրատեսի պաշտպանականը», ծանոթ. 7: – 152

²⁰ Ֆեդրոս – Պիտոկլեսի որդին, ատտիկյան Միրրինոս համայնքից: Նրան է նվիրված Պլատոնի «Ֆեդրոս» տրամախոսությունը: Լիսիասի վկայությամբ՝ աղքատության հասավ ոչ իր արատավորության պատճառով: Պերձախոսության, հռետորիկայի և սիրո փիլիսոփայության մեծ երկրպագու էր: – 152

²¹ Նկատի ունի Եվրիպիդեսի «Իմաստուն Մելանիպպես» ողբերգությունը, որի հատվածներն են միայն պահպանվել: – 153

²² Պեան – հիմն Ապոլլոն աստծո պատվին: – 153

²³ Էրոս – սիրո աստվածություն: Հետիոտը ներկայացնում է նրան որպես տիեզերածին (կոսմոզեն) չորս ուժերից մեկը: Մյուս երեքն են՝ Քաոսը, Գեան և Տարտարոսը: Զ.ա. V դարի դիցաբանագիր Ակուսիլաոսի հաղորդմամբ Էրոսը, Եթերը և Մետիսը (Իմաստությունը) Քաոսից գոյացած Էրեբոսի և Գիշերվա զավակներն են: – 153

Գովեստի խոսք – ինքնուրույն գրական ժանր, որ տարածված էր անտիկ շրջանում: – 153

²⁴ Պրոդիկոս – տե՛ս «Սոկրատեսի պաշտպանականը», ծանոթ. 8: – 153

²⁵ Թատրոնի հովանավոր Դիոնիսոսը և Ափրոդիտեն հունական դրամայի սյուժետային մշտական մասնակիցներն են: – 154

²⁶ Քաոս – հունական դիցաբանության մեջ «բաց անդունդ» – 154

²⁷ Hesiod., Theogonia, 116–118: – 154

²⁸ Պարմենիդեսի (Զ.ա. 540–470) հատվածաբար պահպանված «Բնության մասին» պոեմից է (DK, B 13 D): – 155

²⁹ Տղամարդկանց սերը գեղեցիկ պատանիների նկատմամբ տարածված երևույթ էր անտիկ աշխարհում: Միասեռական սերը ամենից շատ տարածված է եղել Պարսկաստանում, որտեղից էլ ենթադրաբար թափանցել է Հունաստան երկու երկրների միջև շփումների ուժգնացման շրջանում: Հայտնի է, թե որքան իրավազուրկ է եղել կինը հնադարյան հասարակության մեջ: Պատանին կամ երիտասարդ տղամարդը, որն ապագա զինվոր է, պետական գործիչ, մտածող, պոետ և օրենսդիր, հույների պատկերացմամբ մարմնավորում է գեղեցկության ավելի ազնիվ ու բարձր տեսակը, մինչդեռ սերը կնոջ հանդեպ ուղղված է իր բնությամբ ավելի ցածր էակի, հետևաբար չի ազնվացնում և չի վեհացնում: – 155

³⁰ Այն մասին, որ փոխադարձ սերը սովորեցնում է պատանիներին ձգտել գեղեցիկին և արի լինել, խոսում է նաև Կրիտոբոլոսը Քսենոփոնի «Խնջույքում» (IV, 10–18): – 155

³¹ Ըստ Յոմերոսի՝ հերոսներին արիություն են ներշնչում Աթենան («Իլիական», X 482) և Ապոլլոնը (XV 262): – 156

³² Եվրիպիդեսի «Ալկեստիս» ողբերգության մեջ հերոսուհին՝ Ալկեստիսը, պատրաստ է մեռնել իր ամուսնու՝ Ադմետոսի փոխարեն, սակայն Յերակլեսը փրկում է նրան Մահվան ձեռքից: – 156

³³ *Յադես* – տե՛ս «Սոկրատեսի պաշտպանականը», ծանոթ. 24: – 156

³⁴ *Օրփեոս* – Գետի աստված Էագրոսի (կամ Ապոլլոնի) և Կալլիոպե մուսայի որդի, դիցաբանական թրակացի երգիչ, նիմփե Էվրիդիկեի ամուսին: Նրա երգի զորության մասին են պատմում Էսքիլոսը, Եվրիպիդեսը, Վերգիլիոսը և Օվիդիոսը: Օրփեական ուսմունքի հիմնադիր: Ֆեդրոսի փաստարկը, համաձայն որի Օրփեոսը պատժվել է իր փափկակեցության համար, հանդիպում է միայն Պլատոնի մոտ:

Օրփեոսին հոշոտած կանայք բաքոսուհիներն են: – 156

³⁵ Յոմերոսը «Ոդիսականում» (XI) հաղորդում է, թե ինչպես է Ոդիսևսը իջնում մեռյալների թագավորություն և զրուցում այնտեղ ստվերների հետ, այդ թվում Ագամեմնոնի, Աքիլլեսի և Այաքսի, որոնք պահպանել էին իրենց բոլոր երկրային կրթերն ու տառապանքները: – 156

³⁶ *Պատրոկլոս* – Աքիլլեսի ընկերը, որին Ապոլլոնի օգնությամբ սպանեց Յեկտորը: – 156

³⁷ *Դիոնե* – Օվկիանոսի և Տեթիսի (Hesiod., Theog. 353) կամ Ուրանոսի և Գեայի դուստրը (Apollod., I 2): Ըստ Յոմերոսի («Իլիական», V 370–417)՝ Ափրոդիտեի մայրն է: – 157

³⁸ Երկու Ափրոդիտեների մասին՝ Ուրանիա և Պանդեմոս, խոսում են Յերոդոտոսը (I 105, 131, III 8 և IV 59) և Քսենոփոնը («Խնջույք», VIII 9) – 157

³⁹ *Էլիս* – Յունաստանի արևմտյան մաս, Բեոպիա – կենտրոնական մաս, Յոնիա – փոքրասիական ափամերձ մաս: – 159

⁴⁰ *Արիստոգիտոնը* և *Յարմոդիոսը* սպանեցին տիրան Յիպպարքոսին (Զ.ա. 514): – 159

⁴¹ Յիպպոկրատեսը (Զ.ա. 460–370) բժշկությունը համարել է գիտելիք անհրաժեշտի ավելացման և ավելորդի պակասեցման մասին: Բժշկական արվեստն, ըստ նրա, համապատասխան սննդակարգի և սննդի ստուգված չափի իմացությունն է: – 164

⁴² Թշնամությամբ իրարից բաժանվող սկզբունքները միավորող սիրո մասին խոսել է Էմպեդոկլեսը: Ըստ նրա. «Այն ամենը, ինչ այժմ թափառում է մահկանացու բաների մեջ... հակված է փոխադարձ սիրո...» (DK B 22): – 164

⁴³ Ասկլեպիոս – տես «Ֆեդոն», ծանոթ. 59: – 164

⁴⁴ Աղեղը և քնարը հակադրությունների միասնության Չերակլիտոսի հայտնի սիմվոլներն են: Նա գրում է. «Տարամետը համաձայնության է գալիս ինքն իր հետ, ինչպես այն, ինչը կարելի է տեսնել աղեղի և քնարի օրինակի վրա» (DK, B 51 D): – 165

⁴⁵⁻⁴⁶ Պլատոնը դիմում է համաբանության. առաջին էրոսը Ուրանիա Ափրոդիտեին է, և ուրեմն նաև Ուրանիա մուսայի որդին, իսկ երկրորդը՝ Պանդեմոս Ափրոդիտեի որդին է, և ուրեմն նաև Պոլիհիմնիա (Բազմերգակ) մուսայի որդին: Հավանաբար ասելով Պոլիհիմնիա՝ Էրիքսիմաքոսը նկատի ունի «անառակ», «բոլորի համար երգող»:

Ուրանիան աստղագիտության մուսան է, իսկ Պոլիհիմնիան՝ ձուներգական պոեզիայի մուսան: – 166

⁴⁷ Էրիքսիմաքոսը դատում է ինչպես բնափիլիսոփաները (հատկապես Էմպեդոկլեսը), որոնք աշխարհը դիտում էին որպես կենդանի օրգանիզմ՝ իր հակումներով ու վանումներով: – 166

⁴⁸ Նախամարդկանց մասին որոշ հաղորդումներ կարելի է գտնել արդեն Էմպեդոկլեսի մոտ: «Ձույզ դեմք և զույգ կուրծք ունեցող այդ էակները...» (DK, B 61), որոնք հիշեցնում են Պլատոնի առաջին մարդկանց, դատապարտված են ոչնչացման, քանի որ բնությունը պահպանում է միայն այն, ինչը գոյացել է հանուն ինչ-որ նպատակի, այսինքն այն, ինչը նպատակահարմար է:

Առաջին մարդիկ երազել են նվաճել Օլիմպոսը և հաղթել աստվածներին, ինչպես Օտոս և Էփիալտես հսկա եղբայրները, որոնք անգամ ցանկացել են կնության վերցնել Զերային և Արտեմիսին (Apolod., I 7, 4): Հոմերոսը հիշատակում է միայն Արեսի պատմությունը, որին Օտոսը և Էփիալտեսը շղթայում են («Իլիական», V 385–391), և ինչպես են հսկա եղբայրները դեռ մանուկ հասակում սպանվում Ապոլլոնի կողմից («Ոդիսական», XI 305–320): – 169

⁴⁹ Զեփեսոսոս – Չևսի և Զերայի որդին է: Եղել է դարբին, իսկ վաղնջական ժամանակներում ընկալվել է որպես ինքը հուրը: – 171

⁵⁰ Լակեդեմոնացիները Ք.ա. 385/4 թ. կործանեցին Մանտինեա արկադական քաղաքը և տեղահան արեցին բնակչությանը: Էպամինոնդասը 371 թ. վերականգնեց քաղաքը: Այստեղ առկա է Պլատոնին բնորոշ անախրոնիզմ, որի նկատառումով տրամախոսությունը թվագրվում է 385-ի և 371-ի միջև: – 172

⁵¹ Հյուրընկալության նշանիկներ – խաղազառեր, որոնց հատված կտորները հյուրը և տանտերը բաժանվելիս պահում էին իրենց մոտ, որպեսզի իրենք կամ իրենց սերունդները հանդիպելիս կարողանան ապացուցել հյուրընկալության իրենց իրավունքը: – 172

⁵² *Իապետոս* – տիտաններից մեկն է, Ուրանոսի և Գեայի որդին: Նրա որդիներն են Առլասը, Պրոմեթևսը, Էպիմաթևսը և Մենետիասը: Որպես Պրոմեթևսի հայր՝ համարվում է մարդկության նախահայրը:

Կրոնոս – տիտաններից կրտսերն է: Ուրանոսի և Գեայի որդին է: Նրա զավակներն են Զեւան, Դեմետերը, Զերան, Զադեսը, Պոսեյդոնը և Զևսը: Կրտելով Ուրանոսին՝ Կրոնոսը ինքն է իշխել աշխարհի վրա: Զետագայում նրան հաղթել և փոխարինել է Զևսը: – 175

⁵³ *Անհրաժեշտություն* (Անանկե) – Մոյրաների մայրը, ճակատագրի դիցուհի: – 175

⁵⁴ *Ատե* – կուրացում, որ հանգեցնում է մահվան: Դժբախտության դիցուհի: Ըստ Զոմերոսի՝ Զևսի դուստրն է, որ խաբել է հորը և որպես պատիժ ցած նետվել Օլիմպոսից: – 175

⁵⁵ «Իլիական», XIX 92–93, թարգմ.՝ Զ. Զամբարձույանի: – 175

⁵⁶ Այս խոսքերը Սոփոկլեսի մի չպահպանված ողբերգությունից են և վկայում են պատերազմի աստված Արեսի վրա սիրո ունեցած իշխանությունը: – 177

⁵⁷ Այս խոսքերը Եվրիպիդեսի մասամբ պահպանված «Աթենբեթա» ողբերգությունից են (դրվագ 663): – 177

⁵⁸ «Մարդկանց և աստվածներին կառավարելու» Զևսի արվեստը. տե՛ս «Իլիական», II 205, IX 98: – 178

⁵⁹ Այս տողերի հեղինակն անհայտ է: Զավանաբար հեղինակը ինքը Ագաթոնն է: – 178

⁶⁰ *Գորգիաս* – տե՛ս «Սոկրատեսի պաշտպանականը», ծանոթ. 8:

Գորգիասի գլուխը – հոմերյան հետկյալ տողերի շրջաստությունն է.

«Այնժամ սարսափը ինձ պատեց,

Թե չլինի՛ մուգ Զադեսի անդունդներից Պերսեֆոնեն

Իմ դեմ հանի հրեշադեմ Գորգոնայի գլուխն ահեղ»:

(«Ողիսական», XI 633–635, թարգմ.՝ Ս. Գրքաշարյանի): – 179

⁶¹ Եվրիպիդեսի «Զիպպոլիտոս» ողբերգության գլխավոր հերոսի խոսքերն են (612): – 180

⁶² Մանտինեացի Դիոտիմայի կերպարը բավականին խորհրդավոր է: Արկադիայի Մանտինեա քաղաքը հայտնի է եղել իր գուլակներով (μαύναις – *հուն.* գուլակ): Գուլակ կանայք մեծ համբավ են վայելել Զունաստանում: Ըստ Էլիաս Արիստիդեսի՝ տասը տարով հետաձգվել է Աթենքի ժանտախտը: Դիոտիմայի կերպարը ոգեշնչել է գերմանացի բանաստեղծ Ֆրիդրիխ Զյոլդեռլինին իր «Զիպերիոն» վեպի համանուն գործող անձը ստեղծելիս: – 184

⁶³ Էրոսի սերումը Պորոսից և Պենիայից հորինել է Պլատոնը: Պորոսը Մետիսի որդին է, Զևսի կնոջ, որին սա կուլ տվեց՝ Աթենային ծնելու համար: Մետիսը իմաստության և խելքի դիցուհին է, այնպես

որ Աթենայի ծնվելը Ջևահի գլխից այս իմաստով խորհրդանշվում է որպես նրա խելքի ծնունդ և շարունակություն:

Պենիան աղքատության անձնավորումն է: Արիստոփանեսի «Յարստություն» կատակերգության մեջ նա կոչ է անում մարդուն աշխատել և ապացուցում է, որ աղքատությունից չվախենալու դեպքում մարդիկ չէին աշխատի:

Պլատոնյան Էրոսը, լինելով հակասական սկզբունքների ծնունդ, դեմոնական էություն է՝ սոփեստ, կախարհ և փիլիսոփա: Միտված է ոչ միայն գեղեցիկին, այլև գեղեցիկի ու բարու վերարտադրությանը: – 187

⁶⁴ *Մոյրա* – ճակատագրի դիցուհի, ներկա է լինում մանկան ծննդի պահին (մոյրաները երեքն են): Իլիթիան ծննդաբերողներին օգնող դիցուհի է: – 191

⁶⁵ *Կոդրոս* – ատտիկյան արքա (Ք.ա. XI դ.): Դորիացիների հարձակման ժամանակ զոհաբերել է իրեն և փրկել հայրենիքը: Արքունի իշխանությունը վերացնելուց հետո Կոդրոսի հետնորդները արժանացել են ցմահ արքունիներ լինելու պատվին: Պլատոնը հոր գծով նույնպես Կոդրոսի տոհմից է: – 194

⁶⁶ *Սառեցման գավաթ* – անոթ, որը լցնում էին ձյունով կամ սառույցով՝ գինին սառեցնելու համար: Կոտիլե – մոտավորապես 1/4 լիտր: – 200

⁶⁷ «Իլիական», XI 514. Ասկելափոսի որդի՝ բժիշկ Մաքսոնի մասին է (թարգմ.՝ Յ. Յամբարձումյանի): – 201

⁶⁸ *Սիլենոսները* կամ *սատիրոսները* քանդակագործների արհեստանոցներում – Դիոնիսիոս աստծո այծտան ուղեկիցների զավեշտական փոքր քանդակներ, որոնց մեջ պահվում էին անուշաբույր հեղուկներով սրվակներ:

Ըստ մյուսոսի՝ Աթենան տեսնելով, որ ֆլեյտա նվագելը այլանդակում է դեմքը, մի կողմ է նետել գործիքը, իսկ սատիրոս Մարսիասը վերցրել է այն և դարձել լավագույն ֆլեյտահարը: Յայտնի է պատմությունը կիթառահար Ապոլլոնի հետ վերջինիս մրցման մասին:

Սոկրատեսը համեմատվում է սիլենոսի հետ. նրա այլանդակ արտաքինի տակ թաքնված է իմաստությունը, որն, ինչպես է ֆլեյտայի նվագը, դյուրում է ունկնդիրներին: – 202

⁶⁹ *Օլիմպոս* – ըստ Պավսանիասի՝ Մարսիասի աշակերտը: – 202

⁷⁰ *Կորիթանտներ* – տես «Կրիտոն», ծանոթ. 15: – 203

⁷¹ *Պերիկլես* (Ք.ա. 490–429) – Յին Յունաստանի խոշորագույն պետական, քաղաքական և ռազմական գործիչ, հայտնի բարենորոգիչ, արվեստների հովանավոր: Նրա շուրջ էին համախմբված ժամանակի մշակույթի ամենանշանակալի դեմքերը (Յերոդոտոս, Անաքսա-

գորաս, Սփոկլես, Ֆիդիաս և ուրիշներ): Նրա օրոք կառուցվեց Ակրոպոլիսը: Աթենքը դարձավ հելլենական աշխարհի տնտեսական, քաղաքական և մշակութային կենտրոնը: Հունաստանի ծաղկումը համընկնում է Պերիկլեսի ժամանակաշրջանին: – 203

⁷¹ Այաս – տես «Սոկրատեսի պաշտպանականը», ծանոթ. 42: – 207

⁷² Պոտիդեայի և Դելոսի մոտ տեղի ունեցած ռազմական գործողություններին Սոկրատեսի մասնակցության մասին տես «Սոկրատեսի պաշտպանականը», ծանոթ. 23: – 207

⁷³ Հոմերոս, «Ոդիսական», IV 242, Ե., 1988, թարգմ.՝ Հ. Համբարձումյանի: – 208

⁷⁴ Լաքես – աթենացի զորավար, որը հայտնի էր իր արիությամբ: Ընկել է Մանտինեայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Ք.ա. 418 թ.: Նրան է նվիրված Պլատոնի «Լաքես» տրամախոսությունը: – 209

⁷⁵ Այս խոսքերը Արիստոփանեսի «Ամպեր» կատակերգությունից են (361–362): – 209

⁷⁶ Բրասիդաս – սպարտացի զորավար, որին հետմահու հերոսի պատիվներ մատուցեցին: Վախճանվել է Ամփիպոլիսի մոտ ստացած վերքից՝ պարտության մատնելով աթենացիներին Ք.ա. 422 թ.:

Նեստոր և նրա որդի Անտենորը – հոմերյան հերոսներ, որոնք մեծ հռետորների համբավ ունեին: – 210

⁷⁷ Քարմիդես – Պլատոնի հոր՝ Արիստոնի քրոջ՝ Պերիկտիոնեի ամուսինը: Նրան է նվիրված Պլատոնի «Քարմիդես» տրամախոսությունը:

Էվթիդեմոս – հիշատակվում է Քսենոփոնի մոտ («Հուշեր Սոկրատեսի մասին», IV 2, 40): Պետք չէ շփոթել սփեստ Էվթիդեմոսի հետ, որին նվիրված է Պլատոնի «Էվթիդեմոս» տրամախոսությունը: – 210

⁷⁸ Հմմտ. «Իլիական», XX 198.

«Խենթն է տեսնում աղետն այնժամ,

երբ կատարված է նա արդեն»:

(թարգմ.՝ Հ. Համբարձումյանի) – 210

⁷⁹ Հունաստանում ընդունված չէր, որ միևնույն հեղինակը գրի և՛ կատակերգություն, և՛ ողբերգություն: Միայն հռոմեական ժամանակներում եղան այդ ավանդույթի առաջին խախտողները: – 212

⁸⁰ Լիկեյոն – Աթենքի արվարձան, ուր գտնվում էր Լիկեյան Ապոլլոնին նվիրված գիմնասիոնը: Սոկրատեսը հաճախ է այցելել այնտեղ: Տես նաև Քսենոփոն, «Հուշեր Սոկրատեսի մասին», I 10: Հետագայում Լիկեյոնում է հիմնել իր պերիպատետիկ դպրոցը Արիստոտելը: – 212

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

- Ադիմանտոս 26
Ագաթոն 147–152, 154, 172–174, 179–184, 198–200, 205,
210–212
Ագամեմնոն 150
Ադմետոս 193
Աթենա 177
Ալկեստիս 156, 157, 193
Ալկիբիադես 147, 198–201, 206, 210, 211
Ակումենոս 152
Ակուաիլանոս 155
Այաս 35, 207
Անաքսագորաս 16, 80, 116, 117
Անիտոս 4, 11, 14, 18, 21, 22, 26, 28
Անտենոր 210
Անտիսթենես 61
Անտիփոն 25
Ապոլլոդորոս 26, 31, 61, 143, 147, 149
Ապոլլոն 60, 63, 99, 169, 177
Ասկլեպիոս 144
Ատե 175
Արես 177
Արիստիպպոս 61
Արիստոգիտոն 159
Արիստոդեմոս 148, 150–152, 154, 157, 163, 179, 180, 205, 212
Արիստոն 26
Արիստոփանես 154, 163, 166, 168, 199, 209, 212
Ափրոդիտե 154, 157, 158, 163, 177, 186, 187
Աքիլլես 18, 156, 157, 193, 210

Բրասիդաս 210

Անվանացանկ

Գեա 154, 155

Գլավկոն 148, 210

Գլավկոս 132

Գորգիաս 6, 179

Դեմոդոկոս 26

Դիոկլես 210

Դիոնե 157

Դիոնիսոս 152, 154

Դիոտիմա 184–192, 198

Եզովպոս 62–64

Եվրիպիդես 153

Զևս 157, 169, 170, 177, 186

Էագրոս 156

Էակոս 35

Էանտոդորոս 26

Էնդիմիոն 80

Էպիգենես 25, 61

Էսքիլոս 131

Էսքինես 25, 61

Էվենոս 7, 63, 64

Էվթիդեմոս 210

Էվկլիդես 61

Էրիքսիմաքոս 152–154, 163, 167, 168, 172, 173, 177, 179, 200,
201, 205, 212

Էրոս 153–158, 164, 166–168, 172–178, 180–185, 187, 188, 198,
201

Էփիալտես 169

Էքեկրատես 59, 60, 61, 103, 104, 122, 142, 144

Թեագես 26

Թեոդոտոս 26

Թեոձոտիդես 26

Թեսևս 59

Թեսիս 18, 156

Անվանացանկ

Իապետոս 175

Իլիթիա 191

Իղլանս 105

Լաքեւ 209

Լեոն 24

Լիկոն 11, 28

Լիկուրգոս 195

Լիսանիաս 25

Կադմոս 113

Կալլիաս 6

Կերես 42, 61–68, 76–82, 88–101, 105, 107, 108, 113–115,
119–124, 126, 128–130, 139

Կլեոմբրոտոս 61

Կոդրոս 193

Կտեսիպպոս 61

Կրիտոբուլոս 25, 31, 61

Կրիտոն 25, 31, 39–56, 62, 67, 140–142, 144

Կրոնոս 175

Չարմոդիոս 159

Չարմոնիա 113

Չեկտոր 18, 156

Չեսիոդոս 35, 155, 175, 195

Չերակլես 105, 153,

Չերակլիտոս 165

Չերմոգենես 61

Չեփեստոս 171, 177

Չիպպիաս 6

Չիպպոնիկոս 6

Չոմերոս 26, 35, 112, 113, 136, 149, 150, 156, 157, 169, 175,
179, 195

Չռադամանթիս 35

Սարսիաս 202, 203

Սելանիպպե 153

Սելեստոս 5, 6, 11–18, 21, 23, 26, 28

Սենեկոս 150

Սենեքսենոս 61

Անվանացանկ

Մետիս 186

Մինոս 35

Մոյրա 191

Մուսեոս 35

Նեստոր 210

Ոդիսևս 35, 112

Պալամեդես 35

Պավսանիաս 152, 154, 157, 163, 164, 168, 172, 205

Պատրոկլոս 18, 156, 157, 193

Պարալոս 26

Պարմենիդես 155, 175

Պելիոս 156

Պենելոպե 98

Պենիա 186

Պերիկլես 203, 210

Պլատոն 26, 31, 61

Պյոպիա 8

Պոլիիմնիա 166

Պորոս 186, 187

Պրոդիկոս 6, 153

Սիմֆիաս 42, 61, 64, 66–71, 73–76, 81–83, 86–89, 93, 96,
98–100, 102, 105, 107–113, 122, 123, 130, 132–134, 139

Սիսիփոս 35

Սոլոն 195

Սոկրատես 5, 7, 10, 12, 13, 16, 17, 27, 30, 39–56, 59–69,
71–74, 76–77, 80–81, 83–92, 94, 96–101, 103–105, 107–109,
111, 113, 114, 117, 122–124, 128, 130, 132, 134, 140–144,
147–152, 154, 173, 174, 180–186, 188, 189, 191–193, 196,
197–212

Տելամոն 35

Տելեփոս 131

Տերփսիոն 61

Տրիպտոլեմոս 35

Ուրանիա 166

Անվանացանկ

Փիլիպպոս 147
Փիլոլասոս 64, 65
Փյունիկ 147, 148

Քարմիդես 210
Քերեփոն 7, 8
Քսանտիպպե 62

Օլիմպոս 202
Օտոս 169
Օրփեոս 35, 156

Ֆեդոն 59, 60, 61, 103, 104, 106, 122, 123
Ֆեդոնիդես 61
Ֆեդրոս 152–154, 157, 174, 175, 178, 180, 198, 205, 212

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ս. Ստեփանյան, Պլատոն. կյանքը և գործը.....	V
ՍՈԿՐԱՏԵՍԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆԸ	3
ԿՐԻՏՈՆ.....	37
ՖԵԴՈՆ	57
ԽՆՋՈՒՅՔ	145
Մեկնություններ և ծանոթագրություններ.....	213
Անվանացանկ.....	246

Պլատոն

Պ 678 **Երկեր չորս հատորով, Հատոր I**/Յին հուն. թարգմ., առաջաբան և ծանոթագր.՝ Ս. Ստեփանյան, 2-րդ՝ վերանայված հրատ. – Եր.: Սարգիս Խաչենց, Փրինթինֆո, 2021. – XXIV + 252 էջ

‘ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ’ ԳՐԱԴԱՐԱՆԸ ընթերցողի ուշադրությանն է ներկայացնում հույն փիլիսոփա Պլատոնի (Թ.ա 428/7–348/7) երկերի հայերեն քառահատոր ժողովածուի (լույս է տեսել 2006–2017 թթ.) անդրանիկ գիրքը՝ նոր, վերանայված հրատարակությամբ: Հատորն ընդգրկում է «Սոկրատեսի պաշտպանականը» գործը, ինչպես նաև «Կրիտոն», «Ֆեդոն» և «Խնջույք» տրամախոսությունները:

ՀՏԴ 1/14
ԳՄԴ 87

1915.info

Հրատ. խմբագիրներ՝
Արա Խաչիկոսյան, Սամվել Խաչատրյան
Էջադրում՝ Անժելա Մանուկյան, Արաքս Ալեքսանյան

Սարգիս Խաչենց հրատարակչություն ՍՊԸ
0010 Երևան, Արամի փ. 1, Ազգային պատկերասրահ
հեռ. (37410) 56-36-61, e-mail: sargiskhachents@gmail.com

ՓՐԻՆՏԻՆՖՈ ՀԶ ՍՊԸ
0014 Երևան, Կոմիտաս 65, հեռ. (37411) 25-25-65
e-mail: info@printinfo.am, www.printinfo.am